This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,236,945

GRAD
EREN
954
v.2
BUHR

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂՈՒԱՆԻՑ

Բ. ՀԱՏՈՐ

Ի ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. [illegible] 7.
1907 (43)

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
THE UNIVERSITY OF MICHIGAN
ARTES SCIENTIA VERITAS
1817

[illegible]

515

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

192 p.

Բ. ՀԱՏՈՐ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՓԱՋԵԱՆԻ
Կարգաթիւ 532

Գրատուն
Յակոբ Աբրահամեան
Նուրը Օսմանիյէ, ճամ. 52
ԻՍԹԱՆՊՈԼ

'Ի ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑԷՅՍԿԱՅԱ, 7.
1907 (43)

GRAND
E[illegible]
954
v. 2
BUHR

Մեծապատիւ Պարոն Միքայէլի Արամեանց 'ի Բագու

Ամենասիրելի Հայրենակից իմ.

Հայոց մէջ ընդհանրապէս հայ գրողն շատ քի՛չ է արժանանում վարձատրութեան։ Պակաս չեն և այն դէպքերն, որ հայ գրողն պարտք է անում և 'ի լոյս ընծայում իւր աշխատութիւնը, բայց հազիւ թէ կարողանում է ծախուած գրքերի գումարով վճարել իւր պարտքը։ Շատ անգամ էլ մնում է պարտքի տակ ճնշուած, ինչպէս գիտենք փորձով։ Սակայն մոռանալու չէ և այն դէպքերը, երբ գրականութեան արժէքը հասկացող և հայ հեղինակի վաստակը գնահատող հարուստ անձինք մեկենաս հանդիսանալով ազատում են քրտնաթոր հեղինակները այդ ծանր վիճակից։

Արդ՝ որովհետև Ձերդ Մեծապատուութիւնն ինքնաբերաբար մեկենաս հանդիսացաք Բ. Հատորիս տպագրութեան, վասն որոյ քաղցրը պարտք համարեցի նուիրել այս Ձեր յիշատակին՝ որպէս գի Արցախի հայ քաջերի անուանց հետ դարուց 'ի դարս փայլի և Ձեր անունը։

Մնում եմ երախտապարտ և աղօթող վասն Ձեր և Ձերայնոց
Մակար եպիս. Բարխուտարեանց

Ամենապատիւ Տ. Մելքիսեդեկ Ս. Եղբայր.

Առ Ձեզ ունեցած սիրոյս համար եօթանասնամեայ հաստակումս ես զլխս ձգեցի ծանրագոյն աշխատանաց բովի մէջ, միայն թէ կարողանայի կատարել Ձեր հրամանը։ Այս պատճառաւ՝ հնար եղածին չափ ջանացի արժանաւոր կացուցանել երկասիրութիւնս՝ ըստ ամենայնի հետևելով ճշմարտութեան և անխոնջ հետախուզութեան։

Համբերատար զգուշութեամբ ականեցի.

Պատմութիւն Օսմանեան (Այվազովսկու)

«Առաքել վարդապետի (տպ. 1896.

«Եսայի կաթուղ. Աղուանից (տպ. Երուսաղէմ.

Ջամբռ Սիմէօն կաթուղիկոսի (տպ. Էջմիածին.

Դիւան Հայոց պատմ. Ա—Բ. Գ. Դ. Ե.

Ամենայն Հայոց կաթուղ. (Երիցեան

Կովկասի Հայք »

Ձեռագ. պատ. Միրզա-Ադը-կեօզալի.

Նոր Տետրակ Ցակովբ Շամիրեանի (տպ. 'ի Մադրաս.

Պարոն Կ. Եզեանցի Снош. Петра Вел. съ Армян.

Դուիթ-Բէկ (տպ. 'ի Վաղարշապատ.

Կենսագր. Գեներալ Ցովհան. Դաւթ. Լազրևի (Պօտտօից.

Մէլիք-Վանու մասին գրածը (նոյն Պօտտօից. նիւթեր ազգ. պատ. համար.

Տեղագիր Գեղարքունի.

Պատմութիւն Պարսից (Թաղիադեանց

Շահական հրովարտակներ (Ս. Ջալալ են.

Էջմիածնի կաթուղ. կոնդակների սևագրութիւններ.

Պալասանեանի պատմութիւն

Գաւ ղտ. Ղարաբաղի.

Աղ. Երկ. և Դրացիք.

Արցախ և առանձին յիշատակարանս. են։

Պարտք համարեցի նախաբանիս մէջ կարգաւ զետեղել հետեւեալ ամենակարեւոր տեղեկութիւնները։

Ա. Աղուանից հարազատ և օրինաւոր կաթուղիկոսներն միշտ ընտրուած են ժողովրդեան հասարակութիւնից, ձեռնադրուած Հայոց կաթուղիկոսներից (1)· և հաստատուած Աղուանից թագաւորներից, իսկ վերջին ժամանակներում հաստատուում էին Պարսից Շահերիցն և. նստում Գանձասարի վանքում, որ Մայր-Աթոռ եղած էր Աղուանից համար Ներսէս Բ. կաթողիկոսի մահից յետոյ։ Որպէս տեսանք պատմութեանս Ա. հատ. Ծա. գլխում, Գրիգորիս Բ-ի և Ջալալեան կաթուղիկոսների շարքում, երբեմն երբեմն տոհմային արած են կաթուղիկոսները Աղուանցիք՝ հետեւելով Հայոց, որ սկզբում միշտ կաթուղիկոս էին ընտրում Ս. Գրիգոր Լուսաւորչի տոհմիցն։ Այսու ամենայնիւ միշտ ընտրութեամբ և հաճութեամբ Աղուանից հասարակութեան, թագաւորաց և իշխանաց· բացի մի քանի ինքնակոչ և ապօրինի կաթուղիկոսներից, զորս իրաւամբ Ճըռ կաթուղիկոս է անուանում Գաղտնիք Ղարաբաղի հեղինակն։

Բ. Ժառանգական էր հարազատ մելիքութիւնն։ Երբ վախճանում էր մելիք հայրն, գահակալում էր նորա անդրանիկ որդին· իսկ երբ անչափահաս էին լինում անդրանիկներն կամ անհամապատասխան մելիքութեան, գահակալում էին վախճանուածների կարող և արժանաւոր եղբայրներից յարմարագոյններն և կամ չափահաս որդիներն։ Անդրանիկներն՝ անյարմար եղած դէպքում թողնում էին գահակալութիւնը իւրեանց փոքր, ընդունակ և կարող եղբարց։

Գ. Թէ կաթողիկոսներն և թէ մելիքներն շահերից հաստատուելու ժամանակ հարկադրուում էին ցոյց տալ շահական

---

1) «Զի ուռնայր արքայն մեր խնդրեաց 'ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որ և այսու կանոնաւ կացին աշխարհն Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր» (Մ. Կաղ· Ա. Հատ. Թ. Գլ.)։

դիւանին իւրեանց նախորդների հրովարտակները՝ ըստ սովորութեան Պարսից, ապա թէ ստանալ նոր հրովարտակներ, որպէս երևում է այդ նոր հրովարտակներից։

Դ. Արքունուստ շնորհուած իրաւունքներով իւրաքանչիւր մէլիք բացարձակ տէր, իշխան, դատաւոր և իրաւարար էր իւր հպատակների համար։ Այս պատճառաւ ամէն մէլիք իրաւունք ունէր պատժել, բանտարկել, ծեծել և տուգանել գողերը, յափշտակողները և հասարակութեան հանգստութիւնը վրդովողները իւր հպատակներից։ Ամէն մէլիք ունէր արտօնութիւն պահել զօրք՝ ըստ թւոյ հպատակաց և ըստ իւր նիւթական կարողութեան 2000—3000 զինուոր, մի սպարապետ—զօրավար, որ կոչւում էր իւզբաշի և մի փոքրաւոր օգնական զօրավար, զորս ընտրում էին իրանք մէլիքներն և հաստատում։ Բացի սոցանից պահում էին նաև մի քարտուղար, մի սուրհանդակ և շատ զինեալ ծառաներ, որք ի պահանջել հարկին կատարում էին մէլիքների բանաւոր և գրաւոր հրամանները։

Ե. Ամէն մի քաղաքի, աւանի և գիւղի հասարակութիւնն իրաւունք ունէր ազատակամ ընտրել իւր միջից մի տանուտէր (1) մի գզիր (օգնական տանուտէրի և մի հարկահաւաք, զորս հաստատում էին մէլիքներն։

Զ. Իւրաքանչիւր հարկատու անձն պարտաւոր էր վճարել սահմանեալ (քանակութիւնն ստուգիւ յայտնի չէ մեզ) տուրքը

---

1) «Մէլիք Հաթամէս (Ջրաբերդի) մահլում լինի ձեզ Մազաւուզեցւոց, մեծ և փոքր որ իմանաք, Մէլքումն ձեզ քոխվա (տանուտէր) շինեցի, պիտի հեսապի (իրաւացի) խօսքան դուրս չի կեաք։ Դարձեալ, ջամիյաթ (ժողովուրդ) թէ եա նորա (այնուհետև) եկիք թէ Մելքումն մեզ հաշաթ (հարկաւոր) չի, դապուլ չի, դուք էք հաւանել, շինել (ընտրել) թվին ումիը (1779) փետրվարի ամսուն ժէ»։ Տեղի կնքոյ, որի մէջ տպուած է «Քսի ծառայ Մէլիք Աղամ» (Արցախ եր. 221)։

Տանուտէրն պարսկերէն կոչւում է քովխա-քեանդ-խուդա, գզիրն՝ չաւուշ, քաղաքների, աւանների և գիւղերի աւագանիներն և առաջաւորներն՝ քալանթար։

իւր մէլիքինն առանձին և Տանիննՙ առանձինՙ յատկապէս նշանակուած ամիսներում։ Ամուսնացեալ արականներն համարւում էին միամբողջ գլուխ 15 տարեկանից մինչև ամուսնանալու օրնՙ կէս գլուխ, իսկ պսակուելուց յետոյ կատարեալ գլուխ. եօթանասնամեայ ծերունիք ազատ էին հարկերից, կոռից և բեկեարից։ Ժողովում էին տանուտէր, քալանթար, ծերունի, գզիր և հարկահաւաք, համահաւասար բաժանում հարկերի գումարը գլխաթւի վերայ. այնուհետև հաւաքում էին հարկահաններն ժողովրդից գլխահարկերը, յանձնում տանուտէրներին, վերջիններս էլ քալանթարների և գզիրների հետ նոյն գումարները յանձնում էին մէլիքներին, առնում ստացատոմս և բերելով պահ տալիս (ի պահու տալ) գիւղական դրագրին։ Նոյնպէս ժողովւում էին ցորենի, գարու, հաճարի, գարնանու և կորեկի տասանորդները և յանձնում մէլիքներին։ Տանուտէրներն և գզիրներն պարտաւոր էին ցուցակագրել երիտասարդ զինուորացուները 25—28 տարեկան յական յանուանէ և յանձնել մէլիքներին ցուցակները։ Զինուորագրութիւնից ազատ էին հոգևորականաց և միամօր որդիքն։ Հոգևորականներն ազատ էին և գլխահարկից՝ և տասանորդից։

Է. Տանուտէրներն և քալանթարներն պարտաւոր էին խաղաղացնել հասարակութեան մէջ պատահած վէճերը և խռովութիւնները, ուշադրութեամբ լսել սովորական գանգատները և բաւականութիւն տալ գանգատաւորներին. իսկ ծանր գործերը և կնճռոտ խնդիրները յայտնել և յանձնել Մէլիքներին։ Տանուտէրների, գզիրների և հարկահաւաքների մասին ժողովրդեան կողմից բողոքները և գանգատները անձամբ լսում, քննում և դատում և վճռում էին մէլիքներն. ապա պատժում էին յանցաւորները և արդարացնում անմեղները։

Ը. Սպարապետներն-իւզբաշիներն-ցուցակներով յայտնում էին մէլիքներին զինուորների թիւը, սպանուած, վիրաւորուած և վախճանուած զօրականների անուանացուցակը, նորակոչների քանակութիւնը և ըստ այնմ պահանջում հրացան, թուր, երկսայրի, գնդակ և վառօդ շարան։ Սպարապետների օգնականներն

կրթում և վարժեցնում էին նորէն զինուորացուները, որ առնէին անվրէպ նշան և քաջութեամբ յաղթէին պատերազմներում հակառակորդներին։

Թ. Ի պահանջել հարկին բանակը (1) անձամբ զօրավարում էին Մելիքներն սպարապետների հետ միասին. իսկ ուրիշ անգամներ յանձնում էին իւրեանց սպարապետներին զօրավարութիւնը։

Ժ. Ինչ քաղաքներում բնակում էին պարսիկ խաներ, ինչպէս էին Երևան, Հին-Նախիջևան և Շամախի, մասամբ նոյն խաներից կախումն ունէին նոյն քաղաքի մելիքներն։ Բնաւ ենթարկուած չեն եղել այդ կանոնին Արցախի մելիքներն, այլ բոլորովին անկախ (2). վասն զի Դիզակի վերայ և Վարանդայի վերայ իշխած են Գագիկ Թագաւորից սկսեալ մինչև Մելիք-Սուջումեաններն, Մելիք-Փաշայեաններն և Մելիք-Շահնազարեաններն։ Խաչենի, Ըռստակի, Ջրաբերդի և Կիւլստանի Ծարի և Սօդի վերայ իշխած են Առրներսեհ և Իշխանակ Թագաւորներից սկսեալ Հասանեաններն, Վախտանգեաններն, Ջալալեաններն, Մելիք-Իսրայէլեաններն, Մելիք-Բէգլարեաններն և Մելիք-Շահնազարեաններն (3)։ Փառիսոս, Քաւս կամ Քուստի և Կողթ գաւառների վերայ իշխած են Սենեքերիմ և Գրիգոր Թագաւորներից սկսեալ մինչև Մելիք-Շահնազարեաններն, Մելիք-Մաթէոսեաններն, Մելիք-Աթաեաններն և Մելիք-Ղորխմազեաններն։ Մելիքութիւնն ծնած օրից միշտ անկախ

---

1) Զանազան ժամանակներում զանազան պատճառներից ստիպեալ Արցախի հայ ժողովուրդն այս և այն կողմերն ցրուելուց և գաղթելուց յետոյ պակասում է մելիքների զօրաց թիւն։ Քանզի Արցախում այժմ աւերակ են երեք քաղաք, տասն գիւղաքաղաք և 360 գիւղ, որոց բնակիչներն գաղթած են այլ և այլ կողմեր, տես Արցախ եր. 448—456 և Գաղտնիք Ղար. 241—243։

2) «Անկախ մելիք ճանաչել (Մելիք-Բաղին) հրովարտակ Ա. Շահ-Աբասին»։

3) Վերոյիշեալ իշխաններն և մելիքներն իշխած են և դաշտային գաւառներին վերայ։

եղած են Արցախի Մելիքներն, սակայն բացի վերջին ապստամբութիւնից, ամէն տարի վճարած են Շահերին մի որոշեալ գումար և միայն այս վճարով կախումն ունեցած Շահերից։ Խան տիտղոսն կամ անձնաւորութիւնն բնաւ գոյութիւն ունեցած չէ Արցախում, Շաքւում և Բագւում մինչև Նադր-Շահի օրերն։ Հուժկու Նադր-Շահի մահից յետոյ մինչև Ներքինի-Աղա-Մամատ Շահի զօրանալն, «Պարսկաստանի տիրապետողներն ոչ եթէ կանոնաւոր թագաւորներ կամ Շահեր էին, այլ սոսկ մարդասպան և երկրի խաղաղութիւնը վրդովող խաներ։ Տիրապետութիւնն, Պարսկաստանի մէն մի մասում, բռնակալ խանի թրի ուժն էր։ Այդ ժամանակամիջոցում մէկզմէկ սպանելով կամ կուրացնելով յափշտակում էին միմեանցից (իշխանութիւնը) Շահ-Ռուհն, Ատիլ-Շահն, Ալի-Մուրատ-խանն, Զենտ-Ասկեար խան, Փաթալի խանն, Զենտ-Քեարիմ-խանն, Ազատ-խանն, և Հասան խանն։ Ահաւասիկ այս է պատճառն որ սոքա օրինաւոր թագաւոր չեն համարւում... և անընդունելի են համարւում սոցանից տրուած հրովարտակներն» (Գաղտնիք եր. 83-84։) Շահական այս երերուն վիճակից օգուտ քաղելով աննշան և ստորին մարդիկ գնում են Բագու, Շաքի և Արցախ և ապօրինի միջոցաւ ձեռք բերում խան տիտղոսը։ Դոցանից մին է լինում Նադր-Շահի մունետիկ Ջառչի-Փանահն, որ ոչ եթէ բռնութեամբ ձեռք բերած է խանութիւնը, այլ ձեռնտուութեամբ անհեռատես Մելիք-Շահնազար Բ-ի, որոց պատմութիւնն յետոյ։

ԺԱ. Հարկ համարուեցաւ յայտնել նաև որ ծըռ բառս առաջին անգամ գործ ածած է Գաղ. Ղարաբաղի հեղինակն։ Արցախի գործածական բառով ծըռ նշանակում է անպատուաստ և վայրենի պտղատու ծառ. օրինակ ծըռ տանձի, ծըռ խնձորի, ծըռ թթենի, ևն։ Հեղինակն գործ դրած է բառս փոխաբերական մտքով. այսինքն է կեղծ, ապօրինի, անհարազատ և անպատուաստ բառի նշանակութեամբ։ Որովհետև ծըռ-մելիքներն ոչ եթէ ժառանգած էին մելիքութիւնը իւրեանց հայրերից կամ պապերից և վերջապէս իշխանական ծագումից, որպէս օրէն է, այլ ձեռք բերած են այդ իշխանութիւնը անպատուաբեր, ապօրինի և ամօթալի միջոց-

ներով (1)։ Գաղտնիքի հեղինակն հարազատ անուանած է այն մելիքները, որոց ծագումն ուղիղ գծով իջած է իշխանական տոհմից, որք ժառանգած են մելիքութիւնը իւրեանց պապերից և հայրերից շարունակելով ածանցած է որդւոց որդի և թոռնից թոռն Ջհան-Շահից սկսեալ։ Նմանապէս հարազատ անուանած է Աղուանից այն կաթուղիկոսները, որք օրինական ճանապարհաւ ընտրուած են երկրի հայ հասարակութիւնից, ձեռնադրուած Հայոց հայրապետներից և հաստատուած Պարսից Շահերիցն։ Ճըռ-կաթուղիկոս է անուանում առհասարակ ինքնակոչները, որք առանց հասարակութիւնից ընտրուելու և առանց Հայոց կաթուղիկոսներից ձեռնադրուելու օծուում էին ծածկաբար և իբրև ինքնընծայ նստում Երից-Մանկանց վանքում, ու հակաթոռ է Գանձասարի, ինչպէս էին Խոտորաշենցի Սիմէօն, Ներսէս, Իսրայէլ և միւս Սիմէօն Ճըռ-կաթուղիկոսներն։

Ճըռ անուանուած են նաև Արցախի, Շաքուայ և Բաղուի ինքնակոչն և բռնաւորներն, որք անիրաւ ճանապարհաւ յափշտակած են խանութիւն տիտղոսը և ոչ թէ ըստ օրինի ժառանգաբար։

ԺԲ. Արցախի ճըռ-խանութիւնն ծնում է ճըռ-մելիքութիւն։ Ճըռ-մելիքութիւնն և ճըռ-կաթուղիկոսութիւնն Հայոց հայրապետների ձեռնով սպանում են Աղուանից հազար հինգ հարիւր տարի ապրած հարազատ կաթուղիկոսութիւնը...

ԺԳ. Պատմական անհերքելի փաստն ապացուցանում է որ Աղուանից երկիրը ոտնակոխ անող և նորա իշխանութիւնը տկարացնող տէրութիւններն ամենն ևս ոտնակոխ եղան և տկարացան, ինչպէս էին Պարսից, Արաբացւոց, Խազրաց, Սև-Հոնաց, Թաթարաց, Վրաց, Ցունաց և Օսմանցւոց տէրութիւններն։

ԺԴ. Իսրայէլ Օրին (2), որի պատմութիւնը տեսնելու

---

1) Շուշում ցարդ կան Ճըռ-Մէլիքենց, Ճըռ-Նազարենց ազգանուններն. Ճըռ-Ջալալեան են կոչում Սարգիս եպիսկոպոսը։

2) Հնդկահայոց յատուկ է միասին գործածել իւրեանց անունները և ազգանունները իբրև միացեալ անուն. օրինակ Մկրտէչ

ենք յետոյ, մեծամեծ ծառայութիւններ արած է հայոց, մանաւանդ Արցախին և Մեծ- Սիւնեաց և այն բարոյական և նիւթական նշանաւոր զոհողութիւններով։

ԺԸ. Մենք ոչինչ գրելու չենք Հնդկաստանցի Յովսէփ Էմինի մասին, որովհետև այս անձն Էջմիածնում երջանկայիշատակ Սիմէօն կաթուղիկոսի աչքում երևել է իբրև մի հողմարած մարդ և Արցախում Աղուանից վերջին Յովհաննէս կաթուղիկոսի և հարազատ մէլիքների աչքում, ինչպէս մի ցնորած և յարափոփոխ անձնաւորութիւն։ Վասն զի Յովսէփ Էմին, փոխանակ Իսրայէլ Օրու նման Հայաստանի ազատութեան գործին նուիրուած լինելու, 1760-ին Էջմիածնից ապրիլ ամսում գրում է Վրաց Հերակլ Թագաւորին սոյն մտօք. Ձեր աղջիկը տուէք ինձ հարսնութեան երկու եպիսկոպոսների վաւերացեալ վկայութիւններով. ապա թէ ոչ չեմ մտնիլ Ձեր Թիփլիս քաղաքն։ Հաշտարխանում էլ սիրահարւում է Արցախեցի Աւան-իւզբաշու Մարիամ անուն օրիորդին։ Յովսէփ Էմին—թող իւր անօգուտ թափառական կեանքը—իւր այս երկու յիմարութիւններով բոլորովին կորցնում է իւր վարկը և համարումը կաթուղիկոսների և մէլիքների առաջ և երկար ժամանակ 'իկուր թափառելով աստանդական և հուսկ ուրեմն ապարդիւն դառնում է իւր հօր մօտ Հնդկաստան' 'ի զուր վատնելով իւր նիւթականը։

ԺԹ. Կարգաւ գրելու եմ Պարսից բռնութիւնների մասին, Օսմանցւոց արշաւանքների, Աղուանից և Մեծ Սիւնեաց հայոց քաջութիւնների, վերջինոցս Ռուսաց հետ ունեցած յարաբերութիւնների, ծռ-խաների, ծռ-մէլիքների պատերազմների, ծռ-կաթուղիկոսների անտեղի երկպառակութեանց և հակաքրիստոնէական արարմանց և վերջապէս Ռուս-Պարսկական պատերազմների մասին և մէլիքների իշխանութեան վերջանալու մասին։

ԺԻ. Աղուանից քրիստոնեայ ժողովրդեան ջերմեռանդու-

1) Էմին, Յովսէփ Էմին, Սեթ Աբգար, Սամուել Մուրատ, Ստեփան Ոսկան, Եդուարդ Ռափայէլ, Իսրայէլ Օրի. են. նշանակում է Մկրտիչ Էմինեան, Սեթ Աբգարեան, Սամուէլ Մուրատեան, Իսրայէլ Օրիեան, են։

թեան արտաքին նշանները համարուած են (բացի իւրեանց երկրում ունեցած վանքերից) Ս. Երուսաղէմում ունեցած վանքերն, զորս յականէ յանուանէ մատնանիշ արած է Մովսէս Կաղանկատուացին—Բ. Հատ. եր. 227 տպ. Մոսկ.—գրելով. «Անուանք վանօրէից, որք յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զորս 'ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսաք»։

1) Պանդայ վանք, որ կայ Ջիթեննեաց սարի արեւելեան կողմից, որը շինած է Աղուանից Պոնոն եզնաւորն, բայց այժմ պահում է Աղուանից Պետրոս անուն քահանան (1)։

2) Սուրբ Քառասունք՝ Մրւոյ վանք նոյն կողմում նոյն վանքին մօտ, որը այժմ իւրացրած են Տաճիկներն—արաբներն—(անյայտ է և սորա տեղն)։

3) Պարտաւաց Ս. Աստուածածին վանք, որ մօտ է Դաւթի Աշտարակին (Ս. Երուսաղէմի շրջապարսպի արեւմտեան կողմում Յօպպէի կոչուած մեծ դրան մօտ) որի կէսը պահում է Շամքորցի Մարիամ անուն կինն և միւս կէսը՝ Տաճիկն (2)։

4) Կաղանկատուաց վանք նոյն կողմում, որին այժմ տիրում է քրիստոնեայ Թէոդորոսն (3)։

5) Արցախայ Ս. Աստուածածին և Ս. Ստեփաննոս. վանքեր, զորս տիրապետած են Տաճիկներն (անյայտ են մեզ վանքերիս տեղերն)։

6) Ամարասայ Ս. Գրիգոր վանք, որի կէսը պահում է Գրիգորիկ անուն մի կին և միւս կէսը Տաճիկն (այժմ անյայտ է և սորա տեղն)։

7) Աղուանից երեք վանքեր ևս, զորս բռնութեամբ տի-

---

1) Այժմ անյայտ է վանքիս տեղն և աւերակէ։

2) Այժմ այս տեղն բնակարան է քաղաքապահ զօրաց Թիւրք գլխաւորին։ Բնակարանն կից է պարսպին Ներսի կողմից։

3) Վանքիս տեղը ևս յափշտակած են Տաճիկներն, բայց տաճարի տեղն գտնուում է Սրբոց Յակովբեանց արեւմտեան պարտէզի և քաղաքապահ զօրաց գլխաւորի բնակարանի միջև։

րապետած են Տաճիկներն, յայտնի չեն վանքերիս անունները (անյայտ են տեղերն)։

8) Աղուանից ուրիշ մի վանք ևս, որ շուկայի միջումն է Առաւենից վանքի հետ, որը այժմ տիրապետած են Տաճիկներն. այսինքն է Երուսաղէմի հայրապետներն առ Նախանձու խանգարեցին հայոց և Աղուանից վանքերը. որովհետև հարիւրից աւելի վանքեր կան այնտեղ, որոց մասին հոգ տանելով Հայոց իշխաններն՝ եօթն կենդինար տալով Յուստինոս Թագաւորին (որ է 70000 դահեկան) Թափեցին հայրապետների բռնութիւնից բոլոր վանքերը. յետոյ ամենն ևս այլայլուեցաւ մերայնոց անհոգութեան պատճառաւ» (1)։

Մնամ անձնուէր Ձերդ Ամենապատիւ Սրբազնութեան

Մակար եպիս. Բարխուտարեանց

---

1) Շատ և շատ զարմանալի է որ Հայոց և Աղուանից Երուսաղէմում և նորա շրջակայքում ունեցած հարիւրից աւելի վանքերից այժմ մնացած է միայն ընդամենն մեծ և փոքր տասն վանք։

## Ա. ԳԼ.

*Յովհաննէս և Գրիգոր Դարբանդլի.— Բալա-Ղազար.— Յովսէփ-Բէկ, Ջաւատ-Բէկ և Պետրոս-Բէկ.— Աղուանից Տէր-Յովհաննէս Է.— Տէր-Մատթէոս Դ.— Տ. Արիստակէս Ա.— Տ. Ներսէս Դ.— Տ. Շմաւոն Ա.— Ա. Թովմայ Ա. (1)։*

Դարբանդլի Փիլիպպոս Թագաւորի հետականերից Յովհաննէս և Գրիգոր Թագաւորում են մինչև իւրեանց բնական մահուամբ վախճանիլն, որոց տապանաքարերի վերայ (Ղուբայի Խաչ-մաս գիւղի հանգստարանում) Թագաւոր փորագրելու տեղ փորագրուած են «Յովհաննէս կրէյսար և Գրիգոր կրէյսար».— արդեօք կեսար—։ Անծանօթ են մեզ սոցա պատմական անցքերն, կեանքն և քաջագործութիւններն։ Միայն թէ վկայում են վրստահելի աւանդութիւններն, որ սոցա երկոցունց հետ խիստ մտերմութեամբ վարուած են Խազրաց և Սև-Հոնաց Թագաւորներն և յաճախակի փոխադարձ այցելութեամբ պատուած մէկզմէկի։ Պատմում են որ «Գրիգոր Թագաւորի յուղարկաւորութեան ժամանակ յատկապէս գտնուած է Խազրաց Թագաւորն, շատ լացած և արտասուած»։

Սոցա հետականերից եղած է Բալա-Ղազարն, որ իւր անպարտելի քաջութեամբ պահպանում է Խաչ-մաս գիւղի հայերը լեռնական անընդհատ արշաւող լեկզիների դէմ իբրև Խաչ-մասի բնիկ տէրն և իշխանն ժառանգում է ոչ միայն Խաչ-մասը իւր շրջականերով, այլ և ամբողջ գաւառը իբրև պապենական սե-

---

1) Այսպէս դասաւորած են և Սիմէօն կաթուղիկոսն Ջամբռ եր. 78 և Շահխաթունեանց։

փականութիւնը։ Շրջակայ մահմեդականներն բազմիցս յարձակումներ են գործում սորա վերայ և ամէն ճիգ թափում են մահմեդական կրօնին դարձնել և Խաչ-մաս գիւղի հայ բնակիչները, սակայն միշտ յաղթուած յետ են մղում կորագլուխ, վասն որոյ դրոշմում են սորա վեր Բալա-Ղազար — Փորձանք-Ղազար մականունը։ Մինչև իւր մահն անյաղթ մնալով սա յանձնում է իշխանութիւնը իւր որդի Ջաւատ-բէկին (1)։

Համանման իւր հօրն ամենայն քաջութեամբ և ընտրելագոյն բարեմասնութիւններով և գովանի համբաւով ղեկավարում է Ջաւատ-Բէկն իշխանութիւնը և ապա վախճանում. Թողլով երեք որդի Բալա-Բէկ, Յովսէփ-Բէկ և Պետրոս-բէկ։ Անզաւակ վախճանում է Բալա-Բէկն. Յովսէփ-Բէկի մասին Թողնում ենք, որ խօսի նորա շիրմաքարի արձանագրութիւնն, որ է. «Աստ հանգեաւ երևելի և մեծանուն Նոր-Խաչմազու կալուածատէր Հայկազն (Թագաւորազն) տոհմին Ղազարեանց Յովսէփ-Բէկն Ջաւատ-Բէկեանց, որ Թշնամեաց գաղտնի դարանագործութեամբ փոխեցաւ իրս (իւր) ատրճանակով Ղեզղի իշխանում Ղուբա նահանգիս։ Ծնունդն 5 մայիսի 1824 Թիւ, մահ նորա 1 սեպ. 1862 Թիւ։

Պարծիր տապան քաջազանց,
Կրում ես ծոցիդ ոչ զայլ ոք.
Ջայր հուժկու բանիւք, զինուք,
Առ Թշնամիս անողոք
Դիւցազն մի Քրիստոսեան,
Ջքաջ հայրենասէր Աղուանեան,
Որ Թշնամեաց ածէր սարսուռ,
Ազգիս կացեալ պատնէշ կոռ,
Որ աղքատաց օրն 'ի բուն,
Պաշտպան լինէր աննկուն,

---

1) Սոյն տոհմի արքունի ձմերանոց պալատի բեկորների մասին տես Աղ. երկ. և Դրացիք եր. 134—136։

Որ գրօշմեց զանմահ անուն
Խոր սրտերում անջինջ, անբեկ։
Ջհաւատարբէկեան Յովսէփ—բէկ։
Դու, ո՛վ, որ յաւէտնայնի կացեր անյաղթ,
Միայն յաղթեալ քոյդ հրաղինօք՝ի դարանի,
Թէ և ննջես քուն յաւիտենի,
Չեն քեզ պակաս սիրակէղ
Եւ ոչ մրմունջք աղեկէզ»։

Վախճանուած են և Պետրոս-բէկն և օրհնեալ տոհմիս բոլոր անդամներն. կենդանի մնացած է միայն Պետրոս-բէկի Հռիփսիմէ անուն պարկեշտասուն օրիորդն, որ ամուսնացած է պ. բժիշկ Միքայէլ Զալեանցի հետ (Աշ. եր. և դր. 131—133)։

Տէր Գրիգոր Ա-ոյն յաջորդում է Տէր Յովհաննէս Է. որդի Զալալի, որի հաստատութեան հրովարտակն շնորհուած է Ջահան-Շահից։

Ապա յաջորդում է Տէր Մատթէոս Դ. որ բստ սովորութեան դիմում է Ջահան-Շահին, ներկայացնում Տէր Յովհաննէս Է-ի հրովարտակը, ստանում նորը և գահակալում Գանձակում։

1476-ին Տէր Մատթէոս Դ.-ին յաջորդում է Տէր Արիստակէս Ա. բայց մի տարի պաշտօն վարելուց յետոյ փոխւում է առ Աստուած։

Ջահան-Շահն մեռնելու ժամանակ իւր Հասան-Ալի որդու անարժանութեան պատճառաւ թագը շնորհում է իւր թոռն Եադգարին՝ ասելով. «Որդեակ, հայր գրկուեցաւ թագաւորութիւնից իւր ամբարտաւանութեան պատճառաւ, դու արժանացար այդ շնորհքին, բաց եղիր իշխանութեանդ և մարդասիրութեանդ մէջ»։... այս ասելուց յետոյ՝ վերցնում է թագը իւր գլխից և դնում Եադգարի գլխին և երկրպագում Եադգար-Շահին» (Զաք. Սար. Ա. հատ. և դլ.)։

1478—ին գահակալում է Տէր Ներսէս Դ. որի հաստատ-

մամ հրովարտակն չկայ մէջ տեղ։ Իսկ 1481—1482 գահակալում է Տէր Շմաւոն Ա. ինչպէս ցոյց է տալիս Եաղուբ-Շահից շնորհուած հրովարտակն։ Շմաւոնս եղբօրորդի է Տէր Մատթէոս Դ.-ին (1)։

Տէր Թովմայ Սեօկիւթլուեցի, որ վախճանած է Ճալէթ վանքում, որի տապանաքարի արձանագրութիւնն ցոյց է տալիս մահուան տարեթիւր ՋԽԴ. (1495)։ Մէջ տեղ չկայ և սորա հրովարտակն։ Յիշեալ վանքի մի քարի վերայ (Աղ. երկ. և Դր. եր. 249) փոխադրուած է. «Արդ ես Տէր Առաքել Թզկայ կանգնեցի ս. խաչս և նորոգեցի եկեղեցւոյս (վանուցս) գլուխն... ՋԽԴ. թվոյ Տէր Թովմասայ կաթուղիկոսին Աղուանից, որ ուլուքն նստի պատրիարք շնորհօքն զտան»։

## Բ. ԳԼ.

*Ուզուն Հասան-Շահ Պարսից.—իւր պատերազմն Օսմանցւոց հետ և յաղթութիւն.—Շահ Իսմայէլ Ա.—Աղուանից ժողովրդեան մի մասն գաղթում է Վրաստան և Կախեթ.—Տէր Առաքել և իւր գործերն.—Գահակալութիւն Շահ-Թահմազ կամ Թահմասպ Ա.—Տէր Արիստակէս Բ.—Տէր Սարգիս Ա.— Տէր Գրիգոր Բ.— Տէր Դաւիթ Թ.—Տէր Փիլիպպոս.—Շահ-Իսմայէլ Բ.— Օսմանցւոց և Պարսից պատերազմներ.— Տէր Յովհաննէս Ը.—Մահտարաժամ, սով և գերեվարութիւն։*

Ջահան-Շահի ժամանակ Միջագետքում զօրանալով իշխում է Տիգրանակերտի և մի քանի նահանգների վերայ Թուրքմէն

---

1). Տեղ. Գեղ. եր. 54 գրուած է. «'ի հայրապետութեան Աղուանից Տէր Ղազարին թվին ՋԼԹ (1490)»։ Բայց հայրապետիս անունն չկայ ոչ Ջամբռում, ոչ Շուշում տպուած ժամագրքում, որ հաւաքուած է Բաղդասար միտրապօլտի փոյթ խնամով, ոչ Շահխաթունեանցի և ոչ մեր ժողոված արձանագրութեանց մէջ։

Ջհանկիր իշխանն։ Ջահան-Շահի մահից յետոյ՝ զօրանում է Ջհանկիրի որդի Ուզուն-Հասանն և գրաւում Պարսից գահը և դառնում Հայաստանի և Պարսկաստանի միահեծան տէրն և Շահն 1468-ին։

Այդ ժամանակ արդէն տիրած էին Օսմանցիք Կ. Պօլսին և նորա շրջակայքին և աշխատում էին տարածել իւրեանց աշխարհակալութիւնը։ Արշաւում է Փոքր-Ասիայի վերայ Ուզուն-Հասան-Շահն, առնում է Եւդոկիա քաղաքը, անգթաբար կոտորում բնակիչները և յառաջ խաղում Կիլիկիոյ վերայ, որ Օսմանցւոց ձեռքն էր։ Անձամբ դիմաւորում է իւր բանակով Սուլթան Մէհէմէտ Բ. Դերջանի մօտ յաղթում է Ուզուն-Հասան 1473-ին և փախչում։

Սոյն Շահի մահից յետ գահակալութեան համար ծագում է մեծ խռովութիւն սորա որդւոց և թոռանց մէջ. այդ շփոթութիւնից օգուտ քաղելով Սեֆեան Իսմայէլ գրաւում է Շահութիւնը և 1500-ին Թաւրիզում հաստատում իւր գահը և կոչւում Շահ-Իսմայէլ Ա. որից սկզբնաւորւում է Սեֆեան տոհմի Շահութիւնն։ Շահս, որ որդի էր Հայդարի և թոռն Արդաւիլցի Շեխ-Սեֆի իշխանին, նորոգում է Պարսից թագաւորութիւնը և Ասպահան քաղաքը և գահակալում սորա մէջ։ Համարեա՛ թէ 1500—1826 թիւն պատերազմի ասպարէզ և կռուի դաշտ է դառնում ողորմելի Հայաստանն, Ատրպատականն և Վրաստանն և Աղուանից երկիրն Պարսից և Օսմանցւոց և ապա Աղուանից երկիրն 1578—1826 թիւն Պարսից, Օսմանցւոց, Լեկզիների, Ռուսաց և հայ մելիքների մէջ։ Յաճախակի միմեանցից յափշտակելու պատճառաւ քանդւում և աւերւում են պատերազմի դաշտ դառած երկիրներն, կոտորւում և գերեվարւում են քրիստոնեայ ողորմելի բնակիչներն։ 1500 թւին Շահ-Իսմայէլ զէնքի զօրութեամբ Օսմանցիներից յետ է առնում Ատրպատականը և Շամախին և հաստատում Թաւրիզում իւր աթոռը։ Այն ժամանակ 15 տարեկան է լինում Շահն (Պատ. Օսմ. Ա. Հատ. եր. 240)։

Մի գրչագիր աւետարանի յիշատակարանում (Արցախ եր. 42) գրուած է «ՋԾԴ (1505) թուականիս՝ վրաց Կախեթ անուն երկրում վրաց բարեպաշտ Աղեքսանդր թագաւորի և նորա Գէօրգի որդու ժամանակ զօրացած էր Զարևաներ (չար և աւերիչ?) Շեխ (Շահ Իսմայէլ) այն տղղի համար, որ կոչուում է Ղզլպաշ, որ ելաւ արևելից, առաւ Թաւրիզի թախտը, կոտորեց և կորցրուց թիւրքմանին ազգը, առաւ բոլոր աշխարհը և աւերեց Հայոց և Տաճկաց շատ գաւառ, ամենքն թողին իւրեանց բնակութիւնները և եկին Վրաստան»: Այդ թուականներում տեղի ունեցած է և Աղուանից երկրի հայերի մի մասին Կախէթ գաղթելն:

1505-ին Տէր Թովմային յաջորդում է Սէօկիւթլուեցի Տէր Առաքել կաթուղիկոսն, բայց նստում է Ծալկէթի վանքում: Գրել և ծաղկել տալիս նոյն վանքի միաբան Ստեփաննոս եպիսկոպոսին մի աւետարան (Աղ. երկ. և Դր. եր. 246—250) որի յիշատակարանում ասում է. «՚Ի թվ. ՋԿ (1511) ես Տէր Առաքել կաթուղիկոս գնեցի վերստին պարոն Հասան բէկէն եկեղեցւոյս դրան Ծալեթ գիւղս գռ. (3000) թանկա խարճ արի և տուի վասն մեր հոգւոյս սուրբ Աստուածածնիս. և ով հակառակի այս գիւղ Ծալէթիս կամ խլէ...»: Իսկ յիշատակարան գրողն ասում է. «ղի ժամանակս երերանէք և ոչ գոյր խաղաղութիւն»:

1522—ին (1) մեռնում է Շահ-Իսմայէլ Ա. ու գահակալում է իւր որդի Շահ-Թահմազ կամ Թահմասպ. Ա. որ քաջութեամբ պատերազմելով կրկին յետ է առնում Սուլթան Սուլէյման Բ-ից Թաւրիզը և ուրիշ տեղեր:

Տէր Առաքելին յաջորդում է Տէր Արիստակէս Բ (72) որի անունն յատկապէս յիշուած է Շահ Թահմազ Ա.-ոյն տուած հրովարտակում, և գահակալում Գանձասարում, ինչպէս ե-

1) Ըստ. Առ. վարդ (եր. 630-5271-ին. Զաք. սար. եր. 10 Ա. Հատ. 1526: 2) Սա ամփոփուած է Ս. Յակովբում (Արցախ եր. 171)

ցնում է հրովարտակից պաշտօնավարած է կարճ ժամանակ։

Ապա գահակալում է Տէր Սարգիս Ա. Գանձասարում։ Սա եղբօր որդի է Աբխատակէս Բ-ին և որդի Հատիր—Մէլիքէին, որպէս ապացուցանում են շահական հրովարտակն և հետևեալ արձանագրութիւնն. «Թվ. ՋԴԵ (1546) ես Սարգիս կաթուղիկոս որդի Հատիր Մէլիքէին, թոռն մեծին Սայտունին գնեցի զհայրենիքն 'ի Կասրայ զ. (6) ստակ. մինակ սան Գ. ստակ և կէս, Առատոնոյ Բ. ստակ. Կռւանալայ Գ. ստակ և տվի Ս. ուխտս Գանձասարայ. ով զայս հայրենիքս հանէ 'ի Ս. եկեղեցւոյս. ԳՃԺԸ. հայրապետացն նզոված է...»։ Հայրապետս վախճանում է 1555—ին, որին և յաջորդում է 1556—ին Տէր Գրիգոր Գ, որի անունն ևս յիշուած է մի հրովարտակում ի միջի այլոց, «Գալով մեր պալատն Սարգսի (Ա. կաթուղիկոսի) եղբօր որդի Մէհրապ-Բէկի որդի Գրիգոր կաթուղիկոսն (1)»։ Մի գրչագիր մաշտոցի յիշատակարանում գրուած է. «'Ի հայրապետութեան (Աղուանից) Տեառն Գրիգորի... և իշխանաւոր տեղւոյս Մէհրապ բէկին և աշխարհակալ Շահ Դամանին (Թահմազին) ի թվիս Հայոց ՌԹ. (1560) (Աղ. երկ. և դր. եր. 177 և 208) յիշուած է դարձեալ սորա անունն 1564 թւին Փրկչական։ Գրիգոր կաթուղիկոս 1573-ին ուրանում է իւր հաւատը, որին տեղակալում է Տէր Դաւիթ Թ. առաջածորցի նոյն իսկ թւին. սակայն խաչենցիք մեզ անյայտ պատճառաւ խեղդում են կախելով Գանձասարի զանգակատնից. 1574-ին խեղդուածին տեղակալում է Տէր Փիլիպպոս Բումեցին, որի հրովարտակն չկայ մեջ տեղ։

1575-ին մեռնում է Շահ-Թահմազ Ա. և գահակալում է իւր որդի Շահ-Իսմայէլ Բ.։ 1576-ին (2) Սուլթան Մուրատ գ-ի հրամանաւ Լալա-Մուստափա փաշան մեծ զօրքով

---

1) Ջալալեան տոհմից եղած են Աբխատակէս Բ. Սարգիս Ա. և Գրիգոր Գ.։

2) Ըստ ոմանց 1575-ին։

արշաւում է Վրաստանի վերայ։ Ղարսից Թոխմախ-խանն էլ իւր բանակով ճակատում է Օսմանեան բանակի դիմաց։

Մուստաֆա փաշան գրաւում է ամբողջ Վրաստանը և Թիֆլիսը, վերջինիս մէջ մզկիթի է փոխում վրաց երկու եկեղեցիները, կարգում է երեք կուսակալներ, Թիֆլիսի վերայ կարգում է Մէհմէտ փաշան, Կախեթի վերայ Աղեքսանդր իշխանը, Սուխումի վերայ Հայդար փաշան, ապա առնում է յաղթուած Պարսիկներից Արաշի բերդը (1) և Շամախին։ Իսկ Օսման փաշան, որ եկած է լինում Խրիմի խանին եղբօր Ադիլիքէ-բէկի հետ Դարբանդի կողմից, պատերազմում է Պարսից դէմ, որոնց կուրացեալ Խուդաբանդա-Շահի (2) որդի Համզա-Միրզան, իւր մօր հետ անցնելով բանակի գլուխ, յաղթում է Օսմանցւոց բանակին և ձերբակալում Ադիլիքէ-բէկը. իսկ Օսման փաշան ազատուելով հասնում է Դարբանդ։ 1578-ին Խրիմի Մէհէմէտ-քերէյ-խանն բաւական զօրքով հասնում է Դարբանդ և միանում Օսման փաշայի հետ, ապա ասպատակում Ղուբայի և Բագուի գաւառները և հասնում Շամախի (Պատ. Օսմ. Ա. Հաա.)։

Իսկ Ծարեցի Յովհաննէս վարդապետն միևնոյնը պատմում է այսպէս. Օսմանցւոց Լալա փաշան գրաւում է Թիֆլիսը, շինում քաղաքի մէջ բերդեր, և ամրացնում, որի մէջ և զետեղում շատ զօրք։ Այդ ժամանակ թագաւորում էր Վրաստանում Բագրատունի ազգա. Սիմոն թագաւորն, որ ակամայից ընդունած էր Մահմետական շիա աղանդը՝ բայց զղջանալով պաշտում էր Քրիստոնէութիւնը։ Լալա փաշայից փախցնուում է Կ. Պոլիս Սիմոն թագաւորն, Դմանիսում և Գորիում շինուում են շատ ամրոցներ։ Լալա փաշան մինչև Դարբանդ ամէն տեղերում գնելով զօրք, Դարբանդում կարգում է զօրապետ Օսման փաշան։ Այս հաշւով Օսմանցիք գրաւում են Աղուանից երկրի

1) Բերդիս մասին տես Աղ. երկ. և գր. եր. 286, ԼԴ. բերդ։

2) Շահ-Իսմայէլ Բ-ին յաջորդում է Խուդաբանդան 1576-ին, որը կուրացնում են։

դաշտային մասերը բացի Արցախից և Շաքուայ լեռնային գաւառներից։

Հարկ է յայտնել որ 1557-ին Օսմանցւոց զօրքն արդէն մտած էր Ջրաբերդ գաւառի դաշտաբերանի գիւղերն․ սակայն Ջրաբերդցի քաջերն սպանում են 700 թիւրք զինուոր իւրեանց դնգապետով (1)։ Նոյն շիրմաքարի վերայ քանդակուած է մի քաջ հայ ձիաւորի պատկեր, որ հանած է իւր թուրը և բարձրացրած մի այլ օսմանցի Փէսով ձիաւորի վերայ, որ իջած է իւր ձիուց, բռնած նորա կապը, արձակած իւր թուրը յանձնում է յաղթողին, կանգնած խղճալի դիրքով։

1578-ին Փիլիպպոս կաթուղիկոսին տեղակալում է Յովհաննէս Ը. հայրապետն, որի անունն յիշուած է մի ձեռագիր աւետարանի յիշատակարանում (Արցախ եր. 318, և Ջաքար. սար. Ա. Հատ. եր. 47) և Շահ-Աբաս Ա-ից տուած հրովարտակում։ Սոյն կաթուղիկոսն Ջալալեան տոհմից էր և եղբօրորդի Գրիգոր Գ-ին։

1579-ին Սինան փաշան իւր բանակով մտնում է Թիփլիս ինչ ինչ բարեկարգութիւններ անելու․ բայց երբ լսում է որ Պարսից Շահն գալիս է իւր վերայ 60 հազարաւ, հեռանում է Կարին (Պատ․ Օսմ. Ա. Հատ. եր. 436—441)։

1579—1581 թուականներում Պարսից և Օսմանցւոց յաճախակի արշաւանքներն բերում են Աղուանից երկրի համար մէկը միւսից աւելի քստմնելի պատիժներ, այն է սոսկալի սով, սարսափելի մահտարաժամ, անխնայ սրածութիւն և անգութ գերութիւն, որպէս գրած է Տարեցին (Առ. վարդ․ եր. 608—614) որից համառօտակի բերում ենք հետևեալը։ Եղաւ սարսափելի մահ-

---

1) «Այս է տապան Ղուպատ որդի Յովհան... չբէ եղբարսն զայն ստայօն թվ. ռ. գ. (1557) եկաւ երկրիս շատ տեղ... ցայք վերջին (կէտաւ. բառերն անընթեռնլի են) ղալամէ տեսար ազգար եկաւ մեզ վերայ էճ. (700) թոփկոլա եկաւ, իմ քարէն չկարաց անել, յետոյ մասինհազարն գան (տան) սպանեցին» (Արցախ, եր. 213—214)։

տաճկաժամ Ատրպատականում և ամբողջ Ադուանքում, այնպէս որ սնուէր Ռուսացին շատ տուներ և անգամ շատ հայրեր և մայրեր։ Օսման փաշան՝ հաւաքելով Կովկասեան լեռնային լեզգիները՝ անթիւ ձիաւորներով հալածական և փախստական դարձնելով Պարսաւի և Գանձակի պարսիկ իշխողները, մի աւուր մէջ աւերեցին Գանձակը, Պարտաւը, Ջրաբերդը, Խաչէնը, Վարանդան, Դիզակը, Զարեքի գետից մինչև Երասխ, դերեցին աչաց հաճելիները, կոտորեցին անհաճոները և հինգ օրից յետոյ դարձան իւրեանց տեղերն։

Միւնոյն թւին եղաւ և անպատմելի սով. այնպիսի սով, որ մարդիկ գազանի պէս սկսեցին հոմակերութիւն։ Պարսից իշխանութեան տակ եղած բոլոր գիւղերն քանդուելով աւերուեցան. անօթի և անտուն շրջում էին արք և կանայք, ծերք և պատանիք, տղայք և աղջկունք. անճարացած ուտում էին սևացած մարմնով վայրի բանջարներ և խոտեր, ուռչում էին նոցա գլուխներն և մեռնում էին չարաչար։ Տուն դարձած ժամանակ մեռնում էին արօտատեղերում, գիւղամիջի պատերի տակ և քանդուած տուների անկիւններում։ Մեռածներից շատերն չարժանացան գերեզմանի, այլ պատառոտուեցան գազաններից։ Կատաղեցան շուներն և գայլերն մեռած մարդոց միս լափելով և սկսան օր ցերեկով յարձակուել կենդանի մարդոց վերայ և լափել....։

Գ. ԳԼ.

*Ազգաբանութիւն և գործք Գեղարքունեաց և Ծար գաւառների իշխողաց (1455—1804)։*

Բարւոք համարեցինք կարգաւ դասաւորել իւրաքանչիւր մէլիքութեան իշխող անդամները իւրեանց աղգաբանակութեան շարքում. որպէս զի հետաքրքիր բանասէրն և ուշիմ ընթերցողն, իւրեանց առաջ ամփոփ տեսնելով իշխող գերդաստանի անդամները և նոցա գործողութիւնները, դիւրաւ կարողանան

կազմել գաղափար։ Ցուսալով որ անհանոյ չթուիր այս ձեն ազնիւ բանասիրաց և այս դասաւորութիւնն ընթերցողաց, որք տնձամբ շօշափելով տեսնելու են, որ մեծամեծ նեղութիւններ կրած է խեղճ պատմագիրն, հաւի նման անխոնջ քչեծ անելով կրցկտուր թերթերի, խառնիխուռն արձանագրութեանց և կտորբրդուջ թերթիկների մէջ, որովք արած է թակագին ժամանակի կորուստ և տոկուն աշխատանաց մեծ զոհողութիւն։ Վերջապէս յուսամ թէ կը զգան, որ հեշտ աշխատութեան գործ չէ այս, այլ տարժանելի տքնութեանց և դառն քրտանց արդիւնք։

Մէլիք-Ուլուբէկ որդի Շահանշահ իշխանի Դօփեանց, որ մէլիք հաստատուած էր Ջահան-Շահից Գեղարքունեաց և Ծար գաւառների վերայ, բնակութիւն է հաստատում Գեղարքունեաց Մեծ-Մազրա աւանում։ Քաջութեամբ վախճանում պաշտպանելով հայրենիքը և ժողովուրդը։

Մէլիք-Աբով Ա. որդի Մէլիք-Ուլուբէկի (1)։ Մէլիք-Աբովս յարգուած է և գովաբանուած իւր բարեգործութիւններով, աստուածպաշտութեամբ և քաջութեամբ, ըստ բանաւոր աւանդութեան և աւանդութեան ոմանց, բայց գրաւոր յայտնի չէ մեզ և ոչինչ։ Սա վախճանում է իշխանութեան ղեկը յանձնելով իւր որդի Մէլիք-բէկին։

Մէլիք—բէկ Ա. որդի Մէլիք—Աբովի Ա-ոյն (2) որ իւր մէլիքութիւնը հաստատող ստանում է Ծահ—Թահմազ Ա-ից Տաճկաց 964 թւին հիջրի ռամազան լուսին (յամի Տեառն 1557-ին) նորոգում Մաքենեաց վանքը և ուրիշ շինութիւններ, թողնում հինգ որդի և բարեկարգութիւններ անելով վախճանում։

---

1] Ոչ Մէլ. Ուլ. հրովարտակն կայ մէջ տեղ և ոչ Մէլ. Աբովինս։ «Հայոց թվին ՌԺԷ (1568)... կանգնեցաք խաչերս փրկութեան հոգւոյն Ուլու-բէկին» (Տեղ. Գեղ. եր. 625)։

2) «Շնորհիւն Աստուծոյ ես Մէլիք բէկս որդի մեծի պարոն աստուածապահ Աբովին իշխող տանս Գեղամայ, վերստին նորոգեցաք զեկեղեցիս (վանքս) յիշատակ ինձ և իմոցն» (Տեղ. Գեղ. եր. 571)։

1574-ին յաջորդում է իւր հօր Մէլիք—Շահնազար Ա. (1)։ 1601-թւին Շահ—Աբաս Ա. որ կուրացած Խուդաբանդա-Շահի որդին էր, Թիփլիսից դառնալով գնում է Գեղարքունեաց Մեծ-Մազրա աւանն և հիւր լինում Մէլիք-Շահնազար Ա.-ոյն։ Հայազգի, հզօր և փառաւոր իշխանս հիւրընկալում է Շահը և մեծարում թագաւորավայել պատւով և յարգանքով։ Սակայն ինքն մելիքն ևս մտերմաբար յարգում, մեծարում և պարգևատրում է Շահից պատուական և ազնիւ զգեստներով, մէլիքութիւնը հաստատող կրկին հրովարտակով (մէջ տեղ չկայ Ա. հրովարտակն)։ Շահն մէլիքին և նորա եղբարց շահական հրովարտակով պարգևում է շատ գիւղեր և ուրիշ կալուածներ. որպէս զի անփոփոխ լինի նոցա տոհմի մէջ իշխանութիւնն եւ կալուածների ժառանգութիւնն (2) որդւոց որդի յաւիտեան (Առ. վարդ. Գհ. Ը.)։

Բաց յայդցանէ Շահն Պարսկաստանից մտերմաբար գրում է յետոյ մէլիքիս հրովարտակ. «... զի բարենշան ընտրեալդ յազգըս Քրիստոնէից Գեօգչայի (գեղարքունեաց) Մէլիք— Շահնազարդ, անհուն ողորմութեամբ մերով բարձրագլուխ եղեալ գիտասջիք. յիրաւի ի հերուն հետէ յայտնի է արեգակնանման մըտաց մերոց՝ միակերպ համաձայնութիւն Ձեր առ մեր արքունական սերունդս։ Անցաք մեք յաշխարհն Ատրպատականի առ ի սատանալ զայն, որ հայրենի երկիր ժառանգութեան մեր է. տիրացաւ արքայանիստ քաղաքն Թաւրէժ ի հզօր կառավարու-

---

1) «Ի թվին Հայոց ռիէ. (1578) կամաւն Աստուծոյ մեք հինգ եղբաքս, ես Պարոն Մէլիք Շահնազարս, Մայիլ բէկս, Տաթլու բէկս, Միրզայ բէկս, Մելքում բէկս և մայր մեր խանում աղէս կանգնեցաք զխաչս բարեխաւս հօր մերոյ Մէլիք բէկին» (Տեղ. Գեղ. եր. 610)։

2) Գիւղերի անուններն յիշուած են հրովարտակումն, Ջամբռում և Տեղ. Գեղ. եր. 808, որք են Ալթունթախթ, Գիւրճի վերան, Միրապատ, Մեծ-Ենկիջա, Փոքր—Ենկիջա, Ամարաք, Փոքրարաք, Մաքար, Ղանդուլեղդարա, Դրախտիկ և Գիւնի։

թենէ կառավարչացն տէրութեանս, արդ ճարակ եղեն ի ձեռս յՕսմանցւոց անձինք իբր եօթն հազար. փախչայն Թաւրիժայ ընդ այլ փախուցեալց և ապրշարաց ըմբռնեցաւ և մերոց շնորհաց եղև Թաւրէժ իբրև ողբալի ցանկալի...»:

Պատշաճ համարեցինք զետեղել այստեղ հետևեալ յիշատակութեան արժանի յիշատակարանը, որի մէջ պարծանքով պատմուում է գրողն մէլիքերս զթառատ ողորմածութիւնը և սորա օրհնեալ դերդաստանի բոլոր անդամոց անունները: Յիշատակութիւն կրող ձեռագիր աւետարանն գտնուում է Արցախի Փառախոս գաւառի Ղուլալի գիւղում:

«Արդ ի թվականիս ռիդ. (1575) վասն ծովացեալ մեղաց մերոց եղև սաստուածասաստ բարկութիւն, զի սով էր, մահ էր, սրածութիւն և հարկապահանջութիւն յամենայն տեղիս և արհաւիրք: Այսպիսի ամի գովելի Մէլիք Շահնազարն և բարի ամուսին Ֆահրի Ջահանն որ իբրև զհայր և զմայր այցելուին մեզ հերակրաւք և ըմպելեաւք: Դարձեալ յիշեցէք զպարոնաց պարոն և զիշխանաց իշխան Մէլիք Շահնազարն և զհայրն իւր զպարոն Մէլիք-բէկն, և զմայրն իւր զպարոն Խաթունաշէն և զկողակիցն իւր զպարոն Ֆահրի Ջահան և զփրկասուն որդիքն իւր զՇահնազար բէկն, զՅիսա (Եսաւի) բէկն, զԴիլանչի բէկն, զՔամալ բէկն, զԱղրի բէկն և Նիազ բէկն, զդուստրն իւր Խաթունաշէն և զթոռն իւր Նազարն և համեստ հարսունքն իւր զպարոն Վախվախն, զԱղա Սուլթանն և զփոխեցեալ որդին առ Քրիստոս զպարոն Տէր Յավհաննէսն և Տիրին բաշին և Ջաւահիրն... (1):

Կրկին Պարսից իշխանութեան տակ են ընկնում Հին-Նախիջևանն և Երևանն. Քամալ-բէկն պատերազմում նշանաւոր յաղթութիւն է տանում Օսմանցւոց դէմ: Այս պատճառաւ

---

1) Մէլիքութեան ժամանակ մէլիք տիտղոսի հետ գործ էին ածում պարոն պատուանունը մէլիքների, նոցա կանանց, որդւոց և հարսանց և միանգամայն հոգևորական եղածների համար. բէկ էին կոչուում մէլիքների եղբայրներն, որդիքն և թոռներն:

չատկապէս Շահ-Աբաս Ա.-ից շնորհուած (Տանճ. 1013-ին 1650 փրկ.—) հրովարտակում շեշտուած է. «Արքայական հրաման եղաւ... Մելիք Շահնազարի որդի Քամալին, որ թշնամեաց հետ պատերազմելով և քաջութիւն անելով Կոյս կենդանակերպի սկզբում, Ջար-Ջիբիլի (Մար գաւառի) Ղարասախալ գիւղի թագաւորական հարկը գիւղով միասին պարգևեցինք Քամալին ըստ յայտարարութեան արքունի գործակալներին, ևլն»: Հրովարտս կը զգուշացնում է Հին-Նախիջևանի խանը և յիշեալ գիւղի տանուտէրը, որ Քամալ-բէկից չպահանջեն հարկերը:

1606-ին վախճանում է Մելիք-Շահնազար Ա. (1) որին յաջորդում է իւր որդի Մելիք-Եաւրին՝ Շահ-Աբաս Ա.-ի Տանճ. 1016-ին արձակած հրովարտակով, որով Շահն, ՚ի միջի այլոց, հրամայում է Ղօրչի Մուհէմէտ-Ղուլի-բէկին. «Գեղամայ ծովակին գաւառին գերիները բաշխել ենք. ապա ուրեմն որոց մօտ և ս գտնուին գերիներն, երևելի նախարարներին, արգոյ պաշտօնեաներին և 'առ հասարակ զօրականներին անգամ, չպահել իւրեանց մօտ գերիները, այլ յանձնել իւրեանց տէրերին... յանձնել Մելիք-Եաւրուն»: Մելիք Եաւրու շիրմաքարից յայտնի է, որ վախճանուած է անողորմ մահուամբ (2):

Մելիք-Եաւրուն յաջորդում է իւր եղբայր Մելիք-Քամալն Շահ-Աբաս Բ-ի հրովարտակով, որի մէջ Շահն ի միջի այլոց գրած է «... ի գալ ընտրելոյն ի Քրիստոնեայս Մելիք Քեամալին եղբօրն Մելիք Եաւրումին յաշխարհայոյս տունս մեր,

1) «Այս է հանգիստ պարոն Մելիք-Շահնազարին, որ էր սա տէր և իշխան երկրիս Գեղամայ, մեծաշուք և աստուածասէր իշխան էր սա. բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս թագաւորութեամբ Շահ-Աբասին թւին ռծե. (1606) « (Ս. Ջալ. Բ. Հատ. եր. 111):

2) «Այս է հանգիստ պարոն Եաւրի բէկին, որդի պարոն Մելիք Շահնազարին. անողորմ մահուամբ՝ փոխեցաւ» (նոյն երեսում): Ո՞ր թւին վախճանած է. քանի՞ տարի գահակալած է, ինչ տեսակ մահուամբ վախճանած է, բնական թէ պատերազմում:— Չգիտենք ստուգիւ. գոնէ անյայտ է մեզ:

յայտնեաց զմահ եղբօր իւրոյ… զկէշեալ նահանգի մէլիքութիւնն ըստ առաջնոցն նմա յանձն առնեմք այսինքն Մէլիք Քեամալին… գրեցաւ յամսեանն բամազանի 1019 Տաճ. թւ…» (Տեղ. Գեղ. եր. 788—790)։

Մէլիք-Քամալին յաջորդում է իւր որդի Մէլիք-Շափուրն Տաճ. 1030-ին յամսեանն ճեմադի էվվէլի Շահ-Սեֆու հրովարտակով Մէլիք Քեամալի որդի… Մէլիք Շափուրն եկեալ ի բարձր դուռն մեր խնդրեաց զհաստատութիւն յարքունուստ…

Մէլիք—Շափուրին յաջորդում է Մէլիք-Սաքով Բ. Տաճ. 1060-ին րէճէպ ամսում, որ Մէլիք-Շափուրի փոքր եղբայրն էր, բայց այժմ չկայ սորա հրովարտակն, միայն թէ կայ փաստաթուղթ (Տեղ. Գեղ. եր. 790—792), որով Երևանի պարսկական դատարանի միջոցաւ շահելով Ղարանլուխ—Դաքայի դաշտը, տիրում է իւր պապենական իրաւանց և սեփականութեանց։ Ապա այնուհետև միմեանց յաջորդում են հետզհետէ.

Մէլիք-բէկ Բ. որին (1)

Մէլիք—Շահնազար Բ. (2) որին

Մէլիք—Բէկ Գ, որդի Մէլիք-Շահնազար Բ-ի.

Մէլիք—Շահնազար Բ. որի օրով Շուշու Մէլիք-խանն յափշտակում է Ծար գաւառի մի մասը։ Վերջին մէլիքս գրում է աղաչանաց թուղթ Շահ—Սուլթան-Հիւսէյինին, որ յետ դարձնէ իւր իրաւունքը։ Շահն, Տաճ. 1121-ին մի յատուկ հրովարտակով հրամայում է Շուշու և Երևանի խաներին սեփականութիւնը անպատճառ յանձնել Մէլիք-Շահնազար Բ-ին, որին յաջորդում է իւր որդի

Աղաջան-բէկն, իսկ միւս որդին Միրզաջան-բէկն ծառա-

---

1) Մէլիք-բէկ Բ—ի և Գ—ի նշխարհներն ամփոփուած են Ծար գիւղաքաղաքում (Արցախ եր. 406)։

(2 «Թվ. ռճխդ (1695) ես Մէլիք. Շահնազարս… ամուսին Խանզատէն շինեցինք սուրբ Աստուածածին ձեռամբ Յակովբին» (Արցախ եր. 377)։

յում է Պարսկաստանում Ֆէթհալի Շահի արքունիքում։ Աղաչան-բէկին յաջորդում է

Միհրանսարն իւր որդին Նասր-Շահի ժամանակ։ Միհրանսարս սպանուում է, վասն որոյ հետզհետէ աւերուում են Գեղարքունեաց գաւառներն մինչև Մէլիք-Բիւլբիւլի ժամանակ, որի օրով ծագում է 1804—ի պատերազմն Ռուսաց և Պարսից մէջ Ցիցիանովի զօրավարութեամբ։ Այդ ժամանակներում Մէլիք-Բարսեղ (1) 500 ծուխ սեփական ժողովրդով գաղթում է Գանձակի կողմերն՝ զզուած լինելով պարսիկների անխիղճ արարմունքներից. այս և այն կողմեր գաղթում և ցրուում են և Ծարի հայ բնակիչներն։

Ասպահանում Մէլիք-Շահնազարեան Միրզաջան-բէկից ծընուում է Ծատուր-բէկն. սորանից էլ Դաւիթ բէկն, որ լինելով ուշիմ և մտացի՝ ուսանում է պարսկերէն և արաբերէն. ապա գնում է Փարիզ և սովորում գաղղիերէն։ Այդ միջոցներում Գաղղիացւոց դեսպան գեներալ Ժօբերթն Նապոլէօնի կողմից Ֆաթալի-Շահի մօտ գնալիս Անգղիացւոց թելադրութեամբ բանտարկուում է Հին-Բայազիտում։ Նապոլէօն կամենալով Ֆաթալի-Շահի մօտ յղել մի ուրիշ բանիբուն դեսպան կամ թղթատար, Ջրպետեանից իմանում է Դաւիթ-բէկի արժանաւորութիւնը, որին յանձնում է զանազան թղթեր, որ տանի Թեհրան իբրև պարսկագէտ ծածկադեսպան։ 1804—1805 Բաղդատի Պարսից դեսպան Բայաթ-Իսմայէլ-բէկն յայտնում է Թեհրանի արքունիքին՝ թէ Դաւիթ-բէկ անուամբ մի հայ, որ եկած է առևտուր բանալու Փարիզի և Բաղդադի մէջ, ունի Նապոլէօնից Շահին ուղղեալ նամակներ, խնդրեց որ զինքը հաւատարիմ մարդով յղեմ Շահի մօտ։ Արքունի հրամանաւ ինքն Բայաթ-Իսմայէլ բէկն անձամբ առաջնորդում է Դաւիթ-բէկին Թեհրան։ Բայց դարձեալ Անգլիոյ դեսպանի թելադրութեամբ Ֆաթալի-Շահն խարդախ է համարում Նապոլէօնի պաշտօնական թղթերը. սակայն Դաւիթ-բէկն

---

1) Մեզ յայտնի չէ թէ որի որդին էր Գեղարքունեաց և Ծար գաւառի վերայ իշխող Մելիք-Բարսեղն։

յաջողում է ստանալ Շահից ստացական հրովարտակ, որով յայտնում է թէ իրան հասած են պաշտօնական թղթեր։

Դառնում է Փարիզ Դաւիթ-բէկն և Նապոլէոնի կողմից կրկին յղուում Թեհրան, ուր փառաւորապէս կատարելով իրան յանձնուած գործը, մտնում է Պարսից ծառայութեան մէջ Դաւիթ-բէկն, կատարում թարգմանի պաշտօն, ստանում խանութիւն և շիրր-խուրշուդ շքանշանը, կոչուում Միր-Դաւիթ-խան և վերադառնում Փարիզ՝ Պարսից դեսպանի պաշտօնով 1806-ին, ինչպէս գրած է Մես. Թաղիադեանց· «՚Ի 1806 արքայն Պարսից դեսպան առաքեաց ՚ի Պարիս և շարունակեաց զայն ցամս 16 երորդ, յորում մեծանուն իշխան Հայկազուն Դաւիթ Մելիք Շահնազարեան, այր զաղղիագէտ և հմուտ իրողութեանց Եւրոպայ, առաքեցաւ ՚ի դիմաց թագաւորին նորին դեսպանութեամբ ՚ի Պարիս» (Պատ. Պարս. Ա· Հատ. եր· 223)։ 16 տարուց յետոյ, այն է 1817-ին Միր-Դաւիթ-խան դառնում է Պարսկաստան, ներկայացնում Ֆաթալի-Շահին այն բոլոր հրովարտակները, որք տրուած էին Պարսից Շահերից իւր մելիք պապերին և ստանում շահական նոր հրովարտակ ժառանգելու իւր նախնեաց սեփականութիւն Գեղարքունի և Ծար գաւառները։ Ապա դիմում է թագաժառանգ Աբաս-Միրզային, որից ևս ստանում հրովարտակ ուղղեալ Երևանի Սարդարին, որպէս նոյն պաշտօնական թղթերով իւր քրոջորդի Երևանցի Խաչատուր-բէկն իբրև ժառանգ տիրէ յիշեալ գաւառներին. իսկ ինքն Շահին հրամանաւ վերստին գնում է Փարիզ։

Միր Դաւիթ-խան, 1824-ին Մոսկուայից գնում է Թիփլիս, ներկայանում Վրաստանի կուսակալ Երմօլովին և մատուցանելով Մելիք-բէկ Ա-ի, Մելիք-Շահնազար Ա-ի, Մելիք-Եաւրու և Մելիք-Քամալի հրովարտակները մի յատուկ խնդրագրով, խնդրում որ յետ դարձնէ Մելիք-Բարսեղը իւր 500 ժողովրդով Գեղարքունիք։ Կուսակալ Երմօլովն նոյն 1824-ին հոկ. 29-ին պաշտօնապէս պատասխանում է Դաւիթ-խանին ի միջի այլոց թէ՝ թոյլ կտամ հայրենիք վերադառնալ միայն Մելիք-Բարսե-

ղը, իսկ նորա հետ գաղթած ժողովրդին՝ ոչ երբէք, պատճառաբանելով թէ տակաւին Ռուսաց և Պարսից մէջ որոշուած չեն Գեօգչայի սահմանները, վասն որոյ կարելի չէ թոյլ տալ ձեզ տիրել այն կողմերին, որք այժմ Ռուսաց տիրապետութեան ձեռքում են։

1826-ին Ռուս Պարսկական պատերազմներն վերջանալուց յետոյ՝ Միր-Դաւիթ-խան հրաժարական է տալիս, հեռանում Պարսից ծառայութիւնից և Թիփլիս գնալով վերոյիշեալ Խաչատուր-բէկի հետ և ընդունում ռուսահպատակութիւն։ Այնուհետև Մէլիք-Բարսեղն, Ռուշանն, Միանսարն և Մովսէս Մէլիք-Շահնազարեաններն իբրև մերձաւոր ազգականներ տալիս են Միր-Դաւիթ-Խանին համաձայնութեան վկայաթղթեր, որ իբրև լիազօր կալուածատէր Ռուսաց դատարաններում պաշտպանէ իւրեանց ժառանգական իրաւունքները։ Վերջապէս Միր-Դաւիթ-խան իւր ձեռքում եղած փաստաթղթերով ապացուցանում է որ իւրեանց նախնեաց սեփականութիւնն եղած է Գեղարքունի գաւառն. բայց երկար ժամանակ եզրակացութեան սպասելով, այս է մինչև 1831 թիւն անգործ մնալով Երևան, սպառում է իւր ամբողջ նիւթականը և մինչև անգամ վերջին ծայր չքաւորութեան պատճառաւ վաճառում է ծածուկ տնամիջի ամբողջ կահու կարասին և Նապոլէօնից պարգև ստացած պատուական թուրը։ Այլ ևս անկարող լինելով տոկալ այսքան բարոյական և նիւթական նեղութեանց հիւանդանում է մերձ 'ի մահ։ Երբ յայտնում են Դաւիթ-խանին թէ կայսրը բարեհաճել է ընդունել քո աղերսագիրը և նշանակել է Մէլիք-Շահնազարեանների ժառանգներին համար գանձարանից 3000 րուբլի մշտնջենաւոր որդւոց որդի, հետևեալ օրն վախճանում է խեղճ Դաւիթ-խան։

Մէլիք-Շահփուրեան տոհմից էր և Դարբանդում բնակող պ. Գէորգ դէ Շահփուր, որ 1893-ին վախճանուեց Մոսկվայում։

Սոյն տոհմից է Արցախի Մեծ-կողմանց, այժմ Կիւլստան գաւառի Վերին-շէն գիւղում վերաբնակիչ Բէկլար-Բէկ Մէլիք-

Շահնազարեանց, որի մօտ տեսայ մի հաստ և հին թղթի վերայ վիմագրուած Միր-Դաւիթ-խանի պատկերը, որից աչներև երևում է որ նա ունեցած է պարթև հասակ, գեղեցկագոյն դիմագրութիւն, հաստ հաստ և մահկաձև բեղեր, մեծ մեծ աչքեր և սև սև յօնքեր. փայելուչ լանջի վերայ կախուած է Առիւծ-արեգական Շիրը-խուրշուտ ականազարդ շքանշանն և վիմագրուած է պատկերի տակ։ «Միր Դաւիթ խան Տատուրեան ի տանէ Մէլիք-Շահնազարեանց Մաղրայի ապէտ առաջին ատտինանի կարգացն Արեգական առիւծոյ Պարսից արքային, ևն. երբեմն դեսպան ի կողմանէ նոյն արքայի առ թագաւորն Փռանցիու 1816 թուին»։ Վիմագրուած է նաև նորին գաղղիերէնն (Արցախ եր. 247—250)։

Այս տոհմին չեն վերաբերում Սօղի մէլիքներն.

Դ. ԳԼ.

Ազգաբանութիւն Ջալալեան տոհմի իշխողաց

1515—1805

Պատմութեանս Ա. Հատ. եր. 141—143 յայտնուեցաւ որ Առանշահիկ թագաւորների հետականերից ծագած է Ջալալեան տոհմն. և յականէ յանուանէ նշանակուեցան նորա իշխողների անուններն։ Անյայտ են մնում նոցանից շատերի գործերն. Եսայի կաթուղիկոս Ջալալեան և Բաղդասար մետրապոլիտ Լս գործ դրած են ամեն ջանք և հնարք հաւաքագրելով ամբողջացնել իւրեանց տոհմի պատմութիւնը, այնուամենայնիւ դարձեալ արդիւնաւոր եղած չեն նոցա ջանքերն. միայն կարողացել են դասաւորել իշխողաց անունները, զորս տեսանք Ա. Հատորում։ Այժմ, չնայելով մեր 14 տարուայ ամբողջ աշխատանաց, մենք ևս անճարացած ակամայ բաւականանում ենք գլխաւորաբար, ինչպէս մեր ձեռք բերած Ջալալեանների ազգա-

բանութեամբ և նոյն գործերով, նոյնպէս և բոլոր մէլիքների և իշխանացուն իշխողաց անուններով և գործերով։ Միայն թէ հարկ է յայտնել որ մենք մեծ կարևորութիւն ենք տալիս արձանագրութեանց և ուղղում ենք ըստ այնմ։ Անյայտ են միում փոխեան և դահակալութիւն իշխողաց ոմանց։

Ջալալ Բ. որ կենդանի եղած է ՉԽԲ (1)
Վելիջան-բէկ Ա. » » ՋԻԹ (2)
Հատիր-Մէլիք (3)
Մէհրապ—Բէկ (4) (Աղ. երկ. և դր. եր. 177)
Բաղդասար—Բէկ.
Վելիջան—Բէկ Բ. (5)
Մէլիք—Գրիգոր (6).
Մելիք—Ալլահվերդի
Մէլիք—Բէկ (7).
Դանիէլ—Բէկ. (8)

---

1) «Ցիշխանութեան Ջալալին ես Խութլու բէկ որդի Խոյդանայ միաբանեցայ սուրբ ուխտիս ընծայիւք... թվ. ՉԽԲ» (1293) Արցախ եր. 170։

2) «Կամաւն Աստուծոյ ես Վելիջան և եղբարքս իմ որդիք Սայտունին.. տեարք Խաչենու.. տուաք ...'ի սուրբ ուխտըս Գանձասարու... թվ. ՋԻԹ (1480) Արց. եր 179։

3) «Ջղե (1546) ես Սարգիս կաթուղիկոս. Որդի Հատիր Մէլիքին, ևն» համարեա թէ 1597 կամ պակաս իշխած է։ «Հատիր—Մէլիքս որդի Սայտունին.. տուի Գանձասարու... ՋԽԸ (1499) (Ս. Ջալալ. բ. հատ, եր. 495)։

4) «Պաղդասար որդի Մէհրապ բէկին Տեառն Խաչենոյ թվ. ռհ., (1561)։ Համարեա թէ իշխած է 1520-ից։

5) Վելիջան-Բէկ Բ-Ի և Բաղդասար-բէկի մասին ոչ ինչ արձանագրութիւն չկայ մէջ տեղ։

6) Մէլիք-Գրիգորս Արցախի մէլիքների հետ յարաբերութեան մէջ մտած է ռուսաց հետ 1723—1729, տես պ. Կ. Եզեանցի եր. 345, 356, 382 և 442։

7) Մէլիք-Բէկիս որդին էր Աղուանից Տէր Ցովհ. Ժ-ն։

8) Սա 1791-ին նահատակուած է Շուշում, տես Արցախ եր. 150—151։

Մէլիք-բէկի որդին եղած է Դանիէլ-բէկն և Դանէլ-բէկիս որդին՝ Բաղդասար մետրապօլիտն։

Ինչպէս թարմ աւանդութիւնն, նոյնպէս և արձանագրութիւններն ապացուցանում են որ Ջալալեան օրհնեալ տոհմի անձնուէր արական անդամներն իւրեանց մէջ կենտրոնացնելով Աղուանից հայրապետական և իշխանական գաւազանը, այս է հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնը միացնելով իւրեանց ձեռքում՝ մեծամեծ ծառայութիւններ արած են թէ հայրենեաց վանքերին և եկեղեցին իրեն և թէ մանաւանդ Խաչէն, Ջրաբերդ, Ըռստակ և Կիւլստան գաւառների ժողովրդեան։ Այո, կրկնում ենք, Ջալալեան հոգևոր և մարմնաւոր իշխողներն ծաղկեցնում են Խաչէն, Ջրաբերդ, Ըռստակ և Կիւլըստան գաւառների ուսումնարանները, դպրոցները, վանքերը, եկեղեցիները և մատուռները և ամրացնելով Խոխանաբերդ, Կոչաղակաբերդ, Նաղարին-ղալա, Խաթրայ բերդ, Շիկաքար և Հաքախաղաց (1) անառիկ ամրոցները՝ պահպանում են նոյն գաւառների Հայ ժողովուրդը Պարսից, Արաբացւոց, Թաթարաց, Սելջուկեանց և Օսմանցւոց սուրերից, կրակներից և բռնութեանց դէմ. և թողած են հասարակութեան մէջ մեծ անուն և համակրութիւն և պատմութեան մէջ նախանձելի և օրինակելի էջեր։ Եթէ մենք լռենք, քարերն աղաղակում են և հռչակում իւրեանց արձանագրութիւններով սոցա մեծագործութիւնները։ Վանքերի, մատուրների, խաչարձանների, կոթողների, և ուսումնարանների Շիրմաքարերի հարուստ արձանագրութիւններն միահամուռ ապացուցանում են. որ սոքա թողած են այդ ազգային հաստատութեանց ապագան ընդմիշտ ապահովելու հեռատեսութեամբ մեծամեծ կալուածներ, գիւղեր, ագարակներ, ընդարձակ անտառներ, սքանչելի ամարանոցներ, պղնձահանքեր և ջրաղացաքարի հանքեր։ Պատմութեանս անձուկ էջերն չեն ներում ընդարձակ խօսել սոցա արդիւնալի գործունէութեանց և անսահման զոհողու-

---

1) Բերդերիս նկարագրութիւնը տես Արցախ եր. 197—199 և 211։

թեանց մասին։ Անհաւատներն թող ականեն Արցախ գրքում զետեղուած արձանագրութիւնները։ Հայոց և Աղուանից կաթուղիկոսների մէջ առաջինն եղած է Զալալեան Եսայի կաթուղիկոսն, որ յարաբերութեան մէջ մտած է Ռուսաց կայսրների հետ։ Ոչ մի ժամանակ Աղուանից ժողովրդից և Հայոց կաթուղիկոսներից տրտունջ բարձրացած չէ Զալալեան կաթուղիկոսների դէմ. տրտունջն գոյութիւն ունեցած է միմիայն ծըռ կաթուղիկոսների ապօրինի և ինքնակոչ գոյութիւն ունենալուց և անարգ ճանապարհաւ Երևան գալուց յետոյ։ Ծըռ կաթուղիկոսներն մահացու հարուած տուած են 1500 տարի ապրած Աղուանից կաթուղիկոսութեան, զզուեցուցած Աղուանից հայ ժողովուրդը, էջմիածնի Հայոց կաթուղիկոսները և Վրաց թագաւորները, ինչպէս տեսնելու ենք յետոյ։

## Ե. ԳԼ.

### Ազգաբանութիւն Դիզակի իշխողաց

Պատմութեանս Ա. Հատ. եր. 131—132 ցոյց տուինք Դիզակ և Վարանդայ գաւառների նախկին իշխողաց անունները, որք ծագած էին Գագիկ թագաւորի հետականներից, Ներսէհ-Դժնդակից սկսեալ մինչև Մէլիք-Պապին։ Այժմ յայտնում ենք որ այդ իշխանութիւնն բաժանուում է յետոյ երկու ճիւղի, որից մին իշխում է միայն Դիզակ և Բերդաձոր գաւառների վերայ, հաստատելով իւր աթոռանիստը երբեմն Դող ամրոցում և Դող աւանում և երբեմն Ցոր ամրոցում (1)։ Իսկ միւս ճիւղի իշխողներն Վարանդայ գաւառի վերայ իշխելով բնակում են նոյն գաւառի Թոչիզ գիւղում, այժմ ծովատեղ և պատերազմի դէպքերում Ղալին-Խութ և Աղչկաբերդ ամրոցում (Արցախ եր. 134—136)։

---

1) Ցոր ամրոցում իշխած-գահակալած են Իշխան, Աջամի, Աւան-մեծ-իշխան, Թովմաս, Ջալալ և Հախիճան իշխանները (Արցախ եր 82—85)։

Դիզակի վերայ իշխած են

Մելիք-Սուջում (1)։

Մելիք-Աւան Ա. որդի Մելիք-Սուջումի որ «չկարողանալով դիմադրել աւ.ազակաօրք Ջալալիների անընդհատ յարձակմանց և աւերանաց 1607-ին 50 տուն հայ գերդաստանով գաղթում է Վրաստան (2)։ Վրաց կառավարութիւնից բնակութեան տեղ է շնորհուում Մելիքիս Արտու գիւղում այն պայմանաւ, որ Մելիք-Աւան Ա. տարեկան մի թեթև քանակութեամբ հարկ վճարէ Վրաստանի արքունի գանձարանին, 'ի պահանջել հարկին օգնէ պատերազմներում և իւր նախնի մելիքական բոլոր իրաւունքներով իւր հետ բերած ժողովրդեան վերայ ըստ իւր կամաց։

Մելիք-Աւանի խոհեմ, ազնիւ, քաջ և արդարասէր յատկութիւններն առ ինքն են գրաւում տեղւոյն և շրջակայ գիւղերի հայ ժողովրդեան ուշադրութիւնը։ Հետզհետէ աւելանում է մելիքիս ժողովրդականաց թիւն և ստանում է անշարժ կալուածներ Լօրի գիւղաքաղաքում։

Մելիք-Բախտամ Ա. յաջորդում է իւր հօր։ Մելիքիս որդի Ղուկասն ձեռնադրուում է քահանայ հակառակ իւր հօր կամաց, բայց շատ չանցած մեռնում է իւր երէցկինն, և ինքն Սանահին գնալով ստանում է վեղար և փարում ճգնողական կեանք։

Վախճանում է Մելիք-Բախտամ Ա. և տեղակալում է Մելիք-Աւան Բ. Ղուկաս վարդապետի որդին, որ վերջին ծայր վշտացած լինելով վրացւոց չարանախանձ հակառակութիւններից և կալուածական կռիւներից վերադառնում է Դիզակ 1716-ին

---

1) Սա իւր ժողովրդեան մի մասով գաղթում է Պարսկաստան՝ ստիպեալ Օսմանցւոց կեղեքումներից. կողոպուտներից և ծանր հարկերից. յետոյ դառնում է (Առ. Վ. Գ. ԳԼ.).

2) Մելիք-Աւան վախճանում է Վրաստանում, թողնելով բարի համբաւ և երեք որդի Բախտամ-բէկ, Սուջում-բէկ և Դաւիթ-բէկ։ Մելիք-Բախտամ Ա. յաջորդում է իւր հօր։ Սուջում-բէկ և Դաւիթ-բէկ սպանուում են Կախեթի կռւում 1648-ին (Գաղտ. եր. 202—203)։

աշնան իւր ժողովրդով միասին և վերստին ժառանգում այդ երկիրը։ Մելիքս իւր բնակութիւնը հաստատում է Դող աւանում և իւր որդի Ղուկաս վարդապետը հաճութեամբ Աղուանից կաթուղիկոսին վանահայր է հաստատում Գտիչ վանքում, նորոգելով վանքի կաթուղիկէն և խուցերը (տես Արցախ եր. 74 և 82)։ Բայց Պարսից Շահերից մին չգիտեմ թէ Օսմանցւոց փաշաներից սորա Մելիք-Աւան անունը փոխում են եկեան, այնուհետև կոչւում է Մելիք-Եկեան։ Սա ինքն ասում է իւր համար. երկիրս վրդովուած էր Օսմանցւոց հրոսակներից։ Ժողովուրդն տանուտէր կարգեց զիս. խաղաղացրի երկիրը։ Աւշառ Սուլթան Հիւսէինի որդի Ղաթմիչն եկն և ասաց. «Դու չե՞ս (Մելիք-Աւանն). Մելիքութիւն տուաւ»։ Եկն և Օսմանցի զօրքն որ կողոպտէ երկիրս և գրաւէ Աղուանից երկիրը, բայց ես չթողի... յետոյ զօրեղ թագաւոր եկն Նադր-Շահն և առաւ Աղուանից երկիրը Օսմանցիներից։ Քրիստոնէից ազգն-Արցախի հայերն-ոմանք ամրացան Թալիշի բերդում (1) ոմանք Ջրաբերդում, ոմանք Խաչենում, ոմանք Վարանդայի Քոչիզում և ոմանք Տուղաղում (Դիզակում) վերջնոյս վերայ իշխանութիւնը շնորհեցին ինձ (2)։ Եկեան Ատրպատականի ոճով նշանակում է քենակալ ըստ վկայութեան բազմաց. բայց թէ ի՞նչ մտօք դրոշմած են այս անունը սորա վերայ, անիմանալի է մեզ։

Մելիք-Եկեանս գտնուած է Նադր-Շահի թագաւորութեան հանդիսում Հայոց Կրետացի Աբրահամ կաթուղիկոսի հետ։ Սա Արցախի միւս հայ մելիքների հետ միաբան գտնուած է յարաբերութեան մէջ Ռուսաց հետ, որպէս երևում է պարոն Եզեանցի գրքի 423 և 431 երեսներից։ Սա վախճանում է ՌՃՂԳ. (1744)-ին։

---

1) Բերդիս մասին տես Արցախ եր. 229—230։ Ջրաբերդի մասին եր. 239—240.

2) Արցախ եր. 76—77։ Երևում է որ պարսիկներն ջանացած են իւրեանց կողմն գրաւել մելիքս, և Օսմանցիք՝ իւրեանց։

Մելիք-Արամ որդի Մէլիք-Եկեանի, որ յաջորդում է իւր հօր նոյն 1744-ին։ Սորա մասին հետևեալ տեղեկութիւնը տա-լիս է իւր շիրմաքարի արձանագրութիւնն.

«Այս է տապան քաջ իշխանին
Մէլիք-Եկեանի որդի պարոն Մէլիք Արամին,
Որ շատ սիրական էր Նատիր Շահին,
Որ յառաջ փոխանեցաւ հայր սորին,
Որ շափաղաթ ունէր Նատիր Շահին.
Որ է Բ. (երկրորդ) հաքիմ (կառավարիչ) էլաւ Ե. մուհալին.
Շահն ողեց (ուղեց) Արամ տուաւ,
ՋՌ (6000) թուման չարմա առաւ։
Ուրախ սրտով յղի (ուղի) արաւ,
Մէկ ամ կացաւ փոխանեցաւ,
Ողորմի թվ. ՌՃՂԴ (1745)
Որ փոխեցաւ առ Աստուած (Արցախ եր. 75—76)։

Միևնոյն 1745-ին իւր փոխանած եղբօր Մէլիք-Արամին յաջորդում է Մէլիք-Եսային, որի քաջագործութիւններն ցարդ գովաբանւում է Արցախում ժերունեաց բերանների պատմութեանց մէջ, մանաւանդ Օսմանցիներից չափազանց շատ զինուոր ջարդած է և Իբրահիմ-Ճրո-խանի Մէլիք-Շահնազար Բ-ի վերայ սարսափ տարածած է. ինչպէս վկայում է պատմութիւնն և տապանաքարի արձանագրութիւնն (1)։

Մէլիք-Բախտամ Բ. յաջորդում է իւր հօր և գործում է

---

1) „Այս է տապան մեծին Մէլիք Եկանի որդի Մէլիք Եսա-յուն. և էր սա իշխան կարգեալ Նատիր Շահէն. ԼԳ (33) ամ տիրեաց երկրիս Դիզակու. և արար բաղում քաջութիւն և յաղ-թութիւն ընդ անօրէնսն, և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր թեւ կենաց սորա և կամաւ Աստուծոյ վաղճանե-ցաւ թվ, ՌՄԼ(1781) « . . » (Արցախ եր. 76)։ Յակովբ Շամիր-եան գրում է սորա մասին, «Երրորդն կոչի Մէլիք Եսայի, որ է այր գրասէր և ուսմանց հետևող» (Նոր Տետ. եր. 119)։

միշտ համաձայնութեամբ հարազատ մէլիքների։ Սոցա Մնացեալ պատմութիւններն չեռոյ։ Այս տոհմի հետականներից է պարոն Ցակոմբ Մէլիք-Բախտամեանց ազնիւ, ուսեալ, կրթեալ երիտասարդն, որ այժմ բնակւում է Թիֆլիսում և ունի ազնուականութեան փաստաթղթեր և մելիքազուն տոհմագրութեան դոկումենտներ։

## Ջ. ԳԼ.

### Ազգաբանութիւն Վարանդայի միջին իշխողաց

Արդէն իմացանք Ա. հատորից որ Վարանդայ գաւառի վերայ ևս իշխում էին Դիզակի իշխաններն Ներսէհ-Դժնդակից սկսեալ։ Մեզ անյայտ պատճառաւ և ժամանակաւ Դիզակի իշխողներից Հախիչան-Իշխանի որդի Մէլիք-Պապին հաստատում է իւր բնակարանը Վարանդայ գաւառի Քոչիզ գիւղում, որ այժմ կոչւում է Ծովատեղ և առանձնապէս իշխում նոյն գաւառի վերայ։ Այնուհետև Վարանդան լինում է մէլիքական յատուկ թեմ։

Մելիք-Պապի որդի Հախիչանայ.
Մելիք-Աւան որդի Մէլիք-Պապու (1)
Մելիք-Աղամ եղբայր Մէլիք-Աւանայ (2)։
Մէլիք-Փաշայ կամ Փաշիկ որդի Մէլիք-Աւանայ (3)։
Մէլէք-Փաշաս էր՝ որ Մէլիք-Սուջումին հետ գնաց

1) «Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մէլիք Աւան կանգնեցի զխաչս ՚ի փրկութիւն հօր իմոյ Մէլիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին... թվ ՌԺԵ (1566)»։

2) «Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մէլիք Աղամ որդի Մէլիք Պապին որդոյ Հախիջանայ թոռանց որդոյն Թոմասին որդոյ մեծի իշխանին Աւանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն նախնեաց մերոց...» (Արցախ եր. 106—108)։

3) «Թվ. ՌԼԵ. ի հայրապետութեան Դաւիթ, առաջնորդի Մէլիք Փաշիկ (ի թւին 1586 ի հայրապետութեան Դաւթի և ի պարոնութեան Մէլիք Փաշիկի)»։

Ասպահան՝ նեղուելով Ջալալիների ապստամբութիւնից, բայց կրկին դարձաւ հայրենիք:

Մելիքներիս իշխանութեանց շրջանների ժամանակ միջոց նոյն տոհմից առաջնորդ նստած են Վարանդայ գաւառիս համար գիւղումս, ինչպէս ապացուցանում են արձանագրութիւններն (1):

Մելիք-Դանիէլ

Մելիք-Մուպաֆֆար, որ է տոհմիս վերջին մելիքն:

Տոհմիս կենդանի հետակայ սերունդն են Ծովատեղի բարեկրօն քահանան իւր գերդաստանով և Շուշում ազնիւ և բարեկիրթ Ներսէս-բէկ Մելիք-Փաշաեան իւր եղբայրներով և օրհնեալ գերդաստանով և սիրասուն զաւակներով:

## Է. ԳԼ.

### Ազգաբանութիւն Վարանդայի վերջին իշխողաց

Պատմութեանս մթութիւնը բացատրելու համար կարեւոր համարեցինք մէջ բերել Շահ-Աբաս Ա-ից տուած հրովարտակը պատճէնը, որը ստացած ենք մեր ազգական Մեծապատիւ Արմբատ Լազրեւից, որի ռուսերէնն գտնուում է Յակովբ Դաւիդիչ Լազրեւի ժողովածու թղթերում:

Թարգմանութիւնն Աստուծոյ է.

Ով Մուհէմէտ, ո՛վ Ալի.

Տ. Կ.

Շահ Աբաս Ա.

Բարձրագոյն հրաման եղաւ.. Նշանաւոր քրիստոնեայ...

1) Թվ. ՌՕ (1621) Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս, որ լինի սա գամբարան և շիրիմ նախնեաց մերոց»: «Թվ. ՌԻԵ(1576) ի հայրապետութիւն Տէր Յովհաննիսի, առաջնորդութիւն Մելիք Փաշին... ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս... (Արց. նոյն եր.):

Մէլիք Բաղին յայանում է թէ Վարանդայ գաւառի բնակիչները, նոյն գաւառի տանուտէրների կազմած հասարակական վճռով ընտրել և ճանաչել են զինքը իրանց մէլիք, բայց յիշեալ գաւառի շրջաններից մի քանիսն՝ Մէլիք Դանիէլը... Թագաւորին մերձաւոր բարձր աստիճանաւորներն—Սաֆի-ղուլի բէկ և Ալի-Մարդան բէկ իւզբաշին, Մամէդ-Բաղր-բէկ և ուրիշներն հաստատել են հպատակների հասարակական վճիռը։ Այդ բանը վաւերացնելու համար ներկայացնելով վերև յիշուած հասարակական... (Մէլիք-բաղին) խնդրում է նշանակել զինքը մէլիք յիշեալ գաւառին։

Արքունի օրագրից երևում է որ այդ գաւառի պարտականութիւնը (մէլիքութիւնն) յանձնուած էր Մէլիք-Մուզաֆֆարին... Մէլիք-Մուզզաֆարն հասարակական այդ վճռի վերայ մակագրել է որ ինքն հրաժարուում է յիշեալ գաւառի մէլիքութեան պաշտօնը կատարելուց և որ նորա եղբօր մահից յետոյ ոչ ոքի յանձնուած չէ այդ պաշտօնի կատարելն։

Ուստի յարգելով նորա (Մէլիք-Բաղու) խնդիրը, մենք հրամայեցինք, համաձայն հասարակական վճռին, որը կազմել են Մէլիք-Մուզաֆֆարն և ուրիշներն, մեր թագաւորական մխա շնորհքներ ինման «Լուչ-իլ» (կոկորդիլոսի տարին) ամսի ութին.. Մէլիք-Բաղին մէլիք Վարանդայի գաւառին, որն առաջ յանձնուած էր Մէլիք-Մուզաֆֆարին և Ղարա-Կիւնին... Տաճկաց 1042 թուին հիճրի ամսում»։

Գաղտնիք Ղարաբաղի եր. 209—210. «Տեսանք նաև որ միմեանց ետևից Արցախ համախմբուեցան Մէլիք-Աբով Նիժից, Մէլիք-Եսային Քշտաղի Խնածախից, Մէլիք-Բաղին Գեղամի (Գեղարքունեաց) Մազրայ գիւղից, իսկ Մէլիք-Աւան (Եկեան) Վրաստանից։... Արցախի մէլիքների գահերէց Ջալալեանք յաճախ յուշ ածած և սակայ սակայ հրաւիրած են այդ մէլիքները յԱրցախ։... այս իսկ է միակ պատճառն, որ Կիւլստանի, Ջրաբերդի, Վարանդի և Դիզակի սեպհական հայ հասարակութիւնն փոխա-

նակ դիմադրելու եկող նոր Մելիքներին՝ մեծ սիրով ընդունած, պատուած ու զօրք տուած է»։

Մենք դիտմամբ մէջ բերինք այդ հրովարտակը և գաղտնիքի հատուածը։ Այժմ պարզ է որ Մելիք-Բաղու փոխադրութիւնն, նոյնպէս և միւսերինն կանխամտածուած և պատրաստուած էր, որպէսզի ամէն գաւառում լինէր հուժկու մելիք, որ կարողանար սղնաղ կազմել, այս է իւր զօրքերով և ժողովրդով ամրանար վտանգելի ամրոցում և Օսմանցիներից ու Պարսիկներից ինքնուրոյն և ազատ պահել իւր մելիքութիւնը, ժողովուրդը և հայրենիքը։

Մելիք-Բաղի Ա. Գեղարքունեաց իշխողներից Մելիք-Աբով Ա-ոյն թոռն էր և Մելիք-Բէկ Ա-ոյն որդին (1)։ Մելիք-Բաղի Ա. մօտաւորապէս 1627—1628-ին Մաղրայից տեղափոխուում է Վարանդայի Աւետարանոց, որ տաճկերէն կոչուում է Չանախչի, իւր հետ բերած ժողովրդեան մեծ մասը բնակեցնում է Աւետարանոցում և Շօշու գիւղում. Ջալալեանների խորհրդով հիմնարկում է Աւետարանոց բերդը և օժանդակութեամբ տեղական և նորեկ ժողովրդականաց փութացնում աւարտումը և իւր ապարանը հաստատում բերդումն։

Մելիք-Բաղի Ա. սպանուում է, որին յաջորդում է
Մելիք Շահնազար Ա. որդի Մելիք-Բաղու Ա-ոյն։

Մելիք-Շահնազարիս հրովարտակն՝ ի միջի այլոց՝ պատմում է. «Մելիք-Բաղի.Չաքարն (2) նշանակուեցաւ մելիք Վարանդայի... ատրճանաւորներն... Սաֆի-Ղուլի-Բէկն, Ալի-Մարդան բէկն... Բաղիր բէկն հանդուցեալ մեծ Շահնազարի քեռորդին... ազնուատոհմ քրիստոնեայ Մելիք-Շահնազարն վերոյիշեալ Մելիք-Բաղու. որդին՝ պալատիս ներկայանալով յայտնեց որ իւր

---

1) Երևի թէ ամենափոքր որդին եղած է։

2) Երևի թէ Մելիք Բաղի Ա. կոչուելիս է եղել Բաղի-Չաքար. բայց թէ ինչ պատճառաւ յիշուած չէ իւր իսկ հրովարտակում, այլ Մելիք-Շահնազարի.—չգիտենք։

հայրն սպանուած է«...»։ Մէլիք-Շահնազար Ա. հաստատուում է մէլիք Վարանդայ գաւառի հասարակութեան հաճութեամբ և խնդրանօք։

Գաղտնիք եր 196—197 «քաջամարտիկ և արդարադատ անուանուած է Մէլիք-Շահնազարս (1)։ Մէլիքիս յաջորդու.մ է իւր որդի

Մէլիք-Պաղիր կամ Պաղի (2) բ. որի օրով 1721-ին Օսմանցւոց թելադրութեամբ Կովկասեան լեկզիներն ներս են խուժում անհագին բազմութեամբ Դարբանդի դռնից և սկսում ասպատակել, կողոպտել, կոտորել և գերել Բարկուշատայ, Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի գաւառների բնակիչները։ Վարանդայի Մէլիք-Պաղիրն, տեսնելով որ անհնար է պատերազմել նորա դէմ, խոհեմութեամբ ընծաներ յղելով լեկզիներին, ոչ միայն ազատում է Վարանդան կոտորածից և գերութիւնից, այլ և թափում և ազատում է գերիների կէսը (Տես. կաթ. Առուանից եր. 36—38)։

Մէլիք-Պաղրին յաջորդում է իւր եղբայր

Մէլիք-Յուսէֆն, որ շատ կոտորում է Օսմանցւոց զինուորներին, որպէս վկայում է իւր տապանաքարի արձանագրութիւնն, որ է.

«Այս է տապան Մէլիք-Շահնազարի որդի Մէլիք-Յուսէփինի թվ. ՌՃՁԵ (1736)։

Ողեմ բանս գովեստի 'ի վերայ Մէլիք-Յուսէփինի. (3).

---

1) „Զօրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն և 'ի նեղ ժամանակիս... 'ի թագաւորութեան Շահ-Սուլէյմանին... և իշխանութեան երկրիս Վարանդու Մէլիք Բաղու որդի Մէլիք-Շահնազարին... թվ. ՌՃԻԲ (1673)»։

2) Մէլիքիս անունն յիշուած է Արցախ եր. 270 „Ղամար Սուլթանին (ամուսին Մէլիք-Աղաբէկին) և իւր ծնողին Մէլիք Պաղուն...“։

3) Նորա համար մէջ բերինք սխրծախօս արձանագրութիւնս, որ բնորոշում է քաջիս բարեմասնութիւնները և գործունէութիւնները։

Զոր գրեցի յայս տապանի, սա էր տէր երկրին Վարանդի,
Երեսուն և հինգ մասն գեղի, սա էր հացով, սեղանով լի,
Ողորմէր ամէն ազգի, կերպարանօք էր գովելի,
Սա ոչ ետ հարկ Թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի,
Թագ և պարծանք հայոց ազգի, պատերազմեաց հետ Օսմանցի,
Յոյժ կոտորեաց յազգէն Տաճկի» (Գաղտնիք եր. 197)։

Մէլիքիս յաջորդում է իւր որդի Մէլիք Յովսէփ, որ սպանում է իւր եղբայր (1).

Մէլիք-Շահնազար Բ.-ից։ Սա Թիւրքի նման իւր կանանոցը լցնում է Թիւրք կիներով անպատուում է իւր Սոնա-Խանում օրինաւոր ամուսինը, որ Դող աւանի Մէլիք-Եսայու դուստրն էր, որից ծընած էր Մէլիք-Ջիւմշիւտն։ Մէլիք-Շահնազար Բ. իւր մեռնելու մօտ կամենում է գահակալել տալ իւր Թիւրք կնոջից ծնած ապօրինի զաւակ Յիւսէինը, բայց սպանուում է Յիւսէինն Մէլիք-Ջիւմշիւտից. որև յաջորդում է իւր հօր Մէլիք-Շահնազար Բ-ին։ Վերջինոյս ազգակործան պատմութիւնն յետոյ, որ վախճանում 1792-ին։

Մէլիք-Ջիւմշիւտ իսկոյն և եթ միաբանում է հարազատ մէլիքներին. ամեն կերպով աջակցում է Ռուսաց՝ Պարսից հետ ունեցած պատերազմներում, փոխադրում է Վրաստան, գնում Պետերբուրգ, ստանում տարեկան 1000 րուբլի կենսաթոշակ, վերադառնում իւր հայրենիք և վախճանում 1812 թւին (2)։

Գահակալում է ապա Մէլիք Ջհանբաշխ, որ եղբայր է Մէլիք-Ջիւմշիւտին, և վախճանում 1822-ին։

Ապա գահակալում է Մէլիք-Խուդաթ և վախճանում 1833-ին, որոց շիրմաքարերի արձանագրութիւնները ականել ցանկացողն կարող է տեսնել Արցախ եր. 97—98։

---

1) Մէլիք Յովսէփը սակաւակեաց է անուանում Գաղտնիք եր. 198 և դահիճ Մէլիք Շահնազարը։

2) „Այս է տապան Մէլիք Ջիւմշիւտին... (եղծուած). Սա էր քոռն մեծասեռին։ Մէլիք-Յուսէյինին... Թվ. ՌՄԿԱ (1812) ապրիլի ԻԵ (25)»։

Խիստ շատ են տոհմիս կենդանի հետականերն, յորոց ոմանք գերդաստանով բնակում են Աւետարանոցում, ոմանք Շուշում, ոմանք Թիփլիսում և. ոմանք Բագւում։

## Ը. ԳԼ.

### Ազգաբանութիւն Արցախի Գարդմանի վերջին իշխողաց

Արցախի Գարդմանի նախկին իշխողաց մասին տես պատմութեանս Ա. հատ. եր. 147—150· իսկ վերջին իշխողաց մասին այստեղ։

Գեղարքունեաց Մեծ-Մաղրայի իշխողներից շառաւիղած է Գարդման գաւառիս վերջին իշխանութիւնն։ Որի՞ որդին եղած է առաջին իշխող Մելիք-Շահնազարս և ո՞ր թուականից սկսած է իշխել և ինչպիսի՞ հրովարտակով։—Բոլորովին անյայտ է մեզ։ Միայն յայտնի է մեզ որ տոհմիս հանգստարանն գտնուում է Միրզիկ գիւղում։ Սոյն ճիւղի մելիքներն բնակած են միշտ Արցախի Գարդմանի Ոսկանապատ գիւղում։ Սակաւ ոմանք սոյն Մելիք-Շահնազարին են վերագրում Առաքել վարդապետի (Գ. գլխում) յիշած «Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն 'իյՈսկանապատ գեղջէ» խօսքը. որպէս թէ Նազարս 1603-ին Ասպահան գնացած ժամանակ Շահ-Աբաս Ա-ից մելիքութիւն ստանալով կոչուած է Շահնազար։ Բայց մեզ համար հիմնաւոր է երևում այս. քանզի եթէ Նազարն հայրենիք դարձած ժամանակ Մելիքութիւն ստացած էր, ուրեմն պատմիչն անշուշտ կամ մոռացած է յիշել կամ վրիպած է իւր գրչից· բաց յայցանէ Շահնազար անուանս կրած են միայն Մեծ-Մաղրայի մելիքներն և իւրեանցից շառաւիղած մելիքներն, որպէս տեսանք ազգաբանութեանց մէջ։ Ուրեմն

սկսենք. առաջին անձն եղած է

Մէլիք-Շահնազար, սրի մասին ոչինչ յայտնի չէ։

Մէլիքիս յաջորդում է իւր որդի

Մէլիք-Յուսէփ Ա. սրան էլ յաջորդում է իւր որդի

Մէլիք-Եաւրի (1) սրան էլ յաջորդում է իւր որդի

Մէլիք-Յովսէփ Բ. (2) սրան էլ յաջորդում է իւր որդի

Մէլիք-Գաբրիէլ (3). սրան էլ յաջորդում է իւր որդի

Մէլիք-Յովսէփ Գ. որ վախճանած է 1826-ին։

Շատ և շատ ջանացինք հաւաքել ստոյգ տեղեկութիւն սոյն մէլիքների մասին, սակայն սկզբում ոչ գրաւոր տեղեկութիւն գտանք և ոչ բանաւոր բացի հանգուցեալների տապանաքարերի արձանագրութիւնից։ Սակայն Ոսկանապատ գիւղի 30 տարեկան ծերունիներից քաղեցի հետևեալ բանաւոր պատմութիւնը մեծ նեղութեամբ, որը ևահա վետեղում ենք ստորև։

Մէլիք-Յովսէփ Գ. ունենում է մի հրաշագեղ աղջիկ, որի գեղեցկութեան մասին պատմում է Գանձակի խանին Ղրանց չուղուլ—մատնիչ-Պետին (Պետրոս)։ Խանն մի օր գալիս է Ոսկանապատ գիւղն որպէս թէ Մէլիքի մօտ ճաշելու։ Ճաշից յետոյ Մէլիք-Յովսէփն նուիրում է խանին մի գօմշակով իւր ձագովն, որը խորամանկ խանն սիրով ընդունելով՝ ասում է, «Մայրն քեզ լինի, ձագն ինձ»։ Ակտի պարսիկ խանի ասածը՝ մէլիքին, նուիրած գոմշակովի մասին ընդունելով, ասում է, «Մայրն էլ քեզ, ձագն էլ»։

Զափազանց շնորհակալութիւն է յայտնում խանն, մէլիքի

---

1) Մէլիք-Եաւրիս վախճանած է 1720-ին։

2) Սոյն մէլիքս » 1730-ին։ Սորա մասին գրուած է մի ձեռագիր աւետարանի յիշատակարանում. «Արգ 'ի ժամանակս բռնակալութեան Գանճայու (Գանձակիս) քաղաքիս Ուղուրլու խան, որ է որդի Քալպալի խանին և իշխանութեան 'ի Ոսկանապատու ծորոյս Տէր Մէլիք Յովսէփին, որ է որդի Մէլիք Եաւրին 'ի Ոսկանապատ գեղջէ» (Արցախ եր. 280)։

3) Սա վախճանած է . . 1780-ին։

խօսքը համարելով թէ աղջկան և թէ մօրն մասին։ Նոյն իսկ րոպէին յայտնելով խանին գուժում են թէ ռուսներն յարձակուեցին Գանձակի վերայ. վասն որոյ անտպարանօք դառնում է խանն Գանձակ։

Խանի մարդն՝ Իսմայիլ-բէկն առանձին յայտնում է մէլիքին՝ ասելով. «Խանն իսկապէս եկած էր քո աղջկան համար և ոչ թէ գոմշակովի և ձագի համար»։ Մէլիք-Յովսէփ իւր եղբօր՝ Քոչարի-բէկին իմացնում է այս գործը, պատուիրելով որ անմիջապէս զոնղ անէ (գլխատէ) Ղրանց լրտես Պետին, որպէս զի կարողանան փութով փոխադրուիլ Շուշի։ Քոչարի-բէկից գլխատւում է Պետին և մէլիքն իւր ամբողջ գերդաստանով յաջողում է անփորձ հասնիլ Շուշի. որից տպա Ջաւատխանի սպանուելուց վերջն դառնալով գալիս է Ոսկանապատ»։

Մէլիքներիս հետակայ ժառանգներն այժմ բնակում են Ոսկանապատ գիւղում և կառավարում իւրեանց հողերի արդիւնքներով։

Թ. Գլ.

## Ազգաբանութիւն Կիւլստանի վերջին իշխողաց (1)

Գաւառիս իշխող նախկին իշխանաց մասին սակաւ ինչ յայտնեցինք պատմութեանս Ա. Հատ. եր. 145. այժմ յայտնենք վերջին իշխողաց ծագման և ազգաբանութեան մասին։

Վերջին իշխող տոհմս էլ ծագած է միևնոյն արմատից, այսինքն է Ծար գիւղաքաղաքում իշխող Հասան Գ-ից, որից ծնում է

1) Գաւառս զանազան ժամանակներում կոչուած է Մեծ-կողմանք, Մեծ-կուանք, Իգիրմի-դէօրդ (իւր 24 գիւղերի անունով) Թալիշ (համանուն գիւղի անուամբ) այժմ Կիւլստան (նոյնանուն գիւղի անուամբ)։

Աղբուղէն, սորանից

Տուրսունն, սորանից

Այգինն։ Վերջինս գնալով Ջահան-Շահի մօտ... ստանում է իւզբաշութեան պաշտօն, այն է իրաւունք առանձին զօրք պահելու, ջդ (1455)-ին դառնում է հայրենիք...։ Այգին իւզբաշին իւր ղիւանագէտ, ուժեղ, սրտոտ եւ համառատակամ յատկութիւններով ինչպէս սիրելի եղած էր Ջահան-Շահին, նոյնպէս և սիրելի է լինում նորա որդի Հասան-Ալի-Խանին, որ իբրև փոխարքայ նստում էր (Հին) Նախիջևանում։ Այգին-իւզբաշին իբրև պապենական սեփականութիւն ժառանգութիւն է ստանում Շահից Նիժ և Սօլթան-Նուխի աւանները (իւրեանց շրջապատներով) և փոխադրուում ընտանեօք Նիժ Շահի հրովարտակով և փոխարքայի հաճութեամբ։

Տեղական ժողովուրդն մեծ սիրով ընդունում է իւր նորընտիր իւզբաշին, շրջապատում նորա շուրջն՝ ճանաչելով՝ որ իւր նոր կառավարիչն Առանշահիկ Թագաւորազուն տոհմիցն է, շատ յարգում է և աջակցում նորա օգտակար գործերին և ձեռնարկութեանց։ Այգին իւր պաշտօնը կատարում է ամենայն արժանաւորութեամբ։

Այգին-Իւզբաշուց ծնում և յաջորդում է

Ղարա-Հասան իւզբաշին, որից

Վարդան-իւզբաշին որ ընդարձակում է իւր սահմանները Թրի ուժով, որից ծնում և յաջորդում է

Դաւիթ-իւզբաշին, որ Մէլիք-Սուջումի հետ գնում է Ասպահան և կրկին յետ դառնում։ Սորանից էլ ծնում և յաջորդում է

Աբով իւզբաշին, որ Սև-Աբով ևս է կոչուում։ Սա խպառզգուած լինելով Ջալալիների աւերմունքներից, Ջալալեանների մէլիքների խորհրդով Թողնում է Նիժը և իւր յիսուն տուն ազգականներով տեղափոխուում Ջիւանշիր ռխթ (1600) Թուին։ Աբով-իւզբաշին սակաւ ժամանակում փայլում է քաջութեամբ. Ջալալեանների օժանդակութեամբ նորոգում է Ջիւանշիր (այժմ

1) Բերդերիս մասին տես Արցախ եր. 256—258 և 229—230։

Մէլիք-Բէկլարեանների) և Հոռեկաց 1) բերդերը և ամուր շըր-ջապարսպում օժանդակութեամբ տեղական հայ հասարակու-թեան։ Ապա յաջողում է ձեռք բերել գաւառին մելիքութիւ-նը 1) և կոչուիլ Մէլիք-Աբով Ա։ Մէլիք-Աբով Ա-ից ծնում և յաջորդում է

Մէլիք-Բեկլար Ա. որից

Մէլիք-Աբով Բ. որ կաղ-Աբով ևս է կոչուում։ Սա առե-ւանգում է Գանձակի Մէհմէտ-խանի Ղամար անուն դուստրը, մկրտել տալիս և ամուսնանում նորա հետ։ Ապա յաջորդում է

Մէլիք-Իսախան (2) ապա

Մէլիք-Թամրազ (3) վասն անչափահասութեան Մէլիքա-ժառանգ-Յովսէփ-բէկի

Մէլիք-Յովսէփ որդի Մէլիք-Աբով Բ-ի (4) որից

Մէլիք-Բէկլար Բ. որից

Մէլիք-Աբով (5) Գ. եղբայր Մէլիք-Բէկլար Բ-ի։

---

1) Շատ ջանացինք ձեռք բերել ամեն մելիքների շահական հրովարտակները, որք ոչ սակաւ լոյս կը սփռէին պատմութեանս. բայց անհնարին եղաւ։ Մինչև անգամ Արարատ ամսագրի միջո-ցաւ ծանուցում անելով հրաւէր կարդացինք Մէլիքազուններին ու-ղարկել նոցա վաւերացեալ պատճէնները, դարձեալ ապարդիւն։

2) Մէլիք-Իսախանիս անունն յիշուած է ՌՃԾ 1701-ին (Ար-ցախ եր. 228)։ Յիշուած է նաև պ. Կար. Եղեանցի գրքում եր. 437։ Թուին 1727-ին։

3) Սորա անունն եւ յիշուած է (Արցախ եր. 228) Հայ. թուին ՌՃԿԵ (1716) և նոյն Եզեանց եր. 367. Հ. թվ. ՌՃՀԳ (1724) և եր. 428, ՌՃՀԴ (1725 թվ.)։

4) Նոյն գրքի նոյն եր. 341 և 423 յիշուած է 'ի շարս ստո-րագրող Մէլիքների և Մէլիք-Յովսէփի անունն։ Յիշուած է նաև 1774-ին (Արցախ եր. 241—242) «Քաջամարտիկ Մէլիք-Յուսէփ»։

5) «Ի ՌՄԼԹ (1790) թուիս կամաւն Աստուծոյ ձեռամբ տեառն Յովհաննու կաթողիկոսին ես Ապաւ (Մէլիք-Աբով) ուզ. բաշի որդի Մէլիք-Յովսէփայ Թալիշու և իմ կենակից Հերիքնազ և որդիք Մէլիք-Բէկլար, Մէլիք-Ապաւ մեր հալալ արդեանց շի-նեցաք սրբոյ աթոռոյս Գանձասարու երկու եկեղեցեաց (տաճարի և գաւթի) տանիսն և խախտեալ որմունս բազում աշխատութեամբ յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց...» (Արցախ եր. 178)։

Մէլիք-Փրէյդիւն կամ Ֆրիդոն։

Սոյն տոհմի կենդանի ժառանգների մի մասն բնակւում է այժմ Խրխափոր գիւղում (Արցախ եր. 243—244) և կառավարում իւրեանց հողերի տասանորդներով, և միւս մասն Թիփլիսում, Գանձակում և այլուր։

## Ժ. ԳԼ.

### Ազգաբանութիւն Ջրաբերդի վերջին իշխողաց

Մէլիքութեանս արմատն՝ Մէլիք-Հայկազն 1) Մեծ-Սիւնեաց Հաբանդ գաւառի Խանածախ գիւղացի էր ըստ Ստ. Օրբէլ. Բ. հատ. եր. 267, իսկ ըստ Առ. վարդապետի «'ի Բշտաղս երկրէն 'ի Խանածախ գեղջէ»։ Մէլիքս և միւս մէլիքների հետ գնում է Ասպահան։ Սորա անդրանիկն՝ Հայկբէկն չուզելով հեռանալ հայրենիքից և սեփական ժողովրդից՝ մնում է Խանածախ գիւղումն և նշանակւում հասարակութիւնից կառավարիչ ընտրութեամբ իւր ժողովրդեան։ Սակաւ ժամանակից յետոյ մէլիքութիւն է ստանում Հայկբէկն Շահ-Աբաս Ա-ից և ստանձնում իշխանութեան ղեկը։

Մէլիք-Հայկ, իւր բնական հնարագիտութեամբ, անվեհեր քաջութեամբ, դիւցազնական յաղթութեամբ և աննկուն հաստատակամութեամբ ոչ միայն սարսափ է ազդում արտաքին թշնամեաց վերայ, այլ և առ ինքն է գրաւում Մեծ-Սիւնեաց մէլիքների և ժողովրդի համակրութիւնը։ Մէլիքս կրկնապատկում է իւր զօրաց թիւը և հաստատում բարեկամական յարաբերութիւն սահմանակից մէլիքների և (հին) Նախիջևանի խանի հետ։......... ազատում է Մեծ և Փոքր-Սիւնիքը Ջալալիների մեծամեծ աւերմունքներից։

Մէլիք-Հայկից ծնում և իշխում է Մէլիք-Եսային, որ իւր

1) Առ. Վարդ, Գ. Գլ.։

նախնեաց ընտիր յատկութեանց հետ՝ ունենում է նաև սքանչելի գեղեցկութիւն, մեծ մեծ աչքեր, գեղեցկաձև քթեր և գրագիտութիւն։ Մէլիք-Եսային իւր խանամախցի և ուրիշ հպատակ հայ ժողովրդեան հետ տեղափոխւում է Արցախ, Ջալալեանների խորհրդով՝ իւր հետ տարած ժողովրդեան հետ միասին՝ բնակութիւն հաստատում Ջրաբերդ գաւառի Մոխրաթաղ գիւղում և իւր հետ տարած ժողովուրդը բնակեցնում մօտակայ գիւղերում, մանաւանդ Մեծ-շէնում (համառօտագրեցինք պատմիչից եր. 205—208)։

Մէլիք-Եսայու անունն (1) յիշուած 'ի շարս Արցախի մէլիքներին և իւզբաշիններին տ. Եզեանցի նոյն գրքի եր. 340, 341, 345, 356 և 423. թւին 1723—1725։

Մէլիք Եսայուն յաջորդում է իւր որդի Մէլիք Մէժլում Ա.
Մէլիք-Իսրայէլն, վերջին մէլիքներս էլ յաջորդում է իւր որդի
Մէլիք-Ալահղուլի-Սուլթանն (2) Այս քաջ և հուժկու մէլիքն յետոյ սպանւում է Փանահնրա-խանից, ինչպէս վկայում է Սիմէօն կաթուղիկոսն Հայոց՝ իւր առ Մէլիք-Արամ Ա.

1) «'Ի թուաբերութեան հայոց ՌՃՀԳ (1724) ապրիլի ԺԸ (18) առի (գնեցի) աստուածախօս աւետարանս ես մեղապարտ և անարժան Մէլիք Եսայիս յերկրէն Ջարաբերթու և 'ի գեղջէն բնակ Մոխրաթաղու։ Արդ լուայ զձայն աստուածային, որ ասէ. երանի այնորիկ, որ ունի որդի Սիոնի և ընտանի 'ի յԵրուսաղէմ. և 'ի գութ շարժեալ որդոց իմոց առի զաստուածախօս սուրբ աւետարանս յիշատակ իմ և ծնողաց մարմնաւորաց իմոց և մօրն իմ, եւ կողակցին իմոյ Հուրին և որդոց իմոց Յովսէփին, Մեժլումին, Դանիէլին, Իսրայէլին և դստերացն իմոց և տուի յիշատակն և վախմ սուրբ Երից Մանկանց... 'ի հայրապետութեան Աղուանից տեառն Ներսէսի ..» (Արցախ եր. 43)։

2) «...Թուական հայոց ՌՃՂԸ (1749) էր... Մարաստ (Ամարաստ) առաջնորդն էր Գասպար վարդապետն. իշխանն էր Ալլահղուլի Սոլթանն, որ է Ջարաբերթու, այսինքն ազգաւ հայ և քաջամարդ, հաղթող ընդ թշնամին իւր...» (Արցախ եր. 122)։ Պօտտօ ռուս հեղինակն «Ղարաբ աղի Ա. կամ գրքում միայն Ղուլի է անուանում։

սպանուածի եղբայրն՝ արձակած 1766-ին կոնդակի սեւագրութեան մէջ (Դիւան Հայ. Գիրք Գ. էջ 775)։ Սպանուած Մէլիքին տեղակալում է իւր եղբայր

Մէլիք-Ադամ Ա. որ ըստ Արցախեան աւանդութեան կոչուած է Մէլիք-Հաթամ, Մեծ-Մէլիք-Հաթամ (1)։ Մէլիք-Ադամ Ա. շինած է ամարանոց եւ ձմերանոց պալատներ (տես Արցախ եր. 218 եւ 223—224)։ Սորան էլ յաջորդում է իւր որդի

Մէլիք-Մէժլում Բ. որին,
Մէլիք-Ադամ Բ.
Աթա-բէկ որդի Ալլահղուլի Սուլթանին։
Մէլիք-Վանի որդի Աթա-բէկի։

## Ճ ի ւ ղ ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն.

Սեպուհ պարտք համարեցի բացատրութեամբ դասաւորել այստեղ տոհմիս ճիւղերը առանձին առանձին օժանդակութեամբ մեծապատիւ Ներսէս բէկի Աթաբէկեանց, արձանագրութեանց եւ Բէկ Յովսէփեան մեծապատիւ Աստուածատուր բէկի մանրամասն գրաւոր բացատրութեան։ Մենք տեսանք նախորդ արձանագրութեան մէջ, որ Մէլիք-Եսային ունէր չորս որդի Յովսէփ-բէկ, Մեժլում-բէկ, Դանիէլ-բէկ եւ Իսրայէլ բէկ։ Տեսանք նաեւ Մէլիք-Ադամ Ա-ի արձանագրութեան մէջ՝

---

1) Մէլիք-Ադամ Ա. «որ գնեաց զսա (զաւետարանս)... եւ յետ(եւս) զսա յիշատակ 'ի ս. աթոռն Եղիշէի առաքելոյն (Ջրվշտիկ) եւ ս. լուսաւորչին Աղուանից ձեռամբ զերիմաստ եւ յոգնահանճար Աւագ քաջաջան վարդապետին... (Սա ինքն է Դալի-Մահրասան)։ Յիշեցէք 'ի մաքրափայլ աղօթս ձեր զՄէլիք Հաթամն եւ հայր իւր Մէլիք-Իսրայէլն եւ զպապն իւր Մէլիք-Եսային եւ սորա որդոցն Ովսէփին, Մէժլումին, Իսրայէլին եւ առաւել որդոց սոցին Սէյրանին, Ալլահղուլին. Ալլահվերդին եւ մօրն Հերիքնազին եւ որդոցըն ծաղկելոց նորափթթիցն Իսրայէլին եւ Մէժլումին... գրեցաւ թվին ՌՄԲ, որ ըստ Փրկչական 1753» (Արցախ եր. 261)։

որ յիշուած էր միայն երեք որդւոց անունները, որք են Ցովսէփ-բէկ, Մէժլում-բէկ և Իսրայէլ-բէկ; և յիշուած էին միայն երեք եղբարց թողած երեք որդւոց անունները, որք են Սէյրան, Ալլահղուլի եւ Ալլահվէրդի։ Արդէն գիտենք որ մեկից եղած էր Իսրայէլն, որի որդին էր Մէլիք-Ադամ Ա.։

Ցովսէփ-բէկն իւր գերդաստանով տեղափոխուած էր Շաքուայ հողի գաւառի Սէօկիւթլու գիւղն վաղուց, ինչպէս տեսնելու ենք յետոյ։

Մէժլում-բէկի որդին էր Մէլիք-Ալլահղուլի-Սուլթան (1) իսկ սորա որդին էր Աթա-բէկն։

Դանիէլ-բէկն մեռած էր, այս է պատճառն որ Մէլիք-Ադամ Ա. չէ յիշում կենդանեաց շարքում.. բայց յիշում է Դանիէլ-բէկի որդու անունը, որ է Ալլահվէրդի-բէկն։

## Ծիւղագրութիւն Բէկ-Ցովսէփեան տոհմի

Ինչպէս հնումն, նոյնպէս և նորումս սովորաբար միշտ յետադաս դրուած են բէկ պատուանունն և ոչ թէ նախադաս, զոր օրինակ Բալա-բէկ, Ցարութիւն-բէկ, Սիմոն-բէկ, Ցովսէփ-բէկ, Ելն։ Բայց նախադաս դրուած է Բէկ-Ցովսէփիս պատուանունն, գուցէ այն պատճառաւ, որ փոքրութիւնից գործ ածած են Բէկ-Ցովսէփ, Բէկ-Ցովսէփ, որ մեծանալուց յետոյ էլ մնացած է այդ ձևով։

Ուրեմն սկսենք.

Մէլիք-Եսայի, որից ծնուած է
Բէկ-Ցովսէփ, որից » »
Բէյլու-բէկ, որից » »
Պարոն-Տէր-Ցովհաննէս։

Աղուանից Եսայի կաթուղիկոսն իւր համառօտ պատմութիւն Աղուանից երկրին եր. 26—27 գրած է. Շաքուայ «երկիրն էր բարելի և շէն և մարդաշատ թէ հայ ազգօք,

---

1) Արձանագրութեանս վկայութեամբ Մէլիք-Ալլահղուլի-Սուլթանն Մեժլում-բէկի որդին էր և ոչ թէ Մէլիք-Ադամ Ա-ի եղբայրն։

որ 'ի Ղարաբաղու (Արցախի) երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականս... և Սօկութլու գիւղն նորոգ շէն և բնակեալ, որ և քան զայն՝ առաւել ոչ գոյր 'ի մէջ գիւղօրէիցն»: Իսկ Աղուանից երկ. և դր. եր. 219 գրուած է 'ի շարս Հողի գաւառի գիւղօրէից. «Ժ. Փոքր Սեօկիւթլու գիւղ... բնակչաց նախնիքն գաղթած են Խաչէն և Ջրաբերդ գաւառներից 1721-ին»: Միևնոյն թուին իւր ծխական ժողովրդեան եռեւից գնում է և Մեծ Սեօկութլուում բնակութիւն հաստատում Ջալալեան Բարսեղ քահանան, որպէս վկայում է նոյն կաթուղիկոսն եր. 27: Բարսեղ քահանայի սերընդից այժմ ևս բնակում են Շամախու Կոկիսոն գաւառի Վանք գիւղում (Աղ. երկ. և Դր. եր. 203):

Այսպէս իւր սիրեցեալ հօտի եռեւից՝ գորովագութ հօր նման գնում է Փոքր-Սեօկիւթլու. նաև Պարոն-Տէր-Յովհաննէս, որպէս զի անհովիւ չմնար իւր բանաւոր հօտն:

Պարոն-Տէր-Յովհաննէսից ծնուած է (1).
Բէկ-Բաբա, որից ծնուած են (2)
Ոստակէս-բէկ և Յարութիւն-բէկ.
Յարութիւն-բէկից ծնուած են
Մինաս-բէկ, Համբարձում բէկ,

---

1) «Ես պարոն Տէր Յովհաննէս որդի Բէլուբէկայ և Թոռն Բէկ Յովսէփայ Մէլիք Եսայեան չարաբերդցւոյ գընեցի զայս մաշտոցս հալալ ինչիւք իմովք 'ի ձեռաց այլազգեաց 'ի դառն ժամանակի և գաղթականութեան մերում 'ի Թվ. ՌՋԶԸ (1788) 'ի Նահանգն Շաքի 'ի յիշատակ իմ և կողակցին իմոյ ևս առաւել ծնողաց մերոց հանգուցելոց»:

2) «'Ի Թվն ՌՊԼՋ (1836) ապրիլ Ժ. (10) ես Բաբայ որդի Պարոն-Տէր-Յովհաննէսի Բէկ Յովսէփեանց 'ի Սօգութլու գեղջէ գնեցի սոյն շարականոցս 'ի ձեռաց այլազգեաց 'ի յիշատակ իմ և անդրանիկ որդւոյն իմոյ Յարութիւնի»:

Առաջի յիշատակն գրուած է մի գեղեցիկ գրչագիր մաշտոցում, իսկ երկրորդն մի մագաղաթեայ, պատկերազարդ ձեռագիր շարականի մէջ: Երկու ձեռնագիրներս ևս այժմ մնում են Աստուածատուր-բէկի մօտ:

Սարգիս բէկ, Աստուածատուր-բէկ,
Անդրէաս-բէկ և Շամամ քոյր սոցա։
Մինաս-բէկից ծնուած են
Գրիգոր-բէկ
Սարգիս-բէկից ծնուած են
Լևոն, Ռուբէն և Մարիամ։
Աստուածատուր-բէկից ծնուած են
Բաբկէն և Գուրգէն։

Բէկ-Յովսէփեան մելիքազուն տոհմից այժմ կենդանի են Սարգիս-բէկ և Աստուածատուր բէկ իւրեանց ընտանեօք և զաւակներով։ Ռուսաց տէրութիւնն պաշտօնապէս ճանաչած է Բէկ-Յովսէփեան տոհմի ազնուականութիւնը, որի արքունական կնքով կնքուած փաստաթղթերն վաւերացեալ դոկումենտները ամբողջապէս գտնուում են երկու կենդանի եղբարց մօտ և արքունի դիւաններում, իսկ նոցա վաւերացեալ պատճէնները մեզ մօտ։

Ծիւղագրութիւն Մեժլում-բէկի տոհմին

Մեժլում-բէկից ծնուած է (Մէլիք-Մէժլում Ա-ից)
Մէլիք-Ալլահղուլի-Սուլթան որից ծնուած է
Աթա-բէկն, որից »
Մէլիք-Վանի » » են
Յովսէփ-բէկ, Սարգիս-բէկ, Աթա-բէկ և Միքայէլ-բէկ։
Իսկ Մէլիք-Վանու եղբայր Յակոբ-իւզբաշին ծնած է. Ասլան-բէկ, Ջալալ-բէկ և Յարութիւն-բէկ։

Ասլան-բէկից(1) ծնուած են. Եփրեմ-բէկ, Ներսէս-բէկ, Մովսէս-բէկ և Նիկալայ-բէկ։

Անժառանգ վախճանում են Ջալալ-բէկ և Յարութիւն-բէկ։

Այժմ կենդանի են Ներսէս-բէկ իւր զաւակներով, որք են Յովսէփ-բէկ, Տիգրան-բէկ, Միքայէլ-բէկ, Դաւիթ-բէկ, Աս-

1) Սորա գերեզմանն կայ Սուլթան-Նուխու եկեղեցու մօտ (Աղ. երկ. և դր. եր. 242—243)։

լան-բէկ և քոյր սոցա Մարիամ։

Մովսէս-բէկ իւր զաւակներով որք են Ասլան-բէկ, Աղեքսանդր-բէկ, Աբրահամ-բէկ և Աննա քոյր։

Վախճանուած Նիկոլայ-բէկի որդի Լևոն-բէկ և Միքայէլ-բէկ։

## ԺԱ. ԳԼ.

### Մի քանի մեզ անծանօթ մելիքների մասին

Զաքարիա սարկաւագ, Ա. հատ. եր. 23—26, պատմում է. Շահ-Աբաս Ա. Թիփլիսից դարձած ժամանակ շահական հրովարտակով մելիքութիւն է տալիս Միափոր գաւառի Ղարամուրատ գիւղացի հովիւ Աթային իբրև ժառանգութիւնը որդւոց որդի Միափոր-փառխոս գաւառին տիրապետութիւն։ Ապա ասում է 1637-ին նոյն գիւղում գահակալում էր առաջի Մելիք-Աթային թոռն Մելիք-Աթայ Բ.։ Սոյն արմատից շառաւիղած են ըստ ոմանց Մելիք-Սարգսեաններն, որոց պապերն շատ վաղուց Ղարամուրատից տեղափոխուած են Շուլաւեր։

Ի՞նչ արմատից շառաւիղած են հետևեալ մելիքներն, ո՞ր տեղ բնակած են և ո՞ր թուականներում. ի՞նչ գործեր գործած են...։ — Ոչ ինչ յայտնի չէ մեզ։ Զնայելով մեր ամեն տեսակ ջանից և հետազօտութեանց, չկարողացանք ոչ ինչ տեղեկութիւն ձեռք բերել։ Այսու ամենայնիւ պարտք համարեցինք այս տեղ յիշել նոցա անունները։ Ահաւասիկ։

«Կողէն գիւղի Մելիք Ջհանկիր...» (Արցախ եր. 59)։

«Թաւուշա երկրիս Մելիք-ղոլխմազին» » » 330)։

«Զվերջին ստացող զսուրբ Աւետարանս...

Մելիք-Սարգիս և ծնողացն հայր իմ Ովանէս... թվին ՌՃՀԸ (1729)» (Արց. եր. 282)։

«Արդ ես Մելիք Ովանէս... հայրն Միրզախան, և որդիքն իմ Մելիք Մատթէոս...» (Արց. եր. 282)։

« 'Ի թուականութեանս հայոց ՌՃԺԷ (1668) 'ի հայրա-

պետութեան Աղուանից տեառն Պետրոսի... խանութեան (Գանձակի) Ուղուրլու խանին և իշխանութիւն երկրիս մեծաշուք և բարեպաշտ Սիմաւոն Մէլիքին» (Արցախ եր. 45)։

«Պարոն-Աղա, Մէլիք-Եուկեար. Մէլիք-Աղաբէկ... Պատօ-բէկ, Աղասի բէկ, Թվ. Ռ (1551)» (Արց. եր. 270)։

«Իշխանութեան Մէլիք-Հախնազարի, պայեր 'ի Քրիստոս յիշեցէք, հրապեան, որդիքն... Թվ. ՌՃԼԶ (1687)» (Արց. եր. 298)։ (1)

1816 ամի Եփրեմ կաթուղիկոսից Արցախ գրուած. Թ. 765 սևագրութիւնից եր. 107—109. «Առ Զարաբերդու Մէլիք-Յօհաննէսն ծաղկեալ կոնդակ... (առաքեցաւ)»։

«Առ Մէլիք Վահրամն Վարանդու, ծաղկեալ կոնդակով ...(առաքեցաւ)»։

Մէլիք-Հասան Շամախու Գիրդ գիւղի (Աղ. երկ. և եր. 198)։

## ԺԲ. ԳԼ.

Գանձակի Իմամ-Ղուլի-խանն յաղթում է Օսման փաշային.—Վախճան ծարեցի Յովհաննէս վարդապետի.—Խուդաբանդա-Շահի յաղթութիւն և Համզա Թագաժառանգի սպանութիւն։—Շահ-Աբաս Ա. և իւր նուաճումներն.—Տէր Շմաւոն Բ.—Շահականյաղթութիւններ.—Աղուանից և Հայոց իշխաններն Ասպահանում.—Շահ-Աբաս Ա-ի արշաւանքներն.—Մէլիք-Աթա և Մէլիք-Շահնազար Ա.—Ջալալիների աւերմունքներն.—Սարաֆիլի սով և պատերազմ (2)

1580-ին Գանձակի Իմամ-Ղուլի խանն 5000 զօրքով յարձակւում է Օսման փաշայի վերայ, որ գրաւած էր Դարբան-

1) Ամենայն ջանք և խնամք գործ դնելով ուղղած ենք Բ. հատորիս մէջ մէլիքների և իշխողների անունները և դասաւորութիւնները։ Եթէ սպրդուած լինին Ա. հատորում սխալներ, խընդրում ենք հետևել Բ. հատորիս դասաւորութեան, որ աւելի ապահով է և վստահելի։

2) Այժմ շարունակենք պատմութիւնը ժամանակագրական կարգաւ։

դը և նստած նորա մէջ։ Բայց յաղթող է հանդիսանում Օսման փաշան Հայդար փաշայի օգնութեամբ. մինչև Շամախի հալածում է Գանձակի խանն իւր զօրքով միասին (Պատ. Օսմ. Ա. հատ. եր. 441)։

1583-ին վախճանում է ծարեցի Յովհաննէս վարդապետն, որ Դոփեան իշխանական տոհմից Ջհանշէի որդին էր, հաղբատեցի Ղուկաս վարդապետի աշակերտն, և Խոթա վանքի միաբան։ Երանելիս լինում է առաքինի, զգաստ, աշխատասէր, աղքատասէր, աղօթասէր, քարոզիչ և սաստիկ ընթերցասէր... որի պատուական մարմինն ամփոփւում է Գեղամայ երկրի Վասակաշէն (այժմ Բասար-գեչար) գիւղում Սարգիս վարդապետի գերեզմանի մօտ (Առ. վարդ. եր. 611—612)։

Տակաւին Պարսից իշխանութեան ներքոյ էին գտնւում Շամախին, Շաքին, Գանձակն և Արցախն իւրեանց գաւառներով, բայց Արցախն միայն անուանական էր, քանզի կառավարւում էր մելիքների ազատական իշխանութեամբ։ Պարսից Խուդաբանդա-Շահն, որ Շահ-Իսմայէլ Բ-ի եղբայրն էր, անում է արիւնահեղ պատերազմներ Օսմանցւոց դէմ, որպէս զի կարողանայ պահել իւր ձեռքում Թաւրիզը, Շամախին, Շաքին, Պարտաւը և Գանձակը։ Բայց յաղթւում է ինքն Շահն և սպանւում է իւր Համզա որդին Պարսից տիրանենգ զինուորներից 1585-ին։ Ապա թագաւորում է պարսից Շահ-Աբաս Ա., որ Խուդաբանդայի որդին էր (Առ. վարդ. եր. 613 տպ. Էջ. 1896-ին)։

1586—1588 Շահ-Աբաս Ա. քաջութեամբ նուաճում է Գիլանը, Օզբէկը, Բուխարան, Հրէն, Արդաւիլը, Ղազւինը, Խորասանը և Գանձակը։ Այնուհետև աւերում է Հին-Գանձակի ստորին մասը, յետոյ շինել տալիս Նոր-Գանձակը։

1588-ին Ֆարհադ փաշան մեծ զօրքով հեռացնում է Գանձակից Պարսից զօրքը և շինում Գանձակի Նոր-բերդը, կոտորում, գերում և հալածում Ֆոցեալ զինուորները և իւր բնակութիւնը հաստատում Նորաշէն բերդում։ Կապւած պայմանի դաշամբ յօգուտ Օսմանցւոց մնում են Ատրպատական,

Լոռիստան, Շամախին, Գանձակն, Մեծ-Սիւնիքն և Վրաստան (Պատ. Օսմ. Ա. հատ. եր. 453—454)։

Տէր-Շմաւոն Բ. յաջորդում է Տէր Յովհաննէս Ը-ին։

1602-ին Թաւրիզում բնակող Օսմանեան զօրքն հակառակ պայմանի դաշանց՝ ասպատակում է Ատրպատական երկիրը։ Շահ-Աբաս Ա. համարելով այս գործը քակտումն դաշանց, արշաւում է Թաւրիզի վերայ, ջարդում է Օսմանեան զօրքը, գրաւում Թաւրիզը, ամբողջ Ատրպատականը, Մեծ-Սիւնիքը, Հին-Նախիջևանը, Երևանը, Աղջա-ղալան և Կարսը և Պարսկաստան փոխադրում հայ բնակիչները (Պատ. Օսմ. Ա. հատ. եր. 491—497)։

1605-ին Հայոց Վրաց և Աղուանից իշխաններն գնում են Ասպահան Շահ-Աբաս Ա-ի մօտ։ Այդ իշխանների գնալու պատճառ են դառնում Օսմանցւոց տուած չափազանց նեղութիւններն և ծանրագոյն հարկապահանջութիւն։ Աղուանից երկրիցն գնում են Արցախի Գարդման գաւառի Ոսկանապատ գիւղից. Սարուխան-բէկն և իւր եղբայր Նազարն. Ռստակ գաւառի Հաթերք գիւղից՝ Օղլան-Քեշիշն և իւր եղբայր Ղալաբէկն։ Խաչէն գաւառից՝ Ջալալ-բէկն իւր եղբօրորդոց հետ միասին. Վարանդայ գաւառի Քոչիզ գիւղից՝ Մէլիք-Փաշիկն. Դիզակ գաւառից՝ Մէլիք-Սուչումն չորս գիւղի բնակիչների հետ. Փառիսոս գաւառի Մէլիք-վասայ գիւղից Մէլիքսէթ եպիսկոպոսն. և Շահն բնակեցնում է ամեն գնացող հայերը Ասպահան քաղաքում (Առ. վարդ. եր. 15—17)։ Այդ գնացողների թւոյն վերայ աւելացնում է Գաղտնիքի հեղինակն. «Ուտի (Կապաղակ այժմ Ղաբալա) գաւառից՝ Սօլթան-Նուխու-Դաւիթ իւզբաշին, Նիժ գիւղաքաղաքի Առստամ իւզբաշին, Վարդաշէնի Խաչան-իւզբաշին, Ջակամի-Քոչարի-իւզբաշին, Պարտաւ քաղաքի Վաչէ-իւզբաշին։ Բայց յետոյ դառնում են հայրենիք գնացողներից շատերն։ Գնացողների գլխաւոր նպատակն լինում է գտնել Շահի մօտ կեանքի եւ կրօնի ապահովութիւն և հարկաց թեթեւութիւն։ Սակայն ինչպէս տեսցինք, յարմար առթիւ ամենամեծ մասամբ դառնում են հայրենիք։

Օսմանցիք զէնքի ուժով յետ են խլում Պարսիկներից բա-

լոր գրաւած տեղերը. իսկ Շահ-Աբաս էլ նոյն տեղերը վերստին յետ է խլում Օսմանցիներից: Գանձակ յղում Ամիրգունա-խանը, որ կոտորում է Օսմանցւոց զօրքը, գերում Փաշաներր, գրաւում Գանձակ քաղաքը իւր շրջականերով և դառնում Երևան Շահի մօտ (Առ. վարդ. Գ. գլ.)։ Բայց Օսմանցւոց Ջինչիլ-ղըռան Ալի փաշան կրկին գրաւում է Գանձակը։

Անձամբ արշաւում է Գանձակի վերայ Շահ-Աբաս մեծ զօրքով, Թնդանօթների ուժգին հարուածներով կործանում բերդի պարիսպը, գրաւում Գանձակը, խան հաստատում Գանձակի վերայ Ախսաս-Մահմատը, բնաջինջ անել տալիս ամբողջ Սուննու արական Թիւրքերը, որ կային Գանձակում և շրջակայքում (1), աւարում նոցա կիներր և մանուկները և ինչքերը, «խաղաղութեամբ մտնում Թիփլիս և խաղաղութեամբ ելնում, որովհետև միաբանութիւն կար Պարսից և Վրաց մէջ»։ Թիփլիսից դառնում է Շահն. մէլիքութիւն տալիս Աթային, այցելում Գեղարքունեաց Մէլիք-Շահնազար Ա-ոյն և գնում Թաւրիզ, ինչպէս տեսանք կանխաւ (Առ. Վարդ. եր. 96)։

1598-1610 Թուականն Օսմանեան տէրութիւնից ապստամբում են մեծ քանակութեամբ Թիւրք փաշաներ, իւրեանց հետ միացնում հազարաւոր Թիւրք ապստամբ մարդիկ, կազմում աշխարհակործան աւազակախմբեր և կոչւում Ջալալիք, որոց մէջ է լինում և Քօռօղլին։ Սոքա ոչ հնազանդում էին Օսմանցոց սուլթաններին և ոչ հաստատ բնակում մի տեղ. «այլ աշխարհաւէրք և աշխարհակործանք և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածս հրդեհեալ այրէին։ 'Ի մերձակայից Կոստանդնուպօլսի մինչև ցԵրևան քաղաք, 'ի Բաղդատայ մինչև ցԴամուրղափուն

---

1) Աւանդութիւնն ասում է որ Շահ-Աբաս Ա. մի շաբաթ հիւր է լինում Սաւար (Արց. եր. 299-300) գիւղացի հարուստ հայ Գիչուն։ Գիչին ամեն օր կերակրում է Շահը իւր զօրքով միասին։ Շահն յատուկ հրովարտակով նուիրում է Գիչուն Փիփ գիւղի ամբողջ լեռները (Արց. եր. 429)։

(Դարբանդ) զՍպիտակ ծովու մէջն և զՍեաւ ծովու մէջն, այս եզերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին» (Առ. Վարդ. եր. 86-87 և 92)։

Այս ժամանակի արշաւանքներն, արիւնհեղութիւններն և պատերազմներն վերստին առաջացնում են համատարած և սարսափելի սով 1606-1610 թուականին։

1607-ին Շահ-Աբաս Ա. յետ է առնում Օսմանցիներից Դարբանդը, Շամախին, Բագուն և Գանձակը, կոտորում Օսմանեան զօրքը և Սուննու բնակիչները և Շամախու վերայ կառավարիչ հաստատում Զիւլփիղար-խանը (Առ. վարդ. եր. 93-97)։ Սակայն Օսմանցիք դարձեալ գրաւում են Թաւրիզը, Երևանը, Գանձակը, Աւշարան և Շամախին (Նոյն եր. 568)։

## ԺԳ. ԳԼ.

Տէր Արիստակէս Գ.—Տէր Մելքիսէթ արաշեցի.—Գաղթականութիւն Հայոց և Աղուանից.—Տէր Սիմէօն Գ. քոլատակեցի.—Պարսից զօրանալն.—Տէր Յովհաննէս Թ։—Շահ-Սեֆի Ա.—Ընդհարումն յարաբերութեանց կաթուղիկոսացն Հայոց և Աղուանից և վերանորոգութիւն.—Տէր Գրիգոր Դ.—Շահական հրովարտակներ։

1611-ին վախճանւում է Տէր Շմաւոն Բ. և գահակալում է Տէր Արիստակէս Գ. քոլատակեցին։ Ապա գահակալում Տէր Մելքիսէթ արաշեցին (1)։

Թէ սարսափելի սովերի և թէ Ջալալիների աւերածութեան պատճառաւ Հայոց ժողովրդեան մի մասն ցիր և ցան է

---

1) Քոլատակեցի Արիստակէս դ—Ի և Տէր Սիմէօնի գերեզմաններն կան Մեծ-Իրանաց Վանքում (Արցախ եր. 171)։

լինում և գաղթելով գնում Կիպրոս, Պօլիս և նրա շրջապատում եղած քաղաքներն, Ռումելի, Բուղդան, Իլախաց երկիրն, Կաֆա կղզին, Պոնտոսի ծովեզերքն, Թաւրիզ, Արտաւիլ, ևն, ոչ միայն Հայաստանի հայերից, այլ և Աղուանից հայերից (Առ. Վարդ. ԺԳ. ԳԼ.)։

1622-ին յաջորդում է Տէր Սիմէօն քոլատակեցին որ նստած է աւելի Շահմաատուր գիւղում։

1623-ին բաւական նուազում է Օսմանեան պետութեան զինուորական ուժն և նախկին շուքն, վասն որոյ ընկնում են նորից Պարսից ձեռքն շատ նահանգներ, ինչպէս են Վրաստան, Գանձակ, Երևան, Բաղդատ և Բասրա (Պատ. Օսմ. Ա. Հատ. եր. 559)։

1628-ին յաջորդում է Տէր Յովհաննէս Թ. որի օրով շինուած է Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցին (Արց. եր. 37). բայց 1630-ին մատնուելով Պարսից ձեռքն, տանում են Շահին մօտ (Արցախ էր 333-334)։ Սակայն հայրապետս ստանում է շահական հրովարտակ և կրկին շարունակում կաթուղիկոսական պաշտօնը (1)։

Պատ. Օսմ. Ա. Հատ. եր. 579 ասում է. 1630-ին վախճանում է Շահ-Աբաս Ա. 44 տարի թագաւորութիւն անելով, որին յաջորդում է իւր եղբօրորդի (2) Զամ-Միրզան Շահ-Սեֆի անուամբ (3)։

---

1) «Աղուանից ամեն երկրին կաթուղիկոսութիւնն և գլխաւորութիւնն շնորհուած էր Յովհաննէսի հօրեղբօր Գրիգոր կաթուղիկոսին… վասնորոյ հրամայեցինք հաստատել Յովհաննէս կաթուղիկոսի անուամբ» (Շահ-Աբաս Ա-ից տուած հրովարտակից)։

2) Իսկ Առ. վարդ. եր 640. ասում է. Շահ-Աբաս Ա. մեռաւ 1078-ին 1078+551=1629-ին և գահակալեց իւր թոռն։

3) Մելիք-Բաղի Ա-ոյն շնորհուած հրովարակից երևում է որ Շահ-Աբաս Ա. 1633-ին կենդանի եղած է։ Այս տարեթւերի տարբերութիւնն մեր կարծիքով առաջացած է լուսնական ամսից կամ տարեթւից։

Ինչպէս գիտենք, Ս. Լուսաւորչի օրից սկսեալ Աղուանից կաթուղիկոսներն իւրեանց ձեռնադրութիւնը և օծումը միշտ ընդունում էին Հայոց ժամանակակից կաթուղիկոսներից։ Բայց ընդհատւում են այս կարգադրութիւնն և խզւում յարաբերութիւններն երկուստեք անընդհատ պատերազմների և վտանգաւոր երթևեկութեան և արգելիչ պարագաների պատճառաւ, զոր օրինակ ընդհատուած էին Հայոց կաթողիկոսութիւնն Կիլիկիա փոխադրուած ժամանակ։ 1633-ին երբ Հայոց Տէր Մովսէս Սիւնեցուն յաջորդում է Տէր Փիլիպպոս Հաղբակեցին, ի շարս զանազան բարեկարգութեանց կամենալով վերակարգել և այդ յարաբերութեան խնդիրը, գրում է սիրոյ Թուղթ Աղուանից Յովհաննէս Թ. կաթուղիկոսին՝ յայտնելով Մովսէս կաթուղիկոսի մահը և իւր ընտրութիւնը և հրաւիրում է գալ Մայր-Աթոռ Ս. Էջմիածին՝ իւր եպիսկոպոսներով և վարդապետներով և վայելել սրբալոյս միւռոնի շնորհաբաշխութիւնը, որը պատրաստ է օրհնել և տեսակցիլ։ Այդ իսկ միջոցներում պատահում է Աղուանից կաթուղիկոսի մահն, վասն որոյ Աղուանից եպիսկոպոսներն ոչ գնում են Էջմիածին և ոչ պատասխանում կոնդակին։ Այս պատճառաւ 1634-ին Փիլիպպոս հայրապետն գրում է մի մխիթարական կոնդակ սիրախառն ոճով և յորդորում է հաւաքական խորհուրդներով ընտրել մի արժանաւոր կաթուղիկոսացու, որը և բերել Էջմիածին եպիսկոպոսներով, վարդապետներով և իշխաններով, ճանաչել Էջմիածնի կաթուղիկոսը իբրև գլուխ, իսկ ճանաչել Աղուանից կաթուղիկոսները իբրև Աթոռ և որդի ըստ կանոնի և ըստ սովորութեան նախնեաց։ Վերջապէս Տէր Փիլիպպոս կաթուղիկոսի հրամանաւ 1634-ին Գանձասարի աթոռի վերայ բազմեցնում են Ջալալեանց տոհմից Տէր Գրիգոր Դ (1) կաթուղիկոսը։ Այս իսկ տեղում գրուած է 79 երեսում, «Այս

---

1) Ջամբռ եր. 79 և Շահխաթ. եր. 345 գրած են 1634-ին Տէր Գրիգոր Դ. Քիլուար հին եկեղեցու արձանագրութիւնն (Աղ. երկ. և դր. եր. 139-140) «Թվ. Հայոց ՌՁԶ (1637) Աղուանից Թովմայ կաթուղիկոսի»։ Հաւանական է որ սխալ է տարեթիւ. սա է Թովմայ կաթողիկոսն սօկութլուեցի, որ գահակալած է Ճալէթում 1481-ին և վախճանած 1495-ին, ինչպէս տեսանք կան-

տարի Խաչենի և Աղուանից ամբողջ ժողովուրդն գանգատեցին Շահ-Սեֆի Ա-ին թէ մենք՚ի բնէ վիճակուած ենք լինեմ թեմ Էջմիածնի, այժմ էլ կամենում ենք լինել թեմ Էջմիածնի. մեր վերայ չիշխէ Գանձասարի կաթուղիկոսն։ Տաճկաց ՌԽԴ թւին հրամայում է Շահն առանձին հրովարտակով, որ այնուհետև Էջմիածնի վիճակ լինել ցանկացողներն Էջմիածնի աթոռի գահակալին տան իւրեանց նուիրակութիւնը։ 16 տարուց յետոյ Շամախու և Շիրուանի բոլոր ժողովուրդն ևս գանգատում են Շահ-Աբաս Բ-ին լինել Էջմիածնի վիճակ... «Շահն Տաճկաց ՌԿ (1060) թւին հրովարտակ է տալիս Փիլիպպոս կաթուղիկոսին, որ իրաւունք ունի իւր հովանաւորութեան ներքև ընդունել գանգատաւորներըր»։ Հարկ է յայտնել, որ այստեղ բոլորովին մութ է մնում պատմութեան էական կէտն. որովհետև իսկապէս յայտնի չէ՝ թէ Աղուանից հասարակութիւնն ի՞նչ ծանր հանգամանքից հարկադրուած գանգատում է իւր հայրապետից. Շահն ի՞նչ արդարացի փաստի վերայ հիմնած է իւր վճիռը, որով և կոնդակ տուած Փիլիպպոս կաթուղիկոսին, Էջմիածին ի՞նչ պատճառաւ. չյարգելով շահական հրովարտակը տէր չեղաւ այնուհետև Աղուանից ժողովրդեան ամբողջութեանն իբրև իւր իրաւասութեան պատկանող հօտի։ Բաց յայտ յանէ Շահ-Սեֆին Տաճկաց 1044-ին «Գեանջայու, Ղարաբաղու, Շիրվանու, Շամախու և Ջարգիբիլու (Տար գաւառի կաթուղիկոսութիւնը..., կարգեցինք Գրիգոր կաթուղիկոսին»։ Երկրորդ հրովարտակը տալիս է Շահ-Աբաս Բ. Տաճկաց 1062-ին, մի և նոյն նահանգները կրկին հաստատելով Գրիգոր կաթուղիկոսին վերայ, ևն (տես Ջալ. Ս. եպիս. բ. հատ. եր. 487-489)։ Այնուհետև. Աղուանից երկրի ամբողջ ժողովուրդն վերստին հպատակում է

---

խաւ. սխալման պատճառը վերագրում ենք տարբեթիւ ցոյց տուող հայկական տառերին, քանզի Գրիգոր կաթուղիկոսի հրովարտակում պարզ գրուած է, «Յովհաննէս կաթուղիկոսի մահից յետոյ՝ Գրիգոր կաթուղիկոսին յանձնուած է Աղուանից կաթուղիկոսութիւնն»։

Գրիգոր Դ. կաթուղիկոսին առաջուան պէս և նուէրները տալիս Գանձասարին։

## ԺԴ Գլ.

*Սպանումն Մելքիսէթ եպիսկոպոսի.—Տէր Պետրոս կաթուղիկոս և իւր գործերն.—Միաբանութիւն երկպառակեալ մէլիքաց.—Շինութիւն Ս. Գրիգորիսի և Խանձք գիւղի եկեղեցու.—Սիմէօն ԾԸՌ կաթուղիկոս և իւր անվայել արարքն. Տէր Երեմիա և Տէր Եսայի կաթուղիկոսներ.—Սղնախ.—Ներսէս բանադրեալ ԾԸՌ կաթուղիկոս և հակաքրիստոնէական արարք իւր։*

1651-ին Օսմանցիներ'ը սպանում է Ջրվշտիկ վանքի վանահայր Մելքիսէթ եպիսկոպոսն (Արցախ եր. 235) բոլորովին անմեղ։

1653-ին փոխճանում է Աղուանից Տէր-Գրիգոր Դ. կաթուղիկոսն (Արցախ եր. 176), որին տեղակալում է Տէր-Պետրոս Գ. Խանձկեցին։ Խոհեմափայլ կաթուղիկոսն նախ վերանորգում է Աղուանից և Հայոց կաթուղիկոսաց մէջ եղած նախնի յարաբերութիւնը ս. Էջմիածնում ձեռնադրուելով և օծուելով. և ապա Աղուանից հայ ժողովրդեան սրտերը ջերմագին միաբանելով Գանձասարի հետ, Վարանդայ գաւառի ժողովուրդը միմեանց հետ և պաշտպանում շահական պալատում Գանձասարի գաւառի իրաւունքը։

Հարկ է յայտնել, որ այդ ժամանակներում ս. Էջմիածնի կաթուղիկոսներն գանգատներ յարուցանելով Շահերի պալատում Էջմիածնի Թեմ և վիճակ դարձրած էին Գանձակը, Շամախին, Ծարը և Դարբանդը։ Երջանկայիշատակ Տէր-Պետրոս կաթուղիկոսն յաջողացնում է փաստերով հաստատել, որ այդ տեղերն ի բնէ Թեմ և վիճակ են եղած Աղուանից հայրապետութեան, որպէս ապացուցանում են նախնի Շահերից շնորհուած հրովարտակներն։ Վասն որոյ Շահ-Աբաս Բ. իւր հրո-

վարտակում (Ս. Ջալ. Բ. հատ. եր. 494—495) Տաճկաց 1074-ին (1) ի միջի այլոց. «Մեք ․Եւ կաթուղիկոսութիւն Հայոց Գանձասարու, Ղարապաղու, Շիրվանու (2) և այլոց, շնորհեցաք անքակտելի հրովարտակաւս և հաստատեցաք զընդունելի զՊետրոս կաթուղիկոսի կաթուղիկոսութիւնն...»։

Ս. Էջմիածնի Մատ. Թ. 633. Ձեռ. Պատ. Աղուանից— Յիշատակարանից. «ՌՃԺԳ (1664) ամին Հայոց ի հայրապետութեան Աղուանից տեառն Պետրոսի երջանկափառ կաթուղիկոսի, վերակացուի մեծի աթոռոյն Գանձասարայ, զի այս խոհեմարան հայրապետս աշակերտ էր սրբափայլ և ուղղափառ մեծ թարգմանչացն Ղուկասու. վասն զի այս երիցս երանեալ կաթուղիկոսն յուսաւորեաց զխաւարեալ և զնսեմացեալ բոլոր տունս Աղուանից, զոր ի բազում ամանակաց կայր խախտեալ և խանգարեալ ի կարգաց և ի կրօնից վանօրայք և ամենայն եկեղեցիք։ Յորոց մի էր և մեծ աթոռն Ամարաս, զի յամանակաց յոլովից կայր աւեր և անբնակ ի մարդկանէ. զի արք ոմանք թենէշք և անխոհեմք փեռեկեալ և խրամատեալ էին զԹեմ և զվիճակն սորին և ապարեալ իւրեանց բնակութիւնս յայլ և այլ վայրս ըստ անձնիւր կամաց։ Իսկ այս խոհեմարան կաթուղիկոսս Պետրոս եկեալ ժողովեաց ի մի զԹեմ և զվիճակ երկիրս Հաբանդ (Վարանդայ) կոչեցեալ, որ այժմս ասի Վարանդայ և կոչեցոյց զաւաշնորդ զհարազատ և զմիածին զաշակերտն իւր զպարոն Տէր-Բարսեղ եպիսկոպոսն, որ է ատենցող սառնի... և նորոգեաց զԱմարաս պարսպօք և բազմամախ սենեկօք և տամբք...։ Տինս կայր և Հովարան (3) ի ճնուց

1) Թարգմանիչն Տաճկաց 1074-ից դրած է փրկ. 1659։

2) Հնումն Շրուան էին կոչում Շամախու դաշտային մասի գաւառներն։

3) Արցախ եր. 104-106։ Բաց յայդցանէ հայրապետիս անունն յիշուած է նաև Արցախ եր. 26, 42, 43, 45, 104, 105 և 158. և Ջաքարիա Սար. Բ. Հատ. եր. 68—69, և Աղ. երկ. և Դր. եր. 176։

մեծի աթոռոյս. հուպ ի գեղջն Հիրհեր կոչեցեալ, որ կոչիւք ս. Աստուածածնի վանք, նա ևս էր անբնակացեալ, այլ և անդ գնացեալ մեծ հայրապետն հիմնարկէ զեկեղեցի և յանձնէ աշակերտին իւրոյ, վերոգրեալ Բարսեղ պարոն տէրին, զոր և կատարեաց իսկ կամարակապ ձևով... որ վերածայնի Ս. Գրիգորիս...։ Դարձեալ կաթուղիկոսն ետ գրել յոլով գրեանս, յորոց մին է այս պատմագիրքս, որ (որի բնագիրն) ի վաղուց յետէ սպառեալ էր ի տանէս Աղուանից և գտեալ եղև ի ձեռն լուսաւոր հոգի Ղուկաս վարդապետին, զոր ետ հայրապետն...»։

Հայրապետս շինել է տալիս 1673-ին նաև իւր ծննդավայր Խանձք գիւղի եկեղեցին, որի արձանագրութեան մէջ յիշատակուած են իւր ազգատոհմի անդամոց անունները (Արցախ եր. 158—159)։

Ապա վախճանւում է Պետրոս կաթուղիկոսս 1675-ին։

Մինչդեռ Աղուանից հայ ժողովուրդն և հոգևորականութիւնն զբաղուած է լինում իւր սիրելի հանգուցեալ կաթուղիկոսի յուղարկաւորութեամբ, Խոտորաշէնցի (1) Սիմէօնն առանց ազգի և Էջմիածնի հայրապետի գիտութեան օծւում է կաթուղիկոս, թողում է Գանձասար վանքը, ժողովում է աթոռի ինչքերը և արդիւնքները, դնում և նստում իւր գիւղում և կոնակը տալիս այլազգի իշխանին. ինչպէս գրում է Ջամբռում եր. 80—81 «և նստի յԱղուանս Սիմէօն ինքնընծայ և անձնահաճ լքումնեամբ թարց հրամանի Տեառն Յակոբայ, և մանաւանդ թողլով զաթոռն Գանձասար, ժողովեալ զինչս և զարդիւնս աթոռոյն ի գեօղն իւր և անդ նստի յենլով ի յայլազգ իշխող գեղջն իւրոյ»։ Ըստ գաղտնիքի սա ինքն է առաջին ԾԸՌ կաթողիկոսն, քար զայթակղութեանն, խանգարիչն կարգաց և կանոնաց հայրապետութեանն Աղուանից և հիմնաքար հակաթոռոյն Գանձասարի...։

Հայոց Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն բանադրում է զՍիմէօն ինքնակոչ կաթուղիկոսը, Աղուանից հայոց հաճու-

1) Այժմ աւերակ է այս Խոտորաշէն գիւղն և անմարդաբնակ։

թեամբ հրաւիրում է Էջմիածին Ջալալեան Երեմիա վարդապետը, ձեռնադրում և օծում օրինաւոր կաթողիկոս և պատւով ուղարկում Գանձասար 1676-ին։ Հակաթոռ և ինքնակոչ Սիմէոնն անում է շատ անախորժ և զզուելի անկարգութիւններ, որից առնում է Յակոբը կաթողիկոսն երդման և նզովից թուղթ, որ Սիմէոնն այլ ևս հետամուտ լինելու չէ կաթողիկոսութեան, ո՛չ ինքն Սիմէոն և ո՛չ իւր ազգայիններից ոք և լինելու չէ քար գայթակղութեան, և այլն։

Վերջապէս չուզելով աւելի ընթերցողաց լսելիքը վշտացնել Սիմէոնի անլուր և զզուելի չարութիւններով (1) համառօտում ենք։ Սիմէոն շինում է Երից-Մանկանց վանքը հակաթոռ Գանձասարի և վախճանում 1701-ին։

1700-ին վախճանում է Տէր-Երեմիա կաթողիկոսն, որին յաջորդում է Տէր-Եսայի կաթողիկոսն Ջալալեանց, բայց առանց Հայոց Նահապետ կաթողիկոսի գիտութեան, սակայն հրաւիրուելով Էջմիածին, դառնում է մի փառաւոր կոնդակով։ Պարսից և Օսմանցւոց սուրերի մէջ մնացած անտանելի տառնապների մէջ էր Աղուանից քրիստոնեայ ժողովուրդն։ Խառաբաշէնցի (2) Սիմէոնի մահուամբ առժամայն մի ուրախանում է հասարակութիւնն, որ վերջացաւ իւր ներքին խռովութիւններն և երկպառակութիւններն, վասնորոյ իւր բոլոր ուշադրութիւնը դարձնում է արտաքին, լափլիզող սուրերի վերայ։ Միանում են բոլոր մէլիքներն և իւզբաշիներն, որոշում են կազմել սղնախներ, այն է իւրաքանչիւր մէլիք իւր վստահելի ամրոցում ամրանայ իւր ժողովրդով և զօրքով և մահու չափ պատերազմելով պահպանէ իւր ազատութիւնը, ժողովուրդը և կրօնը։ Ա. սղնախն ամրոցն լինում է Արցախի Գարգման գաւառում Մլքնաբերդն (Արցախ եր. 304)։ Բ. Սղնախն Մեծկողմանց գաւառում Մէլիք-Բէկլարեանների ամրոցն (եր. 256—

---

1) Հետաքրքրուողներն թող ականեն Ջամբռի եր. 80—91։

2) Կարծես հիմնովին ծռուած էր և խոտորուած գիւղիս անունըն եա։

257). Գ. Ջրաբերդ (եր. 239—240)։ Դ. Սղնախն գումարւում է Կաչաղակաբերդում (եր. 197—198). Ե. Աւետարանոցի ամրոցում (եր. 96). Զ. երբեմն Դող ամրոցում և երբեմն Ցորա բերդում (նոյն Ար. եր. 82—85)։ Իսկ գլխաւոր ժողովատեղին էր Գանձասարայ վանքն։

Այն ինչ 1706-ին իւրաքանչիւր մելիք կազմ և պատրաստ պատերազմում էր արտաքին թշնամեաց հետ, յանկարծ տարածւում է. «Հակաթոռ Սիմէոնի հետ մեռած չեն շարութիւնն և երկպառակութիւնն, այլ աւանդ թողած են իւր ազգական Ներսէսին, որ կաշառով ձեռնադրուած է կաթուղիկոս...»։ «Ի հինգերորդի ամի կաթուղիկոսութեան Եսայեայ, Ներսէս անուն ոմն սեւագլուխ յազգէ վերոյիշեալ բանադրեցեալ Սիմօն կաթուղիկոսին, ի յԱղուանս կաշառօք և խաբէութեամբ օծանի կաթուղիկոս՝ խոչ և սատան Եսայեայ ի ՌՃԾԵ (1706) թուոյն մերում... Կաթուղիկոսն Հայոց Աղէքսանդր Ջուղայեցի... իմացաւ զլրբութիւն Ներսիսի ապօրինաւորին, և երկիրն Աղուանից եւս զանգատական բազմակնիք թղթովք ծանուցանէն Աղէքսանդրի, որ առաքէ առ Նոսա գրելով թէ զերկրորդ Բակուր-Ներսէսն բանադրեցաք և զԵսային կարգեցաք... գրէ կոնդակ մի եւս (ՌՃԾԷ=1708) սոյն Աղէքսանդր կաթուղիկոսն ի յԱղուանս, յորում վերստին բանադրէ զՆերսէսն Նեռն կոչելով, և զընդունողսն նորա, և զձեռնադրեցեալսն ի նմանէ Նեռնական... (Ջամբռ եր. 82—91)»։

## ԺԵ. ԳԼ.

*Յարաբերութիւն հայոց և ռուսաց մէջ.—Առանձին ժողով մեծ և փոքր-Սիւնեաց իշխանների ռճիէ (1678)-ին.—Իսրայէլ-Օրին, իւր ծագումն և գործերն.—Ժողով Սիսեան գաւառի Անգեղակոթ գիւղում և իւր նպատակն և պատգամաւորութիւնն.—Մահ Օրու։*

Ըստ բանախօսութեան պ. Գէորգ Քանանեանցի Հայոց յարաբերութիւնն Ռուսաց հետ սկսուած է ԺԷ դարի կէսից։

Այն ժամանակ հայերն հանդիսանում էին առևտրական միջնորդ Ռուսաստանի և Պարսկաստանի տէրութեանց մէջ։ 1660-ին Սահրադեան Զաքարիա անունով հայ վաճառական մի գալիս է Մոսկվա և բերում է Ռուսաց Թագաւորին համար ընծայ՝ թանկագին ադամանդներով, յակինթներով և ուրիշ պոհարեղէններով զարդարուած մի Թագ։ Մոսկվայի տէրութիւնն շահաւէտ գտաւ հայերի միջոցաւ Պարսկաստանի ապրանքները Ռուստան ներմուծել, և 1667-ին հաստատեց կապակցութիւն մի հայ ընկերութեան հետ, որի գլխաւորներն էին Գրիգոր Լուսիկեան և Ստեփան Մովսէսեան Ромодамскій։ Բայց այն միջոցին նպաստաւոր չէին ոչ աշխարհագրական և ոչ քաղաքական հանգամանքներն. ուստի անյաջող անցաւ այս առաջին քայլն. սակայն չյուսահատեցան հայերն։ 1673-ին Մոսկվա եկաւ Լուսիկեանն և հաստատեց նոր կապակցութիւն. և այնուհետև գործերն աւելի յաջող ընթացք առնելով հետըհետէ ընդարձակուեցան։ Հայ ժողովրդեան օգտակարութիւնը ամենից աւելի ճանաչեց Մեծն-Պետրոս՝ Ռուսաստանի մեծ բարենորոգիչն, որ մինչև վերն պահեց իւր բարի տրամադրութիւնը դէպի հայերն։ 1711-ին մարտի 2-ին կայսրն՝ ծերակուտին ուղղած հրամանագրի մէջ յանձնարարում է. «Որքան կարելի է, քաղցրութեամբ վարուիլ Հայոց հետ և դիւրացնել նոցա գործերը, որպէս զի հայերն աւելի շատ փափագին գալ Ռուսաստան»։ Իսկ նոյն տարուայ մայիս 2-ին հրամանագրով ևս հաստատում էր «Հայ Առևտրական Ընկերութիւն» մինչև իւր ժամանակն շնորհուած բոլոր արտօնութիւնները։ 1719-ին ելնում է նաև ուրիշ հրաման, կարգադրելով որ պարսկական ապրանքների առևտուրն կատարուի այնուհետև հայ ընկերութեան միջոցաւ։ Հայոց արժանաւորութիւնը և օգտաւէտութիւնը արժանապէս գնահատելով, Մեծն-Պետրոս, ցոյց էր տալիս նոցա բնակութեան, գաղթականութեան և վաճառականութեան նկատմամբ այն պաշտպանութիւնը, ինչ որ եւրոպացիներին»։

«... Թուին ՌՃԻԷ (1678-ին) (պարոն Կ. Եզեանց

Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ. եր. 17) Մեծ և Փոքր-Սիւնեաց իշխաններն և մելիքներն կազմում են առանձին ժողով, և ուխտելով միաբանութեամբ դիմել մի եւրոպական տէրութեան և խնդրել նորանից իբրև Քրիստոնեայ պետութիւնից, որ իրանց օգնելով ազատէ զիրենք Թիւրք և Պարսիկ Մահմեդականաց բռնութիւնից։ Բայց անկատար է մնում արդիւնքն պատերազմների պատճառաւ։ Յետոյ ընտրում են մի պատգամաւորութիւն, որի նախագահն լինում է Իսրայել Օրին, որ Արցախի Բաղ նախարարական տոհմից էր, ինչպէս էին Խաչէնում բնակող Բաղ, Ջաջուռ, Վասակ, Պռօշ և այլն (1) իշխանների հետագայներից էր, զորս Շահ-Աբաս Ա. փոխադրած էր Սպահան։ Հնդկաստանցի Իսրայել Օրին գոզցես Մովսէս Մարգարէի նման ուխտած լինելով օգնել իւր ազգակիցներին՝ և ցմահ անձնուէր ծառայել Հայրենեաց իւր լեզուագիտութեամբ և ունեցած կարողութեամբ և ազատել օտար և ճնշող լծից հայ ազգը, այդ գործը սկսում է Մեծ և Փոքր-Սիւնիքից, ուր դեռ ապրում էր մելիքական իշխանութիւն և հայ զինուորական զօրութիւն, քանզի Հայաստանի բոլոր մասերից այդ ժամանակ մեռած էր հայկական իշխանութիւնն։ Անդեղակոթ (Մեծ-Սիւնիքում) գիւղում նորից կազմուում է ժողով մելիքներից և սպարապետներից, նախ ուխտում են երդմամբ ժողովականներն ցմահ հաստատ մնալ ազատութեան գաղափարին և ապա խմբագրում են մի ծրագիր և ապա ընտրուում է պատգամաւորութիւն, որի լիազօրութիւնը յանձնում են Իսրայել Օրուն, իսկ օգնական վերջնոյս ընտրում են Ս. Յակովբայ վանքի միաբան Մինաս վարդապետը։

Իսրայել Օրին յղում է իւր որդին Ռուսաստան Մեծն-Պետրոսի մօտ, իսկ ինքն իւր սեփական ծախքով պատգամաւորութեան հետ անցնում է Գերմանիա, ներկայանում Պֆալցի իշխանին Բաւարիայի, որին և մատուցանում է տեղեկագրեր.

---

1) Տես պատմութեանս Ա. հատ. եր. 144, 145. և Արցախ եր. 182 և 424 և Աղ. երկ. և Դր. եր. 235—236։

որոց մէջ նկարագրուած է լինում պատգամաւորութեան նպատակն, ծրագիրն և ծրագիրը իրագործելու միջոցներն։ Պֆալցի իշխանն հաւանում է ծրագիրը և յղում հայ պատգամաւորները Վիեննա Լէօպօլդ Ա. կայսեր մօտ, որին ներկայանալով պատգամաւորներն խնդրում են ուշադրութիւն դարձնել խեղճ Հայոց ազգի ողորմելի դրութեան վերայ։ Կայսրն խիստ զբաղուած լինելով իւր ներքին գործերով՝ երկար ժամանակ ձգձգում է տալ որոշ պատասխան։

Օրին, Թանկագին ժամանակը պարապ չկորցնելու նպատակով դառնում է Գաղղիա, մտնում զինուորական ծառայութեան մէջ, սովորում հարկ եղած զինուորական արուեստը յօգուտ ապագային և պոլկովնիկի վկայական։ Վերջապէս Լէօպոլդ կայսրն պատասխանում է թէ առանց Ռուսաց կայսեր աջակցութեան դժուար է գլուխ բերել Հայաստանի ազատութեան գործը։

Նոյն կայսեր մի յանձնարարական թղթով՝ հայ պատգամաւորութիւնն դիմում է Ռուսաց. իսկ մի պատասխանով յայտնում է Անդեղակոթի ժողովականներին չվհատել, այլ սպասել։ Ժողովականներս 1699-ին ապրիլ 20-ին դիմում են Ռուսաց Մեծն-Պետրոս կայսեր (պարոն Կ. Եզեանց եր. 17—20) մի և նոյն խնդրով և նպատակաւ։ Հայ պատգամաւորութիւնն 1701-ին յուլիս 11-ին Լէօպոլդի և Լեհաստանի թագաւորի յանձնարարականներով ընդունում է Մեծն-Պետրոսից. բացի յանձնարարականներից մատուցանում է կայսեր մի այլ խնդիր, ուր ի միջի այլոց այսպէս է ամփոփում իւր խնդիրը. հայերն Ռուսաստանից խնդրում են միայն 10—20 հազար զինուոր, քանզի հայերն ևս ունին մեծ քանակութեամբ պատրաստի զօրք, որ կազմում են զինուած բանակներ ամրացած բերդերում, բաւական է միայն որ ռուս զօրքն մտնի Հայաստան, որից հարիւր հազարաչափ հայեր իսկոյն կըմիանան արքունի բանակին. ռուս զօրքն կարող է հայոց հաշուով կերակրուիլ։

Նոյեմբերի 19-ին կայսեր կողմից յայտնում են Օրուն մէ

յուսադրական պատասխան. սակայն ճշմարիտն այս է որ ռուսներն զբաղուած էին Շուէտացւոց հետ ունեցած պատերազմով, Աւստրիացիք զբաղուած էին. Սպանիական գահաժառանգութեան պատճառաւ ծագած պատերազմով. Օսմանցիների բռնութիւններից կոտորւում և բռնի տաճկանում էին հայերն և Օսմանցւոց թելադրութեամբ սկսած էին Կովկասեան լեռնաբնակ ցեղերն անընդհատ յարձակումներ գործել, աւարել, գերել և կոտորել Աղուանից երկրի քրիստոնեայ բնակիչները։

Մեծն-Պետրոս կայսրն հրամայում է մարտ ամսին 1702-ին յայտնել Օրուն յուսադրելով թէ երբ յաջողութեամբ կվերջանայ Շուէտական կռիւն, ինքն կայսրն անպատճառ կձեռնարկէ Հայոց օգնութեան գործին, որը Միրոն Վասիլովիչի ձեռնով հաղորդւում են հայ մելիքներին և սպարապետներին։

Իսրայէլ Օրին Մեծն-Պետրոսից ստանում է գնդապետութեան աստիճան և Աւստրիոյ կայսեր Պֆալցի Կուրֆիւրստին (1) ուղեւոր նամակներ և 1704-ին փետր. 10-ին թողնում է Մոսկվայում Մինաս վարդապետը և ինքն գնում Վիեննա։ Պֆալցի Կուրֆիւրստի նամակը կարդալուց յետոյ յայտնում է թէ այժմ յաջող է ընթանում այն պատերազմն, որ սկսուած էր Սպանիական ժառանգութեան համար. իսկ Լէօպոլդ կայսրն խորհուրդ է տալիս Իսրայէլ Օրուն առ ժամն բաւականանալ Պարսից Շահի մօտ դեսպան գնալով. առ ժամն անկարելի է զօրք յղել Հայաստանի ազատութեան համար։ Կուրֆիւրստն Դիւսելդորֆում Ս. Պապից ստանում է Պարսից շահին ուղղեալ մի նամակ, որով խնդրում էր Հիւսէյին-Շահից՝ թոյլ չտալ նեղել հպատակ քրիստոնեաներր։ Մի և նոյն մտքով Շահին գրրում է և ինքն Կուրֆիւրստն։

Իսրայէլ Օրին ծախում է Դիւսելդորֆում ունեցած իւր տունը, կինը և որդիքը յղում Կեօլն, գնում 20,000 րուբլու հրացան և ռազմամթերք իւր Հաշտարխանում կազմելիք հայադունդ զինուորների համար. խնդրում Լէօպոլդ Ա. կայսեր յա-

---

1) Այս անձն կոչւում է և Կուրֆիւրստ-Յովհան-Վիլհելմ։

յորդոր Յովսէփ Ա. կայսրից, որ բարեհաճի իւր նախորդի նըման հովանաւորել խեղճ հայոց ազգը, և ինքն դառնում է Ռուսաստան 1706-ին, խնդրում կառավարութիւնից, որ առանց մաքսի թոյլ տայ զէնքերը Հաշտարխան մտնելու և իւր երկու որդիքն Մոսկվա գալու։

Հիւսէյին-Շահին յատուկ նամակ է գրում և Մեծն-Պետրոս յայտնելով Օրու դեսպանութիւնը և իւր կողմից էլ խնդրելով որ Շահն չթողու նեղել հպատակ քրիստոնեաները։ Իսրայէլ Օրու դեսպանութիւնն, Մոսկվայում թողլով Մինաս վարդապետը, դիմում է Շամախի. դեսպանութիւնն բաղկացած է լինում 50 անձից, որի մէջ բացի հայերից լինում են ռուսներ, լեհացիներ, գաղղիացիներ, հօլանդացիներ և շուէտացիներ, ընդամէնն գրեթէ յիսուն անձինք, որոց ամենեցուն համար Օրին իւր հաշւով պատրաստել է տալիս միատեսակ զգեստ։ Բաւական ժամանակ այս է մինչև 1709 թուականն (1) դեսպանութիւնն արգելւում է Շամախում զանազան կասկածների պատճառաւ, զի այս քաղաքն տակաւին գտնւում է Պարսից ձեռքում։ Շահն արժանավայել պատւով ընդունում է Իսրայէլ Օրու դեսպանութիւնը և պատասխանում Մեծն-Պետրոսին։

Մի և նոյն 1709 թւին Օրին իւրայիններով դառնում է Շամախի 20 հայ մետաքսագործ գերդաստանի հետ, որոնց Պետրոս կայսեր հրամանաւ տանում էր Ռուսաստան մետաքսագործութեան գործիքներով միասին։ Վերջապէս Աղուանից Եսայի կաթուղիկոսի հետ և յիշեալ արուեստաւորների հետ տանում է Օրին պարգև կայսեր 25 նժոյգ ձիեր. բայց սաստիկ փոթորկի բռնութիւնից առագաստաւոր նաւերն դարնուում են ծովեզերքին, ջախջախուում, ճանապարհորդներն անվնաս ելնում են Նիազովա կայարանն։ Այդ դառն ժամում լսում է որ Աստ-

1) Այդ իսկ թուականին Ջուղայեցի Աղեքսանդր կաթուղիկոսն մի կոնդակով յայտնում է ռուսաց կայսեր թէ Օրու դեսպանութիւնն էջմիածնով անցաւ Պարսկաստան։

քախանի կառավարութեանն պահանջում է. մաքս ծիերի համար և իւր յղած մարդիկն Ջնացած են անխնամ։ Իսրայէլ Օրին անմիջապէս գրում՝ է Մինաս վարդապետին 1711-ին մարտի 1-ին որ ազատ թողնեն ծիերն և մարդիկն, որ շուտով հասնեն Մոսկվա և յղեն ուրիշ նաւ իւրեանց համար, և թէ Աղուանից Եսայի կաթուղիկոսն իւր հոգևորականների մի մասին հետ գալիս է կայսեր տեսութեան։ Մինաս վարդապետն՝ Օրու Պարսկաստանից, Շամախուց և Նիազովայից գրած բոլոր նամակները, որք վերաբերում էին Պարսից ներքին գործերի, Աֆղանստանի հետ ունեցած պատերազմի և նաւարկութեան արկածներին, հաղորդում է կայսեր և կարգադրել տալիս ամենը։

Մի և նոյն 1711-ին ամրան հազիւ թէ կարողանում են հասնել Հաշտարխան, Իսրայէլ Օրին աշխատում է կարգադրել իւր գործերը և փութալ Մոսկվա, բայց, չտեսած իւր երկարամեայ նիւթական և բարոյական դառնաքիրտն աշխատանաց արդիւնքը, Հայաստանի ազատութեան կարօտով վախճանում է օգոստոս ամսում Հաշտարխանում (1), որի պատուական մարմինը դառնապէս սգալով թաղում է Հայոց եկեղեցու գաւթում Եսայի կաթուղիկոսն և ցաւօք սրտի դատարկ դառնում Գանձասար իւրայիններով։

## ԺԶ. ԳԼ.

Մեծն-Պետրոսի քաղաքականութիւնն հայոց նկատմամբ.—Շահ-Սուլթան Հիւսէյնի յոռի կառավարութիւնն.—Օսմանցւոց և լեկզիների աւերմունքներն.—Աղուանից հայերի ժողովատեղին, գրագրութիւններն, սուրհանդակներն, ամրութիւններն և ինքնապաշտպանութիւններն։

1699—1721 թուականներում Մեծն-Պետրոս թափում է ամեն ճիգ՝ քաշել դէպի Ռուսաստան պարսկահպատակ, թրքա-

1) Պարոն Կ. Եզեանց գիրք եր. 277։

հպատակ և լեհահպատակ հայոց սրտերը, վաճառականութիւնները և արուեստները։ Պարսիկներն սկսում են տզրկաց նման անխնայ ծծել իւրեանց հպատակ հայոց բոլոր հարստութիւնները և նիւթապէս մերկացնել հայերը։ Օսմանցիք և կովկասաբնակ սև-հոներն ձեռք են տանում ամեն միջոց կոտորել, գերել, կրօնափոխ անել պարսկահպատակ հայերը, այրել նոցա գիրքերը և մատեանները և քանդել եկեղեցիները։ Հայերն ամրանում են Արցախի և Շաքուայ սղնախներում-ամրոցներում, Օսմանցւոց և Հիւսիսայնոց դէմ կռուում մինչև իւրեանց արեան վերջին կաթիլն և պահպանում քրիստոնէութեան հաւատը և հայրենիքը և ստէպ ստէպ դիմում ռուսաց օժանդակութեան անընդհատ գրութիւններով։

Մեծն-Պետրոս մի յատուկ հրովարտակով պատուիրում է ծերակուտին պաշտպանել Պարսկաստանի հայոց գործերը և գործ դնել ամեն միջոց՝ ձգել այն հայերը դէպի Ռուսաստան։ Ջմիւռնացի հարուստ Պետրոս Ապրօյի մասին կայսրն տալիս է մի այլ հրովարտակ վաճառականութիւն անելու, որով հարթում է Թրքահպատակ հայերը Ռուսաստան քաշելու ուղին։ Այսպիսով հետզհետէ տեղափոխուում են Ռուսաստան պարսկահպատակ, տաճկահպատակ, լեհահպատակ և մինչև անգամ հնդկաստանից շատ հայ վաճառականներ, մետաքսագործներ, երկրագործներ, արուեստաւորներ և կերպասագործներ և օրըստօրէ պայծառացնում Ռուսաստանը։ Առաջինն էր հայազգի Սափար Վասիլեանն, որ Մեծն-Պետրոսի օրով անկեց և աճեցուց Թէրէք գետի եզերքում թթենիներ մետաքսի բօժօժ շահելու համար։ Իսրայէլ Օրու ուղարկած 20 հայ գերդաստանն էր, որ նոյն կայսեր յորդորմամբ հաստատեցին մետաքսագործութեան առաջին գործարանը և սովորցրին ռուսներին կերպասագործութիւն։

Անչափահաս հասակաւ գահակալում է պարսից Շահ-Սուլթան-Հիւսէյինն, որի անչափահասութիւնից օգուտ քաղելով երկրի բոլոր պաշտօնեաները, մեծից մինչև փոքրն դառնում են

կաշառակեր, կեղեքիչ, կողոպտող, անարդարադատ, զրկող եւ անխղճաւագործ: Եռապատկում են արքունի հարկերի քանակութիւնը, բազմապատկում են նեղութիւնները, տիրում է անապահովութիւն կեանքի եւ ընչից, ու 'ի չգոյէ հմուտ և խոհեմ զօրավարների, գրեթէ, բազմիցս յաղթւում է զօրքն և տալիս հպատակներին անտանելի նեղութիւններ: Այս պատճառաւ ակամայից ապստամբում է Աղուանից հայ ազգաբնակութիւնն, մանաւանդ հարկերի անտանելի ծանրութեան համար (պատ. Ես. կաթ. եր. 12—22, տպ. յԵրուսաղէմ):

Օսմանցիք օգուտ քաղելով պարսից այդ թուլութիւնից, սկսում են գործ դնել ամեն տեսակ բռնութիւն և սրածութիւն, և յարմար ժամանակ համարելով գրգռում են իւրեանց հաւատակից լեռնաբնակների գլխաւորները, որք են Խազրաց, Սև-Հոնաց և Ալանաց-լեզգիների իշխող Շամխալն, Ալի-Սուլթանն, Սուրխայն, Իսմին և Հաճի-Դավութն: Սոցանից իւրաքանչիւրն իւր զօրքով, որն Դարբանդի դռնով, որն Ճառի և որն Կախի կողմից յարձակւում են Աղուանից երկրի վերայ, կողոպտում, գերեվարում, կոտորում Ճառի-կապինան-կախի, Խէնի, Հոդի, Կապապակ և Արաշի գաւառները. 1721-ին օգոստոսի Ս. Աստուածածնայ վերափոխման օրում գրաւում Շամախի քաղաքը, բնաջինջ անում պարսիկ բնակիչները, կողոպտում քաղաքի հարստութիւնը և նոյն թւին դառնում իւրեանց տեղերն: Հետևեալ տարում կրկին գալիս են նոյն լեռնականներն առաջինից աւելի, հալածում Բարկուշատի պարսից զօրքը իւր Զարխաչի զօրավարով, կողոպտում, գերեվարում Դիզակ գաւառը, բայց Վարանդայ գաւառը ազատում է խոհեմ Մէլիք-Պաղիրն ընծաներ յղելով, Խաչէնի, Ջրաբերդի ստորին մասերը ապականելով՝ Պարտաւի մօտ յաղթում են Երևանի, Գանձակի և Կախէթի խաներին և նստում Գանձակ քաղաքի մօտերքում: Գանձակի Զիւադ-խանն հրաւիրում է Վրաց Վախտանկ թագաւորը իւր քաղաքը ազատելու լեռնային հրոսակներից, որք անմիջապէս հեռանում են Վախտանկի գալը լսելով: Վրացի

զօրքին բռնակալութիւն տալու համար Ջաւատ-խանի մատնութեամբ և գանձակեցւոց յորդորմամբ ամէն ընչից կողոպտուում են վրացի զօրքից Գանձակի գաւառների բնակիչ Սուննու թուրքերն (պատմ. Եա․ կաթ. եր. 22—44)։

Աղուանից հայոց ժողովատեղին լինում է Գանձասար վանքն և Բում գիւղաքաղաքն և ժողովներն լինում են Աղուանից Եսայի կաթուղիկոսի և Բումեցի Մինաս քահանայի նախագահութեամբ։ Մեծապատիւ պարոն Կարապետ Եզեանցի Сношенія Петра Вел. съ арм. народомъ (1) գրքից երևում է ակներև որ ժողովական մէլիքներն և իւզբաշիներն-սպարապետներն-թղթատար սուրհանդակներն եղած են Արցախի նախագահ Եսայի կաթուղիկոս Աղուանից Խաչենցի Մէլիք-Գրիգոր Ջալալեանց իւր Սարուխան, Պաղի և Օհան իւզբաշիներով-սպարապետներով—։

Ջրաբերդի Մէլիք-Եսայի, յետոյ իւր մահից վերջն իւր որդի Մէլիք-Մէժլում Ա. իւրեանց Թարխան, Շրուան և Սարգիս իւզբաշիներով-սպարապետներով։

Կիւլստանի Մէլիք-Յովսէփ, Մէլիք-Թամրազ և Մէլիք-Աբով իւրեանց Մելքում, Միրզա և Աբրահամ սպարապետներով, (տես Յակոբոս սպարապետ Արցախ եր 241)։

Վարանդայի Մէլիք-Պաղիրն իւր Դաւլթ, Ջաքարիա և Աւան Իւզբաշ.—սպարապետներով։

Դիզակի Մէլիք Եկեան կամ Էկան իւր Սիմօն, Պաղասան և Յովհան սպարապետներով։

---

1) Այս մի հոյակապ և նշանաւոր աշխատութիւն է և ճշգրիտ աղբիւր, որի ’ի լոյս աշխարհ հանելն պարտական ենք բազմաշխատ և բարձրապատիւ պարոն Կարապետ Եզեանցին և նորա գրչի անխոնջ ջանից և հմուտ լեզուագիտութեան։ Սոյն գրքի մէջ ամփոփուած են մեծ և փոքր-Սիւնեաց-Արցախի-իշխանների և հոգևոր գլուխների գաղղիերէն, իտալերէն, ռուսերէն և հայերէն գրագրութիւններն Իսրայէլ Օրու, Մինաս վարդապետի և սուրհանդակների միջոցաւ առ Եւրոպական պետութիւններն և սոցանից հայերին։

Արցախի Գարդմանի մէլիքների կողմից եղած են իւրեանց Փանոս և Սուղի սպարապետներն։

Սուրհանդակներն եղած են Տէր-Անտօն քահանայ և Զալ-յարի-քեխա-տանուտէր։

Արցախի Սղնախներն—զինուորներով և ղէնքերով ամ-րացած ամրոցներն—եղած են, ինչպէս յիշած ենք կանխաւ, Արցախի Գարդման Մլղնաբերդն (Արցախ եր. 304)։

Մեծ-կողմանց կամ Կիւլստանի Մէլիք-Բէկլարեանների ամ-րոցն (Արցախ եր. 256—257)։

Ջրաբերդի Ջրաբերդ ամրոցն (Արցախ եր. 239—240) (1)։

Խաչէնի Կաչաղակաբերդ և Խոխանաբերդ (Արցախ եր. 197—199)։

Վարանդայի Աւետարանոց ամրոցն (Արց. եր. 96)։

Դիզակի Դող ամրոցն և երբեմն Ցոր ամրոցն (Արցախ եր. 82—85)։

Շաքուայ ժողովք գումարուած է Բումի Մինաս քահա-նայի նախագահութեամբ. իսկ Սղնախներն եղած են Սրխով-Խասրով ամրոցն (2), Փիլիպլու (3), Սրհառն (4) և Անուշ-բերդն (5)։

Արցախի և Շաքուայ հայերն, ամրանալով այդ ամրոցնե-րում, ամենայն զօրութեամբ դիմադրում են Օսմանեան զօրաց։ Մանաւանդ Արցախում շատ կոտորում են թրքաց զօրքերից Դիզակի Ցոր և Դող ամրոցներում, Վարանդայի Մէլիք-Ցիւ-սէյինն և Ջրաբերդի Իւզբաշիներն և Կիւլստանի Մէլիք-Ցով-սէփին։ Աւանդութիւնն վկայում է, որ Վարանդայի սպարա-

1) 1724-ին վախճանում է Ջրաբերդի Մէլիք-Եսային և յա-ջորդում իւր որդի Մէլիք-Մէժլումն (Նոյն գիրք Եզեանցի եր. 382 և 383)։

2) Այժմ Խոսրով բերդ, (Աղ. երկ. և Դր. եր. 225—227)։

3) Փիլիպլու բերդ, (Աղ. երկ. և Դր. եր. 257—258)։

4) Սրհառն այժմ (Կեաւուր ղալա 253—254)։

5) Անուշ բերդ Գիս վանքի մօտերքում տես ԼԱ. բերդն Աղուանից (Աղ. երկ. և Դր. եր. 270)։

պետ Աւան-Իւզբաշին և իւր եղբայր Թարխանն աւելի շատ թիւրք (զօրք) կոտորած են, բնակուելով Աւանաքերծ քարայրում և Ամարաթներում և Հիւնոտի կարանուծ-քարայրում—(Արցախ եր. 134․-իւր 16 թիւ ժանօթութեամբ միասին․ եր. 423)։ Այս այսպէս քաջութեամբ պատերազմելով պահպանած են Արցախի քաջերն իւրեանց Ս. Հայրենիքը, և Մելիք-Աւան-Մելիք Եկեանի կարգադրութեամբ կոտորում տներում չափազանց Օսմանցիներից և պաշտպանում անկախութիւնը և հայ եկեղեցին ու դաւանութիւնը։

## ԺԷ. ԳԼ.

*Մեծն Պետրոսին Անդր-Կովկաս գալու լուրն.—Պարսից տէրութեան տկարանալն.—Սաստիկ սով և տեղափոխութիւն.—Պատրաստութիւն Մեծն-Պետրոսին դիմաւորելու.—Դարբանդն, Բագուն և Գիլանն ընկնում են Ռուսաց իշխանութեան տակ։*

Ռուսաց կողմից մերթ ընդմերթ դրաւոր և բանաւոր յուսադրութեամբ խրախուսում էին Աղուանից և Վրաց քրիստոնեայ ժողովուրդը և իշխողները, որ քաջութեամբ դիմադրեն Օսմանցւոց և Լեկզիների յարձակումներին։ Գրում է Եսայի կաթուղիկոսն, «քանզի պայման ուխտի և ժամադիր եղեալ էր թագաւորն Պետրոս առ Վախտանկ զի յայսմ աշնան (1722-ին 'ի մուտն Հոկտեմբերի՝ ինքնին 'ի քաղաքն Շամախի հասեալ և զնա անդ 'ի պատրաստի գտանել պարտ է...»։

Աֆղանստանի (1) ապստամբութեան պատճառաւ գահընկեց է լինում Պարսից Շահ-Սուլթան-Հիւսէինն, տկարանում է Պարսից զինուորական ուժն. Օսմանցիք Պարսկաստանի կողմն

1) Եսայի կաթուղիկոսն Աղուանից (եր. 20—21) ասում է Աֆղաններն տարուած են ընիկ Աղուանից քրիստոնեայ բնակիչներից և հաւատափոխ արած Լանկ-Թամիրի բռնութեամբ։ Մահմետական կրօնը բռնի ընդունելուց յետոյ աճում են և շատանում։

են մղում իւրեանց զինուորական ուժը և Աղուանից երկրից ղզալի կերպիւ նօսրանում է Օսմանցի զօրքն։

Օսմանցւոց գործած երկարատև պատերազմներն Սև-Հոնաց, Խաչէնից և Լեկզիների յանախակի արշաւանքներն առաջացնում են Արցախում սաստիկ սով. միւս կողմից գալիս են անագին քանակութեամբ մարախ և թրթուր և լափում բոլոր հացաբոյսերը, մանաւանդ Դիզակի, Վարանդայի, Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլիստանի գաւառներինը և ամբողջ Ուտեաց բարեբեր դաշտինը։ Անկարող լինելով դիմադրել անդիմադրելի սովին չիշեալ գաւառների հայ բնակչաց կէս մասն տեղափոխւում է Շաքուայ Հողի, Խենի և Արաշի գաւառներն և բնակութիւն հաստատում նոցա մէջ (Ես. կաթ. եր. 26—27)։

Վրացւոց Վախտանկ Ե. թագաւորն հաւաքում է իւր բոլոր վրացի և հայ զօրքը և բանակը դնում Գանձակի մօտերքում։ Եսայի կաթուղիկոսն ևս ժողովում է մէլիքները և զօրքը 12000-ից աւելի, Արցախի հայ զօրքը և Աւան, Շրուանի, Շահնի և Սուրխան սպարապետները և մօտենում Վախտանկի բանակին, որ միասին դիմաւորէին Մեծին-Պետրոսի Շամախում 1722-ին Հոկտ. 1-ին։ Սոյն երկու վիճակակից ազգերն Հայ և Վրացի խնդրում էին զօրեղ կայսեր ազատել իւրեանց հայրենիքը Մահմետական դարաւոր բռնութիւնից։

Սակայն Մեծն-Պետրոս դրաւում է Դարբանդը, Ղուբան, Բագուն և Գիլանը և դառնում (1) Ռուսաստան։

---

Նոյնը վկայում է և Կարնեցի Ղուկաս կաթուղիկոսն գրելով. «Քանզի որպէս իմանանք ՚ի գրոց և ՚ի լրոց ընիկ Աղուանքն վարեցեալք են ՚ի Ղանդահար ՚ի պղծոյն Լանկ Թամուրայ, որք այժմ կան անդ տաճկական հաւատով, զորոց բազումք վկայեն թէ ունին... նշանս քրիստոնէական, զի առնեն ՚ի վերայ խմորոյ զխաչ և զայլն այսպիսիս» (Դիւան Հայ. Գ. գիրք. էջ 417)։

1) «Ռուսաց Պետրոս կայսրն խաղաց ՚ի սահմանս Շիրուանայ՝ յօգնութիւն կարգացեալ ՚ի բնակչացն Դարբանդ և Պաքու քաղաքաց, որ առ եզերբ Կասպից ծովուն և տիրեաց նոցին» (Պատ.

## ԺԸ. ԳԼ.

*Օսմանցւոց զայրոյթն և բռնութիւններն.—Վախտանկ-Խանն Հաշտարխանում.—Դարբանդի, Ղուբայի և Բագուայ Հայոց դրութիւնն.—Արցախի Հայոց քաջութիւնն.—Շաքուայ գաւառների հաւատափոխութիւնն.—Դաւիթ-Բէկ, իւր գործերն.—Գաղթականութիւն։*

Մեծն-Պետրոսի յանակնկալ դառնալուց յետոյ Աղուանից երկրի հայերն և վրացիներն մնացին այնպէս, որպէս թէ օձերի բների առաջ ապրող անզէն մարդիկ, կամ շանաճանճի բների քար զարկող մարդիկ։ Օսմանցիք իմանալով որ հայ և վրացի ազգաբնակութիւններն հաստատապէս դիմած են Ռուսաց օգնութեան և վերջիններս, առանց մի որ և է օժանդակութեան հայոց և Վրաց, հեռացած են, այնուհետև ձեռք են առնում ամեն բռնութիւն։ Այնուհետև՝ ուժեղացնում են զինուորական զօրութիւնը Վրաստանում և Աղուանքում, ապա սկսում են կոտորել, բռնի տաճկացնել և բոլորովին նիւթականից մերկացնել այդ երկու քրիստոնեայ ազգերը առաջինից տասնապատիկ աւելի։ Այո. Օսմանցիք մեծապէս խրախուսուած կայսեր յետ քաշուելուց՝ յարձակուեցան հայոց և վրաց վերայ և գործեցին անասելի վնասներ։ 1723—25 կրկին գրգռում են Օսմանցիք Խազիրները, Սև-Հոները և Լեկզիները, որք յարձակւում են Դարբանդի դռնից Բագուի, Ղուբայի և Դարբանդի գաւառների հայոց վերայ. յափշտակում են բոլոր անասունները և անամիջի կահ ու կարասիները, ցորենի դատարկ հորերի մէջ են լցնում մահմեդական հաւատը չընդունող հայերը և հողով ծած-

Օսմ. Բ. Հատ. եր. 169)։ Կայսեր Դարբանդից անակնկալ դառնալը Ռուսական աղբիւրն վերագրում է զօրքին պաշար հասուցանելու անյաջողութեան. պատճառաբանելով որպէս թէ 12 նաւ բեռնաւորուած ալիւրով՝ Հաշտարխանից Դարբանդ գալու ժամանակ բռնուում է սաստիկ փոթորկի և ոչնչանում, վասն որոյ դառնում է կայսրն։

կում հորերի բերանները և կոտորում մարդիկը այսպէս, իսկ գերում են կիները, տղաները և աղջիկները և տանում Թարկու և Դաղստան։ Այսպիսով աւերակ են դարձնում Շաքօրան քաղաքը (Ազ. երկ. և Դր. եր. 127) իւր գիւղերով և Մսկուրի (Մուղքթաց) գաւառի (Ազ. երկ. և Դր. եր. 124) գիւղերի հայերը, Մոլլա խալիլ (Նոյն. եր. 105) և բոլոր գաւառների (Նոյն. եր. 107—146) պ. Եզեանցի (1) գրքի եր. 415—418)։

1724-ին Նոյեմբեր 10-ին Ռուսաց կանցլեր Գրաֆ Գոլովկին գրում է Եսայի կաթուղիկոսին և իւզբաշիներին. Այստեղ եկին հայ բանակից և ձեզանից յղուած սուրհանդակ Անտօն քահանան, Զալաբի քեխան և Սիմօն Պապովն և յայտնեցին ինքնակալին ամեն բան և խնդրեցին կատարել Հայոց ազգի խնդրուածքը Ղարաբաղի և Ղափանի երկրին համար։ Ինքնակալն նոյն պատգամաւորներին հետ յղեց Եսայի կաթուղիկոսին և Աւան, Միրզա իւզբաշոց և Հայ ազգին, թէ հրաման տուինք Գիլանի և միւս ծովեզերեայ քաղաքներին, որ լաւ տեղ տան ձեզանից գաղթողներին (Եզեանցի գրքի եր. 405—406)։ Բայց հայերից առ ժամն գնացող չէ լինում, վտանգաւոր համարելով տեղից շարժուիլն։

1725-ին մարտի 10-ին Արցախից հայ կաթուղիկոսն և մէլիքներն և սպարապետներն յայտնում են կայսեր ի միջի այլոց. ցարդ ոչ մի օգնութիւն չհասաւ մեզ Ռուսաց կողմից. մեր շուրջը շրջապատած են մեր ոխերիմ թշնամիներն, որոց հետ մինչև ցայսօր կռուելով պահպանել ենք մեզ. սակայն անհամար են Հայոց գերիներն և կոտորուածներն. մարտի 1-ին եկին մեր վերայ 4700 ձիաւոր օսմանցի և երեք փաշա, որոնցից կոտորեցինք 4200-ը և ազատեցինք 200 քրիստոնեայ գերիներ, իսկ 500-ն ազատուեցան փախչելով. (Նոյն գիրք եր.

---

1) Այս նամակը գրած է Հայոց Մարտիրոս վարդապետն Հաշտարխան վրաց Վախտանկ և Շահնաւազ-խաներին։ Գրքի ռուսերէն անունը յաճախ կրկնելու դժուարութիւնից խուսափելու համար գործ ենք ածում միայն պ. Եզեանցի գրքի բառերը։

418—419)։ Գանձասարից գրում են և յայտնում նոյն կայսեր։ Եկին մեր վերայ 6000 Օսմանցի զինուոր, կոտորեցինք ամենը և ողջ պահեցինք միայն մի փաշա, որն ասաց. «Մեր Թագաւորն հրաման է տարարեալ որ պիտի մենք այս երկիրներիս հայն և զզլպաշն փչացնենք, չիւն որ ըռուս Թագաւորի զօրքն ծովի այս կողմն են անցրել, մենք նոցա վերայ պիտի գնանք, հայն այս մէջ տեղում չպիտի, որ մեր ճանապարհն բացուի...» (Նոյն եր. 421—423)։ Ցայտնում են սուրհանդակներին որ Արցախի սղնախ-ներում պատրաստի 12,000 հայ զինուոր, օրական շինւում է 10 նոր հրացան. գտել են արճիճի, երկաթի և պղնձի հանքեր (Նոյն եր. 424—426)։

Այստեղ պարտ համարեցինք զետեղել հետևեալ նամակը, բայց ոչ առանց արտասուաց։

«Ըռուստի և մեր բարեպաշտ և աստուածայսէր Թագաւորիս մերոյ.

Ղապալու երկրիցս հայոց է արզ լիցի հրամանոցդ. Օսմանցի զօշունն եկաւ, Գանջայ առաւ, սղնախն մնաց խեղճ. այսօր կամ վաղն Սրղնախն էլ կառնեն. ապա յետոյ կու. գան Շամախի, քանի որ Սղնախն (Արցախի ամրոցներն) առել չեն, շամախի գալն վախենում են, թէ մէջ կու գցեն զմեզ կու կոտորեն. (։) մեր գեղերանքն թամամ և շաքու երկիրն թուրքացրել են ուժով (1). մեր գիր գրեանքն (2) և եկեղեցեքն այրեցին. մեր քահանայքը կոտորեցին, շատ մարդ հաւատոյ խաթրին սուրով գնացին. հիմա ցերեկն թրքութիւն ենք անում, գիշերն հայութիւն... մեր խնդիրքն այս է, որ ի սէրն Քրիստոսի, մեզ

---

1) 15,400 ծուխ բռնի մահմեդական արած են Օսմանցիք հայերից և հայադաւան Ուտիացիներից. կրօնափոխ եղած գիւղերի և գիւղաքաղաքների մասին տես Աղ. երկ. և դր. եր. 289—293։

2) Երևում է որ այդ գիրք ու գրեանք այրելու ժամանակ աւերակում թաղցրած են Նաւուր-դշլաղում-Կապաղակ դաւառ, այն ճաշոց գիրքը, որի վերայ յիշատակութիւն գրած է Եսայի կաթուղիկոսն. (տես Աղ. երկ. և դր. եր. 265—266)։

մէկ փրկութիւն հաստուցանես, ղօշուն ուղարկես շամախին առնու, համ մենք ազատութիւնք համ աղնախն. Թամամ դանք քո հրամանաց ղօշունի մէջն, հրամանոցդ իրահաթութիւն (հպատակութիւն) անենք. ինչ որ հասք և իրաւունք ունինք, հրամանոցդ տանք, ինչպէս որ հրամանք կանես, էնպէս գլխով ծառայութիւն կանենք. մեր անունն որ Թուրք է, գնում ենք Գանջայ օսմանուի մէջն, ղօշունի մէջ մատն ենք դալիս, մեզանէ խօսք չեն Թագցնում. օսմանցիք ասում են թէ որ շամախին առինք, պաքուին, դարպանդին շատ նեղութիւն կուտանք. այսպէս օսմանցի ղօշունն ասում է, իւրեանց ֆիքրն այլ է։ Գրեցաւ թվն ՌՃՀԴ. հոկտեմբերի ամսոյ ԻԸ ումն.

Նիժ գեղի Բարսեղէ Բումի սէր Մինասսէ Մեխլուղավախինա-
և Աստուածատուրէ, և պայրամէ, Սէյիթ սիպէ, Թոսիկի Վար-
Զուրլուի Ալլահվեր- Թալու Թորոսէ. դանէ ։
դիէ.

(պ. Եղեանցի դիրք եր. 427—428)։

Դաւիթ-բէկ Օրբէլեան, սկսեալ 1722 թուականներից կարգւում է զօրապետ Վրաց Շահնավազ իշխանից Մեծ-Սիւնեաց վերայ։ Դաւիթ-բէկ Բաղաբերդում ժողովում է հայերը, կարգում հարիւրապետներ, հազարապետներ, կազմակերպում զօրախմբեր, շինում Հալիձորի ամրոցը, կոտորում շատ Օսմանցի և պարսիկ, անում քաջագործութիւններ մի քանի տարիներ և սարսափ ձգում շրջակայ Մահմեդական խաների և զօրքի վերայ։

Վախճանում է Ռուսաց Մեծն-Պետրոս և Թագաւորական իշխանութիւնը իւր բոլոր իրաւունքներով շարունակում է հանգուցեալի Թագուհի Կատարինէ Ա. կայսրուհին, որ սուրհանդակների ձեռնով հաղորդում է Արցախի իշխաններին, այս է 1726-ին փետ. 17-ին գրում է Եսայի կաթուղիկոսին, մելիքներին և իւզբաշիներին 'ի միջի այլոց. հաւատացէ՛ք դուք Հայոց բերդերում ամրացածներդ, ժողովեցէք ձեր ազգը և զօրքը, ահա ձեզ օգնելու համար ուղարկում ենք Մեծ Թագուհուց Վախ-

տանի խանը և գեներալ կնեազ Դոլկորուկովը մի թեթև զօրքով. դուք որքան կարողութիւն և զօրութիւն ունէք, ձեզ մօտ պատրաստ պահեցէք, առաջուան պէս պինդ կացէք մինչև ձեզ օգնող ռուս զօրքի հասնելն (պ. Եղ. եր. 430—432)։

Եսայի կաթուղիկոսն յայտնում է Դարբանդի ռուս կառավարիչ իշխան Ափանաս Միխայէլովչին. մինչև այժմ այսքան դիմացանք գ ձեզ օգնական և ապաւէն գիտելով. ձեր կողմից է միշտ եկած են յուսադրական խօսք և գիր։ Արևմտեան մեծ թշնամին (Օսմանցին) եկն, աշխատում է մեզ էլ ձգել իւր իշխանութեան տակ և արշաւել Շամախու, Դարբանդի և Բագուի վերայ։ Եթէ դուք հրաման ստացած էք գալ Շամախու վերայ, անճապարեցէք, յարմար ժամանակ է։

Հայերն, ոչ մի օգնութիւն չտեսնելով Ռուսաց կողմից երկար ժամանակ, գրեթէ վհատում են, վասն որոյ իւզբաշիների մի մասն ոմանց հետ գնում են Դարբանդ և այն տեղից գրում հետևեալ նամակը Եկատերինէ Ա. Թագուհւոյն. վեց տարի է որ գերի ենք մնացել անօրինաց ձեռքում. պատերազմում ենք Օսմանցւոց դէմ. մենք յետ դառնալու չենք այս ճանապարհից. կատարեցէք Թագաւորին հրամանը. Սղնախից եկած ենք Դարբանդ Աւան-իւզբաշու եղբօր Սիմօնի և Թարխանի հետ. Իսախանն և Բաղի իւզբաշին 25 մարդով եկինք Սալիան զօրքի համար. գնացինք Գիլան կնեազ Դոլգօրուկովի մօտ, զօրք խնդրեցինք (Շամախի և Արցախ) տանելու համաձայն ձեր հրամանին.. հիմի մնացել ենք Դարբանդումն։ Ձեզ մօտ յղեցինք Բաղի իւզբաշին և Ջալարի քեխան, որ հասկացնեն ձեզ խեղճ Հայոց դրութիւնը (1)։

—

1) Համառօտագրած ենք սոյն նամակը և վերևիննները պ. Կ. Եզեանցի գրքի բովանդակութիւններից և զետեղած այս տեղ իբրև պատմական ամենակարևոր փաստեր։ Վերջին համառօտագրութիւնս առնուած է նոյն գրքի 436—437 երեսներից։

## ՇԵՂՈՒՄՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԳԻՑ

### ՄԱՀԱՐՁԱՆ

Մինչև այս տեղ արտագրած էինք բ. հատորս։ Երբ 1903-ին Օգոս. ամսի չեմ մտաբերում, քանիսին, յանկարծ լսեցի Տ. Մելքիսեդեկ Սրբազան Արքեպիսկոպոս Մուրադեանցի վախճանուիլը, թռթռաց սիրտս, սասասաց մարմինս, ամբոխուեց հոգիս, պղտորուեցին աչքերս, ծորեցին արտասուքներս, մոլորուեց միտքս և թուլացան կռներս։ Այս ամենի հետևութիւնն եղաւ երկարատև հիւանդութիւնս և հատորիս մնացեալ մասի արտագրութեան խափանումն մինչև 1905 թուականի աշնան ամիսներն։ Որովհետև կարծես հանդուցեալին հետ հանգաւ իմ ոգևորութիւնն, մեռաւ իմ եռանդն և վախճանուեց իմ աշխոյժն։ Որովհետև Տէր Մելքիսեդեկ Սրբազանն-էր, որ իւր վարդապետ եղած ժամանակ հարկադրեց զիս գրել իմ առաջին հեղինակութիւնը Միրզա և Անիա։ Նա էր, որ ստիպեց զիս ի լոյս հանել Արցախի լեզուն Արագը տարին կտարի և Պըլը-Պուղի գրքերով։ Նա էր, որ իմ Քննադատ. Քննադատութեանց-ը կարդալուց յետոյ հարկադրեց զիս գրել Աստուածային Հրաշ. Հանրաալարտուց-ը Շամախում քարոզիչ եղած ժամանակներումս։ Նա էր, որ հարկադրեց զիս գրել Հայրենեացս պատմութիւնը, որով ստիպեալ հետազօտեցի ամբողջ Աղուանից երկիրը և գրեցի «Աղուան. երկ. և Դր.» և «Արցախ» գրքերը և ապա «Պատմութիւն Աղուանից» Ա. հատ., որը կարդալով Զմիւռնիոյ Առաջնորդարանում ուրախանում է չափազանց և գրաւոր յայտնում ինձ իւր խորին շնորհակալութեան հետ իւր գնահատութիւնը, բերկրանքը և յորդորը...։ Այսուհետև ո՞վ կոգևորէ զիս, այսուհետև ո՞վ կըխրախուսէ զիս, ո՞վ կուրախանայ իմ աշխատութեամբ, ո՞վ կըգնահատէ իմ երկերը, ո՞վ կըքաջալերէ զիս և կըմխիթարէ զիս զտառապեալս։

Հանգի՛ստ ոսկերացդ և Արքայութիւն հոգւոյդ, եղբայր,

երկատողիկս նուիրում եմ Ձեր անմոռանալի յիշատակին իբրև անեղծանելի մահարձան ի նշան խորին երախտագիտութեան վշտալի հոգուդ։

—

Այս իսկ տեղում 1905-ին նոյեմ. 25-ին մեր սիրելի հոգևոր եղբայր Գեր. Եսայի վարդապետ Տայեցին Կ. Պոլսից յայտնեց մի նամակով, յորում ի միջի այլոց գրած էր. «Ես պատեհ դիպուածով ձեռք ձգեցի «Աղուանից պատմութիւն» խորագրով մի ձեռագիր, որ կըսկսի այսպէս. «Սիսակ որդի Գեղամայ Հայկազնւոյ լնու զսահման հարաւակողմանն ծովակին Գեղամայ սերնդովք իւրովք յիւր անուն կոչելով Սիւնիք, և այլն»։ Դեկտեմ. 1-ին նոյն թուին գրեցի որ եթէ հնարաւոր է դրամով գնէ նոյն ձեռագիրը և ապահովեալ փոշտով ինձ յղէ։ Նոյն դեկտեմ. 17-ին պատասխանեց. «Յիշեալ Աղուանից պատմութեան ձեռագիրն՝ որուն համար ցանկութիւն կըյայտնէիք գնել եթէ հնարաւոր է, առ այժմ բնաւ դիտաւորութիւն չկայ վաճառելու, իսկ ծայրէ ի ծայր արտագրելու համար ես, ինչպէս արտագրողը, նոյնպէս և ձեռագրի տէրն առանձին գումար կը պահանջեն, ևն»։ Հարկ է յայտնել որ երկրորդ նամակովս մանրամասն տեղեկութիւն յայտնած էր Եսայի վարդապետն ձեռագրին մասին և. մինչև անգամ ձեռագրի գլխակարգութեան ցանկը յականէ յանուանէ գրած էր ի գիտութիւն։ Գրչագիրն բաղկացած էր երեք մասից՝ ըստ գրելոյն կամ երեք տետրակից, որից Ա. տետրակն նոյն էր Կաղանկատուացւոյն հետ, հետևապէս և անկարևոր գործոյս, Բ. և Գ. տետրակների արտագրութեան համար փոշտով յղեցի նոյն Եսայի վարդապետին երեսուն և հինգ րուբլի։

Մի քանի օրից յետոյ Մայր-Աթոռիս Մատենադարանումս լուսահոգի Սարգիս եպիսկ. Ջալալեանցի անձնական թղթակցութեանց սևագրութիւնից (1) պարզապէս երևեցաւ, որ նոյն

---

1) Մատենադարանի ձեռագրաց թ. 285 ըստ Գէորգեան ցուցակի։

եպիսկոպոսն գրած է թէ ինքն յօրինած է «Պատմութիւն Աղուանից» և ուղարկած Կ. Պոլիս Տէրոյեանց—Զամուռճեանց պատուելոյն տպագրելու համար։ Այնուհետև ամեն ինչ մերկապարանոց էր, նոյն ձեռագրին տէրն, նրա առաջից և վերջից դիտմամբ թափած է թերթեր, որպէս զի չիշատակարանի և գրութեան թուականի և հեղինակի անունը անյայտացնելով դիւրաւ կարողանայ վաճառել Մեծադնի նոյն ձեռագիրը։ Այս դիտաւորեալ գործողութեան անողն Զամուռճեանի ազգականնե-րի՞ց է, թէ ուրիշ ոք.—առ այժմ անյայտ է մեզ. բայց չէտոյ կը յայտնուի, քանզի «չի՞նչ է ծածուկ, որ ոչ յայտնեսցի»։ Վերջապէս հարկ եղաւ սպասել և տեսնել նոյն ձեռագրի արտագրութիւնը Ն. սպա ուսարտել և տպագրութեան տալ Բ. Հատորս։

## ԺԹ. ԳԼ.

*Համաձայնութիւն Ռուսաց և Օսմանցւոց.—Գերեվարութիւն.—Աշրաֆ և Թահմազ.—Վախճանում է Աղուանից Եսայի կաթուղիկոսն.—Հայ Մէլիքներն դիմում են դարձեալ Ռուսաց—Պետրոս Բ. կայսեր.—Տոնմազ, Մէլիք-Ցիւսէին, Մէլիք-Եկեան.—Շահ-Թահմազ Բ.։*

1724-ին յունիսի 24-ին Կ. Պօլսում լինում է խորհրդակցութիւն Օսմանցւոց փոխարքայի և Ռուսաց դեսպանին մէջ. համաձայնութեամբ բաժանում են իւրեանց մէջ Պարսկաստանի հիւսիսային և արևմտեան մասը, այնպէս որ Դարբանդն, Ղուբան, Բագուն, Շամախին, Շաքին և Թիֆլիսն—Կուր գետի ձախ կողմն—բաժին է ընկնում Ռուսաց, իսկ Ատրպատականն, Մուղանն, Արցախն, Գանձակն, Մեծ-Սիւնիքն, Հին-Նախիջևան և Երևանն ընկնում է բաժին Օսմանցւոց։ Այս պայմանով որոշում են որ գրաւէին չիշեալ տեղերը և թողնէին Պարսից Շահ-Թահմազին։

Այնուհետև Օսմանցիք հեռագնեալ գրաւում են Համադանը,

Թաւրիզը, Արտաւիլը, Լոռին, Հին-Նախիջևանը և Երևանը զօրափարութեամբ Արչուլլա փաշային (Քէօփրիւլիւ զադէ) Արիֆ-Ահմէտ փաշայի և Հասճի-Մուստաֆա փաշայի։ Սոցա դէմ բանակ դնելով կռւում է Մեծ-Սիւնեաց իշխան Դաւիթ-բէկն Օրբէլեան իւր զօրավար Մխիթարի և Տէր-Աւետիքի հետ, երբ Օսմանցիք ջանք էին անում գրաւել Մեծ-Սիւնիքը։ Օսմանցւոց դազանաբարոյ զինւորներն՝ հայ ժողովրդեան ինչքերը լրիւ կողոպտելուց յետոյ՝ գերի տանելով Մեծ-Սիւնեաց հայերից գեր-դաստաններ վաճառում են Կ. Պօլսում։ Հայոց Յակոբ-Կոլոտ-Պատրիարքն բողոքում է փոխարքային և ազատում գերիները, և խնդրում որ ուրիշ անգամ չգերեն հայ ժողովուրդ։ (Պատ. Օսմ. Բ. հատ. եր. 170—173)։

Շահական գահակալութեան վերջին արիւնահեղ փոթորիկներ է յարուցանում Պարսկաստանում։ Աշրափ-Շահն սպատերազմաւ հալածում է Շահ-Թամազ Բ.-ը և ինքն գահակալում. ապա Աբդլ-Ազիզ-խանն յղում է Պօլիս և յետ պահանջում իւր կորցրած երկիրները, բայց ստանում է մերժում։ Օսմանցւոց Արիֆի-Ահմէտ փաշան 80,000 զօրքով յարձակում է է Աշրաֆ-Շահի վերայ Համադանի սահմաններում, սակայն յաղթւում է փաշան՝ կորցնելով 12,000 զինւոր։ Մնում են Օսմանցւոց ձեռքում Մեղրին, Շամախին, Գանձակն, Թիֆլիսն, Երևանն և Հին-Նախիջևանն, բայց սոցա փոխարէն Օսմանցիք ճանաչում են և ընդունում Աշրաֆի Շահութիւնը և իրաւունք են տալիս կտրել դրամ իւր անուամբ (նոյն հատոր եր. 177—78)։

1728-ին վախճանում է Աղուանից Եսայի կաթուղիկոսն. բանադրուած Ներսէս Խոտորաշէնցին յանդգնաբար սկսում է կաթուղիկոսութիւն անել նոյն բանադրութեամբ (1)։

---

1) Աւելորդ համարելով (և մինչև անգամ խնայելով ազնիւ ընթերցողների լսելեաց) մի ըստ միոջէ գրել Ներսէսիս մասին եղած զզուելի և ձանձրալի գործերը. ցանկացողները յղում ենք Սիմէօն կաթուղիկոսի մօտ, որ ականեն Ջամբռի եր. 85—91։

Արցախի մելիքներն, չափազանց նեղուելով շրջապատուած Օսմանեան զօրքից և սորա բռնութիւններից, 1729-ին փետր. ամսում մի արտասնալից նամակով դիմում են Ռուսաց Պետրոս Բ. կայսեր։

Ցայտնի լինի մեծութեանդ քում, այսօր քանի տարի է, որ մենք պաշարուած բերդերում կռւում-ենք Օսմանցւոց Սուլթանի զօրքի հետ լուսահոգի մեծ թագաւորի (Մեծն-Պետրոսի) հրամանով. մինչև ցայսօր քանիցս մարդ յղած ենք լուսահոգի թագուհուն և քեզ մօտ, մի օգնութիւն չեղաւ մեզ... քո հրամանոց մօտ ուղարկեցինք Թարխան-Իւզբաշին, պարոն Գրիգորն, պարոն Մելքուն, պարոն Ներսէսն... քանի քանի հազար հոգի կան մեր սղնախում... ևն։ (Եղեանց եր. 442)։

Երբ Աղուանից և Մեծ-Սիւնեաց Հայերն իմանում են, որ Ռուսներն Պարսից և Օսմանցւոց հետ համաձայնութիւն կայացնելով ստացած են իւրեանց բաժին երկիրը, այնուհետև ամփոփում են իւրեանց յոյսը իւրեանց վերայ և սուր շողացնում շրջապատող թշնամի Օսման զօրաց դէպ։ Քաջագործութեան առաջին նշանը տալիս է Ջրաբերդում ամրացած հայ զինուորներից նշանաւոր հերոս Տոնմազն (1), որ յանպատրաստից յարձակում է Օսմանցւոց զօրքի վերայ, կոտորում նոցանից 5800 զինուոր և իւր այս հերոսութիւնը որդւոց որդի անջինջ յիշատակ աւանդելու նպատակաւ քանդակել է տալիս Ջրվշտիկ վանքի պարսպի որմի ներսի ճակատին. «ՐՇՑԾ (5800) ես Տոնմազս բեկեցի թվ. ՌՃՀԷ (1728—1729)»։ (Արցախ եր. 237)։

Տոնմազի սխրագործութիւնից քաջալերուելով, որ իւր խմբով գործեց հրաշքներ 5800 մարդ կոտորեց, Խաչենցիք Կա-

---

Տոնմազ՝ Թուրքերէն նշանակում աննահանջ, չքաշուող, սա մին էր Ջրաբերդի Մելիքների քաջ հերոսներից։ Գաղտ. Ղար. եր. 53—71 կան շատ այսպիսի քաջերի մականուններ բացատրութեամբ միասին, որոց մէջ կայ յատկապէս և «Տէօնմազ—Բէլու»-իս անունն (Նոյն եր. 68)։

չաղակարերյում, Վարանդեցիք Մէլիք-Ցիւսէինի հետ, Դիզակեցիք Մէլիք-Եկեանի հետ և Ղափանցիք Բաղաբերդում կռուելով չափազանց զօրք Օսմանցիներից, վհատեցնում են սոցա զօրապետ փաշաները։ Հարկ է խոստովանել որ պակաս չօգնեցին հայոց Արցախի և Մեծ-Սիւնեաց ամրոցների անմատչելի և սոսկալի դիրքերն. Թողում ասել տուների մէջ սպանածները և Արցախի Գարդմանում կոտորածները։ Հարկ է յայտնել նաև որ Աւան-Իւզբաշին իւր եղբօր և մի խումբ հայ ժողովրդով յետոյ տեղափոխւում է Հաշտարխան և բնակութիւն հաստատում այնտեղ։

Զօրանում է Շահ-Թահմազ Բ.-ի կուսակցութիւնն և յաղթող հանդիսանում, յաղթւում է Աշրաֆ-Շահն և սպանւում։

## Ի. ԲԼ.

*Վախճան Սէֆեան ցեղի Շահութեան.—Նադր—Ղուլի—խան և իւր յաղթութիւններն.—Հաշտութիւն և թագադրութիւն.—Հայոց Աբրահամ Կրետացի կաթուղիկոսն Մուղանի դաշտում.—Պարգևատրութիւններ.—Շամախու կործանումն և նորոգումն.—Ազատութիւն ոմանց գերեաց.—Շահական հրովարտակ.—Մէլիք—Ցովսէփի հրբացանն։*

Դարձեալ վրդովւում է Պարսկաստանի Շահական վիճակն գահակալութեան պատճառաւ. բանտարկուելով սպանւում է Շահ-Թահմազ Բ. և 1731-ին գահակալում է սպանուած Շահի որդի փոքրահասակ Աբաս-Միրզան Շահ-Աբաս Գ. անուամբ, ձեռնտուութեամբ Նադր-Ղուլի-խանին։ Սակայն չորս տարուց յետոյ սպանւում է, որով և վերջանում է Շահութիւնն Սեֆեան ցեղից։

1731-ից սկսեալ արդէն զօրանում է Նադր-Ղուլի-խանն և հետզհետէ յետ է առնում Ռուսներից Դարբանդը, Ղուբան, Բագուն և Շամախին և Օսմանցիներից Գանձակը, Թիփլիսը,

Երեւանը, Հին-Նախիջեւանը և Մեծ-Սիւնիքը և այնուհետև անում հաշտութիւն Ռուսաց և Օսմանցւոց հետ։ 1735-ի վերջերին մօտ մտնում է Էջմիածին, ուխտ անում և ապա իւր բանակը դնում Մուղանի դաշտում Կուր և Երասխ գետերի խառնուրդի մօտ։ Նադր-Ղուլի-խանն, որ իւր այդ յաղթութիւններով գրաւած է լինում Պարսկաստանի ամբողջ սահմի, ժողովրդեան, հոգեւորականաց, խաների և զօրքի համակրութիւնը, թագադրւում է բոլոր այդ տոհմականաց խնդրանօք, դահակալւում իւր յատուկ վրանում և կոչւում Նադր-Շահ։ Ի շարս հանդիսականաց լինում է և Հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով, վարդապետներով և հայ մելիքներով։

Այդտեղ 1736-ին յունուար 6 նոյն կաթողիկոսն փառաւորապէս կատարում է ջրօրհնեաց հանդէսը Երասխի վերայ, խաչը ջրիցն հանում է Մելիք-Եկեանն։ Ըստ նախնի սովորութեան Հայոց հայրապետն նուիրում է Շահին երկու նժոյգ ձի—եղէկ— և ջորի, իսկ Շահն նուիրում է կաթողիկոսին մի ձեռք Հնդկաստանի հայրապետական թանկագին զգեստ, որ այսօր կազմում է Ս. Էջմիածնի թանկարանի ամենաընտիր զարդերից մին (1), պարգևատրում է Շահն նաև ի շարս այլոց և հայ մելիքները։

Կաթողիկոսն յաջողում է ազատել Թիփլիսից բերուած վրացի և հայ 700,000 գերիների կէսը և յղել իւրեանց տուները։ Հայ գերի կիներից գերութեան մէջ ծնուած մանուկները մկրտել տալով անուանում են Մուղան. գթոտ հայրապետն դրամով ազատում է նաև շատ գերիներ էլ մնացեալ կէս մասից։

Այնտեղ կաթողիկոսին ներկայանում են Մեղարու վանքի (2) Իսրայէլ և Մկրտիչ վարդապետներն և Շամախու վեց

---

1) Մանաւանդ եմիփորոնն, որ առաջնակարգ գեղարուեստ գործ է 12 հատ աղենկար պատկերով։

2) Աղ. երկ. և դր. եր. 171—172։

իշխանններն, որք բերած էին հաց, ալիւր, գինի և անասնոց համար գարի, և յայտնում. «Շահն բարկանալով կոչեց Շամախին Գանձակ գնալուց առաջ, հրամայեց շինել մի հողէ բերդ (1) և հրամայեց որ նրա մէջ բնակեն շամախեցիներն։ Բայց որովհետև այն հողէ բերդի տեղն դաշտային է և ապականուած օդն, պակաս ջուրն և յաճախակի վշտացնում են մեզ Լեկզիներն և Սուննու թուրքերն. վասն որոյ խնդրեցինք Շահիցն որ թոյլատրէ մեզ բնակիլ աւերակ Շամախում, Շահն աւելի զայրանալով խապառ քանդեց Շամախին»։ Շահն, գիջանելով կաթուղիկոսի խնդրանաց և միջնորդութեան, տալիս է հրովարտակ որ գնան բնակեն, շինեն եկեղեցի և մահմեդականք իրաւունք չունենան նեղել հայերը։

Կաթուղիկոսն ստանում է Շահիցն և մի այլ հրովարտակ, որով պատուիրում է բոլոր պարսիկ պաշտօնական անձանց բնաւ չհամարձակիլ ձեռնամուխ լինել Աղուանից երկրի Հայոց վանքերին և եկեղեցիներին, ևն։ (Առ. Կր. կաթ. պատ. Գլ. ԻՁ.—ԽԷ.)։

Շնորհիւ հուժկու Նադր-Շահի 1734—1746 հանդարտում է Աղուանից երկիրն պատերազմական դրութիւնից և արտաքին յարձակումներից, և սկսում է փոքր ի շատէ շինութիւն առնել երկիրն։ Բոլորովին անհետանում են Օսմանցիք Աղուանից երկրեցն. օր աւուր զօրանում են անկախ մելիքներն, որք յարաբերութիւն ունէին ուղղակի Շահին հետ միայն։ Այնուհետև իւրաքանչիւր մելիք, իւրաքանչիւր Իւզբաշի դարձեալ կրթում և կազմ և պատրաստ պահում է իւր զօրքը, բոլորովին անվստահ լինելով ժամանակի յարափոփոխ բերմանց։

Պարսից հարկահանն գալիս է որ տանի Կիւլստանի ժողոված շահական հարկերը. լսում է վախճանուած Մէլիք-Աբով Բ.-ի հրացանի զովասանքը, որ գտնուում է մելիք ժառանգ Յովսէփ-բէկի մօտ։ Հարկահանն յաջողում է ձեռք ձգել այն թան-

1) Տես Աղ. երկ. և դր. եր. 157։

կաղին հնութիւնը։ Յովսէփ-բէկն մի քանի քաջերով հետեւում է խարդախ հարկահանին Թարթառ գետի ձորում, սպանում հարկահանը և յետ բերում հրացանը (1)։

## ԻԱ. ԳԼ.

*Մէլիք-Յովսէփ Մէլիք-Յիւսէինեան.—Ուխտ միաբանութեան մէլիքաց Արցախի.—Մեղայական Ներսէս կաթուղիկոսի.—Մահ Մէլիք-Եկեանայ և մէլիք-Արամայ.—Յաջորդութիւն Մէլիք-Եսայեայ.—Սպանումն Նադր-Շահին և խնդիր գահակալութեան.—Սպանումն Մէլիք-Յովսէփայ և գահակալութիւն Մէլիք-Շահնազար Բ-Ի.—Մունետիկ Փանահ.—Սպանումն Մէլիք-Ալլահղուլի-Սուլթանի.—Մէլիք-Իսրայէլ, Մէլիք-Ադամ Ա։*

1736-ին վախճանում է Վարանդայի Մէլիք-Շահնազար Ա-ոյն որդի քաջայաղթ Մէլիք-Յիւսէինն, որին յաջորդում է իւր որդի Մէլիք-Յովսէփն։ Վերջին մէլիքս լինում է բարոյական, առաքինի, նախանձախնդիր օրինաց սրբութեան և համամիտ համակամ միւս չորս մէլիքների։ Մէլիք-Յովսէփ բազմիցս աշխատում է յուղղութիւն ածել իւր եղբայր Շահնազար-բէկը, որ խիստ անբարոյական, իգամոլ և հակառակ քրիստոնէական օրինաց հարճասէր (2) է լինում։ Անմարսելի նախատինք համարելով իւր օջաղին Մէլիք-Յովսէփ իւր եղբօր աբարմաւնքը՝ սկսում է աւելի յորդորել և խրատել, բայց իզուր։

Արցախի վեց մէլիքներն—Մէլիք-Եկեան, Մէլիք-Յովսէփն, Մէլիք-Ալլահղուլի-Սուլթան, Ջալալեան Մէլիք-Գրիգորի եղբայր Մէլիք-Ալլահվէրդին (մեզ յայտնի չէ Մէլիք-Գրիգորի և

---

1) Յետոյ նոյն հրացանը ծախում են մէլիքին հետագաներն գեներալ Երմօլովին հազար ռուբլու։ Այժմ նոյն հրացանն գտնւում է Պետերբուրգի արքունի Հնադարանում։

2) Շահնազարիս օրինաւոր կինն էր Դիզակի Մէլիք-Եսայու դուստր Սօնա-խանումն, որից ծնուած էր Մէլիք-Ջիւմշիւտն և Հիւրզատ օրիորդն. բայց պահում է և մահմետական հարճեր։

Մէլիք-Մէժլում Ա.-ի փախճանած (թուականն) Մէլիք-Յովսէփ Կիւլստանի և Արցախի Գարդմանի Մէլիք-Գաբրիէլն խրախուսուած լինելով Նադր-Շահի գովասանքից, որ միաբանելով այնքան տարի պատերազմաւ դէմ դրած էին Օսմանցւոց, ուխտում են անխախտ պահպանել նոյն սերտ միաբանութիւնը։

1739-ին Ներսէս ճրռ. կաթուղիկոսն գնում է Ս. Էջմիածին, Հայոց Տ. Ղազար Ճահկեցի կաթուղիկոսին մեղայական տալով ապատուում բանադրանքից և համարուում ի շարս կաթուղիկոսացն Աղուանից։ Տուած մեղայականի վերջաբանութեան մէջ գրած է ի միջի այլոց. «Որեմն եթէ զկնի իմ եկողքն զայս ուխտս և կանոնս ոչ պահեսցեն և առանց հրամանի և գիտութեան Էջմիածնի կաթուղիկոսացն ինքնագլուխ կաթուղիկոս նստիցին և կամ ներհակիցեն, եթէ կարգաւոր իցեն և եթէ աշխարհական, եղիցին նզովեալք յԱստուծոյ և յառաջի Ս. Հայրապետաց և ի մէնջ իսկ, կարգաւորողն և կարգաւուքն լուծեալք եղիցին... Ես Ներսէս կաթ. Աղ. իմով կամօք և հաւանութեամբ գրեցի... ՌՃՁԸ թուոջ մերում յամս. մայիս ի. ի Ս. Էջմիածին»։

№ 748 եր. 145։ Ա. ճրռ. կաթ. Սիմէօնն էլ ձեռագիր տուած էր Երեմիա կաթուղիկոսի (Դիւ. Հայ. Պատ. Գ. գիրք էջ 398—399). տես և Ջամբռ. եր. 85։

1744-ին վախճանում է Դիզակի բազմարդիւն Մէլիք-Եկեանն և յաջորդում է իւր որդի Մէլիք-Արամն, ինչպէս յայտնի է իւր տապանաքարի արձանագրութիւնից (1) սորան էլ յաջորդում է 1745 թուին Մէլիք-Եսային, որ էր եղբայր Մէլիք-Արամին։

1747-ին սպանուում է հուժկու Նադր-Շահն. ծագում է գահակալութեան հրատապ խնդիր, շատերն պատերազմաւ ճըգնում են յափշտակել գահը միմեանցից։ Վերջապէս միևնոյն թուին գահակալում են Նադր-Շահի թոռն Շահ-Ռուհն Մա-

1) Արցախ եր. 75—76։

շաղում և Նադր-Շահի եղբօրորդի Ալի-Շահն՝ Թաւրիզում։ Այդ խռովայոյզ դրութիւնից օգուտ քաղելով սպանուած Շահի մունետիկ Փանահն իւր Սարուջալլու ցեղի հետ դառնում է Ուտեաց դաշտն, որի իջած մասն պատկանում էր Ջրաբերդի մելիքութեան իբրև պապենական սեփհականութիւն և Մելիք-Ալլահղուլի-Սուլթանից իրաւունք ստանում և իբրև հարկատու հպատակ իւր ցեղով բնակում Ուտի-Առանձնակ գաւառի ստորին մասումն։

Համարեա թէ այդ միջոցներում Շահնազար-բէկն սպանում է իւր եղբայր Մելիք-Յովսէփը և ինքն գահակալում Մելիք-Շահնազար Բ. անուամբ (1)։ Բաց յայտնէ սկսում է այնուհետև ազատօրէն շատացնել իւր մահմետական հարճերի թիւը և ծնում ապօրինի զաւակներ։ Հետևապէս իւր այս անվայել ընթացքով ընկնում է ուխտեալ մելիքների աչքից, մանաւանդ Դիզակի Մելիք-Եսայու աչքից, որի քոյր Սոնա-խանումն անպատուած էր համարում ինքը և իւր որդի Ջիւմշիւտ-բէկը և Հիւրզատ օրիորդը։

Սարուջալլու ցեղն մեր անյայտ պատճառաւ կրում է իւր վերայ Աղուանից Ջիւանշիր իշխանի անունը։ Այս թափառաշրջիկ ցեղն միշտ հնազանդ, միշտ հարկատու է լինում Ջրաբերդի մելիքներին ձմրան վրանաբնակ ապրելով Ուտեաց դաշտում, ամրան բարձրանալով Գանձասարի լեռների ամարանոցներն, տասանորդ վճարելով նոյնանուն վանքին։ Մունետիկ Փանահն տանուտէր կարգուած էր իւր ցեղի վերայ, որից հաւաքում էր հարկերը և յանձնում Ջրաբերդի մելիքներին և Գանձասարին։

Փանահն, օգուտ քաղելով Պարսկաստանի Շահական երերուն դրութիւնից, ձգտում է խանութեան։ Հարկ է յայտնել որ անցած էին հազարաւոր տարիներ, որոց ամենևին գոյու-

---

1) Գաղտ. Ղարաբաղի հեղինակն եր. 198 «Դահիճ Մելիք-Շահնազար» է անուանում սոյն եղբայրասպան Մելիքը։

թիւն ունեցած չէին խանութիւն կամ տիտղոսն ո՛չ Արցախում և ո՛չ Շաքուում։ Որպէս թէ Փանահն մի հնարքով ձեռք է բերում խանութեան հրովարտակ Աղա-Շահից և սկսում ամրոց շինել Բայեաթ կոչուած տեղում, որ գտնուում է Սոլթանապուտ (Արցախ եր. 28) հողաբլրի մօտ. բայց Մելիք-Ալլահղուլի-Սոլթանն և Կիւլստանի Մելիք-Յովսէփն հիմնայատակ քանդում են այն բերդը։ Ապա Փանահն շինում է աւերակ Տիգրանակերտի (այժմ Թառնագիւտ) վերայ ուրիշը, դարձեալ քանդում են, քանզի օրինաւոր Շահերից միշտ մելիքներին յանձնուած է Արցախը կառավարելու պաշտօնն։ Փանահն, փորձով տեսնելով Արցախի մելիքների ուխտը և հաստատակամութիւնը և անկարող լինելով ունենալ բնակարանի համար մի կտոր սեփական հող, դիմում է Մելիք-Շահնազար Բ.-ին, որն անլուր լինելով ուխտեալ մելիքներին, իւր թրքամոլ բնաւորութեամբ՝ տալիս է ամրոց շինելու համար Փանահին Շօշու աւանի սեփական ամարանոցը։ Բարդուում են Մելիք-Շահնազար Բ.-ի անիրաւութիւններն—ապօրինի կնապահութիւնն, եղբայրասպանութիւնն, ուխտանենգութիւնն և Փանահն Արցախի սրտի մէջ մտցնելն։

Մելիք-Շահնազար Բ.-ի այդ անիրաւութիւնները պատժելու համար յարձակում են Աւետարանոց բերդի վերայ Կիւլստանի Մելիք-Յովսէփ, Ջրաբերդի Մելիք-Ալլահղուլի-Սոլթան, Ջալալեան Մելիք Ալլահվերդի և Դիզակի Մելիք-Եսային իւրեանց զօրքով պաշարում են Աւետարանոց բերդը և աւերում և վնաս պատճառում Վարանդայի շրջակայ գիւղերին։ Հասնում է վաղահաս ձմեռնն, թողնում են և հեռանում։ (Այս ըստ Միրզա-ադըկեօզալին)։ Խնդիրն ստանում է կրօնական և հայրենասիրական կերպարանք, շարժուում են կիրքերն և բորբոքուում բարկութիւններն։ Ժողովի որոշմամբ յարձակեցաւ Աւետարանոց բերդի վերայ բոլոր հարազատ զօրքն, կիսով չափ քանդեց բերդը, կոտորեց բոլոր մահմետական հարճերը և ապօրինի կիները և զաւակները և աւերեց Մելիքարանը։ Իսկ Մելիք Շահնազարն բեր-

դէ գաղտնի դռնով փախաւ իւր սիրական (Թրքածին) Ցլուճ-ին-բէկի հետ, որը սնուցանում էր իբրև մէլիք ժառանգ, և ապաւինեցաւ 'ի Շուշի։ Հարկ է ասել որ այդ պատերազմում և ոչ մի մարդ մեռաւ, քանզի սոյն մէլիքի արարքներից իսպառ զըզւած էին զօրավար Բաղին և գնդապետներն և (Վարանդայի) ժողովուրդն։ Այս պատճառաւ գնդակ չարձակեցին... մանաւանդ Մէլիք-Շահնազարի Բաղի զօրավարն գաղտնի հրահանգ ընդունած էր այս մասին հարազատ մէլիքների կողմից Շէյթան-Թիւնու ձեռնով։ (Այս ըստ Գաղտնիքի եր. 217—218)։

Այնուհետև Մէլիք-Շահնազար բ. բոլորովին լինում է Փանահ-խանին հլու կամակատարն, և հակառակ իւր Գանձասարում արած ուխտի և երդման հեռանում հարազատ մէլիքների մասնակցութիւնից և միաբանում հայոց թշնամի ճրռ-խանի հետ. որք 1750-ին հիմնարկում են Շուշի բերդը. և մէլիքս իւր Հիւրզատ օրիորդը ամուսնացնում է Փանահ-խանի որդի Իբրահիմի հետ, 'ի նախատինս Մէլիք-Եսայուն։

Սոյն խանի նենգութեամբ սպանուում է Մէլիք-Ալլահղուլի-Սոլթան գահակալում է Մէլիք-Իսրայէլն, որ Մէլիք-Եսայու փոքր որդին էր և Մէլիք-Մէժլում Ա—ի եղբայրն։

Միևնոյն 1750 Մէլիք-Շահնազարն նորից ամրացնել է տալիս Աւետարանոցի բերդը, ինչպէս վկայում է յիշատակարանն (1)։

Այս անգամ ևս զայրանում են հարազատ մէլիքներն, որովհետև Մէլիք-Շահնազար բ. ոչ միայն Արցախի թշնամին որճացուց Արցախի սրտում, այլ և հակառակ ս. կրօնի իւր քրիստոնեայ օրիորդը և. Մէլիք-Եսայու սիրելի թոռնը ի նախատինս Հայութեան կնութեան տուաւ անօրէն թուրքին, վասն որոյ միանում են վրացւոց հետ և հիմնայատակ կործանում Աւետարանոց բերդը և կոտորում Փանահի զօրաց մի մասը։

---

1) «Այն ժամանակն որ Կիւրճին եկաւ (վրացի զօրք) Թուին ՌՃՂԹ (1750) էր, որ ղալաս (Աւետարանոցի բերդը շինեցի» (րԱցախ եր. 96)։

1752-ին Նենգութեամբ Ճրռ-խանի գիշերով սպանում է Ջալալեան Մելիք-Ալլահվերդին և Խաչէն գաւառի մելիքութիւնը յանձնում է Խնձրիստանցի Ճրռ-Մելիք-Միրզախանին (1)։

1760 վախճանում է Մելիք-Իսրայէլն, որին յաջորդում է իւր որդի Մելիք-Ադամ Ա. (2)։

## ԻԲ. ԳԼ.

*Արշաւանք Ուրմեցի Ֆաթալի-խանին.—Մելիքներն միանում են Հերակլի հետ.—Արշաւանք Հաճի-Չալաբի-խանին.—Արշաւանք Քեարիմ-խանի և սպանումն Փանահին.—Իբրահիմ-Ճրռ-խան.—Վկայութիւն Յակովբայ Շամիրեան.—Խանածախ և Պալլուճայ գիւղերն։*

1761-ին Շուշու վերայ արշաւում է Ուրմեցի Փաթալի-խանն (3) Աւշար կոչուածն, որ 'ի նկատի ունենալով Շուշու ամրութիւնը՝ պայմանաւորւում է հարազատ մելիքների հետ, Շուշին գրաւելուց յետոյ կոլանաւորել Փանահը և յանձնել մելիքներին, միայն օգնէին մելիքներն Շուշին գրաւել։ Երկար պաշարումից յետոյ անձնատուր են լինում Փանահն և Մելիք-Շահնազար բ-ն։ Բայց Փաթալի խանն դրժում է երդումնաւոր խոստումը, 10,000 թուման դրամ առնելով ազատում է Փանահը և Մելիք-Շահնազարը և հեռանում Շուշուց պատանդ տանելով իւր Փանահի որդի Իբրահիմը։

---

1) Մելիք-Միրզախանիս մասին վկայում է Արցախ եր. 160 «ՌՄԳ (1754) յիշատակ է սուրբ Աստուածածին եկեղեցիս Մելիք-Միրզախանի....»։

2) «Որ ողորմութեամբն ամենազօրին Աստուծոյ ....հանգուցեալ Մելիք Իսրայէլի որդի ես Մելիք Ադամս շինեցի զեկեղեցիկ... տունս և սարայիս բազմահանճար զորդեակն իմ Մէժլումին... ՌՄԻ (1771)» (Արցախ եր. 218)։

3) «Փաթալի խանն եկաւ Շուշի ղալին երայ (վերայ) կաւի Թվ. ՌՄԺ» (1761) Արցախ եր. 123. Գաղտնիք եր. 40։

1762—1763 հարազատ մէլիքներն միաբանում են վրաց Հերակլ թագաւորի հետ, որովհետև թագաւորս էլ ոխ է ունենում Փանահի դէմ, Ասկարանի մօտ սաստկանում է պատերազմն, չարաչար յաղթում է Փանահի և Մէլիք-Շահնազարի զօրքն, մինչև Աւետարանոց փախչում են Մէլիք-Շահնազարն և Ծրռ-Մէլիք-Միրզախանն և մինչև Երասխ փախչում է Ծրռ-խանն (քանզի Շուշու ճանապարհն կտրած են լինում հայ քաջերն) բայց Խուդա-Փիրին կամրջի մօտ նորա ետևից արձակ ձիան հասնում են Դալի-Մահրասան և Թիւլի-Արզումանն (1) և բռնելով յետ են բերում. աւերում են Աւետարանոց բերդը և կալանաւորում փախչող մէլիքները, զորս երեքին տանում է Թիփլիս վրաց ուխտադրուժ Թէմուրազ զօրավարն երեք գերիներից առնելով մեծամեծ փրկանք՝ արձակում է ազատ։ Վրացի իշխանի նենգութիւնից զզուած հարազատ մէլիքներն միանում են Շամախու կառավարիչ Հաճի-Չալալբի-խանի հետ, արշաւում Թիփլիսի վերայ նենգ Թէմուրազը պատժելու։ Գանձակի մօտերքում հանդիպում է բանակն վրացի բանակին, յաղթուելով փախչում է վերջինս, ապա արձակում է վրացւոց ձեռքն ընկած Գանձակի Շահվերդի-խանն։

1763-ին Շուշու վերայ արշաւում է Քարիմ-խան Փանահ-Ծրռ-խանը պատժելու. թէ և սկզբում ամրանում է բերդում Փանահն, սակայն յետոյ ապաւինում է Զէնդ-Քեարիմ-խանից, որին յանձնում է Ծրռ-Իբրահիմ-խանն (Դիւ. Հայ. պատ. Գ. գիրք էջ. 57—62 և 491—492) և Գաղտնիք եր. 76։

Այս իսկ թուականներում գրում է Ցակոբ Շամիրեան. «Յորմէ հետէ բարձաւ իշխանութիւն ամենայն յաշխարհէն Հայոց մինչև ցայսվայր.. ոմանք արք 'ի յԱրցախ աշխարհի Մեծին Հայոց... զօրացեալք յոյժ սակաւուք արամբք ամրանալով 'ի լերինս և յանտառախիտ տեղիս... հարկանէին և յոգունս 'ի Թըր-

---

1) Երկու քաջերիս գերեզմաններն կան Գանձակում (Արցախ եր. 38)։

նամեաց... զի բազմիցս այնքան առեալ զմարտ պատերազմի ընդ Տաճկաց (1) մինչ զի՝ հարեալ հալածեն 'ի սահմանաց իւրեանց զ'ի վերայ յարուցեալ զամենայն թշնամիսն և ժառանգեալ զերկիրս իւրեանց՝ որդի 'ի հօրէ առնելով մինչև ցայսօր ունին զիշխանութիւնս իւրեանց։

Եւ արդ՝ իշխանք Արցախ աշխարհին են այսոքիկ. առաջինն՝ որ ըստ նոցա կոչի Մէլիք-Ադամ, սա է այր խոհեմ, և քաղաքավար և քաջ 'ի պատերազմի, և է ինքնագլուխ իշխան։ Որպէս զի կարէ իւրովի զիւրոց ժողովրդոց յանցաւորն, զվնասապարտն՝ կամ զդատապարտելի զոր և իցէ պատժել և սպանանել առանց ուրուք հրամանատուութեան։

Երկրորդն՝ կոչի Մէլիք-Յովսէփ. նոյնպէս և սա է ինքնագլուխ իշխան. զի զոր ինչ յիւրումն իշխանութեան կամի, կարող է առնել թարց ուրուք հարցափորձի։ Եւ սա է այր քաջ և արի յոյժ. քանզի իւրով քաջութեամբն զինքնագլխութիւն յինքն գրաւեաց։ Ուստի զքաջ սպառազէնն և զքաջամարտիկ ախոյեանն Քրիստոսի գովեմ, որ անընդհատ ջանայ և ճգնի 'ի պատերազմի վասն 'ի Քրիստոս հաւատոց...։

Երրորդն՝ կոչի Մէլիք Եսայի, որ է այր գրասէր և հետեւող ուսմանց. բայց ոչ որպէս զնոցայն իշխանութիւն՝ ունի զինքնագլխութիւն. այլ է ընդ հարկաւ Պարսից իշխանութեան։

Չորրորդն՝ կոչի Մէլիք Շահնազար... սա է ընդ իշխանութեամբ Պարսից. քանզի թարց Պարսիկ իշխանին՝ որ նուաճեալ է ընդ իւրև, ոչ կարէ առնել զիր ինչ ինքնին՝ զոր ինչ կամիցի»։ (Նոր տետրակ եր. 118—119)։ Հեղինակն հարցնում է. Ի՞նչ պատճառաւ սոքա (Մէլիք-Շահնազար և Միրզախան) ընկած են Պարսիկ իշխանի ծառայութեան տակ, թէպէտ հետազօտելով իմացանք պատճառը, «սակայն վասն ամօթոյ լռեցաք զորպէսն»։ Ապա պատասխանում է ինքն իրան. «վասն զի ոչ

---

2) Յիշեցնում է մեզ Սղնախների դրութիւնը, զորս տեսանք պատմութեանս ընթացքում։

քաջութեամբ ինչ և կամ բռնաբար ընաւ մտին Պարսիկք 'ի սահմանս նոցա, այլ հրապուրեալ պատրանօք նոցին ընիկ խորամանկութեան, իբր օգնականութեան աղագաւ մուծին զիշխան Պարսից յաշխարհս իւրեանց». (Նոյն)։

Հարազատ մելիքներն հաւաքուելով Գանձասար որոշում են, Իբրահիմ-Ծրռ-խանի և անհարազատ մելիքների ձեռնարկութիւնները ոչնչացնելու նպատակաւ, Ջրաբերդի քաշերի մի մասը փոխադրել Խաչեն գաւառի հարաւային ծայրն, որ լինին Շուշու և Խնձիրստանի միջավայրում։ Խաչեն գաւառն որովհետև սեփականութիւն էր Ջալալեանների, հարկ էր Ջալալեանների համաձայնութեամբ անել այդ տեղափոխութիւնը։

120 ընտանիք քաշեր 1770-ին Ջրաբերդից տեղափոխւում են Խաչեն և հիմնարկում Խանածախ գիւղը, որի մէջ բնակում են 50 ընտանիք, և Պալլուճա գիւղը, որի մէջ բնակում է 70 ընտանիք (1)։ Այստեղ միայն կասենք այսքանը թանձր և փաղեմի անտառների մէջ շինուեցան այս երկու գիւղերն, որոց շինութեանց փայտերն և սատաղձներն կոտրում են համարեա թէ նոյն իսկ իւրեանց անտառներից։

## ԻԳ. ԳԼ.

*Մահ Ներսէս կաթուղիկոսի.—Ինքնակոչ Իսրայէլ և ապօրինի.—Յովհաննէս Ժ. կաթուղիկոս Աղուանից.— Անվայել արարք Իսրայէլի, որովք եղաւ կարգալոյծ։*

1763-ին վախճանում է Աղուանից Տէր-Ներսէս Դ. կա-

---

1) Մանրամասնութիւնները տեսնել ցանկացողներն թող ականեն Գաղտնիք եր. 118—122։ Մեծ-Սիւնեաց գաղթածներն Խանածախ են անուանում իւրեանց հիմնարկած գիւղը. բայց որովհետև Գարդմանի Պալլուճայից ևս լինում քաշերի մէջ՝ Պալլուճա են անուանում իւրեանց գիւղը։

թուղիկոսն (1)։ «Արդ՝ յայսմ թուոջս (1763) և մինչ կենդանի էր շամախեցի Յակովբ կաթուղիկոսն (Հայոց), յորժամ հասանի մահուան հիւանդութիւն Ներսէսիս այսմիկ, յեղբօրորդւոց սորին մանկագոյն աբեղայ մի Իսրայէլ անուն, զոր ի տղայութեան էր եպիսկոպոս արարեալ (Աղուանից կաթուղիկոս) Ներսէսն այսու միտօք (կաթուղիկոսացնելու նպատակաւ) օծանի կաթուղիկոս Աղուանից ի Կէնճէ յենլով և յուսալով ի Շահվերտի կոչեցեալ խանն տեղւոյն... Թարց գիտութեան Յակոբայ կաթուղիկոսին և առանց համակամութեան և գիտութեան երկրին Աղուանից։ Արդ՝ զի՞նչ կարծես դու զամանէ և զխղճմտանաց սորին, այսինքն զԻսրայէլէս, զի նախապէս ազգականն իւր Սիմօն (ճրո) կաթուղիկոսն տուեալ ձեռագիր նզովիւք և Ներսէսն զնոյն երկրորդեալ վասն ազգականաց չլինել կաթուղիկոս. և թարց հրամանի (Հայոց) կաթուղիկոսաց ոչ առնել։ Եւ այս Իսրայէլս, զորոց ամենեցունց անփոյթ արարեալ առնէ զայս անկարգութիւն։ Արդ յորժամ ձեռնադրի այս Իսրայէլ կաթուղիկոս, և Ներսէսն մեռանի ի նոյն աւուրսն, գրեն ապա զթուղթս ողերսանաց առ Յակովբ կաթուղիկոսն ինքն Իսրայէլն և իւր համախոհ մէլիքն, զի ընկալցի զԻսրայէլն, և զկանձնարարական և զպատուիրանական կոնդակս գրեսցէ յերկիրն Աղուանից ի յընդունել զնա։ Իսկ Յակովբ կաթուղիկոսն մինչ և ինքն իսկ էր միջնորդ լեալ Ներսիսի որձակմանն և ձեռագիր տալոյն առ Ղազար կաթուղիկոսիւն, դրէ առ նոսա զթուղթս մեղադրականս և յանդիմանականս, յիշեցուցանելով նոցա զՆերսէսի ուխտըն և զձեռագիրն և ղազգականս կաթուղիկոս զառնելն և զայլս ըստ իմաստաշատ մտաց իւրոց. և դուցանէ զկաթուղիկոս անուանեալն և զընդունողսն յանցաւորս և պարտաւորս։ (Որոյ գրեալ կոնդակին օրինակն ահա գոյ ի սուրբ Աթոռոջս)»։

---

1) Սորա տապանաքարի վերայ «երկյոբելեան» 100 տարեկան վախճանած է որպէս թէ (Արց. եր. 36)։ Բայց մի յիշատակարան գրում է 120 տարեկան. «և էր փըթեալ» այս է այնքան ապրել էր, որ համարեա թէ փթել էր (Արցախ եր. 121)։

Այնուհետև վախճանվում է Յակոբ կաթողիկոսը, որին և յաջորդում է ինքն Սիմէօն Երևանցի Հայոց կաթողիկոսը, որին նոյնպէս դիմում են Իսրայէլի մասին դիմողները, որոց պատասխանում է Սիմէօն կաթողիկոսը. եթէ Աղուանից ամէն ժողովուրդը կամենում է որ կաթողիկոս լինի Իսրայէլը, նախնեաց կանոնի համեմատ թող ուղարկեն Էջմիածին Իսրայէլը, որ ձեռնադրենք և պատուով յետ դարձնենք։ «Բայց գրեցին նոքա ևս քանիցս առ մեզ... խաբելով զմեզ, թէ յայս ինչ ժամանակ առաքելոց եմք և ինքն ևս՝ թէ գալոց եմ, զու գրեալ ի վինակս մեր յընդունիլ. սոյնպէս և Շահվերդի կոչեցեալ խանն հէնճէյու գրէր առ մեզ վասն Իսրայէլի... սակայն ո՛չ նա եկն և ո՛չ մեք տուաք»։

Հարաղատ մելիքներն և վարդապետներ Գանձասարի կողմից և ժողովրդական 50 անձինք ՌՄԺԲ (1763)-ին բազմակնիք հանրագրութեամբ յղում են Էջմիածին Ջալալեան Յովհաննէս վարդապետը կաթողիկոս ձեռնադրելու համար՝ ասելով. «Իսրայէլն ինքնագլուխ և թարց մերոց գիտութեան եղև կաթողիկոս և. 'ի յաթոռն Գանձասար ոչ գայ, վասն որոյ մեք զնա ոչ կամիմք»։ Գանձակեցիք էլ գրում էին թէ մենք կամենում ենք Իսրայէլը։ Ամէն ջանք գործ է դնում Սիմէօն կաթողիկոսն մէջ տեղից վերացնել Աղուանից երկպառակութիւնը՝ և գոյացնել միաբանութիւն։ Էջմիածնից առանց ձեռնադրուելու յետ դարձած Յովհաննէս վարդապետը ձեռնադրում են կաթողիկոս Աղուանից եպիսկոպոսներով, վարդապետներով և ժողովրդով Գանձասարում։ Մեծագոյն երկպառակութիւնն տեղի է ունենում այնուհետև, քանզի մի կողմից Գանձակի հայերն Շահվերդի-խանի ազդեցութեամբ միացած և միւս կողմից չորս մելիքներն և ժողովրդեան ամենամեծ մասն միաբանած՝ գրում են Սիմէօն կաթողիկոսին, որ կաթողիկոս ընդունի իւրեանց ընտրածը, գրում է և. Դարբանդի, Շամախու և Շաքուայ ժողովուրդն ընդհանրական հայրապետին, որ ձեռնադրէ իւր հաւանածը և ընդունելի է իւրեանց ևս։ Վերջապէս Սիմէօն վեհն գրում է

երկու կուսակցութեան ևս թէ ուղարկեցէք Էջմիածին և Յովհաննէսը և Իսրայէլը։ Յովհաննէսն հնազանդւում է և գնում Էջմիածին, իսկ Իսրայէլն յանդգնում է լրբաբար գրել տալ ընդհանուր վեհին. «Մի կաթուղիկոս դու ես, կաթուղիկոս մի սա, ընդէ՞ր պարտի սա 'ի յոտս քո գալ»։ Եւ թէ «թէպէտ սուրբ Էջմիածին աթոռ է մեծազահ և կաթուղիկոսն նորին և ամենայն Հայոց գլուխ, սակայն այլ են Աղուանք և այլ Հայք, որպէս Հրէայք ոչ խառնակին ընդ Սամարացիս, նոյնպէս և մեք չունիմք ընդ նոսա զմասն։ Եւ պայլ ևս ըստ սոցին բանս գրեալ էին վայրենամիտքն» (Դիւ. Հայ. պատմ. գիրք Գ. էջ 414)։ Ծերունի, կարգապահ Սիմէօն վեհն հայրաբար զիջանելով յղում է Թիփլիսի առաջնորդ Զաքարիա վարդապետը, որպէս զի առնէ իւր հետ Իսրայէլը և բերէ Էջմիածին, բայց «և Զաքարիա վարդապետն դատարկ դարձաւ առ մեզ, պատմելով զ։րբութիւն և գխստասրտութիւն Իսրայէլի»։

Այնուհետև վեհն Ս. Էջմիածնի Մայր Տաճարում գումարում է շատ եպիսկոպոսներ, կարգալոյծ անում Իսրայէլը և արհամարհում, իսկ Յովհաննէս կաթուղիկոսին պարգևում խաչ, կոնքեռ, գաւազան և դարձնում Գանձասար մի փառաւոր կոնդակաւ, որով պատուիրում է Աղուանից հայ հասարակութեան իւրեանց օրինաւոր կաթուղիկոս ճանաչել Յովհաննէսը և կարգալոյծ ճանաչել Իսրայէլը, որը և բնաւ չընդունել ՌՄԺԴ (1765) դեկ. 25-ին (1)։

Անհազին հատորներ կը լցնեն այս ինքնակոչ և Ծրա-Իսրայէլ-կաթուղիկոսի գործած անլուր չարութիւններն, եթէ մի ըստ

1) Ջամբռ եր. 80—91 և բազմաշխատ Գիւտ աւագ-քահանայի Աղանեանց Դիւ. Հայ. Պատ. գիրք Գ. էջ ճը-ճժգ. 335—343. 355—370, 413—421, 457—462, 610—614, 690—691, 717—720 և 771—773. Թող միւս գրքերում եղածները, Դիւ. Դ. գիրք էջ լդ-լե, ծ-ծա, 17—18, 39—40, 124, 202 և 204։ Այդ ամենը մատնանիշ անելով դատաստանը թողնում ենք անաչառ բանասիրաց դատաստանին ապաստան.......։

միջէ գրուէրին. մենք ցոյց ենք տալիս միայն գլխաւորներից մի ամենափոքր մասը։ Ինքնակոչս կեղծում է Աղուանից պատմութիւնը, գրել տալիս մի երկարաձիգ և անվայել և ամբարտաւան գրութիւններ, որովք ճգնում է ապացուցանել որ Աղուանցիք աւելի նախահաւատ են Քրիստոսին քան թէ հայերն և թէ Ս. Եղիշ Առաքեալից յետոյ Աղուանից աթոռակալք յաջորդաբար շարունակում են մինչև Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Հետևապէս Աղուանից կաթուղիկոսները պարտաւոր չեն հնազանդել Հայոց կաթուղիկոսներին։

Տգիտութեան պատճառաւ Սիմէօն կաթուղիկոսից մերժուած Եղոկիացի եպիսկոպոսացու Յարութիւն վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրում ինքնակոչ և կարգալոյծ Իսրայէլին։

## ԻԴ. ԳԼ.

Մէլիք-Ադամ և Մէլիք-Յովսէփ Գանձակում և Թիֆլիսում.—Լեկզիներն և Քեօլանիք.—Մէլիք-Յովսէփի քաջութիւնն.—Գանձակեցւոց զղջումն.—Շահվերդի խանի նեղ դրութիւնն.—Մամատ-Հասան յաղթուած.—Մէլիք-Յովսէփ Կիւլստանում.—Մէլիք-Ադամ Ջրաբերդում.—Արցախի հայ քաջերն.—Իբրահիմի ձեռնարկութեանց ոչնչացումն.—Մէլիք-Միրզախան կալանաւորուած.--Իբրահիմն վիրաւորեալ.—Մէլիք-Բէկլար Բ. և Մէլիք-Աբով Գ.—Եկատարինէ Բ. կայսրուհի·—Պատեօմկին և Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան·—Գանձասարի ժողովն և Մէլիք-Ադամ Ա-ոյն մահն.—Բուրնաշով հրամանատար։

Մէլիք-Յովսէփ և Մէլիք-Ադամ Ա. զզուած լինելով Փանահ-Ծրռ-խանի արարմունքներից գնում են Գանձակ և Շահվերդի-խանի հաճութեամբ բնակում նորա երկրում իւրեանց ժողովրդով միասին։ Իբրահիմ-Ծրռ-խանն պահանջում է Շահվերդուց յետ դարձնել երկու մելիքները իւրեանց գաւառներն. բայց մերժում է Շահվերդին։ Իբրահիմ բարկանալով միանում է Շամախու Հիւսէին-խանի հետ և յարձակում Գանձակի վերայ, յաղթա-

հարուելով յետ է փախչում Շահվերդին։ Մելիք-Յովսէփ և Մելիք-Ադամ նեղանալով Շահվերդուց, որ արգելում է դառնալ իւրեանց գաւառներն՝ գնում են Հերակլ Թագաւորի մօտ, որ նոյնպէս խէթ ունէր Շահվերդու դէմ, տալիս է Մելիք-Յովսէփին Ղազախեցի զօրք և իւր Իւանէ անուն ծառան և Շամշադին կոչուած Թուրքերը, որ հպատակ էին նոյն Շահվերդուն, բայց ապստամբած էին նորանից։ Երեք կողմից նեղութեան մէջ մնացած Գանձակի խանն օգնութեան է կանչում Երևանի խանը, որ չէ կարողանում հասնիլ, կանչում է և Ճառի լեկզիները։ Սակայն Շահվերդին բախտի բերմամբ հաշտուում է իւր Թշնամեաց հետ, իսկ օժանդակութեան հրաւիրած լեկզիներն, որ անձ գլուխ 3 Թուման դրամի պայմանով եկած էին, անկարող լինելով բաւականացնել Շահվերդին, արշաւում են Երևանեան երկրի վերայ մօտ 800 մարդով և պատճառում մեծ վնաս։

Այդ իսկ միջոցին Քեօլանի կոչուած պարսկադէն ցեղն ապստամբում է Երևանի խանիցն ն սկսում գնալ դէպի Արցախ։ Այս չուն Սևանայ լճի հարաւային կողմում Վարդենիս գիւղի մօտ պատահում է Լեկզիներին, սկսում է կռիւն, երկուստեք սպանուում են մարդիկ, յաղթում են լեկզիներն և գերեվարում Քեօլանոց հետ և 20 հայ և դառնում։ Քեօլանոց մեծերն Զրալ և Աթա փախչելով դիմում են Գանձակի խանին, որ թափէ իւրեանց գերիները, բայց ստանում են մերժում, դիմում են Մելիք-Յովսէփին, որ իւր զօրքով Գետաբակի մօտ կոտորում է լեզկիներից շատերը, ազատում գերիները և կողոպտած գոյքերը (Քեօլանիներն բնակում են Խոթա վանքի կալուածներում ցարդ) (Դիւ. Հայ. գիրք Գ. էջ 491—495)։

Գանձակի հայ հասարակութիւնն, զգալով իւր սխալը Իսրայէլը պաշտպանելու նկատմամբ, մեղայական է գրում Սիմէօն կաթուղիկոսին զղջմամբ լի, որին պատասխանում է Վեհն 1766-ին թէ չէ կարելի չընդունել ձեր ի սրտէ զղջումը բայց չէ կարելի թողութեան արժանացնել անզեղջը։

Գանձակի ազգաբնակութեան բոլորովին ատելի է լինում

Շահվերդի-խանն լեկզիները հրաւիրելու պատճառաւ, որ առիթ եղած էին մեծամեծ փնասների, մանաւանդ նոցա բաւականնութիւն տալու համար հասարակութիւնից պահանջած դրամների համար և ոմանց քիթը և ականջը կտրելու համար (Նոյն գիրք էջ 499)։ Այս պատճառաւ սաստիկ զայրացած ամբոխն դիշերով յարձակում է խանի տան վերայ, որ սպանէ։ Փախչում է խանն բոբիկ ոտով Շամքոր և ապաւինում Մէլիք-Ադամին, որ բնակում էր նոյն քաղաքում։ Իսկ Գանձակի կատաղի հասարակութիւնն հրաւիրում է Շուշու Փանահի որդին և նրստեցնում Շահվերդու տեղ։ Վերջինս Մէլիք-Ադամի ձեռնտուութեամբ գրում է Թախանձալի նամակ Հերակլ Թագաւորին, Մէլիք-Յովսէփին, Շամախու Հիւսէին-խանին և Ճառի լեկզիներին և խնդրում օգնութիւն, խոստանալով վարձատրութիւն լեկզիներին։ Իսկ ինքն Շահվէրդին, մինչև հրաւիրելոց յօգնութիւն հասնելն, առնում է շամշադինեցիները և Մէլիք-Ադամը իւր ամէն մարդիկներով հասնում է Գանձակ, կոտորելով փախցնում շատերը և կռւում Իբրահիմի հետ։ Իբրահիմն լսելով Մէլիք-Յովսէփի մօտենալը, աւարում է Շահվերդու անամիջի բոլոր կահ ու կարասիները և խայտառակում նորա կիներից մին և անճապարանօք հեռանում Շուշի։ Մէլիք-Ադամ իւր գահի վերայ նստեցնում է Շահվերդին և բաւականութիւն տալով հեռացնում լեկզիները։ (Դիւ. Հայ. Գ. գիրք էջ 520—524)։ Բայց մի ուրիշ յիշատակարան ասում է. «Մէլիք-Յովսէփ հասնում է Ճրռ-խանի եաևից Թարթառ գետի ձախ եզերքում, կոտորում նորա մարդիկներից մի մասը և վիրաւորում Իբրահիմն Թողլով ամէն ինչ մաղապուրծ շունչը առնում է Շուշում»։

Հերակլ Թագաւորն պարգևում է Մէլիք-Յովսէփին ի վարձատրութիւն իւր յաղթութեանց Գետաշէն աւանը (1) որ գտնուում է Արցախի Գարդման գաւառում։

---

1) Մէլիք-Յովսէփի անունը կրող այս յիշատակարանը տես Արցախ եր. 264—265 'ի շարս Գետաշէն աւանի հնութեանց։

1767-ին այն ինչ Մելիք-Յովսէփ իւր դերդաստանով բնակւում էր Գետաշէն աւանում, կէս գիշերին անակնկալ յարձակւում է Շահվերդի-խանի ապերասա որդի Մահմետ-Հասանն պարսիկ զօրքով։ Այս անսպասելի արշաւումն բնաւ չէ շփոթում մելիքը և իւր որդին քաջայաղթ Բէկլար-բէկը, որ առած իւր զէնքերը դուրս է ելնում բնակարանից և ընկնում հասանի զօրքի վերայ, ետևից հասնում են և սարսափեցնող Մելիք-Յովսէփ և իւր քաջ զօրքն և կոտորելով յետ մղում թշնամին և անընդհատ սպանելով և վիրաւորելով հասցնում մինչև Գանձակի մօտերքն, բայց խնայում են այն հայ զինուորներին, որ գտնուում էին պարսիկ զօրքի մէջ, հայերէն ձայն տալով որ ապրեցնեն իւրեանց անձերը։ Մահմետ-Հասանն տեսնելով իւր զօրքի սարսափելի բէկումը, խրախոյս բառնալով յետ է մղում փախչողները և կոտորում իրան չհնազանդող զինուորները։ Վերստին սաստկանում է պատերազմն, Մելիք-Յովսէփի հուժկու սրից կոտորուելով հալածուում է և մտնում Գանձակի բերդն, որ պաշարման վիճակի մէջ է մնում օրերով։ Այս դէպքը Շահվերդին հաղորդելով Հերակլ Թագաւորին, խնդրում է որ գթայ Գանձակի նեղ դրութեան վերայ և գրէ Մելիք-Յովսէփին, որ գնայ իւր սեփական երկիրն Կիւլստան։ Միևնոյն ժամանակ Իբրահիմն էլ, որից դրդուելով հեռացած էր մելիքս, գնահատելով նորա քաջագործութիւնները, երդմամբ և վստահելի հաւատարմութեամբ հրաւիրում է խնդրելով Մելիք-Յովսէփը, որ գայ և բնակի իւր պապենական կալուած իգլըմի դէօրդ (24 գիւղերից բաղկացած) Կիւլստանում։ Իսկ Մելիք-Ադամ Ա. որ կանխաւ բնակում էր Շամքոր քաղաքում, Հերակլ Թագաւորի յորդորելով և Իբրահիմի հաւատարիմ երդմամբ և հրաւէրով արդէն բնակում է իւր հայրենի Ջրաբերդում։ Այնուհետև Մելիք-Յովսէփ ևս փոխադրուելով բնակւում է Կիւլստանում (1) (Դիւ. Հայ. Պատ. Գ. գիրք էջ 773—775)։

---

1) Աւանդութիւնն աւելացնում է այստեղ թէ երկու հարա-

Այս Թուականներում ապրում էին քաջեր, որոց անուններն են, Դալի-Մահրասայ-Աւագ վարդապետ Մեծ-Շենացի (տես Արցախ եր. 38 և 261)։

Թուլի-Արզուման, Տոնմազ- Բալլու (1) Խանածախցի։

| | |
|---|---|
| Աժդահա-Անդրի | Խաչենի Խանածախ գիւղացի |
| Աղրայէլ-Աբրահամ (2) | » » » |
| Քեանդխուդա-Խաչատուր Բարխուտարեանց | » |
| Գիւլ (դալլ) Ուհան | » |
| Զարբազան-Եուզուբլու. | » |
| Տէօվ (Դեօվ-Գեասպար) | » |
| Քեարվանդառան-Բրուտ | » |
| Չափար-Սարասար | » |
| Այնաւուր-Օհան | » |
| Օշափ-Բաղդասար | » |
| Ասլան-Մանուչար | » |
| Սանկեար-Ասրի | » |
| Կարկուտ-Սմաւոն | » |
| Նէառռադեօվ-Աթա | » |

---

ղատ և քաջ մէլիքներիս և Իբրահիմի մէջ կապուում է սոյն պայմանն ապագայի ապահովութեան համար։

Ա. Իբրահիմ-խանն իրաւունք չունենայ խառնուիլ մէլիքների և իւրեանց հպատակների գործերին։

Բ. Երբ հարկ լինի պատերազմիլ արտաքին թշնամեաց դէմ, հարկ է վճռել ընդհանուր համաձայնութեամբ և հասուն խորհրդակցութեամբ, ապա կռուիլ։

Գ. Եթէ Իբրահիմ-խանն ստիպուած լինի պատերազմել որևէ մէլիքի հետ, իրաւունք չունենայ պատերազմել առանց կանխաւ խորհրդակցելու մէլիքների հետ։

Դ. Խանն իրաւունք չունենայ յափշտակել մէլիքների և վանքերի արդար իրաւունքը, ժողովուրդը, կալուածները և հողերը։

1) Արցախ եր. 237։

2) «Ղարաբաղցի Ներքինի Իբրահիմ» (Նիւթ. Ազգ. Պատ. եր. 356)։

Փիլ-Առուշան Խաչենի Խանածախցի.
Շահմար-Գիւլզի (Գրիգոր) » »
Նէառ-Եղիազար (1) » »
Քեալլակեօզ-Առստամ Ջրաբերդցի
Ուզունզլիչ-Սայի (Եսայի) »
Բաթմանղլիչ-Մարտի (Մարտիրոս) »
Բաթմանթոփուզ-Թէոս »
Անյաղթ-Ղազար »
Սալլում-Սայի (Եսայի) »
Զովզուն-Յարութիւն Կուսապատցի (Արցախ եր. 242.)
Քաչալ-Հրապետ »
Պել-Ճամալ Խաչէն գաւառի Պալլուջեցի
Քեարփէթիւն-Դաշա » »
Բրախմաղ-Յովսէփ » »
Գիժ-Մէքի » »
Թոխմախ-Սափարի » »
Ջրնդլան-Աւթանդիլ » »
Շիր-Նասիպ » »
Բէրիւռ-Մախմուր » »
Անզութ-Խաչի » »
Բասարկէչար-Գեաքի » »
Փահլուան-Սագի » »
Ղարախան-Իւզբաշի » »
Կաքև-Զաքի-Կաքաւ-Զաքարիա սուրհանդակ
Շէյթան-Թիւնի Դիզակի Դող աւանից.
Պըլը-Պուղի զուարճաբան։

Բացի սոցանէ կան և ուրիշներն, որոնց անունններն չի-շուած են իւրեանց մականուանց բացատրութեամբ Գաղտնիք

---

1) Սա ինքն է հանգուցեալ, հանրահռչակ գինեբալ Իւան Դաւիթովիչ Նազրեի պապն, որ մեզ անյայտ պատճառաւ սպրդած է Գաղտնիքը արտագրողի գրչից։ Սևագրութիւնից գտնելով գրե-ցինք այս տեղ։

8

Ղարաբաղի եր. 38—71, որոց քաջագործութիւնները տեսնելու ենք հետզհետէ։

Պայմանազանց է գտնուում Շուշու խանն, «Իբրահիմ-Ճրռ-խանն, կամենալով տկարացնել սոյն հարազատ (Ադամ և Յովսէփի) մելիքների ուժերը, միաբանեցաւ իւր կուսակից մելիքների և սոյն (պարսկադեն) թափառական ցեղերի հետ և սոցա հաւաքական ուժով նախ յարձակեցաւ Դիզակի բերդին վերայ, բայց չարաչար յաղթուեցաւ Մէլիք-Եսայուց և մեծ կոտորած տալով յետ մղուեցաւ»։

«Երկրորդ՝ յարձակեցաւ Ջրաբերդի վերայ նոյն ուժով, սակայն Մէլիք-Ադամի և Մէլիք-Յովսէփի զօրութիւնից համարեա թէ բնաջինջ եղան թշնամու զօրքերն։ Իսկ Ճրռ-խանն, Մէլիք-Շահնազարն և Մէլիք-Միրզախանն հազիւ թէ մազապուրծ Շուշի հասան սարսափահար, փախչելով Ամարասի կողմից։ Ասկեարանն... միշտ մնում էր մեր քաջերի գրաւման տակ։ Ահա նոցա Ամարասով գնալու պատճառն»։

Երրորդ՝ մի քանի տարուց վերջն սոյն Ճրռ-խանն իւր դաշնակից հայերով և դաղտնի աջակից Թուրքերով ժամուկ յարձակեցաւ Գանձասարի վերայ կողոպտել վանքը և բնաջինջ անել Ջալալեան իշխանները, ուր ժողովուած էին Շէյթանթիւնու ազդարարութեամբ և Յեխ-ձորի կրճում դարանամուտ եղած. հարազատ հայ զօրքն կտրեց կրճի երկու կողմերը, բնաջինջ արաւ թշնամու զօրքը. կալանաւորեց Մէլիք-Միրզախանը, իսկ իւր նժուգով փախչելով ազատուեցաւ Ճրռ-խանն (Իբրահիմ)»։

«Կալանաւորուածներն, Վասակի նման գրկելով Քրիստոսի խաչը և աւետարանը, բազմիցս երդուեցան և ազատութիւն առացան Մէլիք-Ադամի հրամանաւ։ Սոքա երդուեցան այնուհետև բնաւ ոչ յարիլ Ճրռ-խանին, ոչ միանալ նորա հետ և ոչ կռուիլ Հայոց ուժերով Հայոց հետ, այլ միաբանիլ հարազատ մելիքների հետ և հաւաքական, միաձոյլ ուժերով ոչնչացնել Ճրռ-խանի բոլոր ձգտումները և ձեռնարկութիւնները»։

Չորրորդ՝ ճրա-խանն (1) թէպէտ բոլորովին տկարացաւ, բայց երդմնազանց հայ մելիքների միաբանութեամբ երկրորդ անգամ խաղաց Դիզակի Դող բերդի վերայ։ Չկարողանալով պատերազմաւ յաղթել Մելիք-Եսայուն, երդմամբ խոստացաւ ճրա-խանն, որ ինքն եկած էր խաղաղութեամբ դաշն հաստատել և վերջ տալ Արցախի ներքին խռովութեան։ Սակայն երդմնազանց խանն, այս երդումն ևս պատրուակ անելով, դըրժեց իւր երդումը՝ որին հաւատալով բերդից դուրս եկած էր Մելիք-Եսային։ Գտիչ վանքում լինելու էր խաղաղութեան պայմանն, ուր իջած էր քաջ Մելիք-Եսային։ Այս դիւցազուն մելիքն, տեսնելով որ դաւաճան ճրա-խանի թիկնապահներից մին անապարում է զինքը գլխատել, իսկոյն հանում է իւր թուրը և գլխատում թիկնապահը։ Փախչելու ժամանակ իւր աջ ազդրից վիրաւորւում է գնդակով Իբրահիմ-ճրա-խանն և գլխից երկու վէրք է ստանում Մելիք-Շահնազարն»։ (Գաղտնիք եր. 78—80)։

1775-ին վախճանում է Կիւլստանի Մելիք-Յովսէփն, որին յաջորդում է իւր որդի Մելիք-Բէկլար Բ. (2), որ ունենում է

---

1) Կարևոր համարեցինք այս տեղ մէջ բերել ժամանակակից Աբրահամ Բէկնազարեանցի հետևեալ տողերը. Տիրապետութիւնն Պարսկաստանի մէն մի մասում բռնակալ խանի թրի աւարն էր։ Շահ չկար Նադր-Շահից մինչև Աղա-Մամատ-Շահի օրերն։ Այդ ժամանակամիջոցում մէկզմէկ սպանելով կամ կուրացնելով խանութիւնը յափշտակում էին միմեանցից Շահ-Ռուհն, Ադիլ-Շահն, Ալի-Մուրատ-խանն, Զենտ-Ասկեար-խանն, Փաթալի-խանն, Զենտ-Քեարիմ-խանն, Ազատ-խանն և Աղա-Մամատ-Շահի հայր Մամատ-Հասան-խանն։ Անհաւասիկ այս է պատճառն որ սոքա թագաւոր չեն համարուում 'ի թիւս Շահերի նոյն իսկ Պարսկաստանում, այլ սոսկ խռովարար խաներ, և անընդունելի են համարւում սոցանից տրուած հրովարտակներն»։ Եզրակացնում է հեղինակն, որ Արցախի Փանահ և Իբրահիմն օրինաւոր խաներ չէին օրինաւոր Շահերից հաստատուած (Գաղտնիք եր. 83—84)։

2) Հիւրեկայ վանքի մօտ են հանգուցեալ Մելիք-Յովսէփի և Մելիք-Բէկլար Բ-ի գերեզմանները։

պարթեւ հասակ, սլրական քաջութիւն, անպարտելի ուժ և անհարկու տեսք։ Բայց ափսո՜ս, որ կարճատեւ է լինում սորա մելիքութիւնն, վասն զի սպանւում է Գեօրգեան կոչուած տեղում լեզգիների հետ պատերազմելու ժամանակ, որին յաջորդում է իւր եղբայր Մէլիք-Աբով Գ. որ նոյնպէս լինում է սրտոտ, ուժեղ, պատերազմասէր և քաջայաղթ։

1762-ից սկսեալ թագաւորում է Ռուսաստանում Եկատարինէ Բ. կայսրուհին, որ որոշել էր տիրել Կ. Պոլսին. իսկ Հայաստանում և Վրաստանում վերանորոգել Հայոց և Վրաց քրիստոնեայ թագաւորութիւնները, որք կախումն ունենային միայն Ռուսաց կայսրութիւնից։ Այդ իսկ միջոցներում գտնուում է Ռուսաստանում գեր. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցն իբրև առաջնորդ Ռուսաստանի Հայոց, որի հետ նամակագրութիւն ունէին Արցախի հարազատ մելիքներն և Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսն, ինչպէս առաջիններն Մինաս վարդապետի և Իսրայէլ Օրու հետ։ Արղութեանց արքազանն իմանալով որ կայսրուհին յանձնած է իշխան Պոտեօմգինին Հայոց և Վրաց տէրութեանց վերածնութիւնը, այնուհետև կապում է նորա հետ սէր, համակրութիւն և ջերմագին աջակցութիւն. իսկ Պոտեօմգին իշխանն ցանկանում է կրել Հայոց թագը։ Նորանից յետոյ համարեա՛ թէ մելիքների նամակներն և հաղորդագրութիւններն գլխաւորաբար լինում են այս երկու անձանց հետ և սոցա միջոցաւ։ Սոյն իշխանն անում է մեծամեծ շնորհումներ Վրաց Հերակլ թագաւորին, որ երդուում է ցմահ հաւատարիմ լինել Ռուսաց գահակալներին։

1781-ին դեկտ. ամսում մեծ ժողով է լինում Գանձասարի վանքում։ Հարազատ մելիքներն Մէլիք-Ադամ Մէլիք-Իսրայէլեան, Մէլիք-Աբով Գ. Մէլիք-Յովսէփեան, Դանիէլ-բէկ Մէլիք-Բէկեան և Յովհաննէս կաթուղիկոս գրում են նամակներ կայսրուհւոյն, բայց պատասխանները ստանում են 1782-ի յունիսին։

Միևնոյն 1781-ին ժողովից յետոյ վախճանում է հարա-

զատ մելիքների գահերից Մելիք-Ադամ Ա. որի մարմինն ամփոփուած է Ջրվշտիկ-Եղիշ-առաքեալ վանքի մօտ (Արցախ եր. 236) որին յաջորդում է իւր որդի Մելիք-Մէժլում Բ.։ Միևնոյն թուին վախճանում է Մելիք-Եսայի և յաջորդում է Մելիք-Բախտամ Բ.։ 1783—1784 գրում են դարձեալ Գանձասարից նամակներ Մելիք-Աբով Գ. Մելիք-Մէժլում Բ. Դանիէլբէկ Մելիք-Բէկեան և նոյն Յովհաննէս կաթուղիկոսն և յղում իւրեանց սուրհանդակ Դանիէլի և Գաբրիէլի ձեռնով և յետոյ ստանում պատասխաններ։

Այդ միջոցներում գրում է գեներալ Ս. Պատեօմկին Մելիք-Յովսէփին թէ հրամայուած է Բուրնաշովին հրամանատարութեամբն ուղարկել Վրաստան ռուս զօրք, դու էլ պատրաստուիր քո հպատակներով դիմաւորել։ Նամակը ստանում է արդէն վախճանուած Մելիք-Յովսէփի որդի Մելիք-Աբով Գ. և իւրայիններով գնում Հերակլ Թագաւորի մօտ։ Միևնոյն ժամանակ ստանում է և մխիթարական կոնդակ Ղուկաս կաթուղիկոսից հանգուցեալ Մելիք-Ադամի և Մելիք-Բէկլարի մասին. (Դիւ. Հայ. Պատ. Դ. գիրք էջ 511)։

## ԻԵ. ԳԼ.

Նենգաւոր և թունաւոր ճաշ.—մահ Յովհաննէս կաթուղիկոսի.—Բանտարկութիւն և ազատութիւն.—Երևումն և անյայտանալն Բուրնաշովի.—Ծըռ մելիքութիւն Գիւլեաթաղի.--Խնդրագիր մելիքաց առ Կատարինէ Բ. կայսրուհին.—Հերակլ թագաւորի արարմունքն.—Մահ Մելիք-Շահնազար Բ-ի և յաջորդութիւն Մելիք-Ջիւմշիտի.—Աններելի յանցանք կարգալոյծ Իսրայէլի.—Կոնդակ Ղուկաս կաթուղիկոսի։

Փանայի որդի Իբրահիմն, իմանալով որ հարազատ մելիքները և իւզբաշիները ունին գաղտնի նամակագրութիւններ և թաղուն յարաբերութիւն Ռուսաց հետ, հետապնդում է ձեռք

բերել նամակների սևագրութիւնները, բայց անհնարին է լինում, վասն որոյ դիմում է պարսկական խորամանկ միջոցի։ 1784-ին Շուշում պատրաստում է մի մեծ խնճոյք, հրաւիրում Նաշի Յովհաննէս կաթուղիկոսը, Մէլիք-Շահնազար Բ-ը, Մէլիք-Մէժլում Բ-ը, Մէլիք-Բախտամ Բ-ը և Մէլիք-Միրզա-խանը և ուրիշները։ Թունաւորուելով վախճանում է Յովհաննէս կաթուղիկոսն և բանտարկուում են Մէլիք-Մէժլում Բ. և Մէլիք-Բախտամ Բ. (1)։ Բայց հարազատ մելիքների ամենաքաջ զինուորականներն գիշերով ազատում են բանտարկեալները, բացի Մէլիք-Բախտամից, որ իբրև քաղաքական յանցաւոր յղուում է գիշերով Պարսկաստան։ Ջնջուում է Գանձասար վանքը կողոպտելու յղուած խումբն հայ քաջերից և օր առաջ գաղուում են Գանձասարի հնադարանի գիրքերն և ձեռագիրներն։ Մէլիք-Աբով Գ-ի ետևից գնում է Թիֆլիս և Մէլիք-Մէժլու Բ-ն իւրայիններով։

Այդ օրերում Շուշում բանտարկուում է Ջալալեան Սար-

1) «Քաջերի խումբն Դողեցի Շէյթան-Թիւնու և կաքև Ջաքու առաջնորդութեամբ հասնում է Շուշու պարսպին։ Կէս գիշերին Նեառուաղէօֆն կապում է մի մեծ քար մի պարանից, ներս շպրտում (պարսպի գլխից) նոյնպէս է անում և Քեարվանդռանն և պարաններով բերդ են մտնում բոլոր քաջերն և շրջապատում բանտը։ Քեանդխուդա-Խաչատրի հրամանաւ, որ հրաւիրեալց հետ ներկայ չէր ճաշին՝ հսկող հերթակալների, որք քնացած էին՝ հըսկում են Շահմարն և Թօփուզն, բանտապետի դրան մօտ՝ Տէօնմազն, Պրախմազն և Սանկեարն, իսկ մնացեալք շարւում են բանտի դրան և լուսամուտների առաջ։ Ոռնում է Գիւլ-Ուհանն 'ի նշան գործողութեան։

Տէօֆն և Նէառուաղէօֆն հանում են տեղից բանտի դռները. Փիլն, Ասլանն, Աժդահան և Կեծակն փշրում են բանտի լուսամտների խաչաձև երկաթները և դղրդում է բանտն։ Բանտապետն և բոլոր հերթակալ պահապաններն գլխատուում են Աղնաւուրի, Օշափի և Կարկտի Թրերով և ազատում են բոլոր բանտարկեալ հարազատ մէլիքներն, իշխաններն և քեանդուդաներն։ Բայց աւաղ, Թոյնով վախճանուած էր Յովհաննէս կաթուղիկոսն, Պարսկաստան

գիս եպիսկոպոսն իւր եղբայրներով միասին Ճըռ-խանի հրամանաւ, որ անպատճառ պահանջում է Ռուսաց գրուած թղթերի սևագրութիւնները, ապա թէ ոչ կը մեռնի։ Սակայն շուտով ազատւում են Սարգիս եպիսկոպոսն և իւր եղբայրներն նոյն քաջերի շնորհիւ (Գաղտնիք եր. 92—93)։

1787-ին Գանձակին մօտենում է հարազատ մելիքների ակնկալած ռուս զօրքն գեներալ Բուրնաշովի զօրավարութեամբ, որոց մէջ են լինում Մելիք Աբով Գ. և Մելիք Մէժլում Բ. իւրեանց զօրքով և, ըստ ոմանց, Հերակլ թագաւորն և գնում են Շուշի Իբրահիմ-խանի վերայ։ Բայց հազիւ թէ հասնում են Գանձակին, Բուրնաշովն յանկարծ ստանում է հրաման՝ անմիջապէս դառնալ Ռուսաստան, պատճառաբանելով թէ պատերազմ ծագած է Ռուսաց և Օսմանցւոց մէջ։ «Ահա Ռուսաց կողմից երևցած օգնութեան յուսոյ նշոյլն այսպէ՛ս շիջաւ՝ ճառագայթներն մեզ չհասած» (Գաղտնիք եր. 93)։ Իւր զօրքով դառ-

---

աքսոր ուղարկուած էր Մելիք-Բախտամն, իսկ միւս մելիքներն ազատուած էին մահից դեղթափի շնորհիւ։ Վեր առնուեցան կաթուղիկոսի ս. մարմինն և երկու մեռած քեանդխուդաների մարմիններն։ Քեանդխուդա-Խաչատուրն, Նէառադէօմն, Սանկեարն և Տէօմն տարան բանտի դռները և կախեցին Իբրահիմ-ճըռ-խանի տան պարսպի դռնից և բերին բոլոր հրաւիրելոց երեսուն ձիերը և ճըռ-խանի ու Մելիք-Շահնազարի ընտիր նժոյգները, որք կապուած էին ախոռումն։ Գլխատուեցան նաև ճըռ-խանի ձիապաններն և Շուշու աւագ դրան դռնապաններն և ազատեցաւ ամեն ոք։ Բերդից հազիւ թէ երկու հարիւր քայլ հեռացած՝ Մելիք-Մէժլում բ-ն մի սրտաճլիկ և հակիրճ խօսքով շնորհակալութիւն յայտնեց քաջերին այս գիւցազնական ազատութեան համար, ափսոսանք՝ հանգուցեալ կաթուղիկոսի մահուան համար և խորին ցաւ՝ Մէլիք-Բախտամի աքսորի համար հանրագրութեան հետ։ Յետոյ մի բուռն ոսկի տալով քաջերին, ասաց յորդորելով. «Սիրելի Բէկնազարեանց (Աբրահամ) քսան և հինգ քաջերով հետապնդէք յետ բերել Մելիք-Բախտամը և իւր բերդում հանգստացնել։ Աստուած ձեզ հետ» (Գաղտնիք եր. 82—83)։

նում է Բուրնաշով և Հերակլն։ Օսմանցւոց երկար տարիներ դիմադրող և բազմիցս յաղթող Արցախի հարազատ մելիքներն, անհեռատես Մելիք-Շահնազար Բ-ի շնորհիւ ծագած և մանաւանդ թէ ստեղծած ներքին երկպառակութեան պատճառաւ, հասնում են այս դրութեան։

Այնուհետև առ ժամանակ մի ազատ շունչ է քաշում ճրոխանն. և մելիքների բացակայութեան ժամանակ Ջրաբերդ գաւառի վերայ մելիք է նշանակւում Գիւլեաթաղցի Ալլահվերդի-իւզբաշին, որ Մելիք-Մեժլում Բ-ի իւզբաշին էր, (այս ճրո-մելիքի որդին է Մելիք-Առուշանն)(1) և Ամարաս է փոխադրել տալիս կարգալոյծ Իսրայէլը (2)։

Մելիք-Աբով Գ. և Մելիք-Մեժլում Բ. դառնալով Թիփլիս գրում են Յովսէփ Արքեպիսկոպոսի միջոցաւ Եկատարինէ Բ. կայսրուհւոյն, որ գէթ մի սակաւագունդ զօրքով օգնէ իրանց բառնալ մէջ տեղից Պարսից իշխանութիւնը Անդրկովկասից և ճրո-խանութիւնը Շուշուց և Շաքուից։ Մելիքներս, մինչև իւրեանց նամակի պատասխանը ստանալն կայսրուհուց, աշխատում են քրիստոնեայ Հերակլ թագաւորից ստանալ 2000 վրացի զինուոր և հայ ու վրացի զօրքով յարձակել Շուշու վերայ, թէ և բոլորովին աւելորդ էին համարում օժանդակ զօրքս մելիքների իւզբաշիներն (Գաղտնիք եր. 93—97)։ Սակայն Հերակլ թագաւորն փոխանակ օգնելու հայերին՝ աշխատում է կալանաւորել մելիքներն և յանձնել Իբրահիմին։ Մելիքներն, փութով իմանալով թագաւորի անվայել այս խորհուրդը և հակահիւրասիրական նպատակը, հեռանում են Թիփլիսից և սիրով հիւրընկալւում Գանձակի Ջաւատ-խանից, որ Շահվերդի խանի որդին էր։ Բայց քրիստոնեայ Հերակլի այս արարմունքն անմարսելի նախատինք է համարում մանաւանդ Մելիք-Մեժլումին։

1792-ին վախճանում է Վարանդայի Մելիք-Շահնազար Բ.

1) Ծրո-մելիքիս ապարանը տես Արցախ եր. 215։
2) Գաղտնիք եր. 86։

որին յաջորդում է իւր որդի Մէլիք-Ջումշուտ (1) որ միշտ հակառակ եղած է Երո-խանին և համակամ և համագործ հաբաղդատ մէլիքներին։

Անկարգութեանց և զզուելի և միանգամայն աններելի արարմանց չափը անցուցանում է կարգալոյծ Իսրայէլն, վասն որոյ Դիւան Հայ. Գ. գիրք շատ տեղերում Իսրայէլը կոչուած է ապօրինի, խաբեբայ (էջ 366) չԻսրայէլ (էջ 535. 580 և 627) կաթուղիկէաքակ (էջ 590) չ ի ք (էջ 690, 719 ևն, ևն։ Բայց յայտցանէ Իսրայէլ գրում է Հաշտարխանի առաջնորդ և Նուիրակ Յովսէփ վարդապետին թէ Հաղբատ և Սանահին Տուտէորդուն վանքերն պատկանում են Աղուանից կաթուղիկոսներին. հիւսիսից էլ Հոներն, Մազքութներն լինելով Առանայ սերնդից, նոյնպէս Հետևապէս Հաշտարխանի և նոյն կողմերի նուիրակութիւնն ևս պատկանում է Իսրայէլին։ Այս ամէնը լսող Հայոց Ղուկաս կաթուղիկոսն գրում է նոյն Յովսէփ վարդապետին ի միջի այլոց. «Մանաւանդ Իսրայէլն կինչ բառիբան է գրեալ քեզ և զպատուէրս յոլովս գրեալ առ այն պատրուակաւ։ Լաւ վերահասու լեր այնմ և զգուշացիր... զուր իմն տոհմիկ հանեալ ի վեր.. Նստուցանէն Տուսեայ որդւոյն... այլ ընդ այլոյ մեկնելով, զՀոնս և զՄազքութս և որք անդր քան զԻ է մինչև ցքուն խակ բևեռն՝ առէ զոլ ի հաշիւս

1) Շնորհիւ Յովսէփ-բէկ Մէլիք-Շահնազարեանցի մեր ձեռքն հասած է Մէլիք-Շահնազար Բ-ից գրուած «՚ի ամխա (1792) թվ. Հայոց... հրաւիրում է իւր որդի Ջումշիւտը, թէ որդի, ես ծերացել եմ, քիչ մի ազար ունեմ, դու ինքդ էլ իմ մեծ որդին ես, եկ իմ էլած, թէ նազտ, թէ վէջ... քեզ յիպա անեմ (յանձնեմ) քանի որ խելքս գլխիս է... Ջումշիւտն յանձն չառաւ.. ես քո ապարքին թամահ չունիմ. ես էնչանք ունեմ, որ ինձ հերիք է (ասելով)։ Ապա հրաւիրում է Յիւսէինը (Թրքածին) սա էլ չէ գնում, Ջհանկիրը՝ սա էլ չէ գնում. Ջհանբախշն, ոչ ոք չէ գնում (զզուած լինելով իւր հօր հակաքրիստոնէական արարմունքներից) ապա անիծում է մէլիքը իւր որդիքը....»։

բաժնից տածողի սերնդոցն Առանայ: Զօր և օժանդակիւն հանդերձ՝ ի նոյն յիշեալ նստարանն կապել բաղձայ... գրեցի ի գիտել քեզ» (Դիւ. Հայ. Պատ. Դ. գիրք էջ 150):

Այս ամենի վերայ Խոտորաշէնցի Իսրայէլն 1794-ին Աղուանից համար կաթուղիկոս է օծում իւր եղբայր Սիմէօնը և նստացնում Երից-Մանկանց վանքում և ինքն նստում Ամարասում: «Դի՛ր զմեղս ի վերայ մեղաց»:

Հարազատ մելիքներն, վերջին ծայր զզուած լինելով Աղուանից հայ հասարակութեան ամենամեծ մասի հետ՝ Իսրայէլի ազգակործան արարմունքներից, մանաւանդ երբ առանց գիտութեան ազգի և Հայոց հայրապետին օծում է իւր եղբայրը կաթուղիկոս և ինքն Ամարասում նստելով կռնակը տալիս է խարդախ ճրռ-խանին և երկպառակութիւն ձգում եկեղեցու մէջ, իսկոյն տանում են Գանձակ՝ թունաւորուած Յովհաննէս կաթուղիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսը և Աղուանից եպիսկոպոսի մեծամասնութեամբ ձեռնադրում և օծում կաթուղիկոս 1794-ին և հոկտեմբ. 17-ին (Գաղտնիք եր. 111—114):

Հարազատ մելիքներն և Սարգիս կաթուղիկոսն գրում են եղելութիւնը հանգամանօրէն Ղուկաս կաթուղիկոսին և յայտնում պարագաների նեղսակիր միջոցը: Հայոց այս հայրապետն գրում է իւր պատասխան մի քաղաքավարի կոնդակ, յորում ի միջի այլոց. «Յորմէ սիրով ծանիր հոգևոր որդիդ մեր Սարգիս կաթուղիկոս, ևն, ահա այսպէս ընդունում է նորա կաթուղիկոսութիւնը. ապա ասում. «գրեալ էիր թէ ի Թիփլիզու յաւարի գնացեալ ամանաթիցն մերոց՝ հոգելոյս Ղազար կաթուղիկոսի թ ա դ ն և վ ա կ ա ս ն և շ ո ւ ր ջ ա ռ ն և այլ ինչ իրք անկեալ են ի ձեռն բարձրապատիւ Ջաւատ խանին և նա անքակելի պահէ վասն բարեկամութեան առ Ս. Աթոռս, զի դարձուսցէ այսօր... մեք ևս յօժար եմք առնուլ, թէև պարտուք» (Դիւ. Հայ. Դ. գիրք էջ 648—650):

—

## ԻԶ. ԳԼ.

*Ա. արշաւանք Աղա-Մամատ-Շահի.—Աւերումն Թիփլիսի.—Նահատակութիւն Յարութիւն վարդապետ-Սայ.-Նովայի.—Գանձակի պաշարումն և Մէլիք-Մէժլում Բ-ի մահն.—Զուպովի արշաւանքն.—Եկատարինէ Բ-ի մահըն.—Դարբանդի և Ղուբայի հայերն Ռուսաստանում.—Երկրորդ արշաւանք նոյն Շահի.—Սով, մահ և գաղթականութիւն.—Մէլիք-Աղամ Բ.— Մէլիք-Ջիւմշուտ և Մէլիք-Ֆրէյդիւն Ռուսաստանում.—Սարգիս կաթուղիկոս Հաղբատում.—Վախճան Յովսէփ կաթ. Արղութեանցի.—Ցիցիանովի արշաւանքն ապարդիւն.—Մէլիք-ժառանգ Առստամ-բէկ։*

1795-ին ամրան Աղա-Մամատ-խանն (1) մեծ զօրքով արշաւում է Շուշու վերայ ապստամբ Իբրահիմ-խանը պատժելու և բանակում է Շուշու հարաւ-Արևելեան հանդէպ։ Շահին բանակին հետ միանում են Մէլիք-Մէժլում Բ. և Գանձակի Ջաւատ-խանն իւրեանց զօրքով։ Իսկ Իբրահիմին Շուշում միանում են Մէլիք-Աբով Գ. և Մէլիք-Ջիւմշիւտ։ Այստեղ Մէլիք-Մէժլումն համոզում է Շահը, նախ արշաւել Թիփլիսի վերայ և յետոյ գալ Շուշու վերայ։ Շահն զննելով Շուշի ամրոցի անմատչելի դիրքը, թողնում է այն անգրաւ և գնում Թիփլիսի վերայ։

1795-ին Խաչվերացի պահոց երեքշաբթի օրում (2) առնում է Թիփլիս քաղաքը. իւր դերդաստանով փախչում է Հէրակլ թագաւորն, կոտորւում են շատ վրացի և հայ ժողովուրդ. կողոպտւում է ճոխ քաղաքն, դերեվարւում է բազմաթիւ վրացի և հայ բնակիչներ (ըստ ոմանց 12,000) նահա-

---

1) Սա կոչւում է և Աղա-Մամատ-Շահ, Ներքինի-Շահ և Չէզոք-Շահ։

2) Դիւ. Հայ. Պատ. Ա-Բ. Գիրք էջ 25—29 և Գաղտնիք եր. 17—169։

տակուում է Թիփլիսի Կաթուղիկէ ս. Գէորգ եկեղեցում Ցաւրութիւն վարդապետ-Սայեաթ-Նօվա բանաստեղծն ասելով. «Զրխմանամ քիլիսաղան, դեօնմանամ Իսաղան» (Դուրս չեմ գալ եկեղեցուց, չեմ դառնալ Քրիստոսից) (1) (Գաղտնիք եր. 167)։

Շահի հեռանալուց վերջն Մէլիք-Մէժլումն և Մէլիք-Աբով միանում են Ջաւատ-խանի հետ իւրայիններով և ամրանում Գանձակի բերդում։ Ջաւատ-խանից և Մէլիք-Մէժլումից (որք միացել էին Շահին և աւերել Թիփլիսը) վրէժ լուծելու նպատակաւ միանում են Հերակլն Շամշադնի Սուլթանի հետ և Իբրահիմն լեկզիների հետ և պաշարում Գանձակը, կուի ժամանակ սատանում է վէրք Մէլիք-Մէժլում Բ. և վախճանում, բայց անգրաւ է մնում Գանձակն։ Սակայն սրածութեան, գերեվարութեան և աւարառութեան են մատնուում Արցախի Գարդման, Փառիսոս, Քուստի և Կողթ գաւառների բացօդեայ գիւղերի հայ բնակիչներն։

Ռուսաց զօրքն, որ միևնոյն 1795-ին Արղութեան Ցովսէփ Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ և Զուբովի հրամանատարութեամբ առանց պատերազմի գրաւել էր Դարբանդը, Ղուբան, Բագուն և Շամախին, 1796-ին պաշարում է Գանձակը լեկզիների հեռանալուց յետոյ։ Խոհեմ Մէլիք-Աբով Գ.-ից համոզուելով Ջաւատ-խանն առանց արիւն թափելու բերդը յանձնում է Զուբովին։ Այնուհետև Շաքուայ և Շուշու խաներն ևս ակամայ խոնարհուելով ընդունում են Ռուսաց հպատակութիւնը, տեսնելով որ երկրի բնակչաց մեծամասնութիւնն կազմող հայերն, հայ մելիքներն և հայ հոգևորականութիւնն արդէն ընդունած է Ռուսաց հպատակութիւնը։ Դժբախտաբար նոյն 1796-ին յունիսի 6-ին վախճանում է Ռուսաց Կատարինէ

---

1) Բանաստեղծս ամփոփուած է նոյն տաճարի հիւսիսային որմի արտաքուստ կից պատին՝ կանանց դրան մուտքի առաջ անարձանակիր շիրմաքարով։

կամ Եկատարինէ Բ. կայսրուհին և այս պատճառաւ անակնկալ չետ կանչուելով, յանկարծ հեռանում է Զուբով իւր զօրքով, որի հետ Ռուսաստան է գաղթում և Ղուբայի և Դարբանդ գաւառաբնակ հայերն (Աղ. երկ. և Դր. 107—108 և 143)։ Զուբովի այսպէս սուսւպ սստղի նման երևելով և անյայտանալովն ընկնում է Ռուսաց հռմարումն. աւելի և աւելի կատաղում են Թշնամի մահմետականներն և իբրև միս խորովուում է Աղուանից երկրի հայն, որ այնքան սերտ յարած է լինում Ռուսաց։

1797-ին կրկին արշաւում է Շուշու վերայ անգութ Ներքինի-Շահն Մուղանի դաշտով, այրել տալիս Ուտեաց դաշտի հասունացած արտերը և Աղ-դամ գիւղը և անարգել մտնում Շուշի, քանզի Բալաքեան փախած է լինում Իբրահիմն։ Շահի անողորմ հրամանաւ եղիտ-խարմանի (1) անելով տեղ տեղ կոտորում են Իբրահիմի կուսակից կասկածաւոր շատ մահմետականներ և հայեր. բոլորովին մերկացնում են նւթականից Մէլիք-Ջիւմշիւտ, որն չնայելով որ հիւրընկալած էր իւր բնակարանում Շահը, այս է Շուշու ապարանում (Դիւ. Հայ. Պատ. Ա—Բ գիրք էջ 32—33)։ Այսու ամենայնիւ ինքն Շահն էլ սպանուում է Շուշում իւր ներքին կաշառուած սպասաւորներից, անելով ինչ ինչ կարգադրութիւններ։

Այս անընդհատ արշաւանքներն կործանում են Աղուանից երկրի մանաւանդ Արցախի տունը. քանզի առաջացնում են անհաշիւ սպանութիւն, անդարմանելի սով, անբուժելի ժանտախտ, անթիւ մահ և խղճալի գաղթականութիւն կամ տեղափոխութիւն ի Ռուսաստան, Վրաստան, Պարսկաստան, Տաճկաստան և ուրիշ տեղեր (2)։ Այստեղ արժան համարեցինք

1) Մարդիկ երեսի վերայ տարածելով գետնի վերայ խիտ առ խիտ, որոց վերայ պտտացնելով նոր պայտած ձիերը իբրև մարդաշանի վերայ կոտորել (Գաղտնիք եր. 230—236)։

2) Գաղթականաց թիւն նշանակուած է Գաղտնիք եր.241—243։ Իսկ Արցախի ամբողջ աւերակ քաղաքների, գիւղաքաղաքների և

զետեղել հետևեալ ցիշատակարանը. «Արդ՝ ես Մէլիք-Մաթէոսի թոռն Աղաջանոս և Սարգիս ի թուին Հայոց ՌՄԽԴ (1795) էր, որ Ջէզոք Շահն Պարսից եկն ի քաղաքն Թիֆլիս, սուրբ Խաչի պահոց երեքշաբթի օրն առաւ, աւերեց և ցիրուցան արար զամենայն, կոտորեաց աւելի քան ԺԲՌ (12,000) մարդ զայր և կին ամեն կերի (գերի) արարին և բազում նրշխարս որբոց և զսպաս եկեղեցեաց աւար առին, դարձան յետս նոյն ամի։ Երկրորդ՝ թուին ՌՄԽԵ (1796) մեծի պահոց միջոցն Թիֆլիզու Էրակլայ արքայն Վրաց եկն ի վերայ Կանձակու՝ հանդերձ Շամշադինու զօրօք և Շուշու Իբրահիմ խանն հանդերձ Լազկիուն... ոչ կարացին յաղթել նմա (Ջաւատ-խանին).. եկն ի սար գիւղօրայս Սուլթան Շամշադին զօրօք իւրովք և սուտ երդմամբ հանեալ զմեզ կերի վարեցին և սրախողխող արարին... յետոյ զօրքն Վրաց հանդերձ Լազկիուն եկն և զմնացեալսն կերի արարին և Բանանց գիւղս ամեն այրեցին հրով։ ՌՄԽԶ թվին սով և մահն եկն ի վերայ մեր... վասն որոյ ուրացեալ այր զկին իւր և կին զայր իւր, հայր ի յորդոյ և որդի ի հօրէ, մայր ի դստերէ և դուստր ի մօրէ իւրմէ բաժանեալ... կերակուր մեր էր կաղինն և կաղնի քլէպն (կեղեն)... իսկ ի թվին ՌՄԽԷ եկն ի վերայ մեր ժանտամահն, առաջ Ըռուսի մէջն անկաւ, շատ կոտորեց. յետոյ Թուրք ազգի մէջն անկաւ... յետոյ սար կեղօրայք և Բանանց կիւղս՝ անողորմ կոտորեց. շատ մարդ առանց կին մնաց և շատ կին առանց այր... բազում տունք աւեր մնացին...» (Արցախ եր. 282—284)։

Մէլիք-Մէժլում Բ.-ին յաջորդում է իւր որդի Մէլիք-Աղամ Բ. որ Մէլիք-Աբով Գ.-ի, և Մէլիք-Ջիւմշիւտի հետ գընում է Թիֆլիս։ Գաղթում է Վրաստան և Կիւլստանի հայ

---

դիւզերի մասին (Արցախ եր. 448—453, Շաքուայ և Շամախու. գաւառների տեղափոխուածների մասին (Աղ. երկ. և Դր. եր. 150—284, բացի Բագու, Դարբանդ, Ղուբա և Ռուսաստան գնացածներից։

ժողովուրդն իւր սիրական մելիքի եանից. բայց հացի՝ համար քաշում է անպատմելի նեղութիւն։

1799-ին գնում են Պետերբուրգ Մելիք-Ջումշիւտ և Մելիք-Փրէյդիւն Մելիք-Բէկլարեանց (1) և մատուցանում խնդիր Պաւլ կայսեր, որից խնդրում են ի միջի այլոց. Տալ մելիքներին հայ և Թուրք հպատակաց բնակութեան համար տեղ Մաջարից մինչև Եկատերինոդար տարածուած երկիրը իւր շրջականերով և յղել զօրք դաղթականութիւնը փոխադրելու համար։ Նաև հրամայել Վրաց (Հերակլ) թագաւորին, որ իւր իշխանութեան տակ եղած Ղազախ դատարկ երկիրը մինչև Լօռի տայ իրանց մելիքներին բնակելու համար։ Այն տարածութիւնն արդէն վաղուց էլ եղած է հայաբնակ, բայց այժմ մնացել են աւերակ և անմարդաբնակ գիւղերն, որոց բնակիչներն ցրուած են։

Կայսրն կատարում է միայն խնդիրների վերջին մասը.— հրովարտակով հրամայում է Հերակլին տալ մելիքներին նոյն անդերը 1799-ի յունիս 2-ին, և թողուլ որ հայ մելիքներն իւրեանց պապենական իրաւունքներով կառավարեն իւրեանց ժողովուրդը։ Մելիք-Ջումշիւտին նշանակում է առճիկ արքունուստ տարեկան 1400 րուբլի և սորա որդի Պօղոս բէկին՝ 600 րուբլի, իսկ Մելիք-Փրէյդիւնին՝ 1000 րուբլի, շնորհում է և երկու մելիքներիս շքանշաններ։

Վրաց Գէօրգի ԺԲ թագաւորն, կայսեր հրովարտակի հիման վերայ՝ տալիս է մելիքներին հողեր, որք, ինչպէս երևում 1802-ին մայիսի 8-ին կազմած Վրաստանը գաւառների բաժանելու վաւերաթղթերից, հետևեալներն են. Մելիք-Փրէյդիւնին տալիս է Ուզունլար, իսկ Մելիք-Աբովին՝ Բոլնիս։ Հանճի Կալէի (Աղջա-Ղալա) մօտ բնակած նոր գաղթականներն պատկանում էին Մելիք-Ջումշիւտին և Մելիք-Փրէյդիւնին։

1801-ին սեպտ. 12-ին Վրաստանը Ռուսաստանին միացնող կանոններում նշանակուած է. «Ղարաբաղից գաղթած

---

1) Մելիք-Բէկլար Բ-ի որդին էր Մելիք-Փրէյդիւնն։

հայերն, որք կառավարում են առանձին արտօնութիւննե-րով. մնում են իւրեանց մելիքների իշխանութեան ներքոյ։ Կայսերական այս արտօնութեամբ մելիքներն կառավարում էին ազատ իւրեանց հայ գաղթական ժողովուրդը։

Մելիք-Աբով Գ. Վրաստանում վաստակում է մեծ անուն և քաջայաղթ մակդիր. վասն որոյ բացի իւր սովորական եկամուտներից Գէորգի թագաւորից ստանում է տարեկան 15,000 րուբլի Քեարվանբաշիութեան պաշտօն վարելու համար, որ հաստատուած էր նոյն թագաւորից։

Կիւլստանի ժողովրդեան ետևից գնում են նաև Ջրաբերդից և Վարանդայից ևս շատ հայեր. այս պատճառաւ գնում է և Ջալալեան Սարգիս կաթուղիկոսն, որ անհովիւ չմնային իւր հօգևոր հօտն և անմխիթար մելիքներն։ Գէորգի թագաւորն առանձին հրովարտակով ս. Էջմիածին Ղուկաս կաթուղիկոսին է յղում Սարգիս կաթուղիկոսը գաղթական հայերի հանրադրութեամբ, որ Հաղբատ վանքում նստի և հովուէ իւր սեփական հօտը։ Ղուկաս կաթուղիկոսն յարգելով թագաւորի և գաղթականաց խնդիրը Հաղբատի վանահայր է նշանակում Սարգիս կաթուղիկոսը մի փառաւոր կոնդակաւ 1799-ին օգոստոս ամսում (Դիւ. Հայ. Դ. գիրք էջ 676—679)։

1799-ին դեկ. 27-ին վախճանում է Հայոց Տէր Ղուկաս կաթուղիկոսն. ընտրւում է Ռուսաստանի առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանցն, որ և հաստատուելով 1800-ի յուլիս ամսում. բայց 1801-ին մարտի 19-ին վախճանում է Թիփլիսում (Կով. Հայք մասն Ա. եր. 1—16)։

1802-ին սեպ. ամսին նշանակուում է կառավարչապետ վրացի իշխան Ցիցիանովն և Լեկզիները պատժելուց վերջն 1803-ին արշաւում է Գանձակի վերայ ռուս, վրացի և հայ զօրքով (1)

1) Մելիք-Աբով այն միջոցներում ունէր 1000 զինուոր, նոյնչափ ունէին և միւս մելիքներն Արցախն գաղթողներից դատարկուելուց յետոյ անգամ։

և արիւնահեղ պատերազմաւ գրաւում է Գանձակը, որի ժամանակ սպանւում է Ջաւատ-խանն (1)։

Քանի որ կենդանի է լինում Գէորգի ԺԲ. Թագաւորն, միշտ գնահատւում է Մէլիք-Աբով Գ-ի անձնուիրութեամբ լի ծառայութիւններն և խրախուսւում նորա քաջագործութիւններն, բայց Թագաւորիս մահից յետոյ վրացի և ռուս կառավարիչներն հետզհետէ սեղմում են Մէլիքների իրաւանց սահմանները և վշտացնում քաջ հայերը։

Մէլիք-Աբով Գ-ի որդի Ռուստամ կամ Ռոստամ-բէկն բռնում է Ցիցիանովի Երևանի Պարսից դէմ մղուած պատերազմում և նահատակւում Պարսկաստանում (մանրամասնութիւնը տես Գաղտնիք եր. 260—264 և 271—272) (2)։

1805-ին մայիս ամսում Ռուսներն նուաճում են Շուշու և Շաքուայ ճրռ խանութիւնները հարազատ մելիքների հայ զօրաց օժանդակութեամբ։ Գլխաւորապէս պատճառ են լինում այս նուաճումներն, որ նորոգւում են Ռուս-Պարսկական պատերազմն։

1806-ին վախճանւում է խոտորաշէնցի խոտոր Իսրայէլն։

---

1) «ՌՄԾԲ (1803) Ռուսն եկաւ Կանջու վերայ, մէկ ամիս նստաւ, մէկ սհաթումն առաւ, սհաթուկէս ԳՌ (3000) մարդ կոտորեց» (Արցախ եր. 284)։

2) «Այս երկամսեայ (պատերազմի) ժամանակում Թիփլիսից Երևան բերել տուին Մէլիք-Աբովի որդի հայազգի Ռուստամ բէկի ձեռնով պաշար զօրաց համար գնդակ և վառօդ թնդանօթներին համար. բայց Ռուստամ բէկն երրորդ անգամ 33 մարդով գնացած ժամանակ, որոց հետ փութացաւ և կորովի Ղարա-Մայիօրն (Մօնդրէ զօրն) 70 զինուորներով հասնել նոցա ետևից օգնելու իւրեանց Ղարաքիլիսայում եղած 500 զինուորներին, որոց վերայ յարձակուել էր Փիրղուլի խանն 8000 աւ Վրաց Հերակլ Թագաւորի Աղէքսանդրի հետ... Սպանւում է մայիօրն (որի գերեզմանն կայ Համզա-Ջիմանում) և զօրքը և կենդանի բռնում են Ռուստամ-բէկը և տանում Թաւրիզ» (Դիւ. Հայ. Ա. Գիրք էՀ. 183 և Նիւթ. Ազգ. Պատ. եր. 189—200)։

9

Վրաստանի և Բօլնիսի ու Հաղբատի կողմերն գաղթած ժողովրդեան մի մասն դառնում է դէպի իւր նախկին հայրենիքն-Արցախի գաւառներն, որոց հետ դառնում է և Սարգիս կաթուղիկոսն և հովուում իւր հօտը։

## ԻԷ. ԳԼ.

*Ցիցիանովի գլխատումն.—Իբրահիմ-խանից հրաւիրւում է ծածուկ Աբաս Միրզան Շուշի.—Հայ և Ռուս զօրաց պատերազմն Պարսից դէմ.—Նենգութիւն և սպանումն Իբրահիմի.—Վհատութիւն Աբաս-Միրզայի և Հայոց իշխաններն.—Կառավարչապետ Կոմս Գուդովիչ.—Մելիք-Աբով Գ. Նամակն.—Թունաւորումն Մելիք-Աբովիս.—Մանաս-բէկն իւր ժողովրդով Կիւլստանում.—Նամակ Մելիք-Ջիւմշիւտի, որ փոխադրւում է Վարանդայ։*

Փոփոխւում են հանգամանքներն և երևան է գալիս քաղաքական մեծ փոփոխութիւն։ 1806-ին Բագուի Հիւսէին-Ղուլի-խանն պաշտօնապէս յայտնում է Շահին, որ փետ. 8-ին գլխատուեցաւ Ցիցիանովն Բագուի բերդի հիւսիսային դրան առաջ։ Շուշու Իբրահիմն էլ յայտնում է Աբաս-Միրզային, որ ինքն ակամայից հնազանդութիւն խոստացած է Ռուսաց, թէ Շուշում կայ շատ սակաւ ռուս զինուոր միայն 500 և թէ ինքն ամէն կերպ կաշխատէ Շուշին յանձնել Թագաժառանգին. զի այժմ խիստ յարմար ժամանակ է մի լաւ խաղ խաղալու Հայոց և Ռուսաց գլխին, ևն։

Աբաս-Միրզայի համար, քաղաքական կէտից նայելով, ամենամեծ նշանակութիւն ունէր գրաւել Շուշին. քանզի նա համարում էր Շուշին իբրև Անդրկովկասի դրան բանալին։ Վասն որոյ իսկոյն արշաւում է 20,000 զօրքով դէպի Արցախ, փութով գրաւում Թառնագիւտի և Ասկէարանի բերդակները և խզում Շուշու հաղորդակցութիւնը Գանձակի և Թիֆլիսի հետ։

Մելիք-Ջիւմշիւտն կանխաւ իմացնում է Իբրահիմի այդ

ձեռնարկութիւնը և Պարսից արշաւանքը Նեսվեղաւին, որ յղում է Թիփլիսից Շուշի օժանդակ ռուս զօրք պօլկովնիկ Գարեագինի գնդապետութեամբ: Գարեագինս դիմում է Մելիք-Ջիւմշիւտին, որ դիմաւորէ իրան հայ զօրքով և օգնէ հաղորդակցութիւնն խզուած տեղերում: Շուշուց աճապարում է Մելիք-Ջիւմշիւտն ընտիր հայ զօրքով, Կուսապատից էլ աճապարում է Մելիք-Վանի իւր զօրքով, միանում են ռուս զօրքին, գրաւում Թառնագիւտի (Տիգրանակերտի-Շահ-Բուլաղի-) բերդակը, բայց Ասկերանի մօտերքում պատահելով Պարսից բանակին՝ սկսում են մղել պատերազմ: Սարսափելի և անհաւասար կռուի ժամանակ սպանուում են 500 պարսիկ զինուոր և վիրաւորուում 200 մարդ (1): Չնայելով որ վիրաւորուում է Գարեագինն, այսու ամենայնիւ հայերն տղամարդօրէն կռուելով պաշտպանում են այդ մի բուռն ռուս զօրքը, թւով 400 զինուոր և կռուելով մտնում Շուշի, որ պաշարուում է Աբաս-Միրզայի բանակով, քաղաքն ենթարկուում է անխնայ ռմբակոծութեան:

Ոգևորուում է Շուշու ռուս զօրաց հրամանատար Լիսանեւիչն, «որի վերայ դրոշմած է Դեալի-մայեօր մականունը Պել-Ճամալն» (Գալսնիք եր. 277) տեսնելով Հայոց անսահման աջակցութիւնը ռուս զօրաց, քանզի Հայերն գիշեր ցերեկ պահում էին ամրոցի վտանգաւոր կիրճերը և բուրգերը, մանաւանդ քաջերն, և հսկում էին խանի ամեն մի քայլափոխի վերայ և նորա ծառաների մէն մի շարժմանց վերայ: Խանն, տեսնելով որ անհնար է գրաւել Շուշին արտաքուստ, աշխատում է կատարել իւր Աբաս-Միրզային տուած խոստումը—Շուշին յանձնել թագաժառանգին.—վասն որոյ կարգադրում է՝ գիշերով ներքուստ բանալ ամրոցի հիւսիսային-արևելեան կողմի մեծ դարպասը և ինքն իւրայիններով ելնում է ամրոցից և նրա արտաքին ստորոտի սարահարթում զարկում տաղավար և մտնում աւելի ազատ յարաբերութեան մէջ Աբաս-Միրզայի հետ: Հարկ

1) Դիւ. Հայ. Պատ. Ե. Գիրք էջ 490:

է խոստովանել, որ մեծ դեր է կատարում այդ միջոցին մասնաւորապէս Շէյթան-Թիւնին։ Տաղավարի մէջ սրախողխող սպանում է իւրայիններով Իբրահիմ-ճրա խանն հայ քաջերից իբրև դաւաճան Ռուսաց տէրութեան (1)։ Աբաս-Միրզան թէպէտ քանիցս բանբեր է յղում Լիսանևչին, որ 'ի զուր չաշխատէ սակաւ մարդով պաշտպանել Շուշին Պարսից ահագին ուժի դէմ, սակայն 'ի զուր է երթևեկում բանբերըն։ Վերջապէս յուսահատ հեռանում է թագաժառանգն. բայց իւր զօրքն միանալով տեղական պարսիկ ցեղերի հետ՝ գործում են մեծամեծ վնասներ, մանաւանդ Վարանդայ և Դիզակ գաւառաբնակ հայոց։

Ցիցիանովի սպանուելուց յետոյ կառավարչապետ է նշանակւում Անդրկովկասի համար կոմս Գուդովիչն։

Այստեղ բարւոք համարուեցաւ զետեղել Մէլիք-Աբով Գ.-ի նամակն, որ է. «Սիրելի Բէկնազարեանց, ձեր նամակը վաղուց եմ ստացել, բայց ուշ եմ պատասխանում սրտիս ցաւոց պատճառաւ։ Եթէ իմ ծերութեան միակ նեցուկն, Աբովեան փառքն և պարծանքն, Հայաստանի քաջ նահատակն, Ռուստամ բէկն զոհ եղաւ հայրենեաց ազատութեան համար, եթէ դուք չկարողացաք անգութ Աբաս Միրզայի կատաղութիւնից կենդանի ազատել իմ որդու կեանքը, եթէ ես չկարողացայ մի բուռ հող ձգել դորա երեսին, սակայն գէթ մխիթարուեցայ որ դուք իմ որդու յուղարկաւորութիւնը և թաղումը փառաւոր կատարած և իմ կողմից օրհնած հողը ձգած էք Ռուստամիս երեսին։

Հայոց արած արիւնալի ծառայութիւններն Ռուսաց պալատն չեն հասնում, իսկ Վրաց իշխանազների չարաձններն այդ պալատում փայլում են իբրև արած, քանզի կրօնական խտրութիւնն մեծ դեր է խաղում հակառակ ճշմարտութեան, և ռուս և վրացի պաշտօնակալաց սև նախանձն չթողուր մեր ծառա-

---

1) Տես Դիւ. Հայ. Պատ. Ե. Գիրք էջ 489 և Գաղտնիք եր. 265—278։

չու թիւններն Կովկասի (սարի) այն կողմն անցնել. իսկ մեր գրած նամակներն անյայտանում են մեզ անյայտ պատճառներով և Մինաս աղա Լազարեանցի գանգատագրերն անկորուստ մեր ձեռքն են հասնում։ Անցեալ տարի Մինաս աղան Մելիք-Ջիւմշիւտի տուած տեղեկութիւններով չբաւականանալով՝ պահանջած էր բոլոր հարազատ մելիքների ստորագրութեամբ գրուած մի տեղեկագիր, զոր ստորագրելով ես, Մելիք-Ջիւմշիւտն, Մելիք-Աղամն և Մելիք-Ֆրէյտիւն, ղրկեցինք Պետերբուրգ մի յատուկ թղթատարի, Կաքև Զաքու ձեռնով։

Վրացի իշխանազուններն բռնաբարում են մեր սեփական իրաւունքները, կալուածները, հարստութիւնը և կողոպտում են մեր անգին պատիւը. իսկ Ռուսներն չեն ճանաչում մեր այդ արիւնով գնած իրաւունքները և չեն թողնում որ Բոլնիսը ձախենք Մելիք-Ջիւմշիւտի նման և դառնանք մեր թափուր հայրենիքն։

Լազարեանցն ինձանից ևս տեղեկութիւն պահանջեց թէ՝ իմ Ռուսաց արած ծառայութեանց մասին և թէ՝ Բոլնիսի մասին։ Տեղեկագիրը ղրկեցի, բայց ոչ յատուկ թղթատարով։ Բայց որովհետև կասկածում եմ որ այս ևս տեղ չհասնի և վաղահասման իմ կենաց թելը կը կտրէ յանկարծ, վասն որոյ հարկ համարեցի նոյնի օրինակը ձեզ ղրկել «Գաղտնիք Ղարաբաղի» մէջ դետեղելու ի զգուշութիւն ապագայ հայ սերնդոց, քանզի այժմ մեր կողմերում պատմագիրներ չկան։ Ահաւասիկ տեղեկագիրն։

«Ցարգելի Մինաս աղա Լազարեանց. Ռուսաց Գահին իմ մատուցած ծառայութիւնները և Զուբովի ժամանակ իմ Շուշում ցոյց տուած քաջագործութիւններն յայտնի են ամենեցուն. գուցէ ձեզ ևս անյայտ չէ, ինչպէ՛ս հալածեցինք և ցրուեցինք մեր երկրից Աղա-Մամատ-խանի ահարկու զօրաբանակը։ Վասն որոյ Հերակլ թագաւորն փափագելով զմեզ իրան դաշնակից օժանդակ ունենալ՝ երդմամբ և ձեռաթղթով վաւերա-

ցուց մեզ (1) բնակութեան տեղի Բօլնիսը, Լօռին և Բօրչալուն և իւր պալատում ի շարս իշխանազների նախապատիւ աթոռները։ Մելիքներս հաւատալով քրիստոնեայ թագաւորի այն անսուտ երդման և վաւերաթղթոյն, որովք տէր էինք լինում այդ գաւառներին և աթոռներին՝ Ղարաբաղից ապահով տեղափոխուեցանք Վրաստան։ Մեր այս վիճակն տևեց Հերակլի օրից մինչև Գէորգի թագաւորութեան վախճանն։

Իսկ այժմ մենք բոլորովին զրկուած ենք թէ՛ կալուածներից և թէ՛, որ ամենամեծն է, պատուից. քանզի այժմ ամեն ոք նեղում է զմեզ և ճգնում է յափշտակել մեզանից Բօլնիսը և բռնի պահանջել մեր հնձոց տասանորդը, որ ցարդ եղած չէ։ Այս ապերախտութիւններն որքան ծանր են մեզ համար՝ մինչև անգամ ստիպուած ենք այլ ևս չբնակիլ այստեղ։

Բօլնիսը, իմ սեփականութիւնը համարելով, երբ ազատեցի բոլոր թշնամիներից և վայրենի լեռնականաց յարձակումներից և երբ ծաղկեցուցի այս գաւառը բնակիչներով և շինուածներով, այնուհետև երևան եկան շատ տէրեր, յորոց մին տէր է հանդիսանում ջրանցքներին և ջրաղացներին, երկրորդն ճգնում է սեփականացնել լեռները, երրորդն՝ հողը, որք մեր սեփականութիւններն են, իսկ չորրորդն՝ լրբաբար բռնանալ իմ միակ կեանքը, որ այնքան օգտակար եղած է և Վրաստանին և Ռուսաստանին։ Ուրեմն եթէ Բօլնիսի քարերն անգամ ոսկի դառնալու լինին՝ այսու ամենայնիւ ես կը հեռանամ այստեղից։ Ո՛չ փող մնաց մեր քսակներում, ո՛չ համբերութիւն մեզանում և ոչ խղճմտանք վրացի իշխանազներում և ռուս պաշտօնակալներում։ Մեր վերջին օրերն անցնում ենք դատարաններում առանց օգտի, և ընդունայն դեգերում ենք ձեռք բերել բռնակալ պաշտօնակալների ձեռօք արդարութիւնը։

---

1) Ընթերցողք արդէն գիտեն որ Մելիք-Աբով բնակում էր Բօլնիսում, Մելիք-Ջիւմշուտ՝ Լօռիում, իսկ Մելիք-Ֆրէյդունն՝ Բօրչալուում։

Ահա այսչափ անիրաւութիւնից բռնաբարուած՝ ստիպուեցայ արդարութեան ձայնը լսելի անելու համար կայսեր դիմել, որին և մատուցի մի աղերսագիր, որպէս զի թոյլտուութիւն տայ և մեզ՝ մեր սեփական ժողովրդով հանդերձ փոխադրուիլ ի Ղարաբաղ մեր հայրենիքն, ուրանօր մեր կենաց մնացորդը անցնել մեր ժողովրդով։ Ինչ որ թղթով խոստացել եմ կայսեր յօգուտ արքունի գանձարանին՝ նոյնը խոստանում եմ կատարել և երդմամբ։

Թէ որքա՜ն մեծ եղած են իմ ծառայութիւններն կայսեր համար՝ տակաւին այդ չգիտէ բարձրագոյն կառավարութիւնն. քանզի զմեզ խաբող և մեր թափած արիւնով Անդրկովկասը գրաւող պաշտօնեաներն առ նախանձու ոչինչ չեն հաղորդած այդ մասին։ Ես կայսեր համար մինչև անգամ զոհ բերի իմ ծերութեան նեցուկը, իմ միակ զաւակը, Աբովեան տոհմի փառք ու պարծանք մէլիք ժառանգը, իմ անդրանիկ որդի Ռուստամբէկը։ Ահա ամենամեծ ապացոյց, որի նմանը ոչ ոք չէ կարող գործել, ինչ որ ես գործեցի և դեռ գործելու եմ։

Այլ ևս ի՞նչ է մնում ինձ անել. ես ունիմ մի կաթիլ արիւն. պատրաստ եմ զայն ևս թափել...»։

Ես միայն ունիմ մի ամենամեծ յանցանք, այս է, ես հայ եմ, հայ ծնած, հայ մկրտուած, հայ մեծացած և հայ եկեղեցու ծոցում ապրած եմ։ Ահա այս է պատճառն որ բոլոր գլխաւորներն, հրամանատարներն, զօրապետներն և դատաւորներն չարանում են իմ վերայ և կրօնական խտրութեամբ նախանձում են իմ կատարած քաջագործութեանց վերայ. զորս անողն հայ էր։ Նոքա չեն կամենում իմ և միւս մէլիքների ծառայութիւնները տեղեկագրել, ուր հարկն է. վասն զի նոցա միակ նպատակն է որ ես յուսահատուիմ իւրեանց գործած այդ վատութիւններով և սրտնեղութիւնից մեռնեմ, որպէս զի իմ արած քաջագործութիւններն անյայտ մնան։ Բայց այդ քաջագործութիւնները պատմութեան էջերից ո՛չ կրօնական խտրութիւններն կարող են քերել, ո՛չ չար նախանձոտութիւններն և ոչ բռնաբարութիւններն...»։

Ինքնագովութիւն չհամարուի, ես էի, որ հաւատարիմ մնացի Ռուսաց կառավարութեան ցվերջին շունչս։ Ես էի, որ Աղա-Մամատ-Շահի սարսափելի զօրքը ապարդիւն յետ դարձրի Շուշին գրաւելուց։ Ես էի, որ Զուբովի ժամանակ հայ քաջերով հալածեցի Ղարաբաղից Պարսից ահարկու բանակը, ազատեցի մի բուռը ռուս զօրքը և գրաւելով Ռուսաց յանձնեցի Գանձակը, Շամախին և Շուշին։ Ես էի, որ իմ զօրքով բազմիցս յաղթեցի Կովկասարնակ ցեղերին և ամօթահար յետ դարձրի, որք յաճախակի յարձակելով ճգնում էին գրաւել Կախեթը, որ Վրաստանի դուռն է։ Վերջապէս ես էի, որ Տփխիսի և իւր բոլոր գաւառների ժողովրդոց կեանքը և ինչքը ապահովեցի հալածելով շարունակ յարձակուող Ախլցխայի լեռնականները և Վրաստանի սահմանակից պարսիկ և Թափառական ցեղերը։ Իմ սիրելի որդի Առստամ բէկն էր, որ այնպիսի մի նեղ ճգնաժամում տղամարդօրէն քանիցս ռազմամթերք փոխադրեց Տփխիսից Երևան յօժանդակութիւն Ռուսաց, որով և զոհ եղաւ։

Գուդովիչ գեներալ կոմսից շատ անգամ խնդրած եմ, որ Մէլիք-Ջիւմշիւտի նման ինձ ևս թոյլ տայ Ղարաբաղ փոխադրուիլ, բայց սա չյօժարեցաւ. պատճառաբանելով թէ, եթէ մենք այդ երկիրը թողնելու լինինք, կամայանան Բոլնիսն և Տփխիսի շրջակայ գիւղօրայքն Ախլցխայի, Լէկզի և սահմանակից ցեղերի և վայրենիների յարձակմունքներից։ Աւելի ցաւալին այն է, երբ մենք ասում ենք, Հերակլ Թագաւորն երդմնաթղթով մեզ տուած է Բոլնիսը իւր ամբողջ հողերով, ջրերով և անտառներով. ուրեմն կրկին հաստատեցէք մեր վերայ, քանի որ չէք կամենում, որ մենք բացակայ գտնուինք. կոմսն պատասխանում է. «Ես չեմ կարող ձեզ տալ ուրիշի կալուածները» և ուրիշ այսպիսի խօսքեր։

Անհաւասիկ մեր վիճակն. ոչ կարողանում ենք Մէլիք-Ջիւմշիւտի պէս մեր սեփականութիւնը ծախել և ոչ կարողանում ենք զմեզ և մեր ժողովուրդը Վրաստանից ազատել և հայրենիք դառնալ...։

Ողջ լերուք ի Տէր։ Ի Տփխիս ՌՄԾԶ (1807) նոյ. ԻԳ (23) Վշտալի Մէլիք-Աբով» (Գաղտնիք եր. 260—296)։

Նամակիս թւականաւ և նման նամակ գրած է Մէլիք-Աբով Գ. նաև Մինաս աղա Լազարեանին (1) որի բնագիրն կար լուսահոգի Աղէքսանդր Երիցեանի մօտ։

Վերջապէս Մէլիքս անկարող է լինում դառնալ իւր հայրենիք. այլ թունաւորուում է վրացի ազնուականաց մի խնճոյքում իւր Մանաս-բէկ որդու և իւր գրագիր Իսախանի հետ։ Մահից ազատուում է միայն Մանաս-բէկ, իսկ թոյնիցն վախճանում են և Մէլիք-Աբով և Իսախանն (2)։ Մէլիքի որդիներից անդրանիկն էր Ռուստամ-բէկն, որ նահատակուեցաւ, երկրորդն էր Սայի-բէկն, որ կոյր էր. երրորդն էր Մանաս-բէկն։ Արդէն կենդանի է լինում Մէլիք-Փրէյդունն կամ ըստ այլոց Ֆրիդոնն, որ Մէլիք-Բէգլար Բ.-ի որդին էր։ Մի վիճաբանութեան ժամանակ սպանուում է Մէլիք-Փրէյդունս իւր եղբայր Սամից։ Մանաս-բէկն դիմում է Տորմասովին, որ մէլիք հաստատէ զինքը իւր ժողովրդեան վերայ, որպէս զի տիրէ Բոլնիսին իբրև սեփականութիւն, բայց ստանում է մերժում, պատճառաբանելով. «Թագաւորին են պատկանում և Բոլնիսն և բնակիչներն (3)։ Մանաս-բէկի հետ դառնում է Կիւլստան ժողովրդեան ամենամեծ մասն և բնակում ցարդ իւր հայրենիքում։

Ցիցիանովն խիստ վատ վարուած է Հայոց հետ և սոցա արիւնալի ծառայութիւնները բնաւ զեկուցած չէ կայսեր։ Շատ բան է պարզում Մէլիք-Ջիւմշիւտի հետևեալ նամակն։

«Թուղթ Մէլիք-Ջիւմշիւտի Մէլիք-Շահնազարեան
առ իշխան (Մինաս Լազարեան).

Վեհազնեայ իշխան, Ողորմած Տէր.

Թէպէտ յառաջ քան զայս քանի գրով գրեալ եմ առ վե-

---

1) Որի մէջ խիստ անբաւականութիւն է յայտնում Ցիցիանովի և վրացի ազնուականների արարմանց մասին։

2) Գաղտնիք եր. 297—298։

3) Акт. Ар. Ком. т. 11.

հաղնութիւն ձեր զպատասխանիս գրութեանց ձերոց. իսկ որովհետև ոչ գիտեմ հասանելն այնոցիկ առ ձեզ, վասն որոյ այսու համապատասխանեմ այնց ամենից, զոր դուք գրէք։

Որով նախ տհաճիք թէ զիարդ ոչ յիշի զանուն մեր ի շարս իշխանաց վրաց յատկացելոց ի մէջ պատերազմի. առ այս ասեմ խայթոցիւ, թէ և մեք մելիքունքս Խամսայի առաւել քան զնոքա յատկացաք ի մէջ պատերազմի և առաւելագոյն պարգևաց և շնորհաց ևս էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձն ի սրտի հանգուցեալ քնիազ Ցիցիանովի առ ազգն Հայոց ոչ թոյլատրեցին նմա բացայայտել առ ամենագթած կայսերն զյոգնաւէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք, որպէս ի ժամ առմանն Գանձակու, նոյնպէս և ի յուղևորակս յԵրևանու և Շրուանու, ուր տեսանելով զի միայն ընդ զօրաց իմոց բարւոք կարգադրութեամբ և անակընկալ ծառայող Տէրութեան ամենայն Ռուսաց հարկադրեալ իբրաւանց՝ խոստացաւ խնդրել ի կայսերէն վասն իմ զդրօշակս, զորս ստանալոց էի թարց կարծեաց եթէ ոչ պատահիցէր նմա այնպիսի ապերջանկութիւն։

Զկնի մահուան նորին գտանելով իմ աստ և գիտելով զամենայն չար խոկմունս Պարսից առ ի ամրացուցանել զնորաբստաց (Նոր գրաւած) աշխարհն Ղարաբաղու, ետու գրութեամբ զքանի մի դիտաւորութիւնս իմ Տեառն ղէնէրալ մայիօր Նէսվէտայովին և գնացի ես յամրոցն Շուշուայ և միացայ ընդ զօրացն ռուսաց. պարսիկք լսելով զմահ քնիազ Ցիցիանովին բազմաթիւ զօրօք ընդ յառաջ ընթացութեամբ Աբաս Միրզայ որդւոյն Բաբախանի, արտուրանօք ժամանեցին ի Ղարաբաղ և միացան ընդ համայն տաճկաց անդ բնակելոց, և յառաջադրեցին սրախողխողել զամենայն զօրս ռուսաց և հայոց յամրոցն գտանելոց, առ որ համաձայնէր և տիրապետողն Իբրահիմ խան, որով ընկալաւ պատիժս ըստ արժանւոյն. յայսմ միջոցի ղէնէրալ մայօր Նէսվէտայովն հաւանեալ զդիտաւորութիւնս իմ առաքէ զՏրօյէկցի պօլկն ի Ղարաբաղ յօգնութիւն զօրացն ռուս-

տաց անդ դատանելոյ, որով եկեալ ի Գանձակ առնու ընդ ինքեան զԿարակլին պօլկովնիկ ընդ զօրօք և աճապարեն առ յօգնութիւն մեզ, և գոլով նոցա տակաւին ի ճանապարհի, գրեն առ իս ընդ առաջել նոցա զօրօք իմովք, ըստ որոյ թողեալ իմ զբաւական զօրս ընդ Միացեալ զօրացն ռուսաց առ ի պահպանութիւն ամրոցին, գնացի զօրօք և միացեալ ընդ նոսա և զկնի երից աւուրց ի միասին պատերազմեցաք և յօգնականութեամբ ամենաբարձրելոյն Աստուծոյ կատարելապէս յաղթահարեցաք զթշնամիս մեր և յետս դարձուցաք, այնպիսի իմն արշաւանօք մինչ զի 20 հազար արք հեծելազօրք սարսափելի երկիւղիւ անցին ընդ գետն Երասխ։

Ղէնէրալ մայիօր Նեբալսինն Շէֆն նոյնոյ Տրօյիցկի պօլկի պօլկօվնիկ Կարէգին Շէֆն Եաղրիպօլկի, տեսնելով ի մէջ պատերազմի զօրաց իմոց, և զհաւատարմութիւն իմ (որով հաստուցանէի զպաշարս վասն զօրացն ռուսաց ի ժամ պակասութեան հացի և ցուցանէի զայլ բազմադիմի ծառայութիւնս) յոյժ հաւանեցան, և մանրամասնաբար գրելով զայսոսիկ ամենայն հաւատարմութիւնս և զծառայութիւնս իմ առ նոյն ղէնէրալ մայիօր Նէսվէտայովն՝ խնդրեցին ներկայացուցանել առաջի ամենաողորմած կայսերն մերոյ, սակայն ըստ ապերջանկութեան իմոյ ոչ գիտեմ թէ որո՞յ պատճառաւ ոչ ներկայացոյց, որոյ աղակաւ ի գալն իմ աստ խնդիր մատուցի նորին պայծառափայլութեան գրաֆ Իւան Վասիլէչ Գուտուզովն, որ և ակն ունիմ ի սէր ձեր և ազգին մերոյ (որոյ ցուցանէ խնամս) վարձատրեսցէ ինձ վասն այնց ամենից, զոր արարի, եթէ յօգնութիւն Տեառն ամենակալի և վեհազնութեան ձերոյ ժամանեսցէ ի վերայ իմ։

Երկրորդ՝ գրէք թէ զի՞րդ ոչ կազմէք զդունդ. առ այս պարտիք հաւաստի լինել որ դիւրիւն կարէաք զայս անել թարց օգնականութեան ումեք (եթէ ունիցէի—ունենայի—առաջին փարթամութիւնս և զժողովուրդս, որք ի պատճառս գալստեան Աղա Մամատ խանին, սովու և ժանտախտի ցիր և ցան

եղէն ի Շրուան և ի Վրացտուն, քանզի հայրն իմ և նախնիքն մեր միշտ ունեցեալ են առ ընթեր իւրեանց զայնպիսի գունդս, զորս դուք պահանջէք յինէն. ըստ որում երկիրն Ղարաբաղու տիրապետեալ են ինքեանք և րոլոր հայք և տաճիկ հպատակք են լեալք նոցա։

Ուստի վեհազնութիւն ձեր բարձր, զի ազգքն Հայոց զերծցի համանգամայն ի բռնութենէ բարբարոսաց և համաժողովեսցին ի բնիկ հայրենիս իւրեանց և ունիցին զգունդս և բարւոքապէս ծառայեսցեն... ուրեմն խնդրեմ զի նախ հրամայեսցէ վերադառնալ ի բնիկ հայրենիս իւրեանց ամենայն ցիր և ցան եղեալ ժողովուրդքն մեր ի Շրուանու և ի Վրաստանու։ Երկրորդ ազատ լինել նոցա ամենայն հարկապահանջութեանց երեք ամ ժամանակաւ։ Երրորդ՝ ազգն հայոց մի լիցին ի ներքոյ իշխանութեան տաճկաց, ըստ որում նոքա ոչ կարեն մնալ միշտ ի հաւատարմութեան... այլ ջանան օրըստօրէ նուազեցուցանել զազգն հայոց՝ առ ի դիւրապէս ներգործել զչար դիտաւորութիւնս իւրեանց։ Եւ չորրորդ՝ շնորհեսցէ գումարս, որով կարողասցուք պատրաստել զզէնս վասն կազմելի գնդոյն... ողորմած Տեառնդ իմոյ ամենախոնարհ ծառայ՝

Մէլիք-Ջիմշիտ Մէլիք-Շահնազարեան։

Դեկտ. 2, 1806 թ.
Թիֆլիս.

Նամակիս ստուգութեանն վկայում է Վրաստանի հայոց առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոս. (Դիւ. Հայ. Ե. գիրք էջ 494—497)։

Մէլիք-Ջիւմշիւտս արդէն կարողանում է տեղափոխուել Լօռուց Վարանդայ իւր ժողովրդեան մի մասով, իսկ մնացեալ մասն ցարդ բնակում է Լօռուայ գիւղերում։

—

## ԻԸ. ԳԼ.

*Աբաս-Միրզայի և Տվեցովի պատերազմը.—Լանքարանի գրաւումը.—Գիւլստանի դաշնադրութիւնը.—Մելիք-Ջիւմշիւտի մահը.—Սարգիս կաթուղիկոսի կրկին Գանձասարում.—Անդրկովկասի նեղ դրութիւնը և Հայոց ամենահաւատարիմ ծառայութիւնը Ռուսաց Տէրութեան.—Րտիշչևի ստոյգ վկայութիւնը.—Աղեքսանդր Ա. կայսեր հրովարտակը։*

1810—1811 թւի գարնան Պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան յանկարծ յարձակւում է գործում Ղափանի (Մեծ-Սիւնեաց Բաղաբերդ) վերայ և պաշարում բերդը։ Նոյնից հասնում է Տվէցովն ռուս և հայ զօրքով, ազատում Ղափանը և Բարկիւշատը և Կոտլարևսկու հետ կործանում Երասխաձորի զօրաբերդը և հալածում Պարսից զօրքը։ Այսպիսով Ռուսաց իշխանութեան տակ ընկած Զանգազուրի, Ղափանի, Մեղրու և Բարկիւշատի գաւառները։

1812-ին Աբաս-Միրզան մեծ զօրքով բանակում է Ասլանդուզի մօտ, հասնում է և ռուս-հայկական զօրքն հոկտեմբեր ամսում Կոտլարևսկու զօրավարութեամբ, սարսափելի կերպով բաղխում են միմեանց բանակները, սպանւում են շահական բանակից 3459 զինուոր և վիրաւորւում են 290։ Սպանուածներից 1200-ն լինում են Ղարաբաղի թափառական պարսիկներից. յաղթւում է պարսիկ զօրքն և հեռանում. 1813-ին յունուար ամսում Կոտլարևսկին գրաւում է Լանքարանը։

1813-ին կայանում է Գիւլստանի ռուս-պարսկական դաշնադրութիւնը, որով Պարսկաստանն Ռուսիայի սեփականութիւն է ճանաչում Թալիշը, Բագուն, Ղուբան, Դարբանդը, Շամախին, Շաքին, Գանձակը, Մեծ և Փոքր-Սիւնիքը-Արցախը Ուտի նահանգով միասին (Գաղտնիք երես 304—306)։

1812—1813 վախճանում է Մելիք-Ջիւմշիւտ (1) որին յաջորդում է հանգուցեալի փոքր եղբայր Ջհանբաշխ։

Այս թուականներում փոխադրւում են Գանձասար Սարգիս Բ. կաթուղիկոսն և Բաղդասար վարդապետն (յետոյ մետրապոլիտ) և սկսում են շէնցնել և պայծառացնել Արցախի վանքերը միաբաններով և վանահայրերով և նորոգութիւններով և ուսումնարաններով։

1811 թուականն էր. Ռուսաց տէրութեան մեծ վտանգ էր սպառնում Նապոլէոնի ահարկու արշաւանքն։ Ռուսաստանն ժամանակ չունէր զբաղուելու Կովկասի գործերով. ժամանակաւոր կառավարիչ նշանակուած էր Մարկիզ-Պաուլիչն, որ բարի անձն էր, բայց թոյլ և անհմուտ էր գործերին. Ռուսաստանն էլ ժամանակ չունէր ուշադրութիւն դարձնելու երկրիս տխուր վիճակին վրայ։ Վրաստանում սակաւաթիւ էին ռուս զօրականք և այն ցրուած աստ և անդ. ժողովուրդն ամէն կերպ կեղեքւում էր ռուսական ստորին պաշտօնեաներից. օրէցօր շատանում էին հասարակութեան տրտունջներն, սակայն չկար ուշադրութիւն դարձնող։ Իրերի այդ դրութիւնից օգուտ քաղեց վրաց այն կուսակցութիւնն, որ աշխատում էր վերականգնել Վրաստանի կորուսեալ ազատութիւնը և արքունական թագը։ Հետևանքն լինում է այն որ 1812 թւի փետրվարի սկզբին Սղնախի, Թելաւի և Անանուրի (Դուշէթի) գաւառներում ոտքի է կանգնում բոլոր ազգաբնակութիւնն, ջարդում 16 սպայ և մի քանի հարիւր ռուս զինուոր։ Ծփում է բոլոր Վրաստանն և ռուսական իշխանութիւնն մեծ վտանգի մէջ։ Ահաւասիկ այդ նեղ ժամանակներում յօգնութիւն է հասնում տէրութեան Վրաստանի և շրջաբնակ հայ տարրն և բարձրագլուխ փայլում է Հայոց առ Ռուսաց Տէրութիւնն ունեցած հաւատարմութիւնն։ Գալիս է նոր կառավարչապետ

---

1) Ըստ ասութեան Գաղտնիքի (եր. 312) թունաւորուելով Մէյտի-խանից։

Րտիշչեւն, խաղացնում Վրաստանը, անձամբ մօտուստ ծանօթանում եղելութեանց և պարտք համարում զեկուցանել ճըշմարտութիւնը կայսեր 1813-ին և մայիսի 13-ին։

«Բայց ունիմ ամենահպատակօրէն զեկուցանել, թէ Հայոց ազգն, որ Վրաստանի ազգաբնակութեան մի նշանաւոր մասն է կազմում, ոգևորուած ամենահաւատարմական հպատակութեան գոհութեամբ այն բարձր հովանաւորութեան... որ Ձերդ Կ. Մեծութիւնից... մնում է օրինակելի ջերմեռանդութեամբ և անվրդով հաւատարմութեամբ առ կայսրութիւնն Ռուսաց։ Այն ժամանակից ի վեր՝ երբ հաստատուել է երկրիս մէջ ռուսական կառավարութիւնն, Հայոց համայնքն միշտ օրինակելի կերպիւ հաւատարիմ է գտնուել դէպի նրան, և այն՝ բազմիցս Վրաստանում ծագած չարամիտ կուսակցութեանց շարժմանց միջոցին, երբ սոքա կամ դրդուած են եղել Վրաց արքունական տան որդւոց խոստումներից և կամ այստեղի ազնուականութեան անոտի յոյսերով վերականգնեցնել իրանց ժողովրդի մխիթարիչ իրաւունքները և կամ, վերջապէս... կառավարութիւնն հայերի մէջ միշտ գտել է հաւատարմութիւն, որ ոչինչ հրապուրանքներով խախտուել կարող չէր, և տեսել է շարունակ ջերմեռանդ ծառայութիւն յօգուտ ծառայութեան Ձերդ Մեծութեան։ Նամանաւանդ անցեալ ապստամբութեան ժամանակ, որ տարածուեց ամբողջ Կախէթում, իսկ Վրաստանում տատանեց գրեթէ ամենքի մտքերը. միմիայն հայք էին, որ ոչ միայն ամենևին մասնակից չեղան այդ շարժման, այլ զոհելով իրանց կայքը և նոյն իսկ կեանքը միաբանեցան Ռուսաց զօրքի հետ, զինուորուեցան Կախէթում ապստամբաց դէմ, և միանալով ռուսական գունդերի հետ ապստամբների դէմ եղած գործողութեանց մէջ ցոյց տուին հիանալի օրինակներ քաջութեան... այստեղի կառավարութիւնն... շատ է պարտական Հայոց ջերմեռանդութեան, որովհետև շատ անգամ զոհում էին իրանց կեանքը... Չեմ կարող նմանապէս չզեկուցանել Ձերդ Կ. Մեծութեան, որ Տիֆլիզի պատուաւոր քաղաքացիք, որոնք

հայք են, ապստամբութեան ամենախառնակ ժամանակ, երբ անցեալ տարւայ Վրաստանում եղած հացի պակասութեան պատճառաւ՝ դադարած էին Թիֆլիզ հաց բերել և այստեղ գտնուող մեր զօրքերին հացի պակասութիւն էր սպառնում.— Նոքա (Թիֆլիզի հայք) այն ժամանակների հանգամանքների վերաբերմամբ շատ մեծ ծառայութիւն ցոյց տուին, յանձն առնելով հասցնել Թիֆլիզի մթերանոցին մօտ 800 չէթվերթ (5600 փութ) հաց, որ և կատարեցին պետական գանձարանի համար շատ ծեռնտու պայմաններով. և այսպէս . ահա մի առ ժամանակ ազատ պահեցին Թիֆլիզում գտնուող զօրքերը հացի պակասութիւնից...։ Ինձ ուղղեցոյց ունենալով սրբազան ճշմարտութիւնը, ես հաստատուն պարտք անձինս եմ համարում հասցնել Ձեր Բարձրագոյն լսելեաց հայերի այդպիսի պատուական ջերմեռանդութիւնը, հաւատարմութիւնը և անձնուիրութիւնը առ Ձեր Մեծութիւն... ես դիմում եմ Ձերդ Կ. Մեծութեան սրտի յատուկ ողորմածութեան խնդրելով բախտաւորացնել բոլոր Հայոց»։

Ռուսաց Աղեքսանդր Ա. ինքնակալ Կայսեր հրովարտակն, «որի բնագիրը, ինքնակալի ստորագրութեամբ, այժմ պահվում է Թիֆլիզի Վանաց եկեղեցւոյ (Հայոց) Առաջնորդարանում իբրև կոթող հայոց մատուցած ծառայութեանը Ռուսիոյ պետութեան»։

## ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ

## Մ Ե Ն Ք  Ա Ղ Է Ք Ս Ա Ն Դ Ր  Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կայսր եւ Ինքնակալ համայն Ռուսաց եւայլն, եւայլն, եւայլն։

Մեր սիրեցեալ և հաւատարիմ հպատակ համօրէն Հայոց ազգին, որ բնակվում է Վրաստանում և նորա բաղկացնող ամենայն գաւառկարգի անձանց—Մերս Կայսերական ողորմութիւն։

Ճշմարիտ բաւականութեամբ տեսանք Մենք՝ Վրաստանի մեր գլխաւոր հրամանատարի զեկուցումից մեր սրտի համար

ախորժելի նոր վկայութիւն այն հաւատարիմ հպատակութեան երախտագիտական զգացմանց որոնցով Վրաստանաբնակ Հայոց բոլոր հասարակութիւնները միշտ ոգևորուած են եղել առ բարձր հովանաւորութիւն և առ մեր հայրական հոգատարութիւնը՝ նոցա և այն տեղի բոլոր ժողովրդի բարեկաւութեան համար։ Նոքա ապացուցեցին զգացումները բազմատեսակ փորձերով՝ հաստատուն հաւատարմութեան յամենայն դէպս։ Նոքա հանդիսացան օրինակելի հաստատամտութեամբ և անձնուիրութեամբ այն միջոցին, երբ որ թեթևամտութիւնը և չարակամութիւնը իզուր ջանք էին գործ դնում սասանեցնել Վրաստանում մեր հաստատուած խաղաղութիւնը և խռովայոյզ հանգամանքների մէջ մնացին հաստատ և անսասան դէպի Մեզ և դէպի Մեր Գահը ամեցած իրանց ջերմեռանդութեան մէջ, զոհելով իրանց ստացուածքը և ամենայն միջոցները, նաև իսկ իրանց կեանքը յօգուտ Մերս ծառայութեան և ի բարօրութիւն հասարակաց։

Վրաստանաբնակ ամբողջ Հայոց ազգի և նորա բաղկացնող բոլոր դասակարգերի այսպիսի ջերմեռանդութիւնը, նոցա ծառայութիւնը և մեծագործութիւնը՝ Մեզ վերայ ախորժելի պարտաւորութիւն են դնում վկայել առաջի ընդհանուր տեղերաց զՄերս առ նոցա արդարացի երախտագիտութիւնը և բարեհաճութիւնը։ Թող պահուի այս վկայութիւնը ի պատիւ և ի փառս նոցա ապագայ սերունդներին ի յիշատակ։ Մնամք դէպի նոցա ամենեցունց Մերս Կայսերական ողորմութեամբ բարեհաճ։ Տուաւ Մեր գլխաւոր բանակում, Տեպլից քաղաքում, որ ի Բոհեմիա, ի 15 սեպտեմբերի յամի Փրկչական 1813, իսկ Մերս թագաւորութեան ի 13»։

(Ի բնագրին իսկական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան ստորագրեալ է)

«ԱՂԷՔՍԱՆԴՐ»

Վաւերացրեց պետական կանցլեր կոմս Ռումեանցով։ (Ամէն. Հայ. Կաթ. մասն Ա. եր. 62—67)։

—

## ԻԹ. ԳԼ.

*Կնեազ-Մադաթովը և իւր պաշտօնն.—Բանակցութիւն Պարսից և Ռուսաց մէջ.—Նախապատրաստութիւն Պարսից.—Սև-Հօնաց գործած անիրաւութիւնները.—Մադաթովի նոր արշաւանքն ռուս և հայ զօրքով.—Կեղծ թալղաններ.—Բողոք Բաղդասար սրբազանի.—Հրաման գեներալ Կուտուզովի.—Կալանաւորութիւն կեղծազների.—Փախուստ յանցաւոր Մէյտի-ղուլի-խանի։*

1816-ին Կնեազ-Մադաթովը բարձրագոյն հրամանաւ կարգւում է զօրավար Արցախի ռուս և հայ զօրաց վերայ և միանգամայն վերահսկող Շուշու խանութեան կառավարչական ձևի վերայ։ Կնեազ-Մադաթովն ազգաւ հայ էր, ծնուած Արցախի Վարանդայ գաւառի Աւետարանոց գիւղում. 18 ամեայ հասակում Մելիք-Ջիւմշիւդի հետ գնում է Հաշտարխան, որի մէջ՝ մի գինեվաճառի խանութում սպասաւոր լինելով, սովորում է փոքր ինչ ռուսերէն գրել և կարդալ և խօսիլ։ 1799-ին մանում է Ռուսաց զինուորական ծառայութեան մէջ, 1808—1810 հանդիսանում է երևելի Ռուսաց Օսմանցւոց դէմ մղած պատերազմներում. 1812—1815 ստանում է յաղթող անուն՝ Ռուսաց Վարշաւիոյ Դքսութեան դէմ, և Գաղղիացւոց դէմ մղած պատերազմներում ժառանգում է քաջայաղթ հռչակ, յաղթանակաւ մտնելով Փարիզ (1)։

Նոյն 1816-ին Աբաս-Միրզան պաշտօնապէս դիմում է Ռուսաց կայսեր, որ նախ զինքը ճանաչէ թագաժառանգ Իրանի. և երկրորդ որ Գիւլստանի դաշնադրութեամբ Ռուսաց ձեռքն անցած երկիրներից վերադարձնէ Պարսկաստանին գոնէ Ղարաբաղը և Թալիշը (Լանքարանը)։ Երմոլովն պնդում է թէ Ռուսաց է պատկանում Թալիշն դեռ անցեալ տարուց. իսկ յետ տալ Ղարաբաղը՝ միևնոյն է թէ բաշխել Պարսից նաև

1) Գաղտնիք եր. 314։

Թիֆլիզը։ Եարմալովն ցանկանում էր առ կախ թողնել Թագաժառանգութեան խնդիրը, որպէս զի Աբաս-Միրզան միշտ կախումն ունենայ Ռուսիայից։ Բայց կայսրն ճանաչում է Աբաս-Միրզան Թագաժառանգ, սակայն անհնար է համարում Ղարաբաղի և Թալիշի յետ տալը։

Լարուած յարաբերութեան մէջ մնացած Թագաժառանգն գիշեր ցերեկ զբաղում է եւրոպական ձևով կրթել և պատրաստել իւր զօրքը։ Մօտենում են Պարսից Անգլիացիք, փոխարինաբար տալիս ահագին գումար, կրթում պարսիկ զինուորները և հետզհետէ պատրաստում Ռուսիայի դէմ։ Թագաժառանգն իւր մօտ սպասուով պահում է Վրաց Հերակլ Թագաւորի որդի Ալէքսանդրը, որ երազում է շնորհիւ Պարսից ժառանգել իւր պապենական կորսուած գահը և շահասիրելով պահում փախած և գերի վարած ռուս զինուորները։ Բաց յայտնապէս Աբաս-Միրզան հեռուից ապստամբեցնում է գրգռելով Կովկասեան լեռնաբնակ լեզգիները, իսկ ներքուստ կեդրոնացնում է կրթուած և անկիրթ պարսիկ զօրքերը Ատրպատականում, որ աւելի մօտ է Ռուսաց սահմանագլխին (Կով. Հայք. մասն Ա. եր. 183—184)։

Լեռնաբնակ Լեզգիներն այնուհետև գործում են անպատմելի վնասներ՝ խումբ խումբ յարձակուելով Դարբանդի, Ղուբայի, Շամախու, Շաքուայ, Ճառի և Կախեթի քրիստոնեայ բնակչաց վերայ, աւարում, յափշտակում և գերեվարում խաղաղ բնակչաց ինչքերը և որդիքը։ Այս վնասների առաջը փութով առնելու համար՝ միակ յարմար և լեզուագէտ անձը համարուելով Կնեազ-Մադաթովը, որ և կարգուելով հրամանատար ռուս և հայ զօրքի վերայ՝ մտնում է Շուշի, նախ առնում է Կնեազն ստորագրութիւններ Շուշու Մեհտի-խանից, Շամախու Մուստաֆա-խանից և Շաքուայ Սելիմ-խանից և միանգամայն բոլոր Թիւրք բէկերից, որք չունենային այնուհետև Պարսից հետ գաղտնի յարաբերութիւն քաղաքական նշանակութիւն ունեցող հաղորդակցութեամբ.—եթէ կունենային, աք-

տրուելու էին Սիբիրիա։ Մատաթովն ապա ռուս և հայ զորքով արշաւում է Հիւսիսային-Դաղստանի վերայ և գրաւում այն 1817—1818 թուականներում (1)։

1818-ին կնքում է իւր մահկանացուն բազմաչխատ Շէյթան-Թիւնին։

Մատաթովի բացակայութեան ժամանակ Մեհտի-Ղուլի-խանն իւր համախոհ բէկերով ծածկաբար շինում է կեղծ թալղաներ (կալուածաթղթեր) և Ղրչախի վանքական և մելիքական բոլոր հողերից լաւ տեղերը վեր առնում իւր համար և միւսացածները բաժանում շինծու կալուածաթղթերով, կնքում իւր հօր Իբրահիմ-խանի և իւր կնիքներով և ընծայում իւր ազգական Ջափար-Ղուլի աղային, Միրզա-Ադը-կեօզալին, իւր գրագիր Միրզա-Ջամալին, Կապիտան Ռոստամ-բէկին և Ֆաթալար-Աղային, և այլն։

Դառնում է Մատաթովն, կազմուում է մասնաժողով Շուշում կառավարչապետ Երմօլովի հրամանաւ, որ պաշտօնապէս քննում, որոշում և գրում է վանքապատկան հողերը, կալուածները և գիւղերը վանքերի վերայ, մելիքապատկան հողերը, կալուածները և գիւղերը մելիքազուններին վերայ և վերջապէս իւրաքանչիւրի սեփականութիւնը իւր տիրոջ վերայ, որպէս գի յետոյ ըստ այնմ էլ հաստատուի բարձրագոյն վաւերացմամբ։ Բաղդատար որբազանն բողոքում է մասնաժողովին՝ յայտնելով որ վանքերն զրկուում են իւրեանց դարաւոր իրաւունքներից. վանքերի արդար սեփականութիւնը շինծու թալղաներով յատկացուցած են այլոց, բողոքում են և ժամանակակից մելիքներն և մելիքազուններն։ Ցայտնուում են խարդախութիւններն, բանտարկուում են խարդախողներն բացի Մեհտի-խանից, որ Վարանդայի գիւղերից (որ սեփականութիւն էին Մելիք-Ջիւմշիւտին) 15 գիւղ թախանձանօք նուիրում է Կնեազ-Մատաթովին, որ մի կերպ ծածկէր գաղտնիքը։ Գեներալ Կոտուզովն

1) Կեանք Կնեազ-Մատաթովի և Գաղտնիք եր, 315—339։

իմանում է խարդախութիւնը և գրում նոյն խանին. «Եթէ այդ գիւղերն իրօք ձեր սեփականութիւնն են, կամ պէտք է Կնեազից (Մատաթովից) յետ առնէք և կամ իւրաքանչիւր գեներալի ևս նոյնչափ գիւղեր նուիրէք»։

Բաղդասար արքեպիսկոպոսն և հարազատ մելիքներն, իմանալով այդ բոլոր խարդախութիւնը, բողոքում են Երմոլովին, որ պաշտպանէ վանքերի և մելիքների արդար իրաւունքները, բայց Մատաթովն համոզկեր խօսքերով խաբում է հայերը, որ ինքն իբրև ղարաբաղցի՝ բոլոր հողերը և գիւղերը հաստատելու էր վանքերի և մելիքների վերայ։

Մեհտի-խանն գրում է Աբաս-Միրզային հետևեալը. «Մի քանի շաբաթից յետոյ Կնեազ-Մատաթովն, Երմոլովից թելադրուած՝ առաջարկեց ինձ, որ ես Եարմոլովի թուրք և ապօրինի կնոջից ծնած երկու որդիքը—Բախտիար և Ալլահեարը—հաշուէի ի թիւս Իբրահիմ-խանի որդւոց, տայի սոցա ծննդեան վկայականներ և յատկացնէի բաժին սոցա համար Ղարաբաղի գիւղերից, ժողովրդից և հողերից։ Բայց այս անգամ խոստացաւ (Մատաթովն) ինձ յանձնել կալանաւորած նամակները, որոց գոյութիւնն տակաւին գաղտնիք էր։ Եարմոլովի բարեկամութիւնը ևս շահելու քաղաքականութեամբ, այնպիսի մի ճգնաժամում, խոստացայ կատարել այս առաջարկութիւնը, մեծ օգուտ նշմարելով խանութեանս գոյութեան, բոլոր կեղծ թամղաների յաջողութեան և պատւոյս վերականգնման նկատմամբ։ Սակայն այդ րոպէին Մատաթովն մի նամակ ստացաւ Եարմոլովից, անապարանօք Թիֆլիս գնաց և այս առաջարկութիւնն անկատար մնաց և նամակներն Կնեազի մօտ մնացին»։

Կնեազ-Մատաթովն Ղարաբաղ դարձաւ, բայց իւր նախկին բնաւորութիւնը բոլորովին փոխած էր։ Սորանից յետոյ շուտով բանտարկուեցան Մատաթովի հրամանաւ Միրզա-Ադիկեօզալն, Միրզա-Ճամալն, և կապիտան Ռուստամ-բէկն, յարքունիս գրաւուեցան վերջնոյս շարժական և անշարժ գոյքերն և գնդակահար վիրաւորուեցաւ Ջաֆար-Ղուլի-աղան, բայց բա-

ընդարձակաբար վէրքն անմխիթար էր։ Ես իսկոյն դիմեցի Կեդրո-նախմբերութիւն, Պաւլ Իւանովիչ Մաշկևիչուն և կառավարչական Մուրավշանովին և Թախանանօք խնդրեցի սոցանից՝ բացատրել ինձ այս բանտարկութեանց պատճառները։ Սոքա պատասխա-նեցին դայրացած. «Արդէն քո ընկերներին բանտում խոստովա-նած են իւրեանց և քո յանցանքները, նոքա բացատրած են իւրեանց և քո գործած բոլոր չարութիւնները, կրկին բացատ-րելու հարկ չկայ՝ ինչ որ դու գործած լինելով քաջ գիտես»։

Արդէն տպաւոր սպասածութեանս հրամանի էին տպառում գլխ ևս կալանաւորել և բանտարկել։ Երբ կրկին երեքն նստած միասին՝ Թախծաղին խնդրեցի ասելով. «Ես իմ սիրալօժար կամօքս թողնում եմ Ռուսաստանին իմ խանութիւնը իւր ամ-բողջ իրաւունքներով, և երդւում եմ շուտով ոչնչացնել այն շինծու Թալղաները, միայն թէ ազատեցէք բոլոր բանտարկեալ-ները և խնայեցէք իմ կեանքը ինձ»։ Նոքա պատասխանեցին. «Առանց քո ասութեան արդէն մեռած է քո խանութիւնն, առանց ոչնչացնելու արդէն խարդախութիւնն ոչնչացրած է այն Թալղաները. այսուհետև Ռուսաստանին են պատկանում իրա-ւունքներն, իսկ Ղարաբաղի հողերն, ժողովուրդն և գիւղերն՝ հայ մելիքութեան և վանօրէից, ինչպէս ցարդ, բանտարկեալոց ազատութեան համար իրաւունք չունիս Թախանձել, զի քրէա-կան յանցաւոր են։ Այսչափ շնորհքը միայն կարող են քեզ ա-նել, քանի որ այդչափ Թախանձում ես. տես քեզ երեք ժամ ժամանակ, դու կարող ես փախչելով ազատել քո կեանքը»։ Վերջապէս այն աստիճան անճարարանօք փախայ Ղարաբաղից Երևան, մինչև անգամ չկարողացայ Միրզա-Ադը-Գեօզալից և Միրզա-Ջամալից առանել իմ և հօրս կնիքները, որոց մօտ թո-ղած էի վերստին կեղծ Թալղաներ շինելու։ Դրա այս ամէնք կրեցի միայն Պարոնկատանի շահուց համար»։

...Ռուսաց Անդրկովկասի այժմեան պաշտօնակալներն, իւ-րեանց մասնաւոր շահուց համար, խիստ գաղտնապահ են և հայ մելիքների ու հոգևորականների արդարացի բողոքներին կա-

բնութիւն չեն տալիս, ինչպէս պահանջում է անաչառութիւնն։ «Հողն ու ոսկին հրաշալի դեր են խաղում... Թէպէտ ես Ղարաբաղից բացակայ եմ այժմ, սակայն այնտեղ են հաւատարիմ համախոհներն, որք շարունակ կտրատուին բանտարկութիւնից, որոց մօտ թողած եմ հազար ոսկի, մարդ գլուխ վեց հարիւր ոսկի ևս պէտք է աւելացնեն այդ գումարի վերայ, որպէս զի այդ գումարը իբրև կրծոն տալով յաջողցնեն յափշտակել հողերը, գիւղերը և ժողովուրդը Հայոց ձեռքից» (Գաղտնիք եր. 339—347)։

Ահա այսպէս զոհուեցան Արցախի վանքական և մէլիքական հողերն և կալուածներն...։

## Լ. ԳԼ.

*Հայոց Եփրեմ կաթուղիկոսն և Ներսէս Աշտարակեցին Շուշում.—Նիկոլայ Ա. կայսր Ռուսաց.—Մենշիկովը Պարսկաստանում. — Ապստամբութիւն Մահմեդականաց.—Աբաս-Միրզա և Երմոլով.—Ծրջաբերական յորդոր Ներսէս Աշտարակեցու.—Պաշարումն Շուշի ամրոցի.—Ռէուդի տագնապն.—Ասրի-բէկ քաջ սուրհանդակ.—Հայ քաջերի անսահման գործունէութիւնն և անձնուիրութիւնն։*

1821-ին Հայոց Եփրեմ կաթուղիկոսն, սաստիկ նեղուելով էջմիածնի վանքի պարտատէրների բուռն պահանջներից, Տաթեւի վերայով մտնում է Շուշի և հիւրասիրուում Հախումեանց տան մէջ։ Գալիս է Շուշի և Ներսէս եպիսկոպոսն, որ Թիֆլիսի առաջնորդն էր և յետոյ եղաւ կաթուղիկոս։ Շուշում մեծ պատիւ և 4000 ոսկի դրամական օժանդակութիւն է ստանում Մարկոս-Աղա Հախումեանից Եփրեմ կաթուղիկոսն։ Վերջինս և կառավարչապետ Երմոլովի մէջ փոխանակւում են պաշտօնական դրութիւններ. ապա կաթուղիկոսն Ներսէսի հետ գնում է Գիւլստան Մէլիք-Բէգլարեանների ապարանն, և, սաէ-

պուած հանգամանքից, հրաժարական է տալիս կաթուղիկոսութիւնից Ռուսաց կայսեր. ապա գնում և բնակւում է Հաղբատի վանքում (Ամէն. հայ. կաթ. մասն Ա. եր. 184—218)։

1825-ին նոյեմ. 18-ին վախճանւում է Ռուսաց երջանկայիշատակ Աղէքսանդր Ա. կայսրն, որի անզաւակ լինելու պատճառաւ թագաժառանգն լինում է իւր երկրորդ եղբայր Կոստանդին Պաւլովիչն. սա յօժարութեամբ, հրաժարուում է գահից, որի վերայ բարձրանում է 1825-ին դեկտ. 12-ին իւր փոքր եղբայր Նիկոլայ Ա.։ Գահակալութեան պատճառաւ ծագում է ապստամբութիւն և խռովութիւն, թէև շուտով հաստատուեցաւ խաղաղութիւնն, սակայն ամենուրեք տարածուեցաւ արագութեամբ՝ չափազանցրած շփոթի լուրն, որը լսելով Աբբաս-Միրզան, որ քանի տարիներից ի վեր տեսնում էր պատերազմի մեծ պատրաստութիւն, հրճուում է և ոգևորուում։

1826-ին փետր. ամսում գեներալ իշխան Մենշիկովն տանում է Պետերբուրգից Պարսկաստան նոր գահակալ Նիկոլայ Ա.-ի ինքնագիր նամակը յատուկ ընծաներով. սակայն ընդունուում է սառնութեամբ։ Մենշիկովն, տեսնելով որ պատերազմի համար մեծ պատրաստութիւն է տեսնում Պարսկաստանն Ռուսաց հետ պատերազմելու, յանձնում է նամակը Շահին և դառնում, բայց կալանաւորուում է Երևանում. ապա ազատուելով հեռանում։

Այդ իսկ միջոցին ամբողջապէս ապստամբած են լինում Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ, Ծառի, Գանձակի և Արցախի Մահմեդականներն։ Բաց յայտգանէ Կովկասաբնակ լեռնականներն Պարսից և Օսմանցւոց դրդմամբ սպասում էին պատերազմի նշանին։ Բագուի, Շամախու և Շուշու փախած խաներն, պատրաստելով կազմակերպեալ զօրագնդեր, սպասում էին ազդի։ Ղարաբաղի մահմեդական կանայք ուղարկում են Թաւրիզի Մուշթայիդին իւրեանց գլուխների քօղերը, ամօթ և նախատինք կորցալով Պարսից քաջերին։ Պարսկաստանի շիա հոգևորականներն երկրի ամբողջ քաղաքներում

և գիւղերում քարոզում են կրօնական պատերազմ Ռուսաց դէմ և բնաջինջ անել ռուսներր. (Նիւթ. Աղ. Պատ. եր. 258—259)։ Այս ամէն պատրաստութիւններով ոգևորւում է Աբաս-Միրզան և ընդհակառակն անպատրաստութեան տագնապի մէջ ճնշւում են Երմօլովը։ Քանզի Պարսից բանակն բաղկացած էր 100,000 մարդից, որի հետ միանալու էին նաև խաներն, Լեկ-զիներն և Աղուանից երկրի շիա և սուննու բնակիչներն, որք պատրաստ էին։ Այդչափ Թշնամեաց դէմ կռուելու համար Երմօլովն ունէր միայն 35,000 զինուոր, այս էլ ցրուած Սև ծովի եզերքից մինչև Կասպից ծովի եզերքն, այսինքն սահմա-նապահ, քաղաքապահ և բերդապահ զինուորներ էին, որք ան-հրաժեշտ էին նոյն իսկ պահպանել իւրեանց գտնուած տեղերը Թշնամեաց յարձակումներից։ Երմօլովն ի պահանջել հարկին հազիւ կարող էր ժողովել 5000—6000 զինուոր. բայց այս-չափ կարելի՞ էր դսպել մահմետականաց մեծաստարած ապստամ-բութիւնը։ Երմօլովն վերջապէս խնդրում է արքունիքից օժան-դակ զօրք. իսկ նախարարն պատասխանում է՝ թէ պատերազմ չլինիր, որովհետև մենք խաղաղութեան դեսպան ենք ուղար-կած Պարսկաստան, որ դեռ չէ վերադարձած։

Հասնում է Թիփլիս Մենշիկովն և ասում Երմօլովին. «Գլխիդ ճարը տես, սարսափելի պատերազմ է. Պարսիկներն գալիս են մեծ զօրքով»։ Անճարանօք կազմուում է զինուո-րական խորհուրդ, հրաւիրելոց մէջ է լինում և Վրաստանի հայոց առաջնորդ Ներսէս եպիսկոպոսն, որ խոստանում է ոչ միայն հանգստացնել իւր հօտը այլ և խրախուսել, որ հայերն քաջութեամբ պատերազմեն Թշնամեաց դէմ։ Այս պատճառաւ անմիջապէս պատրաստում է շրջաբերականներ, ցրուել տալիս քաղաքում և Թէացածը յղում Դարբանդ, Բագու, Շամախի, Նաքի, Շուշի, Գանձակ և սոցա գաւառների հայոց։ Այսպէս է սկսում շրջաբերականն. «Պատուարժան Հայոց ազգին, որ միշտ հաւատարիմ հպատակ է եղած... «Աստուծուց ինձ վերայ դրած սրբազան պարտաւորութեամբս յայտարարում եմ ահա... Ռու-

սիրոյ անկրաւթեան ոյժը այժմ էլ նոյն է... բայց պարսից ոյժը այլևս այն չէ, երբ նոքա երբեմն սրի և կրակի ճարակելով Թիֆլիզը... Մի՛ վախէք պարսից ձայնից և աղաղակներից։ Նոցա բոլոր ոյժը ճչի և աղաղակների մէջ է և ոչ թէ ճշմարիտ գօրութեան և խելացիութեան... Այն ժամանակ, երբ ամենեքեանքդ վերածնելով ձեր մէջ ձեր նախնեաց սխրագործութիւնները, միաբանութեամբ պիտի քաջալերէք միմեանց ասելով. «Մեռնենք քաջութեամբ և առաւել հայրենեաց դաւաճանելու և այլազգիաց ժառանգենք մեր նախնեաց պանծալի անունն և փառքը»։... Դիմաւորեցէք թշնամուն և սուրս արդանեակներին կամ ռուսաց զօրքերի հետ միասին և կամ թէ մի ուրիշ կերպով... մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը։... Արքեպիսկոպոս Հայոց Ներսէս։ Թիֆլիզ 29 յուլիսի 1826 թ.»։

«Հրատարակելով այս ոգևորիչ շրջաբերականը, վրէժխնդրութեամբ այրուող Ներսէսը, պատերազմի պաշտօնական հրովարտակից հինգ շաբաթ առաջ, արդէն իւր կողմից բացարձակ պատերազմ յայտնեց պարսից և մէկ ձեռքին խաչ, միւս ձեռքին դրօշակ հանդէս դուրս եկաւ...»։ (Ամ. Հայ. Կաթ. մասն Ա. եր. 229—243)։

Պարսից հարիւր հազար հոգուց բաղկացած բանակին անցնում է Երասխ գետի ձախ կողմ. անապատաբնօք բաժանւում երկու մասի, որից առաջինն 60,000-ն Աբաս-Միրզայի հրամանատարութեամբ անակնկալ յարձակւում է Մեծ-Սիւնեաց վերայ, կոտորում ռուս սահմանապահ զօրքը, աւերում Տաթեւի վանքը, գերի տանում Թաւրիզ ուրիշ հայոց հետ և վանահայր Մարտիրոս արքեպիսկոպոսը, որ վախճանւում է գերութեան մէջ։ Միանում են Աբաս-Միրզայի բանակին Շամախու Մուստաֆա-խանն, Շուշու Մէհտի-խանն, Նազար-Ալի-խանն, Սաադ-Սուլթան, Հասան-Աղալար և միանգամայն Բարկիւշատի, Օրդուբադի և Զանգեզուրի բոլոր խաներն և բէկերն որոց հետ է և Պարսկաստանից եկած Իբրամ-Հիւսէյին մոլեռանդ հոգևորականն, որ ըստ իւր աստւթեան այդ դարուն մարգարէն էր և որ կա-

րող էր իւր ատօլթքի գօրութեան հրաշքով, չէտ դարձնել Ռու-սաց թնդանօթների և հրացանների մահատու գնդակները։

Աբաս-Միրզան Մէյտի-խանից խմանում է որ Շուշում կայ ընդամենն 1000 ռուս զինուոր, որից 400-ն գտնւում է Գո-րիսում, 400-ն Աւետարանոցում և 200-ն Շուշում։ Մէյտի-խանի առաջնորդութեամբ նախ յարձակւում է Աբաս-Միրզան Գորիսի վերայ անսպասելի ժամում, կոտորում 400-ը ապա Աւետարանոցի վերայ, որից փախած էր Ռէյտուտ իւր զօրքով և մտած Շուշի, կրակում Մասամթօփի տունը և Ռուսաց զօ-րանոցը և սրճապտորանօք պաշարում Շուշին ամեն կողմից ամ-բողջ 48 օր և սկսում կարկտի նման տեղալ թնդանօթի գըն-դակներ։

Չափազանց ողորմելի է լինում Շուշու դրութիւնն, որի մէջ լինում է մի 500 ռուս զինուոր և 100 ղազախ։ Ոչինչ օգնութիւն չէ լինում դրսից և ոչ երթևեկութիւն թղթոց և ոչ բաց ճանապարհ։ Ռէյտուտն քանիցս մարդ է ղրկում Թիֆլիս օգնութիւն խնդրելու, բայց չէն են դառնում դատարկ, քանզի իսպառ խզուած է լինում Շուշու և Գանձակի և Թիֆլիսի հաղորդակցութիւնն, քանի որում Աբաս-Միրզան ղրկած է լինում 20,000 զօրք Գանձակը գրաւելու։

Ո՞վ ձեռք վեր առած էր իւր կեանքից, ո՞վ խենդ էր վը-տանգի մէջ դնել իւր կեանքը։ Ռէյտուտն խոստանում է մեծ պարգև սիրտ անող թղթատարին։ Առաջ է գալիս չարաբերդցի Սարի-բէկն և խոստանում է տանել թուղթը և բերել պատաս-խանը Թիֆլիսից։ Մէլիք-Մեժլում Բ.-ի ամենաքաջ զինուոր-ներից և թիկնապահներից մին է լինում Սարի-բէկն և ամենա-հաւատարիմ խնամակալն պատանի Մէլիք-Ադամ Բ.ին՝ Մելիք-Մէժլում Բ.-ն սպանուելուց յետոյ։ Սարի-Բէկն (1) Ռէյտուտից առնում է նամակը, տեղափորում (զետեղում) իւր տրեխի մէջ,

---

1) Սա մօտ ազգական էր Շուշում բնակող Բհաթրեան Մահ-տեսի Միսայէլին, Ղազարին և Սարգսին և յետոյ ամուսնանում է Հին-Նախիջևանում Սարգիս-աղայի դստեր հետ։

իջնում գիշերով Շուշու հիւսիս-արևմտեան պարսպի կրճով, գիշեր և ցերեկ շարունակ գնում անկոխ ճանապարհներով—անտառներով և լեռներով—անվտանգ հասնում Թիֆլիս և յանձնում նամակը Երմօլովին, որից պատասխանը առնելով՝ յանձնում Ռէյուտին. հարկադրուած կրկին գնում է Թիֆլիս նոյն կուսակալին յանձնում նամակը, ստանում պատասխանը և 100 հոլանդիոյ ոսկի պարգև և խոստանում է շնորհել Սարի-բէկին ազնուականութեան աստիճան (երեք ամսից վերջն ստանում է պրապօրշիկութեան նշան)։ Սարի-բէկի Շուշի հասնելուց երեք օր առաջ՝ Աբաս-Միրզան տարածել էր. «Պարսիկներն արդէն գրաւել են Թիֆլիսը»։ Շուտով հասնում է Շուշի Սարի-բէկն, յանձնում է Ռէյուտին Երմօլովի պատասխանը և ստանում հարիւր հոլանդիոյ ոսկի։

Անսահման է լինում հայ քաջերի գործունէութիւնն թէ՛ Շուշում և թէ՛ դրսում։ Հայ քաջերն գիշեր ցերեկ հսկում են անքթիթ աչօք Շուշու բուրգերին, կիրճերին և վտանգաւոր տեղերին վերայ. կին, հարս, աղայ և աղջիկ պատրաստում են հաց և կերակուր, պատանիներն տանում են այդ ուտելիքները իւրեանց տնեցի և ռուս բերդապահ զինուորներին։ Քանի օրն մի անգամ դեսպան է ղրկում Աբաս-Միրզան Ռէյուտին, որ իրան յանձնէ Շուշին. իզուր վտանգի մէջ չդնէ իւր և պաշարելոց անձերը։ Ամրոցում եղած պարսիկ ազգաբնակութիւնն սպասում է յարմար առթի, որ նենգութեամբ բերդը յանձնէ Պարսից. իսկ քաջազգոյն հայ տղամարդիկն շղթայաշար կանգնած Պարսկաբնակ թաղի առջևով հսկում են պարսպի դռներին և կրճերին և բուրգերին։ Ռուս զինուորներն մեծ մասամբ՝ փոխն ի փոխն՝ շարւում են թնդանօթների մօտ և թշնամու արձակած 100 գնդակին հազիւ թէ պատասխանում են երկու գնդակով. վասն զի խնայողութիւն էին անում պաշարի պակասութեան պատճառաւ, որին նպաստում էր և բերդի ամրութիւնն։

Սարի-բէկի դառնալուց յետոյ Շուշում տիրում է մեծ ու-

րախութիւն, նորոգուած ոգևորութիւն և նոր աշխոյժ և փրկութեան ու ազատութեան աներկբայ յոյս։ Վհատեալ Աբաս-Միրզան սկսում է բանակը հաստատել Շուշու հիւսիսային կողմի Դօվլաթալար կոչուած սարահարթի վերայ և փորել տալ ականներ դէպի ամրոցի ստորոտն, բայց բոլորովին ապարդիւն։

Հայ քաջերից Արապահասն և Քեօրօղլին գիշերով փոխադրում են Շուշի ոչխար, արջառ, երինջ, այծ, հաւ և ձու Խաչենի անմատչելի անտառներով ամարանոցներից և ամրութիւններից, ուր ամրացած էին Խաչենի և Ջրաբերդի հայերն։ Թարխան և Սաֆարի Իւզբաշին և Առստամն 300 հայ քաջերով գիշերով ալիւր են հասցնում պաշարուածների համար Հիւնոտի ջրաղացներից՝ անընդհատ կռուելով և ջրաղացները անխափան բանեցնելով։ Բազմապատկում է պաշարելոց յարաբերութիւնը խզող պարսիկ զինուորների թիւն, որպէս զի անօթի մնալով՝ ակամայից անձնատուր լինի։ Բայց Սաֆարի-Իւզբաշին և Առստամն իւրեանց քաջերով ամրանալով Հիւնոտի քարայրում կոտորում են նոցանից շատերը. իսկ բերդում եղած քաջերն գիշերներն պարաններով վեր են քաշում ալիւրները և սովից ազատում պաշարուածները (Գաղտնիք եր. 361—366)։ Աբաս-Միրզան, անգրաւ թողելով Շուշին, արշաւում է Գանձակի վերայ։ Այժմ տեսնենք ի՞նչ եղաւ Պարսից երկրորդ զօրաբաժինն։

## ԼԱ. ԳԼ.

*Ամիրխան Սարդար և Մամադ-Միրզա.—Աւետիս և Ղազար.—Գերեվարուած գերմանուհիներ.—Գրիգոր եպիսկոպոս.—Եփրեմ կաթուղիկոս. — Մանուչարեանց Շամշադինում.—Ապստամբ խաներ.—Գրիգոր եպիսկոպոս և Երմօլով.—20,000 պարսիկ զօրք Գանձակում.—Հայ քաջերի գործունէութիւնն.—Սարգիս կաթուղիկոս և Մելիք-Վանի կալանաւոր։*

Երկրորդ զօրաբաժնի հրամանատարն լինում է Ֆաթալի-Շահի սիրական փեսայ Ամիրխան-Սարդարն, որի հետ լինում է

և Աբաս-Միրզայի մեծ եղբայր Մամադ-Միրզան, որոյ հետ միանում են Բորչալուի և Ղազախի խաները, Իրզա-խանն, Երևանց Նովրուզ-Ալի-խանն և Վրաց Ալեքսանդր թագաւորազն 3000 վրացի և պարսիկ ձիաւորներով 1826-ին և յուլիսի 16-ին այս զօրաբանակն յանկարծ յարձակւում է Շորագեալի և Փամբակի վերայ և կոտորում մի քանի ռուս սահմանապահ զօրքը: Բայց որովհետև այդ ռուսներն ապրում էին մեծամասամբ Հայոց գիւղերում, վասն որոյ ռուս զինուորների հետ միասին սկսում են դիմադրել թշնամուն՝ զարմանալի քաջութեամբ, նոյնպէս և հայ կանայք և պառաւները, սակայն անկարող լինելով երկար դիմադրել Պարսից առաւելու ուժին, նահատակւում են թողնելով քաջութեան անուն: Ո՞վ կարող է թուել նահատակելոց ազգանունները: Աւանդաբար մնացել է մեզ համար միայն Խարում գիւղի (Գիւմրու մօտ) Իսքարաշի Դէլի-Ղազարի և Խըլ-Ղարաբէգիկեանի Աւետիքի զարմանալի ճարպիկութեանց պատմութիւնն, իսկ մոռացման տուած են Մնացեալների արարքները: Շորագեալում և Փամբակում ցրուած ռուս մնացեալ զինուորներն և հայերն փախչում են Ջալալօղլի և Կարաքլիս գիւղերն: Երևանի սարդարի եղբայր Հասանխանն աւերում է Շորագեալը (1):

Մի քանի հազար ձիաւոր քիւրդ յարձակւում են Կատարինֆելդի վերայ, մորթում 70 հոգի գերմանացի գաղութներ և գերում 150 գերմանուհի և տանում Ախալցխա վաճառելու (Ամեն. Հայ. Կաթ. մասն Ա. եր. 234—232):

Հախում գիւղում (Արցախ եր. 333) բնակւում էր Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարեանն: Ծիցիանովը Գանձակի վերայ արշաւած ժամանակ Մանուչարեանս Շամշադինի և Ղազախի

---

1) Պարսից երկու բանակներն միանալու էին Շամքորում այսպէս—Աբաս-Միրզան գրաւելով Շուշին և Գանձակը, Ամիրխան-Սարդարն Շորագեալը, Փամբակը, Բորչալուն և Ղազախը, ապա միանալ Շամքորում և յարձակիլ Թիփլիսի վերայ:

հայերից ժողովում է 500 քաջ տղամարդ, ծառում փիլօնը և թողնում տան, հագնում աշխարհականի զգեստ և զինուում զէնքերով և անում շատ քաջագործութիւն։ Իշխան Ցիցիանովը, թէև չէր սիրում հայերը, բայց ականատես լինելով սրբազանի քաջագործութեանց պատերազմի դաշտում, անձամբ կախում է սրբազանիս լանջիցն Ս. Գէորգի երրորդ աստիճանի զինուորական խաչը և նշանակում է ցմահ տարեկան 300 րուբլի թոշակ։ Կոմս Գուդովիչն էլ 1808-ին Երևանի վերայ արշաւելու ժամանակ տանում է իւր հետ Մանուչարեան սրբազանը իւր քաջերով միասին։ Այստեղ, Նախիջևանի վերադառնալիս մեծ կոտորած է անում Մանուչարեան և շաղախուում թշնամու արեան մէջ, ինքն էլ վէրք ստանում և հազիւ ազատուում մեռնելուց։ Սրբազանն ստանում է Վլադիմիրի և Աննայի շքանշանները 600 րուբլի թոշակով միասին։ Թիւրքերն Դէլի-Քէշիշ (խենդ քահանայ) էին անուանում սրբազանս։ Ներսէս եպիսկոպոսի հրամանաւ Մանուչարեանս իւր քաջերով Հաղբատից փոխադրուում է Թիֆլիս Եփրեմ կաթուղիկոսը մեծ նեղութեամբ։

Երմոլովն, լսելով Մանուչարեանցի քաջագործութիւնները, խնդրում է երթալ Շամշադին, զսպել այնտեղի թիւրքերի ապստամբութիւնը և վերադարձնել Պարսից գիւղացիներից գերի տարած մի քանի հարիւր գերդաստանները։

Այդ իսկ օրերում Պարսիկ երկրորդ բանակն, աւերելով, կոտորելով և ոչնչացնելով Շորագեալը, Փամբակը, Բորչալուն, հեղեղի նման դրաւել էր Զաւէ (Ղազախ) Քուռ կամ Քուռափ (Շամշադին) և Կողթ գաւառները տեղական թիւրք բէկերի աջակցութեամբ, աճապարում էր միանալ Աբաս-Միրզայի բանակին։

Մանուչարեանցն իւր 500 քաջերով կատարում է զարմանալի քաջագործութիւններ Ղազախի, Շամշադինի և Սևանայ կողմերում. քանզի երբ Մանուչարեանցն վերադարձել էր տարած հայ գերիները իւրեանց գիւղերն և խաղաղացրել Շամշա-

դէնը. իջնում է Երմօլովն Հասան-սու վտակի մօտ, գրկում եպիսկոպոսը և ասում. «Խնդրում եմ, ասացէք, ի՞նչով կարող եմ վարձատրել ձեզ, հայր սրբազան։—«Ես կարօտ չեմ ոչ մի վարձատրութեան. բայց անօրէնութիւն եմ համարում որ Թուրքի աղալար և բէկ կոչուած ազնուականներն վաղուց ի վեր տիրացել են Հայոց գիւղերին և սոցա կալուածներին և, ճանր հարկ առնելով, կեղեքում են Հայոց ազգաբնակութիւնը, այն էլ ներկայ քրիստոնեայ իշխանութեան տիրապետութեան ժամանակ»։ Սրբազանն Երմօլովին ներկայացնում է այս մասին և մի տեղեկագիր։ Երմօլովն գրաւոր պատասխանում է սրբազանին, ի միջի այլոց «...Ցարգելով ձեր ինձ մատուցած տեղեկագրի մէջ յայտնած մտքերը, ես հրամանագրեցի Շամշադինի գլխաւոր վերակացուին, որ նոյն գաւառակի հայերին բոլորովին ազատելով Թուրքերի (բէկերի) իրաւասութիւնից՝ արձանագրէ զնոսա ինչպէս արքունի ժողովուրդ... Ալէքսէյ Երմօլով» (Ամէն. Հայ. Կալթ. մասն Ա. եր. 243—248)։

Աբաս-Միրզայի բանակից Գանձակի վերայ արշաւող 20,000 (ըստ Երիցեանի 12,000) պարսիկ զօրաբաժինն աւերելով շատ գիւղեր հասնում է Գանձակ։ Քաղաքաբնակ Թիւրքերն իսկոյն միանում են Պարսից բանակին հետ, բանտերից ազատում են ամբողջ բանտարկեալները և նոյն գիշերում սրախողխող անում ռուս պաշտօնեաները իւրեանց ընտանիքներով միասին, յորոց քիչերն են ազատուում թագնուելով հայոց տներում։ Գանձակին այսպէս տիրելուց յետոյ՝ աւերակ են դարձնում Գերմանացւոց գաղթական գիւղերը Ելէնդօրֆ և Աննէնֆելդ, սակայն բնակչաց շատերն ազատուում են փախչելով Թիֆլիս։

«Մի գլխաւոր պարագայ, գրում է Գաղտնիքի հեղինակն, եր. 365—366, որը անկարելի է անուշադիր թողնել և պատմագրութեան վերայ պակասութեան աղտ ձգել, քանզի ինքս, գտնուելով Պարսից (Շուշու) բանակում, ականատես էի ամէն գործոց։ Երկար ժամանակ պատերազմի ասպարէզ դարձած և պատմական մեծ նշանակութեամբ փայլած Ղարաբաղն (Ար-

ցախն) ծնած էր շատ Մաստաթոմներ և կրթած էր Իտալացի, Գաղղիացի, Օսմանցի և Պարսկաստանցի ռազմագէտներից աւելի հմտագոյն պատերազմագէտներ, որք էին Նէառաղէօմն, Քեանդխուղան (Խաչատուրն), Օշափն, Կեժակն, Սափարբ-Իւզբաշին և բոլոր քաջերն։ Ահա սոքա էին Շուշին պաշտպանողներն Պարսից անհաղին զօրութեան դէմ և ի թեբև հանողներն այդ ռազմագէտների բոլոր հնարագիտութիւնները (1)։ Բայց այդ դիւցազուն քաջերն մերժեցին բերդը թշնամուն յանձնելը և վատութեան կեղտ անուն թողնելը Ղարաբաղի (Արցախի) տղամարդոց վերայ՝ մահը նախապատիւ համարելով քան անուանարկ կեանքն։

Ականահատներից շատերն քաջերի գնդակից սպանուեցան. որոշուեցաւ գիշերներն տեսնել այդ գործը (ական փորելը որ չսպանուէին)։ Սակայն Ջիւլ-Ուհանի գիշերատեսութիւնն այդ ձեռնարկութիւնը ևս ոչնչացրուց, որի արձակած գնդակներն չէին վրիպում նշանակէտից։ Հայ քաջերն ամեն գիշեր նաւթով փառուած հին վերմակ, անկողին և ուրիշ հնոտիներ էին նետում պարսպի կասկածաւոր և արտաքին կողմերն, որպէս զի սոցա լուսով երևէին և չնչուէին ականահատներն։ Կարելի է ասել մինչև լոյս մի աստեղաշղթայ էին ձևանում այդ չահերն պարսպի արտաքին կողմից.. բերդն մնաց անառիկ, ռազմագէտներն շուարած, Աբաս-Միրզան յուսահատ, Մէյտի-Եռախանն կորագլուխ. . Աբաս-Միրզան Շուշուց հեռանալիս պարսիկ և թուրք ասպատակաւորներն բերին բանակն Խաչէն, Ջրաբերդ և Կիւլստան գաւառներից շատ գերդաստաններ, որոց մէջ էին Ջալալեան Սարգիս կաթուղիկոսն, Բաղդասար եպիսկոպոսն, մի քանի վարդապետներ, Մէլիք-Վանի Աթաբէկեան և Մէլիք-Ֆրէյտունեան Մէլիք-Յովսէփ Բ.։ Թէև թագաժառանգն սաստիկ բարկացած էր հայոց վերայ... սակայն բոլորովին

---

1) Աբաս-Միրզան իւր հետ ունեցած է բանակում Իտալացի, Գաղղիացի, Օսմանցի հմուտ ռազմագէտներ։

փափկացաւ, տեսնելով գերելոց խղճալի դրութիւնը և լսելով հոգևոր և մարմնաւոր ազգապետների աղաչանքները և բացի Վարանդայ և Դիզակ գաւառների գերիներից, որ կանխաւ ղրկուած էին Պարսկաստան, ազատեց բոլոր գերիները...»։

## ԼԲ. ԳԼ.

*Շամքորի պատերազմն.—Յաղթութիւն Մադաթովի և սպանումն Ամիրխան սարդարի.—Վերջնական յաղթութիւն Մադաթովի օգնութեամբ հայոց.—Միսկին-Բուրջի բանաստեղծ.—Մադաթովն Պարսկաստանում հայ և ռուս զօրքով.—Երմօլովի բարեկարգութիւններն և նամակն առ Ներսէս եպիսկոպոս.—Պասկևիչն հակառակութեան մէջ և կառավարչապետ.—Սորա անխիղճ տապալումներն.—Սարգիս կաթուղիկոս, Մէլիք-Վանի և Մէլիք-Ֆրէյտուն գրպարտեալ.—Մահ Սարգիս Բ. կաթուղիկոսի.—Աղուանից հայրապետութեան վախճան։*

Ամիրխան սարդարն, լսելով որ ռուսներն դիմաւորում են իրանց, չէ համարձակւում գնալ Թիփլիս, այլ աճապարում է միանալ Աբաս-Միրզայի բանակին, որ մօտենում էր, որպէս թէ Գանձակին։

Իշխան կամ կնեազ Մադաթովն Երմօլովից կարգւում է հրամանատար 2000 ռուս զօրաց, որի հետ միանում է Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանն 500 հայ ձիաւորներով։ Հայ հեծելազունդս յաջողում է ի փախուստ դարձնել Աղեքսանդր Թագաւորազնը և Ջաւրար-խանի զօրքերը։

1826-ին սեպ. 2-ին Շամքոր գետակի մօտ պատահում է Ամիրխան սարին բանակին ռուս զօրքն. սկսւում է սարսափելի պատերազմն, ընկնում է Ամիրխան սարտարն 2000 պարսիկներով, փախչում է Մամադ-Միրզան մնացեալ զօրքով, ռուս և հայ զօրքն յաղթական մտնում է Գանձակ սեպ. 4-ին յաղթող Մադաթովի առաջնորդութեամբ, որին դիմաւորում է

եկեղեցական զգեստներով, խաչով և խաչվառով Գանձակի հայ հոգևորականութիւնն։

Գանձակի գաւառաբնակ հայերն կրում են զգալի վնասներ թէ ընչից նկատմամբ և թէ կեանքի։ Իսկ քաղաքաբնակ հայերն, լինելով առանձին թաղում, ամրանում են իւրեանց տուներում, յայտնում են կամք ծառայելու այն պայմանաւ միայն, որ ոչ մի պարսիկ զինուոր չերևի իւրեանց թաղում, այլ ինչ որ հարկաւոր է զօրաց, կարող են պահանջել տանուտէրներից, հակառակ դէպքում պատրաստուած կըլինին պաշտպանուիլ զէնքով։

Միանում են Պարսից բոլոր զօրամասերն և բանակում Գանձակի հարաւ արևելեան կողմում. ռուս բանակին միանում են Խաչէն և Ջրաբերդ գաւառների հայ քաջերի մի մասն և Մանուչարեանն իւր 500-ով։ Սկսւում է կատաղի կռիւն Մատաթովի զօրավարութեամբ, յաղթւում է վերջնականապէս Աբաս-Միրզան, թողլով պատերազմի դաշտում 2000 դիակ, 1000 գերի, 2 թնդանօթ, և 4 դրօշակ և փախչում, որի ետևւից մինչև մութն ընկնիլն հալածում է Մատաթովն (Ամէն. Հայ. Կաթ. եր. 257—262 և Գաղտնիք եր. 367—376)։

Պասկևիչն մի գունդ զօրքով սեպ. 10-ին հասնում է Գանձակ հրամանատարի իրաւունքով. թէև մեծ յաղթութիւններն արդէն կատարուած էին Մատաթովի ձեռնով, այսու ամենայնիւ հրամանատարութիւնը յանձնում է վերջինս առաջնոյն։

Հայ նշանաւոր բանաստեղծներից մին՝ Միսկին-Բուրջին՝ բանահիւսական տաղաչափով, բայց Ադրբեջանի թուրքերէն լեզուով յօրինած է մի գովելի երգ (1), որի մէջ գեղեցիկ դասաւորութեամբ նկարագրած է երկու կողմերի բանակների զօրաթիւերը, խաների և աստիճանաւորների քանի անձն լինելը, հրամանատարների ով լինելը, Մատաթովի յաղթութիւնները,

1) Տես Գաղտնիք եր. 373—376։

ռուս և հայ զօրաց քաջութիւնները, են, են, որը կարծէք դոնէ միանգամ ականել։

Հրաման է ստանում կնեազ-Մադաթօվը, որ իւր յաղթութեանց համար կայսրից ստացած էր ադամանդազարդ թուր և գեներալ-լէյտէնանտի աստիճան, արշաւել մի քանի գունդ զօրքով Պարսից սահմանն և նուաճել այն թափառական Շահսէւան և ուրիշ ցեղերը, որք ձմրան եղանակներում իջնում էին Մուղանի դաշտն և պատճառում մեծամեծ վնասներ։ Մադաթօվը կազմում է Արցախի, Շաքուայ և Շամախու հայ քաջերից ձիաւորներ և հետևակ գնդեր. մի գունդ ռուս հետևակ և 600 զազակ։ 1826-ի դեկտեմբեր ամսում Մադաթօվը այդ կազմակերպութեամբ և մի քանի թնդանօթով անցնում է Երասխից և Դիլաւորդի կրճից, յարձակւում վերջիշեալ ցեղերի վերայ, ապա Միշկինի գաւառի վերայ և յափշտակում 80,000 ոչխար, 15,000 կով, եզն, երինջ և արջառ, 4,000 ձի և 3,000 ուղտ և աւանակ և փոխադրում Արցախ։ Մադաթօվը յաղթանակաւ մտնում է Միշկինի Լօռի քաղաքն, ապա մօտենում Հէքերի քաղաքին, զայն ևս գրաւելով, սակայն քաղաքի կողմից ներկայանում են պատգամաւորներ և հպատակութիւն խոստանում։ Ձմրան պատճառաւ դառնում են Արցախ (Գաղտնիք եր. 377—379)։

Երմօլօվը ևս մի քանի գունդ զօրքով հալածում է Շաքուայ, Շամախու, Բագուի, Ղուբայի և Դարբանդի ապստամբները և ապստամբութիւն քարոզող պարսիկ հոգևորականները. Թիփլիս դառնալուց յետոյ 1827-ին փետր. 15-ին գրում է Աշտարակեցի Ներսէս եպիսկոպոսին. «Երբ ես... Շիրուանի (Շամախու) գաւառումն էի, ի մեծ բաւականութիւն իմ ամենքն միաձայն վկայեցին ինձ, թէ թշնամու արշաւած միջոցին և այն ներքին խռովութեանց ժամանակ, երբ տիրել է կատարեալ անիշխանութիւնն, Ձերդ Սրբազնութիւնդ արժանաւոր հանդիսացաք թէ որպէս պաշտօնեայ տաճարի, թէ որպէս քաջ հովիւ Ձեզ յանձնուած հօտի, և թէ վերջապէս որ-

դէս խիստ պահապան օրինական իշխանութեան։ Դուք այս գովելի զգացմունքը արծարծեցիք նաև Ձեր ժողովրդի մէջ։ Այսպիսի միայնութիւնները, որը վաւերացրած է իւր կողմից տեղական իշխանութիւնն. քաղցր պարտաւորութիւն են դնում իմ վերայ, որպէս երկրի գլխաւոր կառավարչի, յայտնել Ձեզ, ով հովուապետ, երախտագէտ տէրութեան հարկ եղած շնորհակալութիւնը։ Ընդ սմին աւելացնում եմ իմ կողմից որ Ձեր ամեն մի գովելի գործը յօգուտ իմ ամենողորմած թագաւոր կայսեր, միշտ ամենաջերմեռանդօրէն կըվկայուի իմ կողմից և կաւելացնէ իմ կատարեալ յարգանքս և անձնուիրութիւնս, որ ունիմ առ Ձեզ...»։

«Կովկաս գալու օրից. Պասկևիչը մտքում դրեց տապալել բազմաշխատ Երմոլովին։ Սիրելի լինելով կայսեր և օգուտ քաղելով ստացած իրաւունքից՝ բանակցել կայսեր հետ ուղղակի և առանց նախարարաց միջնորդութեան, Պասկևիչը ամենասև գոյներով էր նկարագրում թէ Երմոլովին թէ երկրիս գլխաւոր գործիչներին և թէ քաջութեամբ հռչակուած Կովկասեան ռուսաց բանակը։ Նա անբաւական էր երկրիս մէջ եղած կարգ ու կանոններից և ամեն բանի մէջ գտնում էր չարագործութիւն և դաւաճանութիւն։ Բայց երբ Երմոլովին տապալելուց յետոյ ինքը դարձաւ երկրիս կառավարչապետ, նա չէր խղճահարում գովել և երկինք բարձրացնել իւր ամբաստանած զօրաց քաջութիւնները, օրինապահութիւնը և այն ամենը, ինչ որ վաղուց կարգել սարքել էր Երմոլովը։ Պասկևիչի երկերեսանի վարմունքը նկատելի էր նորա ամեն մի քայլում, ամեն մի գրութեանց մէջ։ Ելիսաւէտպոլի յաղթութիւնից յետոյ՝ զօրքերին տրուած հրամանագրում նա հիանում էր Մատաթով և Վէլիամինով գեներալների գործած քաջութիւններով. իսկ կայսեր գրում էր թէ գործը աւելի յաջողութիւն կունենար, եթէ Մատաթովը և Վէլիամինովը չէին եղել, նա»։

«Կայսերական հրամանաւ 1827-ի մարտի 20-ին Երմոլովի փոխարէն Կովկասի կառավարչապետ նշանակուեցաւ Պաս-

կեւինը։ Անմիջապէս զրկուեցին պաշտօններից նոքա, որոնք սիրելի կամ մօտ էին Երմօլովին։ Տապալուեցան երկու եղբայր գեներալ Վելիամինովները, նշանաւոր Դաւիդովը, իշխան Մադաթովը և այլք. իսկ յետագայ տարիներում, ինչպէս պիտի տեսնենք, հալածման ենթարկուեցին գեներալ Կրասովսկին, հայազգի գնդապետ Ղազարոս Լազարեանցը, Ներսէս Աշտարակեցին իւր Ալամդարեանով և շատ ուրիշները»։

Թշնամիներն այնպէս հասկացրած էին Երմօլովին, որպէս թէ Սարգիս կաթուղիկոսն Մէլիք-Վանին-Մէլիք-Ֆրիդոնեան Մէլիք-Յովսէփ Բ. բարեկամ լինելով Պարսից, աշխատել են Աբաս-Միրզային յանձնել Շուշին։ Այս պատճառաւ կոչւում է Թիփլիս Սարգիս կաթուղիկոսն և աքսորւում են Բագու երկու մէլիքներն։ Սակայն երբ քննում են զգուշութեամբ եղելութիւնները, երեւան են գալիս երեքի անմեղութիւնն և ազատւում են երեքեան էլ 1827-ին։ Բայց ծերունի Սարգիս կաթուղիկոսի վերայ այն աստիճան խոր ազդում է այս հանգամանքներն, որ մտնում է անկողին և վախճանում 1828-ին և թաղւում Գանձասար վանքի գաւթում, որի հետ թաղւում է նաև 1500 տարի ապրած Աղուանից կաթուղիկոսութիւնն։

## ԼԳ. ԳԼ.

### Նահատակութիւն կաթուղիկոսութեան Աղուանից։

Աղուանից կաթուղիկոսութիւնն ոչ Աղթամարի կաթուղիկոսութեան նման հակաթոռ էր Էջմիածնի և ոչ Սսոյ նման. այլ օրինական կարգաւ սկսուած էր Թադէոս Ս. Առաքեալի աշակերտ Եղիշ Առաքեալից և վերահաստատուած նոյն իսկ Հայաստանեայց Ս. Հայրապետ առաքելաարաս Ս. Գրիգոր Լուսաւորչի յատուկ ձեռնադրութեամբ Ս. Գրիգորիսի։

Աղուանից կաթուղիկոսներն ամենամեծ մասամբ միշտ հլու, հնազանդ և հպատակ եղած են Հայոց ընդհանրական Հայրապետներին. նոյնպէս և Աղուանից քրիստոնեայ ժո-

ղովուրդն և իշխաններն Հայոց Հայրապետներին և Թագաւոր-ներին, բացի մի քանի ինքնակոչ, ապօրինի և ըստ Գաղտ-նիքի ճրո կաթուղիկոսներից։

Պատմութեանս ընթացքում ակներև տեսանք որ Աղուա-նից հոգևոր և մարմնաւոր պաշտօնեաններն նախանձախնդիր էին և ջերմ աւանդապահ կարգապահութեան։ Երբ պատահում էր որ և է ինքնակոչ և ճրո կաթուղիկոս, կամ նշմարուում էր նորա՝ վերայ Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դաւա-նութեան հակառակ ձեռնարկութիւն, իսկոյն բողոքում էին Հայոց Հայրապետին։ Վերջինս անձամբ իջնում էր իւր բանի-բուն եպիսկոպոսներով Աղուանք, արդար քննութեամբ պատ-ժում օրինազանց ինքնակոչը և օծմամբ հաստատում հասա-րակութեան նոր ընտրածը։

Օրինակի համար Հայոց Աբրահամ Ա. և Յովհաննէս Գ. հայրապետների օրով պատահում է Աղուանքում երկու ինք-նակոչ և ապօրինի կաթուղիկոս, բայց Հայոց Կոմիտաս Հայրա-պետն կրկին միաբանում է Աղուանից հոգևորականները և ժո-ղովուրդը Մայր-Աթոռ Էջմիածնի հետ (տես Պատմութեանս Ա. Հատ. եր. 33)։

Փրկչական 700 թուականին Աղուանից Ներսէս Բակուր Ա. կաթուղիկոսն աշխատում է քաղկեդոնիկ դարձնել ժո-ղովուրդը։ Եպիսկոպոսներն և իշխաններն յայտնում են Հայոց Եղիա Հայրապետին, որ անձամբ իջնում է Աղուանք, պատժում օրինազանց և խոտոր Ներսէսը և օծելով նորընտիր Սիմէօնը կաթուղիկոս՝ յետ դառնում (Նոյն Հատ. եր. 120—123)։

Աղուանից Համամ Թագաւորն յայտնում է Յունան ինք-նակոչ և ապօրինի կաթուղիկոսի մասին Հայոց Գէորգ Բ. Հայ-րապետին, որ յուղղութիւն ածելով յանցաւորը օծում է կա-թուղիկոս ըստ խնդրանաց Թագաւորին (Նոյն Հատ. եր. 34 և 160)։

Աղուանից ինքնակոչ և ապօրինի Գագիկ կաթուղիկոսի մասին յայտնում է Հայոց Անանիա մոկացի Հայրապետին, որ

Խաչէն դնալով անում է ժողովներ, կարգալոյծ անում խոտոր Գագիկը, օծում նորընտիր Դաւիթ Զ. կաթուղիկոսը 942 Փրկչական թուին (նոյն հատ. եր. 33 և 164—169)։

Հայոց Սիմէօն, Ղուկաս և Եփրեմ հայրապետներն և Աշտարակեցի Ներսէս եպիսկոպոսն փոխանակ իւրեանց վերոյիշեալ նախորդաց նման անձամբ պատժելով արմատախիլ անելու Աղուանից երկրիցն խոտորաշէնցի չորս ինքնակոչ, այօ-քինի և ճրռ երլմնազանցները, աշխատեցին նահատակել Աղուանից 1500 տարի կեանք ունեցող կաթուղիկոսութիւնը․ այո, այն կաթուղիկոսութիւնը, որ պահպանած էր իւր գոյութիւնը Պարսից, Արաբացւոց, Խազրաց, Սև-հոնաց, Նենգ Յունաց, Թաթարաց, Չինկիզ-խանի, Լանկ-Թամիրի, Սելճուկեանց, Օսմանցւոց և դարձեալ Պարսից բռնութիւններից, բայց հոգին փչեց Ռուսաց կենսատու իշխանութեան ժամանակ...

Աղուանից Եսայի և Յովհաննէս կաթուղիկոսներն իրաւունք ունէին նուիրակ ուղարկել Հաշտարխանի վիճակն. քանզի որպէս գիտենք, Արցախի, Շամախու, Բագուի, Ղուբայի և Դարբանդի գաւառներից շատ ժողովուրդ տեղափոխուած էր Հաշտարխանի վիճակն։

Աղուանից Սարգիս Բ. կաթուղիկոսն անիրաւութիւն չըգործեց այն դառն հանգամանքներից ստիպուած գնալ դէպի Հաղբատի վանքն. որովհետև իւր ժողովրդեան մի ստուար մասն տեղափոխուած էր Բոլնիսի, Բորչալուի և Ջաւէի (Ղազախի) գաւառներն։ Սակայն ցաւալի ճշմարտութիւն է ասել որ կոշտ վարուեցան Սարգսի հետ։

«Ներսէս Աշտարակեցին նշանակուելով Անդրկովկասի ռուսահպատակ հայոց առաջնորդ, իսկոյն ձեռնամուխ եղաւ վերջ տալու Աղուանից հինաւուրց կաթուղիկոսութեան։ Եփրեմի (կաթուղիկոսի) և Ներսէսի այս մասին ունեցած բանակցութիւնները Ռուսաց տէրութեան հետ կատարելապէս յաջողեցան և 1815 թուին Աղուանից Սարգիս կաթուղիկոսը պաշտօնապէս հռչակուեցաւ որպէս միայն արքեպիսկոպոս կամ

մետրապօլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի (Արցախի)։ Այնուհետև զրկուած ամենայն իշխանութիւնից և որպէս լոկ վանահայր, նա քաշուած էր գործերից և հանգիստ (լաւ հանգի՞ստ է) ապրում էր Գանձասարում» (Ամեն. Հայ. Կաթ. Մասն Ա. եր. 250—256)։

Ազնիւ ընթերցող, ահա այսպէ՞ս նահատակուեցաւ Աղուանից 1500 տարի ապրած ծերունազարդ կաթուղիկոսութիւնն և այսպէ՞ս հանգիստ ապրելով? մեռաւ Սարգիս Բ. կաթուղիկոսն...

Այնուհետև Աղուանից երկիրն, վերածուելով 2 առաջնորդական թեմի և մի յաջորդական վիճակի, միանում է Հայոց կաթուղիկոսութեան հետ։ Բերդաձոր, Դիզակ, Վարանդայ, Խաչեն, Ջրաբերդ և Կիւլստան, Լանքարան, Շաքի քաղաք իւր Կապաղակ, Հողի, Խենի, Կապլեան (այժմ Ճառ.) և Արաշ գաւառներով միասին Շուշու կամ Արցախի թեմ։ Իսկ երկրորդ՝ առաջնորդանիստն Շամախի քաղաքն է, որի թեմ համարուած է Դարբանդն, Ղուբան, Բագուն իւրեանց գիւղերով և Շամախու գիւղերովն և Սալեաննն։

Յաջորդանիստն է Գանձակ քաղաքն, որին ենթարկուում են Արցախի Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուսար և Ջաւէ գաւառներն և այս ամենն ենթարկուում են Թիփլիսի կոնսիստորիային։

## ԼԴ. ԳԼ.

Հայ կամաւորներ ռուս զօրաց մէջ.—Ներսէս եպիսկոպոս զօրաց մէջ.—Բէկկէնդորֆ և Պասկևիչ գրաւում են Էջմիածինը, Հին-Նախիջևանը, Աբասապատը, Ջևանբուլաղը, Երևանը, Մարանդը, Թաւրիզը, Ուրմիան և Արդաւիլը.—Դաշնադրութիւն Թիւրքմէն-Չայի.—Գաղթականութիւն Հայոց։

1827-ին առանձնապէս զեկուցանում են Նիկողայոս Ա.

կայսեր, որ Ռուսաց զօրքն անբաւարար է Անդրկովկասում. քանզի մի կողմից անկարգութիւններ են անում տեղական պարսիկ բնակիչներն, միւս կողմից գործում են յարձակումներ Լեկզիներն և տալիս վնասներ. երրորդ կողմից զինւում են Օսմանցիք և պատճառում են վնասներ սահմանակից Թիւրքերն։ Հետևապէս հարկ է տեղական օգնութիւն, մանաւանդ տեղական քաջ Հայոց օժանդակութիւնն, որ արդէն յայտնի է և հռչակուած է իւր վերջին ծայր հաւատարմութեամբ դէպի Ռուսաց կառավարութիւնն։

Նիկողայոս Ա. կայսրն հետևեալ հրովարտակով իրաւունք և արտօնութիւն է տալիս Ներսէս Աշտարակեցուն կազմել հայ զօրագունդ (1)։ Հրովարտակում, ի միջի այլոց գրուած է... «Քակտելն Պարսից զխաղաղութիւն և յանկարծ յարձակիլ նոցա ի սահմանս Մեր, առիթ ետուն ազգի Հայոց բնակելոց ի Վրաստան (և յԱզրուանս) յայտնել իսկութեամբ զջերմեռանդութիւն իւր և զանկեղծաւոր անձնարնծայութիւն Մեզ»։ Վերջաբանութեան մէկ գրուած է. «Վերաբերելով զգովանի յընթացս Հոգևոր հոտի Ձերոյ և առ ներգործութիւն հավուական յորդորանաց Ձերոց՝ Մեք յայտեմք Ձեզ գկայսերական երախտագիտութիւն Մեր... 2 փետ. 1827, յերկրորդում ամի թագաւորութեան Մերոյ»

ՆԻԿՈՂԱՅՈՍ»։

Ներսէս եպիսկոպոսն կազմակերպում է հայ հեծելազօրք, մարտ ամսում կամաւոր զինուոր են գրւում Թիփլիսում 200 հայ քաջեր և օր քան զօր շատանում։ Սրբազանն ձին հեծած՝ օրհնում, խրախուսում և յորդորում է հայ զօրագունդը լինել քաջ, ժիր, աներկիւղ և հաւատարիմ։ Պարսից դարաւոր բռնութիւններից և կեղեքումներից զզուած հայերն սիրով գրւում

1) Հրովարտակը տես Ամեն. Հայ. Կաթ. Մասն Ա. եր. 269—270)։

են կամաւոր զինուոր և աջակցում իւրեանց 800 առանձին գնդով ռուս զօրքին, որ արշաւում է Երևանեան նահանգին վերայ 1827-ին գարնան առաջնորդութեամբ Ներսէս սրբազանի և զօրավարութեամբ Բէկկէնդորֆի։ Բայց մինչև սոցա հասնելն՝ պարսիկներն Արարատեան նահանգի հայերից շատերը քշում են Երասխի այն կողմն։ Ներսէսի և Բէկկէնդորֆի միացեալ բանակն գրաւում է Էջմիածինը և Սարդարապատը, իսկ Պասկևիչի բանակն գրաւում է Հին-Նախիջևանը և Աբասապատ բերդը և խլում Պարսից հաղորդակցութիւնը Երևանի հետ, որ անճարացած անձնատուր է լինում։ Սակայն մեծ վնաս է կրում նոյն նահանգի հայն թէ ընչից նկատմամբ և թէ բնակարանների. շատ հայեր էլ, աչք արած մահը, անծանօթ տեղերով առաջնորդում են Պասկևիչի բանակը, թշնամու բոլոր շարժումները յայտնում Պասկևչին և ռուս զօրքի հետ պատերազմում Պարսից զօրաց դէմ և գրաւում Ջևանփոլատը, որի առաջ գումարուած է լինում Աբաս-Միրզայի առաջնորդութեամբ պարսիկ զօրքն։

Այնուհետև ռուսներն արշաւում են Պարսկաստանի վերայ, և գրաւում հետզհետէ Մարանդը, Թաւրիզը, Ուրմին և Արդաբիլը և կնքում Թիւրքմէն-Չայի դաշնադրութիւնը 1828-ին փետ. 10-ին, որի գլխաւոր պայմաններից Ա. էր թողնել Ռուսաց Երասխ և Կուր գետերի մէջ եղած Հայաստանի մասը. և Բ. բնաւ արգելք չդնել Պարսկաստանից Ռուսաստան գաղթել ցանկացողներին։

Պարսկահպատակ հայերից 40,000 հոգի գաղթում են Լազարեան հայազգի Ղազար գնդապետի յորդորմամբ, որից մեծ մասը բնակեցնում են Արարատեան նահանգում և փոքր մասը Աղուանից երկրում (1) այս է Շաքուայ Հողի և Խէնի գաւառ-

1) Ամեն. Հայ. Կաթ. Մասն Ա, եր 271—338 և Պատ. Հայոց Ս. Պալասանեան եր. 435—437։

ներում և Ուտի-Առանձնակ և Խաչէն գաւառներում (1)։ Մարաղա գիւղի բնակիչները, որ գաղթած են Պարսկաստանի Մարաղայից, նախ բնակեցնում են Պարտաւում. Ա. տարում մեռնում են սոցանից մեծ և փոքր 1012 մարդ՝ անկարող լինելով տանել տեղի տենդաբեր և ամրան հեղձուցիչ ծանր օդը, վասն որոյ փոխադրում են մնացեալները Մարաղա այժմեան բնակարան միջնորդութեամբ Զուբաբով ռուս ատաենանաւորի (Ամեն. Հայ. կալծ. Մասն. Ա. եր. 333—236)։

## ԼԵ. ԳԼ.

## Վ ե ր ջ ա բ ա ն ո ւ թ ի ւ ն

Վերջապէս ստացանք դեր. Տ. Եսայի վարդապետ Տայեցու շնորհիւ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանցի գրած «Աղուանից պատմութեան» արտագրութիւնը։ Բայց չկստահացանք օգտուիլ նրանից. վասն զի հիմնուած չերևեցան մեզ փաստերի վերայ նրա պատմական անցքերն, այս պատճառաւ մենք շարունակեցինք գրել մեր հաւաքածոյքը, որ քաղած էինք հիմնաւոր և վստահելի աղբիւրներից։

Որովհետև ԺԶ.ԺԷ. և ԺԸ. դարերն եղած են Աղուանից երկրի նկատմամբ պատերազմալից և արիւնահեղ ժամանակներ, ուստի համարեա՛ թէ բնաւ մատենագիրներ եկած չեն այդ դարերում Աղուանից երկրում և Արցախում։ Թէև մի և նոյն եղած են գրեթէ ուսումնավայրերն, այն է Գանձասար Խաչենում, Դատի վանք Ռստակում, Ջրվշտիկ Ջրաբերդում, Մլգնաբերդ վանք Արցախի Գարդմանում, Փառիսոսի վանք Փառիսոս գաւառում, Գետիկ վանք Քուստի դաւառում և Հաղբատ։ Սակայն ուսմունքն շարունակուած են ոչ թէ ըստ առաջնոյն հիմնաւոր և բաւարար, այլ կցկտուր և թերի։ Հետևապէս եղած չէ օրինաւոր մատենագիր այդ շրջաններում, այլ եղած են ձեռագիրների վերջում

---

1) Տես Աղ. Երկ. և Դր. եր. 224—225 Ղայա-Բաշի, եր. 231—232 Աղ-Փիլաքեան և Ջափար-Աւատ գիւղերը և Արցախ եր. 34 Մարաղա և եր. 155 Մէյտի-շէն գիւղերը։

գրուած յիշատակարաններ, Շահական հրովարտակներ, Հայրապետական Դիւանի կոնդակներ և սրանց սևագրութիւններն, Աղուանից և Հայոց Ռուսաց հետ ունեցած յարաբերութեանց մասին թղթակցութիւններ, մելիքների նամակագրութիւններ, ռուսական պաշտօնական գրութեանց հաւաքածոյք (ինչպէս են աքտերն), բանաստեղծական և աշուղական երգեր, որպէս են Սայեաթ-Նօվայի և աշուղ Դոնու (Դանիէլ) երգերն, որից առաջնոյն գրուածն խառն է հայերէն, վրացերէն և թիւրքերէն բառերից, և վերջնոյն առածն է թիւրքերէն, այսպէս են մեծ մասամբ և Միսկին-Բուրջու և այլոց երգածներն։ Միայն կանոնաւոր գրուածներն են Յովհաննէս Ծարեցու գրածն և Բէկնազարեանցի Գաղտնիք-Ղարաբաղին։ Ստոյգ խօսելով՝ մէջտեղ երևեցածներն են միայն այդ յիշուածներն։ Հարկ է յայտնել և Բէկնազարեանցի հետևեալ հատուածր. «Բայց հարազատ մելիքներն, (Գանձասարի հայրապետական մատենադարանի) բոլոր ձեռագիրները և թղթերը արդէն կանխաւ երեք մաս բաժանած և թաղցրած էին, յորոց առաջին մասը թաղցրած էին Գանձասարի և Խօթայ վանքի մէջ տեղերում (1) մի քարայրում և բերանը ամրացրած քարուկիր պատով և անյայտացրած. Երկրորդ մասը Ջրաբերդի մի ստորերկրեայ և անյայտ քարայրում, իսկ երրորդը՝ Կիւլստան գաւառի Հոռեկայ վանքի մօտերում» (Գաղտնիք եր. 89)։ Թերևս անհաւանական չէ կարծել, որ թաղցրած ձեռագիրներում եղած լինէին և այդ դարերում գրուած պատմական գրչագիրներ, որք ցարդ մնացած են անյայտութեան մէջ։

Մինչդեռ Հայաստանի ամեն նահանգներում արդէն վաղուց մեռած էր հայկական իշխանութիւնն, բայց Արցախեան նահանգում տակաւին ապրում էր առոյգ Մելիքութիւնն։ Այս իշխանութիւնն, որ սկսած էր Առանից, շարունակելով հասած

---

1) Այս մասի ձեռագիրները գտած է քեօլանի Մաշատի-Մամատ-Օղլին. տես Գաղտնիք-Ղարաբաղի եր. 89։

էր Վաչական Ա. Թագաւորին. այսինքն է նահապետական իշխանութիւնից բարձրացած էր Թագաւորական իշխանութեան, Թագաւորական իշխանութիւնից խոնարհած էր մարզպանական կուսակալութեան, կրկին բարձրացած Թագաւորական աստիճանին Գագիկ, Աբրներսէհ, Իշանակ, Սենեքերիմ, Գրիգոր և Փիլիպպոս Թագաւորներով, ապա վերստին իջած իշխանական կառավարութեան և հուսկ յետոյ Մէլիքութեան։ Զնայելով իշխողական ձևերի կամ եղանակների փոփոխութեանց, այսու ամենայնիւ յարատևած է այն 1785 տարի։ Վերջապէս մեռնում է այս ճիռ օրհնութեան մէլիքական իշխանութիւնն 1833 Թուականին և Թաղւում վերջին Մէլիք-Խուդատ Մէլիք-Շահնազարեանցի հետ նորա գերեզմանում։

Ով որ ուշադրութեամբ թերթել է Արցախ գիրքը, նա անշուշտ ծանօթացած է Արցախի վանօրէից որմերի վերայ քանդակուած ընդարձակ արձանագրութեանց, որովք նուիրած են վանքերին և մատուռներին հայ Թագաւորազներն, իշխաններն, մէլիքներն և մէլիքազուններն գիւղեր, ագարակներ, կալուածներ, հողեր, քարահանքեր, արօտատեղիներ, ևն։ Օրինակի համար վեր առնենք միայն Գտիչ վանքի կալուածքը, զոր նուիրած են Դիզակի Գագիկ Թագաւորի հետագայ ազգականներն և զոր մատնանիշ են անում նոյն վանքի մշտախօս արձանագրութիւններն. «Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ես Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսք հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ (1241) Թվիս. շատ աշխատութեամբ աւաղ խորանն խրփեցաւ և եղբայրս իմ Տէր-Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ։ Ես Տէր-Վրդանէս կատարեցի բազում աշխատութեամբ և հալալ արդեամբք իմովք ՈՂԷ Թվիս ի դառն և ի նեղ ժամանակիս... վիճակեցաւ և սահմանով ի յԱղուանոյ գետոյ մինչ ի Երասխն, մինչ ի Աւազն կատուհատի, Վակունիս Վաղազնագետով, ի Քարատնիս և Խոզանագետոյն, Ջառիստ իւր գետովն. Հաքարի Հագարագետովն, Քրտագէտ իւր գետովն, իւր սահմանովն, Դիզակ, Բելուկան իւր գետովն և Հայրենիքն եկեղեցւոյս

տուրինք, Փարախն և Գոտանոցն, Եկեղեցաձորն իւր սահմանովն. Ա.(մի) լուծ (մի օրավար) հող ի Ցայխս, Ա.(մի) լուծ ի Դող, ի Գագս (այժմ Հկակու) Ա. (մի լուծ) ի Մոխրենիս։ Ով որ յայս սահմանէս յետ առնէ կաթուղիկոս կամ իշխան կամ հայրապետ, երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի, յԱստուծոյ և յամենայն սրբոց անիծեալ, մասն և բաժին ընդ Յուդայի առցէ»։

Այժմ շնորհիւ անարդար դատաստանի այնպէս կողոպտած են Նրու-բէկերն այդ վերոյգրեալ ընդարձակածաւալ վանքապատկան կալուածները և այնպէս զրկուած է հնադարեան սրբավայր Գտիչ վանքն իւր սեփականութիւններից, մինչև անգամ չունի այսօր տասն օրավար հող։ Այսպէս իմացէք և միւս բոլոր վանքերի, մատուռների, եկեղեցիների և մէլիքների կալուածների մասին առհասարակ։

Մէլիք-Նրու-խանի և իւր համախոհների կեղծ թալղաներն մեծամեծ հարուածներ տուին այսպէս վանքապատկան, եկեղեցապատկան և մէլիքապատկան հողերի սեփականութեանց։ Փանահ, Իբրահիմ և Մէլիքուլի-Նրու-խաներն և այն Նրու բէկերն, որք թզաչափ տեղ կամ հող չունէին Արցախում և Ուտեաց նահանգում, տէր եղան նոյն շինծու թալղաներով մեծ կալուածների, ագարակների, հողերի և գիւղերի, բայց աւաղ, զրկուեցան վանքերն, եկեղեցիներն, մէլիք-ժառանգներն և ժողովուրդն իւրեանց սեփական հողերից և պապենական արդար իրաւունքներից։ Որովհետև այն արքունի մասնաժողովն, որ ստանձնած էր մեծ պարտաւորութիւն գտանել արդարութիւնը անիրաւութիւնից, ճշմարիտը՝ ստից և իսկականը՝ կեղծից, չարդարացուց տէրութեան և հայ հասարակութեան յոյսը, այլ ի շնորհս Մադաթովին պարգևած 15 գիւղին և ի շնորհս այս ինչ կամ այն ինչ անդամին տրուած հողերին, յաղթահարուեցաւ Արդարութիւնն անիրաւութիւնից, ճշմարտութիւնն՝ ստութիւնից և Իսկականն՝ կեղծից։

Այս իսկ է մի մեծ զարմանք—ինչպէս Ռուսաց Տէրու-

թեան դէմ անհաւատարմութիւն գործող, նորա թշնամու կողմն անցնող և պարսկական բանակը Ռուսների դէմ առաջնորդող ճրռ-խաներն և ճրռ-բէկերն դարձեալ ընդունուեցան Անդրկովկասում և դարձեալ նոյն կերպ թղթերով տէր դարձան վանական, մէլիքական և ժողովրդական արդար սեփականութեանց, իսկ Ռուսաց Տէրութեան ամենահաւատարիմ հպատակ և անձնուէր հայերն զրկուեցան իւրեանց դարաւոր պապենական արդար իրաւունքներից։

Ահա այսպէ՛ս վարձատրուեցան հայ քաջերի և մէլիքների արիւնալի և հաւատարիմ ծառայութիւններն. այսպէ՛ս վարձատրուեցան այն արցախեցւոց դարաւոր հերոսական յաղթանակներն, որովք յաղթահարեցին Պարսից և Օսմանցւոց բըռնութիւնները։

Մէլիքազուններին մնացին միայն սակաւ հողեր, որք դըժուարութեամբ ապրում են նըւանց տասնորդներից գոյացած արդիւնքներով...։

# ՑԱՆԿ

## ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ Բ. ՀԱՏՈՐԻՍ

Աբամելիքով Գրիգոր
Աբաս-Միրզա
Աբդլ-ազիզ-խան
Աբդուլլա փաշա (Քեօրֆիւլու-զադէ)
Աբէլ Պապօա
Աբրահամ Բէկնազարեանց
Աբրահամ-Իւզբաշի
Աբրահամ կրետացի կաթ. Հայոց
Աբրահամեան Ղազար
Ադիլջէ-բէկ
Ադլ-Շահ
Ազատ-խան

Ազգաբանութիւն Արցախի Գարդմանի մէլիքաց

Մէլիք-Շահնազար
Մէլիք-Յովսէփ Ա.
Մէլիք-Եաւրի
Մէլիք-Յովսէփ Բ.
Մէլիք-Գաբրիէլ
Մէլիք-Յովսէփ Գ.
Քոչարի-բէկ

Ազգաբանութիւն Գեղարքունեաց Մեծ-Մազրայի և Ծարի

Մէլիք-Ուլուբէկ Շահանշահեան
Մէլիք-Աբով Ա.
Մէլիք-Բէկ Ա.
Մէլիք-Շահնազար Ա.
Մէլիք-Եաւրի
Մէլիք-Քամալ կամ Քեամալ
Մէլիք-Շափուր
Մէլիք-Աբով Բ.
Մէլիք-Բէկ Բ.
Մէլիք-Շահնազար Բ.
Մէլիք-բէկ Գ.
Աղաջան-բէկ
Միրզաջան-բէկ
Միանսար-բէկ
Մէլիք-Բիւլբիւլ
Մէլիք-Բարսեղ
Ծատուր-բէկ, որդի Միրզաջան-բէկի
Դաւիթ-բէկ, որ և Միր-Դաւիթ-խան

Ազգաբանութիւն Դիզակի վերջին իշխողաց

Մէլիք-Սուջում
Մէլիք-Աւան Ա.
Մէլիք-Բախտամ Ա.
Մէլիք-Աւան-Բ. որ և Մէլ.-Եկեան

Մելիք-Արամ
Մելիք-Եսայի
Մելիք-Բախտամ Բ.
Պարոն Յակովբ Մել.-Բախտամեան

Ազգաբանութիւն մելիքաց Կիւլստանի

Աղբուղէ
Տուրսուն
Այդին-Իւզբաշի
Ղարա-Հասան-Իւզբաշի
Վարդան-Իւզբաշի
Դաւիթ-Իւզբաշի
Աբով-Իւզբաշի, որ և Մել.-Աբով Ա.
Մելիք-Բէկլար Ա.
Մելիք-Աբով Բ.
Մելիք-Իսախան
Մելիք-Թամրազ
Մելիք-Յովսէփ
Մելիք-Բէկլար Բ.
Մելիք-Աբով Գ.
Մելիք-Փրէյդիւն կամ Ֆրիտոն
Բէկլար-բէկ

Ազգաբանութիւն Ջրաբերդի մելիքաց

Մելիք-Հայկ
Մելիք-Եսայի
Մելիք-Մէժլում Ա.
Մելիք-Իսրայէլ
Մելիք-Ալլահղուլի-Սուլթան
Մելիք-Ադամ Ա.
Մելիք-Մէժլում Բ.
Մելիք-Ադամ Բ.
Աթաբէկ որդի Ալլահղուլի-Սուլթանին
Մելիք-Վանի

Ճիւղաւորութիւն, ճիւղագրութիւն Բէկ-Յովսէփեան տոհմի, ճիւղագրութիւն Մէժլում-բէկի տոհմի

Ազգաբանութիւն Ջալալեան տոհմի իշխողաց

Ջալալ Բ.
Վելիջան-բէկ Ա.
Հատիր-Մելիք
Մէհրաբ-բէկ
Բաղդասար-բէկ
Վելիջան-բէկ Բ.
Մելիք-Գրիգոր
Մելիք-Ալլահվերդի
Մելիք-բէկ
Դանիէլ-բէկ
Բաղդասար-բէկ, որ է Բաղդասար մետրապօլիտ

Ազգաբանութիւն Վարանդայի միջին իշխողաց

Հախիջան
Մելիք-Պապի
Մելիք-Փաշա կամ Փաշիկ
Մելիք-Դանիէլ

Մէլիք-Աւան
Մէլիք-Աղամ
Մէլիք-Մուղաֆֆար
Ներսէս-բէկ Մէլիք-Փաշաեանց

Ազգաբանութիւն Վարանդայի վերջին իշխողաց

Մէլիք-բէկ Ա.
Մէլիք-Բաղի Ա.
Մէլիք-Շահնազար Ա.
Մէլիք-Պաղի կամ Պաղիր Բ.
Մէլիք-Ցիւսէին
Մէլիք-Յովսէփ
Մէլիք-Շահնազար Բ.
Մէլիք-Ջիւմշիւտ
Մէլիք-Ջհանբաշխ
Մէլիք-Խուդատ
Պօղոս-բէկ Մէլիք-Ջիւմշիւտեան
Յովսէփ-բէկ Միրզաեան
Ազարիա եպիսկոպոս
Ազնաւուր Ուհան
Ազրայէլ Աբր. տես Աբրահամ-Բէկնազարեանց
Աժդահա-Անդրի
Ալամդարեան Յարութիւն վարդ.
Ալանք տես Լէկզիներ
Ալթուն-Թախտ
Ալիքսէյ Երմալով կամ Երմօլով
Ալի-Մարդան-բէկ Իւզբաշի
Ալի-Մուրատխան և այլ
Ալի-Սուլթան
Ալի-Փաշա
Ալլահեար
Ալլահվերդի-Իւզբաշի, տես Ճրա-մէլիք-Ալլահվերդի
Ալլահվերդի-Սուլթան
Ախալցխա
Ախսախ-Մահմատ
Աղա-Մամատ-խան-Շահ
Աղաջան
Աղաջանեան Յովակիմ
Աղասի-բէկ
Աղա-Սուլթան
Աղդամ-գիւղ
Աղէքսանդր Ա. կայսր
Աղէքսանդր Երիցեան
Աղէքսանդր Թագաժառանգ վրաց
Աղէքսանդր Թագաւոր Վրաց
Աղէքսանդր Ջուղայեցի կաթ. Հայ.
Աղեքսանդրապօլ
Աղուանք
Աղուանից Երկ. և Դրաց.
Աղջա-Ղալա
Աղջկա-բերդ
Աղրի-բէկ
Ամարասայ վանք
Ամարասք
Ամեն Հայ. Կաթ. Մասն Ա.
Ամիրասլան-խան
Ամիրգունա-խան Գանձակի
» » Հին-Նախիջևանի
Ամիրխան-Սարդար
Անանիա Մոկացի կաթ. Հայոց
Անաստաս
Անգութ-Խաչի
Անդուն քահանայ
Անդրկովկաս
Անինֆելդ գիւղ
Անյաղթ-Ղազար
Աշուղ Դոնի
Աշրաֆ-Շահ
Առան
Առանշահիկ

Առաջաձոր
Առատեն
Առաւէնից վանք
Առաքել վարդապետ
Առաքելեան Գրիգոր
Առստամ-Իւզբաշի
Ասատ-Սուլթան
Ասլանդուզ
Ասլան-Մանուչար
Ասկարան
Ասպահան
Աստարապատ
Աստուածատուր Նիժեցի
Աստուածատ. որդի Մարուխան
Ասրի-բէկ Սուրհանդակ
Ատինաղուրդ
Ատրներսէհ թագաւոր
» իշխան
Ատրպատական
Արաբ
Արաբացիք
Արաշի բերդ
Արարատեան դաշտ
Արդաւիլ
Արզումանով Աւետիք
» Յակոբ
Արեշով Գէօրգի
Արիֆ-Ահմէտ փաշա
Արութիւն գետակ
Արցախ գիրք
Արցախ նահանգ
Արցախայ ս.Աստուածածին և ս. Ստեփաննոս վանքեր
Արցախի Գարդման
Աւագ-Իւզբաշի
Աւագ-վարդապ.-Դալի-մահրասա
Աւան-Իւզբաշի
Աւետարանոց աւան
Աւետարանոց բերդ կամ ամրոց
Աւետիքով Աւետիք
Աւշառ-Սուլթան-Հիւսէին
Աւշառ-Փաթալի-խան
Ափանասս Միխայէլովիչ
Աֆղանստան
Բաբաեան Կարապետ
Բաբաեան Մարգար
Բաքանով Կլախա
Բաբախան-Շահ, տես Փաթալի-Շահ
Բաբոնց Մկրտում
Բագու
Բագրատունի Սիմօն թագաւոր
Բադալ Կարապետեան
Բաթման Թոփուզ-Թէոս
Բաթմանղլիջ-Մարտի
Բալա-բէկ
» Ղազար
Բալաքեան
Բախտիար
Բակ իշխան
Բաղաբերդ
Բաղդասարեան Յովհաննէս
Բաղդասարի որդի Թադէոս
» » Մելքոն
Բաղի զօրավար Մէլ. Շահն. Բ-ի
Բաղի-Իւզբաշի
Բայազիտ
Բայաթ
Բանանց գիւղ
Բաշ-կէչիտ
Բասրա
Բասար-կեչար-Գեաբի
Բաստամով Գէօրգի
Բարկուշատ

Բարսեղ եպիսկոպոս
» Նիժեցի
» քահանայ
Բաւարիայի իշխան
Բերդաձոր գաւառ
Բէբիւռ-Մախմուր
Բէրուտով Պէժան
Բժիշկ Միքայէլ Զալեան
Բորչալու
Բրախմագ-Ցովսէփ
Բրետիս
Բուխարա
Բուղդան
Բում աւան
Բումֆ Տէր-Մինաս
Բօնիս
Գաբրիէլ սուրհանդակ
Գաբրիէլ Տէր-Մելքիսեթեան
Գալստեան Եագոր
Գաղղիա
Գաղղիացիք
Գաղտնիք Ղարաբաղի
Գանձակ քաղաք
Գանճա, Կանջա, տես Գանձակ
Գանձակի Նոր-բերդ
Գարգար գետ
Գարդմանի ամրոց—Մլզնաբերդ
Գաւրիլ Իւանիչ Կլովին
Գեղամայ երկիր
Գեղարքունի գաւառ
Գետաշէն
Գետաբակ
Գերմանացի
Գեօրիս կամ Գորիս
Գէորգ Բ. կաթուղ. Հայոց
Գէորգ Դէ-Շափուր
Գէորգ Քանանեանց
Գէորգ ԺԲ Թագաւոր Վրաց
Գիլան
Գիժ-Մանուկ
Գիժ-Մէքի
Գիչի
Գիտնական Ցովսէփ վարդապետ
Գիւլ-Ռւհան
Գիւնի գիւղ
Գիւտ աւ. քահանայ Աղանեանց
Գեներալ Հախվերտով
Գիներալ մայոր Սիպեագին
» Պատօմգին
Գիւլեաթաղ գիւղ
Գլովլինսկին
Գորի
Գուտուղով
Գտիչ վանք
Գրիգոր արքեպ. Մանուչարեան
Գրիգոր Թագաւոր Դարբանդի
» » Փառիսոսի
» Լուսիկեան
Գրիգորիկ անուն կին
Գօումէի որդի Մուրատխան
Դալի-Ղազար
Դաղստան
Դամիր-Ղափու, տես Դարբանդ
Դանիէլ-բէկ Մէլիք-Բէկեան
Դանիէլ Սուրհանդակ
Դասան-Շամախու Գարդման
Դաստակերտ
Դարբանդ
Դարբանդի և Ղուբայի հայերն Ռուսաստանում
Դաւիթ առաջնորդ
Դաւիթ-բէկ Օրբէլեանց
» Ծատրեան, տես Միր-Դաւիթ-խան

Դաւիթ եպիսկոպոս
» իւզբաշի
Դաւիթով
Դերջան քաղաք
Դիզակ գաւառ
Դիլանչի-բէկ
Դիլաւուրդի կիրճ
Դիբօնոկ դեսպան
Դիւան Հայ. Պատ. Ա.-Բ. գիրք
» » » Գ. »
» » » Դ. »
» » » Ե. »
Դիւսելդորփ
Դմանիս
Դող աւան
» կամ Գտիչ ամրոց
Դրախտիկ
Դոլկորուկով
Դոփ
Եաղուբ-Շահ
Եաւրի որդի Ազաջանի
Ելէնդորֆ
Եկատարինէ Ա. կայսրուհի
» Բ. »
Եկատարինոդար
Եղիա եպիսկոպոս
Եղիազար կաթուղ. Հայոց
Եղիազարով Զուրաբ
Եսայի վարդապետ Տայեցի
Երասխ գետ
Երասխաձոր
Երևան քաղաք
Երից-Մանկանց վանք
Երմալով կամ Երմօլով կուսակալ
Երուանդ Լալաեան
Երուսաղէմ
Եւդոկիա
Եւրոպա
Եփրեմ կաթուղ. Հայոց
Զակամ
Զամ-Միրզա, տես Շահ-Սեֆի Ա.
Զանկազոր
Զարբազան-Եուղուրլու
Զար-Զբիլ, տես Ծար գաւառ
Զաւէ գաւառ, տես Ղազախ
Զաքաթալա, տես Ճառ քաղաք
և Ճառ գաւառ
Զաքարիա արքեպիսկոպոս
» Իւզբաշի
» վարդապետ
» սարկաւագ
Զենդ-Ասկեար-խան
» Քեարիմ-խան
Զընդան-Աւթանդիլ
Զիլփիզար-խան
Զինջիլղուան-Ալի փաշա
Զուբով
Զուրաբ-խան
Էյլարով Քայխոսրով
Էջմիածին
Ըռստակ գաւառ
Ըռուս, տես Ռուս
Թաթարք
Թալա
Թալիշ
Թառթառ
Թառնագիւտ
Թարգմանչաց վանք (Խաչակապի)
Թարխան-Իւզբաշի
Թարկու
Թաւուզ կամ Թովուզ
Թաւրիզ
Թելաւ
Թէմուրազ իշխան

Թիւլի-Արզուման
Թիւրքման
Թիփլիս
Թոխմախ-խան
» Սափարի
Թովմաս Աւանեան
Թոսիկ գիւղի Վարդան
Ժոբերթ
Իբրահիմ-խան կամ Ճըռ-խան
Իբրահիմ փաշա
Իդալացի
Իլախա
Իմամ-Հիւսէյին
Իմամղուլի-խան Գանձակի
Իմէրէթ
Ինպեղակոթ կամ Անգեղակոթ
Իշխանակ Թագաւոր
Իշխան Գրիգոր Պատեօմգին
Իսախան-Իւզբաշի
Իսմի
Իսրայէլ արքեպ. Խորանաշատի
» Ճըռ-կաթուղ. կարգալոյծ
Իսրայէլ և Մկրտիչ վարդապետներ
Իսրայէլ Օրի
Իրզա-խան
Իւան Դաւիթովիչ Լազրև
Իւանէ ծառայ Հերակլի
Իւան-Կարապետ
Իփրումով Արտեմ
Լալա-Մուստաֆա փաշա
Լալա փաշա
Լածինով Ռուստամ
Լանկ-Թամիր
Լանքարան
Լեկզիներ
Լէօպօլդ
Լիսանևիչ (Դալի-Մայօր)
Լորիստան
Լորի կամ Լոռի
Խազիրք
Խաթրա բերդ
Խաթրա վանք (Խադ առաքեալի անուամբ)
Խանածախ գիւղ Խաչենի
» » Մեծ-Սիւնեաց, տես Քշտաղի Խանածախ
Խանդամով Յարութիւն
Խանլար-Աղա
Խանձք գիւղ
Խաչան-Իւզբաշի
Խաչատուր-բէկ Երևանցի
Խաչեն գաւառ
Խարում գիւղ
Խենի գաւառ
Խլի-Ղարաքիլիսեցի Աւետիք
Խնձորստան կամ Խնձիրստան գիւղ
Խոթա վանք
Խոխանաբերդ
Խորանաշատ վանք
Խոյ
Խոնդի խաթուն
Խոտորաշէն
Խոտորաշէնցի Ճըռ-կաթուղիկոսն.
Խուդաբանդա-Շահ
Խութաշէն
Խուտլու-բէկ
Խրամ գետ
Խրիմ
Խրիմի Մէհմէտ-Գէրէյ-խան
Խրխափոր գիւղ
Ծատուր-բէկ Միրզաջանբէկեան
Ծար գաւառ

Ծար գիւղաքաղաք կամ քաղաք
Ծարեցի Յովհաննէս վարդապետ
Ծովատեղ գիւղ կամ Քոչիղ
Կաբա
Կաթուղիկոսութիւն Աղուանից
Կախ
Կախէթ
Կաղանկատուացւոց վանք
Կաչաղակաբերդ
Կապաղակ (Ղապալա) գաւառ
Կապիճան, տես Ճառ
Կապիտան Ռոստամ-բէկ
» Եակօր Լազրև
» Մուրաչանով
Կասիր
Կատարինֆելդ
Կասպից ծով
Կարապետ Եզեանց
Կարին
Կարկուտ-Սմաւոն
Կարս, տես Ղարս
Կաքև-Ջաքի
Կենսագրութիւն Յովհ. Դաւթեան Լազրևի (Պօտտօ)
Կեօլն քաղաք
Կեօրան գիւղ
Կիլիկիա
Կիպրոս
Կիւլստան գաւառ
» գիւղ
Կիւլստանցի Եսայի
Կիւրճի, տես վրացի
Կիւրճիվերան գիւղ
Կողթ գաւառ
Կոմիտաս կաթուղ. Հայոց
Կոմս Գուտովիչ
» Ռումեանցով
Կոռանալ
Կոստն որդի Գրիգոր
Կոստանդիլին Դ.
Կովկասեան լեռ
Կուզանով Գէորգ
Կուսապատ գիւղ
Կոտլարևսկի
Կուր գետ
Կուրիէլ
Կնեազ Մատաթով
Կ. Պօլիս
Կոզէն գիւղ
Կրասովսկի
Կրամանշահ
Հաբանդ, տես Վարանդա գաւ.
Համբանդ Մեծ-Սիւնեաց
Հաթերք գիւղ
Հախնազար-բէկ
Հախում գիւղ
Հաղբատ գիւղ
Հաղբատ վանք
Հաղբատեցի Ղուկաս վարդապետ
Համզա-Միրզա
Համատան
Հայ Առևտրական ընկերութիւն
Հայաստան
Հայկազնի որդի Փիլիպոս
Հայ զինուորագրութիւն
Հայոց իշխաններ
Հայք
Հայտար փաշա
Հաշտարխան
Հաջի-Աղալար
» Դաւութ
» Մուստաֆա փաշա
» Ջալաբի
Հասան-Ալի-խան Շամախու

» » » որդի Ջհան-Շհ.
» բէկ Ճալէթցի
» խան
Հասանեաններ
Հասան-Սու (վտակ)
Հարճլանք գաւառ
Հաւքախաղաց
Հեյտարղուլի-խան
Հերիքնազ կին Մելիք-Աբով Գ.-ի
Հին-Գանձակ
» -Նախիջևան
Հիրհեր գիւղ
Հիւնոտ գիւղ
Հիւսէին-խան Շամախու
» Ղուլի-խան Բագուի
» Ղուլի օղլի
Հիւրզատ օրիորդ Մէլ. Շահնազ. Գ.-ի
Հնդկաստան
Հոռեկայ կամ Հիւբեկայ վանք
Հուրի կին Ջրաբերդցի Մելիք Եսայու
Հռիփսիմէ օրիորդ Պետրոս բէկի
Հրապետ
Հրէ
Հրէայք
Ջիթենեաց սար
Ղազախ-Շամշադին
Ղազանչի գիւղ
Ղազար
» և Սարգիս
» Ճահկեցի
Ղազարեան Դաւիթ
Ղազարոս Լազարեան
Ղազուին
Ղամար
» Սուլթան
Ղալաբէկի
Ղալին խութ
Ղանդահար
Ղանզուլեզ-դարա
Ղապաթ
Ղարաբաղ (Արցախի և Ուտեաց նահանգներն միասին կոչուում են Ղարաբաղ)
Ղարախան-Իւզբաշի
Ղարա-կիւնի
Ղարամուրատ-Մեծ գիւղ
Ղարս
Ղափան
Ղիներալ մայոր Նեբալսին
Ղլէզի կայարան
Ղորչի-Մուհամէտ-բէկ
Ղուբա գաւառ
Ղուբա քաղաք
Ղուբաթ որդի Յովհան
Ղուլալի գիւղ
Ղուլբէկի վեզիր
Ղուպանով Դաւիթ
Ղուկաս կաթուղ. Հայոց
Ղուկաս վարդապետ Մելիք-Բախտամեան
Ղրանց չուղուլ Պետի
Ղրիմ
Ղօրղանով Դաւիթ
Ճալէթ գիւղ
Ճալէթի վանք
Ճառ գաւառ
Ճառ քաղաք
Մազանդարան
Մազմանով Յակովբ
Մազքութք
Մահտեսի Միքայէլ Բհաթրեան
Մաղաւուզ գիւղ

Մահամատ-Միրզա
Մամատ-Բաղր-բէկ
» Հասան-աղա
Մահմէտ-Հասան
Մայիլ-բէկ
Մաշատ
Մաջար-Մամատղուլի-խան
Մատթէոսեան Աւագ
Մատրաս քաղաք
Մարգարեան Սարգիս
Մարկոս-աղա Հախումեան
Մարքիզ Պաուլուչին
Մաքար
Մաքինեաց վանք
Մելքիսեդեկ Արքեպ. Մուրատեանց
Մելքիսեթ եպիս. Եղիշ-Առաքեալի
Մելքիսեթ եպիսկ. Մէլիքզատայ գիւղի
Մելքում-բէկ
Մէլքում-Իւզբաշի
Մէլքում քովխա
Մեծ-Ենկիջա
Մեծ-Կողմանք, տես Կիւլստան գաւառ
Մեծ-Մազրա
Մեծն-Պետրոս կայսր
Մեծ-Սիւնիք
Մեղրի
Մենշիկով
Մէլիք-Աթա Ա.
Մէլիք-Աթա Բ.
Մէլիք-Աղաբէկ
» -Եսկեար
» -Հախնազար
» -Հասան
» -Ղորխմազ
» -Մատթէոս
» -Յովհաննէս
» -Ովանէս
» -Ջհանկիր
» -Սարգիս
» -Սիմաւոն
» -Վահրամ

Ճըռ մէլիքներ

Մէլիք-Միրզախան
» -Ալլահվերտի
» -Ղահրաման
» -Առուշան
» -Ալլահվերտի
Մէլիքզատա գիւղ
Մէհէմէտ փաշա
Մէհէմէտ-քերէյ-խան
Մէյսարի վանք
Մէյտի կամ Մէյտիղուլի-ճըռ-խան.
Միխայէլ Մէխայէլովիչ Կալիցին
Մինաս-աղա Լազարեան
» եպիսկոպոս
» վարդապետ
Մինասի որդի Ամիր
Միափոր գաւառ
Միջագետք
Մինկրէլ
Միշկին
Միսկին-Բուրջի բանաստեղծ
Միրզա-Աղը-կեօզալ
» Թաղի
» Իւզբաշի

» Իսախան
Միրապատ-Բալախատակ
Միրզիկ գիւղ
Միքայէլ Զալեանց
Միրի-Մահմուտ
Միքայէլեան Ալլահվերտի
Մլզնաբերդ
Մխիթար զօրավար
Մկրտիչ վարդապետ
Մոխրաթաղ գիւղ
Մոսկվա
Մովսէս Կաղանկատուացի
Մովսէս կաթ. Հայոց Սիւնեցի
Մուհամմատ Բ.
Մուղան
Մուղանի դաշտ
Մուպարաք
Մուստաֆա-խան Շամախու
Մուստաֆա փաշա
Մսկուր
Մօնդրեզօր-Ղարա-մայօր
Յակոբ կաթուղ. Հայոց
Յակոբ-Կոլոտ-պատրիարք
Յակոբ սպարապետ
Յարութիւն վարդապետ
Յիսա-բէկ
Յովհաննէս և Գրիգոր Թագաւոր Դարբանդի
Յովհ. եպ. Շահխաթունեանց
Յովհաննէս եպիսկոպոս
Յովհաննէս վարդապետ Ծարեցի
Յովսէփ արքեպ. Արղութեան
» Էմին
» Ջաւատբէկեանց
» Բէկ
Յոպպէ
Յուստինիանոս կայսր
Յոյնք
Յօհան
Նադր-Շահ
Նադրղուլի-խան
Նազարալի-խան
Նազարով Աղեքսանդր
Նաղադի
Նապալիօն Ա.
Նադարին Ղալա
Նահապետ կաթուղ. Հայոց
Նարին-բէկի որդի Շահնազար
Նաւի որդի Յովհաննէս
Նաւուր դշլաղ
Նեսւետաև
Ներսէս Աշտարակեցի Ե. կաթ.
Նէառ—Եղիազար, որ է պապ Իւան Դաւիթիչ Լազրևի
Նէառռադէօվ-Աթա
Նիազ-բէկ
Նիազովա Նաւահանգիստ
Նիւթեր Ազգ. Պատ.
Նիժ գիւղաքաղաք
Նիկալայ Պաւլովիչ Ա. կայսր
Նովրուզալի-խան
Նուխի, տես Շաքի
Նուկդի գիւղ
Նոր-Գանձակ
Նոր-Տետրակ Յակ. Շամիրեան
Նոր-Թաչմաս
Շապօրան քաղաք (այժմ աւերակ)
Շակաշէն
Շահանշահ իշխան
Շահ-Աբաս Ա.
» » Բ.
» » Գ.
» -Թահմազ Ա.

» » Բ.
» Իսմայէլ Ա.
» » Բ.
Շահմասուր գիւղ
Շահ-Սեֆի
» Սուլթան-Հիւսէին
» Սուլէյման
» Ռուհ
Շահմար Գիւղի
Շահնաւազ-խան
Շահնի-Իւզբաշի
Շահնի փաշա
Շահենի որդի Սուքիաս
Շահվերդի-խան
Շամախի քաղաք
Շամախու դաշտային գիւղեր
Շամխալ
Շամշադին
Շաքի քաղաք
Շաքի գաւառ
Շափուրով Ղաւա
Շամքոր
Շամքորցի Մարիամ
Շեխ-Սեֆի
Շէյթան-թիւնի
Շիկաքար ամրոց
Շիրակ գաւառ
Շիրին-Բաջի
Շիր-Նասիպ
Շորակեալ
Շուլաւեր
Շուշի
Շրուան, տես Շամախու դաշ-
տային գիւղօրայք
Շրուան-Իւզբաշի
Շւէտական պատերազմ
Շւեցով
Շօշու աւան
Ոսկանապատ գիւղ
Ուզունլար
Ուզուն-Հասան
Ուզունդլիջ-Սայի
Ուհան-Իւզբաշի
Ուռնայր Արքայ
Ուղուրլու-խան
Ուտեաց դաշտ
Ուտեաց նահանգ
Ուտի-Առանձնակ
Ուրմի
Ջալալի-քեխա
Ջարաբերդ, տես Ջրաբերդ ամրոց
Ջարաբերդ գաւառ, տես և գա-
ւառ
Ջարևաններ, տես Շահ-Իսմայէլ Ա.
Ջարխաջի զօրավար
Ջարղաթ գիւղ
Ջափար-Սարասար
Ջորլուի Ալլահվերտի
Ջովղուն-Յարութիւն
Ջրաղ
Պալասան-Իւզբաշի
Պալլուջա գիւղ Արցախի Գարդ-
մանի
Պալլուջա գիւղ Խաչենի
Պահումի որդի Մելքոն
Պանեայ վանք
Պանոն Ծգնաւոր
Պաշնջաղ
Պասկևիչ
Պատմութիւն Առաք. Վարդ.
Պատմ. Միրզա-Ադը-Կեօզալի
Պատ. Եսայի կաթուղ. Աղուան.
Պատ. Կաղանկատուացու
Պատ. Ս. Պալասանեանի

Պատ. Պարսից Թաղիադ.
Պատ. Օսմանեան
Պարիս, տես Փարիզ
Պարսկաստան
Պարսիկ
Պարոն Աղա
Պարոն Գրիգոր
Պարոն Կարապետ Եզեանցի յարաբերութիւն Հայոց ընդ Մեծին Պետրոսի
Պարոն Խաթունաշէն
» Մելքում
» Ներսէս
» Վարտի
» Տէր-Յովհաննէս
» Ֆահրիջհան
Պարտաւ
Պարտաւայ վանք
Պաւլ Իւանովիչ Մակիլեսկի
Պել-Ճամալ
Պելուջ տոհմ
Պետերբուրգ
Պետրոս-բէկ Ղազարեանց
» » Մատաթեանց բանաստեղծ
Պետրոս Բ. կայսր
Պետրոս քահանայ
Պոնտոս
Պռօշ իշխան
Պրապորշիկ Դաւիթ Ղորղանով
Պփալցի Կուրփիւրստ
Պօլկովնիկ Գարեագին
Պօլիս, տես Կ. Պօլիս
Պօղոս-բէկ Մելիք-Ջիւմշիւտեան
Ջալալեան Սարգիս եպիսկոպոս
Ջալալօղլի
Ջալալիներ
Ջահան կամ Ջհան-Շահ
Ջամբռ
Ջամիլ շէն
Ջանդուլով Սողոմոն
Ջանջուղաղով Եսայի
Ջաջուռ իշխան
Ջաւահիր
Ջաւատ-բէկ
» » Դարբանդի
» խան
Ջափար-ղուլի-աղա
Ջըռ-Մելիքենց
Ջըռ-Նազարենց
Ջիւանշիր իշխան
Ջհանկիր
Ջրաբերդ ամրոց
» գաւառ
Ջրվշտիկ կամ Եղիշ-Առաքելի վանք
Ռոմանոս գիւղապետ
Ռոստամ
Ռումէլի
Ռուսք
Ռուսաստան
Սալահ փաշա
Սալիան
Սալիմ-խան
Սալլում-Սայի
Սալմաստ
Սահակ եպիսկ.
Սամ
Սամարացի
Սայաթ-Նովա բանաստեղծ
Սայի-բէկ
Սայտա
Սայդուն
Սանահին վանք

Սանկեար-Ասրի
Սարգիս-աղա
» Բատալ
» Իւզբաշի
» Մատթէոսեան
» Մելիք-Մատթէոսեան
» վարդապետ
Սարուխան-բէկ
» Իւզբաշի
Սարուջալլու ցեղ
Սաւար գիւղ
Սափիղուլի-բէկ
Սենեքերիմ Թագաւոր
Սեպեակիին կուպերնատոր
Սև-ծով
Սեֆեան Իսմայէլ
Սեֆեան ցեղ
Սէօկիւթլու մեծ
Սէօկիւթլու փոքր, տես Փոքր-Սեօկիւթլու
Սէյիտ-Թալու Թորոս
Սէյրան
Սիմէօն կաթուղ. Հայոց
Սիմէօն-ճըռ-կաթուղ. Աղուանից
Սիմօն եղբայր Աւան-Իւզբաշու
Սիմօն Թագաւոր Վրաց
Սինան փաշա
Սիսեան
Սհակեան Մուրատ
Սղնախ, որ է զօրաժողով ամրոց
Սոլթան-Նուխի
Սոլթանբուտ
Սովուխ-բուլաղ
Սուլէյման-բաբա
Սուլթան-Մուրատ Գ.
» Սուլէյման Բ.
» » Գ.
Սուրբ Աստուածածնայ վանք
» Գրիգոր Լուսաւորիչ
» Գրիգորիս Հերհերի
» Գրիգորիս Ա. կաթ. Աղ.
» Գէորգ
» Յակովբ
» Ստեփաննոս
» Քառասունք Մրոյ վանք
Սուղի-Իւզբաշի
Սուրխայ
Սոնա-խանում
Սպանական պատերազմ
Սպիտակ ծով
Ստեփան Մովսէսեան
Ստեփաննոս Օրբելեան
Սրբոց Յակովբեանց վանք
Սօդ

Վախթանկ կամ Վախտանկ Թագաւորազն
Վախթանկ Ե. Թագաւոր Վրաց
Վախթանկեաններ
Վահան Մամիկոնեան
Վան քաղաք
Վաչէ-Իւզբաշի
Վասակ
Վասակաշէն (Բասար-կեչար)
Վարանդայ գաւառ
Վարդաշէն
Վարդենիս գիւղ
Վարշաւիոյ Դքսութիւն
Վելիամինով
Վերին-Ջակամ
Վերջաբանութիւն
Վիրք
Վնէսաց ղալա
Վրաստան

Տաթևի վանք
Տաթլու-բէկ
Տաճիկ, տես Արաք
Տաճիկ կամ Թիւրք, տես Օսմանցիք

Կաթուղիկոսունք Աղուանից

Տէր Առաքել կաթ. Սեօկիւթլ.
Տ. Արիստակէս Ա. կաթուղիկոս
Տ. » Բ. »
Տ. » Գ. »
Տ. Գրիգոր Ա. »
Տ. » Բ. »
Տ. » Գ. »
Տ. » Դ. »
Տ. Դաւիթ Թ. »
Տ. Եսայի »
Տ. Երեմիա »
Տ. Թովմա »
Տ. Մատթէս Դ. »
Տ. Մելքիսեթ Արաշեցի »
Տ. Յովհաննէս Է. »
Տ. » Ը. »
Տ. » Թ. »
Տ. » Ժ. »
Տ. Ներսէս Դ. »
Տ. Ներսէս Ե. »
Տ. Շմաւոն Ա. »
Տ. » Բ. »
Տ. Պետրոս Խանձկեցի
Տ. Սարգիս Ա.
Տ. Սարգիս Բ.
Տ. Սիմէօն Գ. Քոլատակեցի
Տեօվ (Դէօվ) Գեասպար
Տիգրանակերտ, տես Թառնագիւտ
Տոնմազ-Բալլու
Տեղեկագիր Գեղարքունի
Տէր-Աւետիք
Տուն Գեղամայ
Տուտէորդի
Տուրեան
Տուրմասով
Տրօյիցկի պոլկ
Րէյուտ
Րուշան
Րտիսչև
Րօմօդամսկի
Ցեխ-Ձոր
Ցիցիանով
Ցօր բերդ կամ ամրոց
Փաթալի-խան Ուրմեցի
Փահլաւան-Սադի
Փամբակ
Փանահ-ճըռ-խան
Փանոս-Իւզբաշի
Փառիսոս գաւառ
» քաղաք
Փարիզ
Փեքեար
Փիլ-Առուշան
Փիլիպպոս Աղբակեցի կաթ. Հայ.
Փիրղուլի-խան
Փոքր-Ասիա
» Ենկիջա
» Սեօկիւթլու
Քալբալի-խան
Քաղաքատեղի ամրոց
Քանդակ գիւղ

Քաչալ-Հրապետ
Քարթլայի երկիր
Քաւս կամ Քուստի գաւառ, տես Ղազախ-Շամշադին
Քեալլակեօզ-Աուստած
Քեանդխուտա-Խաչատուր Բարխուտարեանց
Քեարվանդուան-Բրուտ
Քեարփաթիւն Դադա
Քեօլանիք
Քիլուար գիւղ
Քիչիք-խան
Քշտաղի Խանածախ
Քոչարի-բէկ
» Իւզբաշի
Քոշիգ գիւղ, տես Ծովատեղ
Քրիստոնեայ Թէոդորոս
Քօսակ-Գիւզի
Քօռօղլի
Օզբէկ
Օհաննէս արքեպիսկոպոս
Օղլան-Քեշիշ
Օշափ-Բաղդասար
Օսմանցիք
Օսման փաշա
Օրդուբաթ
Ֆաթալի-Շահ
Ֆահրատ փաշա
Ֆետր Ալէքսէևիչ

## ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տպուած


1. Միրզա եւ Անահիտ սպառեալ
2. Աշտար սարին կատարն »
3. Գիլի—Գուլի նախկին տիպ »
4. Ջուշխոսական տղայ »
5. Զարմանք ու նշանակք տակաւ. մնացեալ 40 կ.
6. Կարմիր Կարապետի (թարգմ.) սպառեալ
7. Բնապաշտութեան քննադատութեամբ »
8. Աղուանից երկ. եւ դրացիք »
9. Արցախ տակաւ. մնացեալ 2 ր.
10. Քրիստոնէական վարդապետութիւն 45 կ.
11. Բարոյական առածներ սպառեալ
12. Մանչերի քարոզներ Ա. տետրակ »
13. » » Բ. » »
14. Աստուածային նրան. Համբարձման 80 կ.
15. Պատմութիւն Աղուանից Ա. հատ. 1. ր. 20 կ.
ճանապարհածախսով 1. ր. 50 կ.
16. Պատմութիւն Աղուանից Բ. հատ. 1. ր. 30 կ.
17. Գիլի—Գուլի Բ. տպագր. ճանապարհածախսով 45 կ.


Անտիպ


Նախապաշարմունք
Աստուծու օրհնած տունը
Միրզա եւ Անահիտ փոխադր. Բուսաճարաց բարբառով